

ԱԼԻՍԱ ԴՈՒՄԻԿՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՀՐԻՆ ԵՎ ԿԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՐՑԵՐԸ ԽՈՒ ԴԱՐԻ
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ**

ԵՐԵՎԱՆ 2014

108000 947.925 ✓

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Դոմիկյան Ալիսա Վաչագանի

ՀԱՅՈՑ ՀԻՆ ԵՎ ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ
XIX ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵԶ

11
100299

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ
ՄԱՏԵՆԱԸԱՐ

105



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

105

Dr. Mesrop

ԵՐԵՎԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
2014



Տպագրվում է ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

**Պատասխանատու խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր
Է. Լ. Դանիելյան**

**Գրախոսողներ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, պատմ. գիտ. դոկտոր
Ա. Ա. Մելքոնյան
պատմ. գիտ. դոկտոր Լ. Ա. Բարսեղյան**

ԴՌԻՄԻԿՅԱՆ ԱԼԻՍԱ

Դ 942 Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության հիմնահարցերը XIX դարի ֆրանսիական հայագիտության մեջ / Ա. Դրմիկյան. - Եր.: Պատմ. ինստիտուտ. 2014. - 236 էջ:

Գրքում ներկայացված է XIX դարի ֆրանսիական հայագիտության մեջ Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության, պատմական աշխարհագրության, մշակութային և քաղաքակրթական, պատմափիլիսոփայական ու պատմակրոնական ոլորտները ներառող հիմնահարցերի ուսումնասիրության կարևոր նշանակությունը հայ պատմագրության և աղբյուրագիտության բնագավառում:

Գիրքը նախատեսված է Հայոց պատմության մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ պատմագրությունն իր հարուստ գրավոր սկզբնաղբյուրներով XVIII-XIX դարերում մեծ հետաքրքրություն էր առաջացրել արտասահմանյան, հատկապես Եվրոպայի որոշ երկրների պատմագիտական շրջանակներում՝ խթանելով հայագիտական ուսումնասիրությունների զարգացմանը:

Հայաստանի պատմության և մշակութային արժեքների ուսումնասիրությունը¹ Եվրոպայի տարբեր գիտական կենտրոններում հզոր լիցք ստացավ՝ Վենետիկի Սբ. Ղազար կղզում 1717 թ. հիմնադրված Մխիթարյան միաբանության գիտակրթական գործունեության շնորհիվ²:

Ֆրանսիայում հայագիտության զարգացման առաջին քայլերից էր 1798 թ. հայերենի դասավանդումը³ Փարիզի արևելյան

¹ Եվրոպայում այդ գործում կարևոր նշանակություն ունեցավ Հակոբ Մեղապարտի հիմնած հայ տպագրության գործը (Վենետիկ, 1512 թ.) (Գ. Զարբիանյան, Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնավորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, 1895, էջ 85-177, Գ. Լևոնյան, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, 1958, էջ 77-127, 194-208): Դեռևս 1440-ական թթ. գերմանացի Գուտենբերգի կատարած տպագրության հայտնագործմանը Եվրոպայում հաջորդել էր մի ժամանակաշրջան, երբ Վերածննդի լուսավորչական ոգու տիրապետության պայմաններում, ինչպես նշել է Լ. Ֆեբրը (1878-1956)։ «1490-1520 թթ. ծաղկում էր հումանիզմը և անսպասելիորեն անտիկ դարաշրջանը մատչելի դարձավ... Դա մի լուսավորչականություն էր ... դասական գաղափարները և իդեալները անսպասելիորեն անչափ գրավիչ դարձան» (L. Febre, *Life in Renaissance France*, ed. and translated by Marian Rothstein, Cambridge, Massachusetts and London, 1979, pp. 31-32):

² Վենետիկի Սբ. Ղազար կղզում և Վիեննայում գործող Մխիթարյան հայրերի գիտակրթական և մշակութային գործունեությունը բարձր է գնահատվել հայագիտության մեջ (տես Դ. Յարութիւն վրդ. Պղտիկեան, Մխիթարի և մխիթարեանների նպաստը հայ մշակոյթին, Երևան, 2003, Դ. Վարդան եպս. Աշքարյան, Մխիթարյանները հայ մշակույթի ջահակիր, ՊԲՀ, 2000, № 3, էջ 10-14 և այլն):

³ Դեռևս XIV դ. հայերենը դասավանդվել է Ավինյոնի քահանայապետաց արքունիքում (F. Macler, *Autour de l'Arménie*, Paris, 1917, p. 10, Ա. Բարլեզիզյան, Հայ-ֆրանսիական լեզվամշակութային կապերի սկզբնավորման ու զարգացման

կենդանի լեզուների դպրոցում, իսկ 1810 թ. հայագիտության ամբիոնի հիմնումը⁴:

XIX դ. ֆրանսիացի հայագետները Մխիթարյան միաբանության գիտակրթական գործունեության միջոցով ծանոթանալով հայ ոսկեդարյան և հետագա դարերի գրական-մշակութային արժեքներին, լայնորեն զբաղվեցին հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների թարգմանությամբ և հետազոտությամբ:

V դ. Մովսես Խորենացու⁵, Կորյունի, Ագաթանգեղոսի, Եղիշեի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եզնիկ Կողբացու⁶, Սեբեոսի (VII դ.)⁷, VIII դ. Յովհան Մամիկոնյանի⁸, Թովմա Արծրու-

հարցի շուրջ (XI-XIX դարեր), ՊԲՀ, 1991, № 1, էջ 101, Ժ. Ռիշար, Ավինյոնի պապությունը և Հայաստանը, ՊԲՀ, 2001, № 1, էջ 155-156):

⁴ F. Macler, op. cit., pp. 2-3.

⁵ P. E. Le Vaillant de Florival, Moïse de Khorène, Histoire de l'Arménie, Venise, 1841. Mémoire sur l'époque de la composition de la Géographie attribuée à Moïse de Khorène (տես J. Saint-Martin, Mémoire historique et géographique sur l'Arménie, t. II, Paris, 1819, pp. 301-394). Géographie de Moïse de Corène d'après Ptolémée, texte Arménien, traduit en français par le P. Arsène Soukry Mékhitariste, Venise, 1881. Մովսես Խորենացու երկին նվիրված ֆրանսիացի հայագետների աշխատությունների մատենագիտական ցանկը, տես Պ. Յովհաննիսյան, Մովսես Խորենացի. Մատենագիտություն, Երևան, 2013:

⁶ Collection des historiens anciens et modernes de l'Arménie par V. Langlois. Première période-historiens Grecs et Syriens traduits anciennement en arménien, Paris, t. I. 1867; Collection des historiens anciens et modernes de l'Arménie par V. Langlois, Paris, t. II. 1869. Հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրների թարգմանությունը և հետազոտությունը Ֆրանսիայում շարունակվեց նաև հետագայում (տես օրինակ G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Roma, 1946: Histoire de l'Arménie par Moïse de Khorène, Nouvelle traduction de l'arménien classique par Annie et J.-Pierre Mahé, (d'après V. Langlois) avec une introduction et des notes, 1993).

⁷ M. Brosset, Rapports sur un voyage archéologique dans la Géorgie et dans l'Arménie, St.-Petersbourg, 1849. Troisième rapport, pp. 49-57. E. Dulaurier, Recherches sur la chronologie arménienne technique et historique, Paris, t. I. 1859, pp. 230-232. Histoire d'Héraclius par l'évêque Sébéos, traduite de l'arménien et annotée par Frédéric Macler, Paris, 1904.

⁸ Collection des historiens anciens et modernes..., t. I, pp. 337-357. Զենոբ Գլակի և Յովհան Մամիկոնյանի հետ կապված խնդրի և նրանց անուններով ֆրանսերեն հրատարակությունների մասին տես նաև Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տաթոնյ, Երևան, 1941, էջ V-XXX:

նու (IX դ. կես – X դ. առաջին քառորդ)⁹, Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոսի (898-929 թթ.)¹⁰, Ուխտանեսի (X դ. երկրորդ կես)¹¹, Կիրակոս Գանձակեցու (XIII դ. սկիզբ - 1271 թթ.), Ստեփանոս Օրբելյանի (XIII դ. երկրորդ կես - XIV դ. առաջին կես)¹² և այլ պատմիչների երկերի հատվածաբար կամ ամբողջական ֆրանսերեն թարգմանություններն առաջիններից էին օտար լեզուներով թարգմանվող հայկական սկզբնաղբյուրների շարքում:

Ֆրանսիական հայագիտական դպրոցի ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում էին Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության, պատմական աշխարհագրության, մշակութային, պատմափիլիսոփայական և պատմակրոնական ոլորտները ներառող հիմնախնդիրները:

Հայաստանի հին և վաղմիջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառներում XIX դ. ֆրանսիական հայագիտական դպրոցի զարգացումը որոշակիորեն պայմանավորված էր, ինչպես ասուրական և Վանի սեպագիր արձանագրությունների վերծանմամբ, նոր հարցադրումների առաջադրմամբ և ուսումնասիրությամբ, այնպես էլ հայկական գրավոր սկզբնաղբյուրների վրա հիմնված պատմագրության ավանդույթներին հետևելով:

Հիմնվելով Սիքայել Չամչյանցի¹³, Ղուկաս Ինժիճյանի¹⁴, Ղևոնդ Ալիշանի¹⁵, Հովհաննես Շախխաթունյանցի¹⁶ ուսումնասի-

⁹ Collection d'historiens arméniens. Th. Ardzrouni, X^e s., Histoire des Ardzrouni; Arakel de Tauriz, XVII^e s., Livre d'histoires; Johannès de Dzar, XVII^e s., Histoire de l'Aghovanie; traduits par M. Brosset, t. I, St.-Petersbourg, 1874.

¹⁰ Histoire d'Arménie par le patriarche Jean V dit Jean Catholocos, traduite de l'arménien en français par J. Saint-Martin, ouvrage posthume, Paris, 1841.

¹¹ Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha, Histoire en trois parties, traduits par M. Brosset, 1^{re} Livraison, St.-Petersbourg, 1870.

¹² De la vie et des écrits d'Etienne Orpélian, archevêque de Siounie (mort J. Saint-Martin, op. cit., t. II, pp. 1-300), Histoire de la Siounie par Stépannos Orbelian, traduite de l'arménien par M. Brosset, St.-Petersbourg, 1864.

¹³ Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա-Գ, Վենետիկ, 1784-1786:

¹⁴ Ղ. Ինժիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822: Նույնի, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի՝ Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամերիկոյ, մասն Ա, հ. Ա, ի Վենետիկ, 1806, Նույնի՝ Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա-Գ, Վենետիկ, 1835:

րութիւնների վրա՝ ֆրանսիացի հայագետները զգալի անդրադարձ են կատարել հայ պատմագիտության առանցքը կազմող հին և վաղմիջնադարյան պատմության և պատմական աշխարհագրության սկզբնաղբյուրային տեղեկութիւններին: Ուստի, պատմագիտական ուսումնասիրութիւնների բնագավառում հայեցակարգային մոտեցումներ մշակելիս կարևոր տեղ է տրվել հայկական սկզբնաղբյուրների թարգմանությանը: Ֆրանսիացի հայագետների թարգմանութիւնները և դրանցում եղած տեղեկութիւնների մեկնութիւնները զգալի չափով պահպանում են իրենց արդիականութիւնը:

Անտուան-ժան Սեն-Մարտենը (1791-1832 թթ.), Լը Վայան դը Ֆլորիվալը (1799-1862 թթ.), Մարի-Ֆելիստե Բրոսեն (1802-1880 թթ.), Վիկտոր Լանգլուան (1820-1869 թթ.), Էդուարդ Դյուլորին (1807-1881 թթ.) հայ միջնադարյան պատմիչների բնագրերի ֆրանսերեն թարգմանութիւնների իրենց մեկնութիւններում անդրադարձել են հայագիտության համար կարևոր նշանակութիւն ունեցող հարցերին՝ հայկական և օտար սկզբնաղբյուրների համադրությամբ որոշակի ներդրում կատարելով հայագիտության զարգացման գործում:

Վ. Լանգլուան՝ բարձր գնահատելով Սեն-Մարտենի հայագիտական գործունեութիւնը, նրան անվանելով «արդի բազմագետ մտավոր շնորհալիներից մեկը՝ ֆրանսիացի հայագետների դպրոցի ղեկավարը», նշել է, որ Սեն-Մարտենը հրատարակելով

¹⁵ Դ. Ալիշան, Վասն պարունակական կամ Փոքր Թուականացն Հայոց, Բազմավեպ, 1848, № 17, էջ 261-264: Նույնի՝ «Յաղագս Մովսիսի Խորոնեցոյ Դ անունեալ գրոյն պատմութեան», «Բազմավեպ», 1851, № 5, էջ 69-75: Նույնի՝ Յուշիկք հայրենեաց Հայոց, Ի Ս. Ղազար Վենետիկոյ, 1869, հ. Ա:

¹⁶ Դ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւուացն Արարատայ, հ. I և II, Ի Ս. Կաթողիկէ Էջմիածնի, 1842: Էջմիածնի մատենադարանի առաջին ծեռագրացուցակը կազմել է Դ. Շահխաթունյանցը, և հրատարակել Մարի Բրոսեն 1840 թ. (տես Ռ. Իշխանյան, Գրախոսութիւն. «Ցուցակ ծեռագրաց». - «Լրաբեր» հաս. գիտ., 1966, № 11, էջ 101):

«Mémoires sur l'Arménie» աշխատությունը, բացեց հայագիտության ուղին¹⁷:

1874 թ. Սանկտ Պետերբուրգում հրատարակված «Հավաքումն հայոց պատմիչների» ծավալուն հատորի առաջաբանում Ս. Բրոսեն բարձր գնահատելով հայ վարդապետների պատմական երկասիրությունները, նշել է, որ մեծ մասամբ նրանք իրենց պատմած իրադարձությունների ականատես վկաները լինելով, ժամանակագրական ճշգրտությամբ ներկայացնում են հայ ազգի հարաբերությունները Ասիայի երկրների հետ¹⁸:

Ֆրանսիացի հայագետները սկզբնաղբյուրների, բնագրային տեքստերի հետազոտության խնդրում կարևորել են գիտական անաչառությունը: Պատմության կեղծարարների դեմ արդիական հնչեղություն ունի Ս. Բրոսեի հետևյալ միտքը. «Տեքստի հավաստիության հարցում պետք է վերժանողին հեռու պահել ամեն կասկածելի դրդապատճառից, ինչպես նաև կոնյունկտուրային ուղղումներից»¹⁹:

¹⁷ Collection des historiens anciens et modernes de l'Arménie, publiée en français sous les auspices de son excellence Nubar-Pacha (Ministre des affaires étrangères de S. A. le vice-roi d'Egypte) et avec le concours des membres de l'Académie Arménienne de Saint-Lazare de Venise et des principaux arménistes français et étrangers par V. Langlois, Paris, 1867, t. I, p. V.

¹⁸ Ս. Բրոսեն կարևորել է նաև իրեն նախորդած և ժամանակակից ֆրանսիացի հայագետների՝ Հայոց պատմական մատենագրության բազմահատոր «Դիվաններ» հրատարակելու փորձերը (Collection d'historiens arméniens, t. I, p. XXIX): Բարձր գնահատելով Ս. Բրոսեի վաստակը պատմաբանասիրության ասպարեզում՝ Պ. Մուրադյանը նշել է. «Ս. Բրոսեն նաև ձեռագրագետ աղբյուրագետ էր, բայց զարմանալին միայն հետաքրքրությունների ու հմտությունների շրջանակի լայնությունը չէ, այլ նաև այդ ծավալների տարածումը տարբեր աշխարհում և այլ էթնիկ մշակութային ժառանգությունների վրա» (տե՛ս Պ. Մուրադյան, Ակադեմիկոս Մարի Բրոսե, Երևան, 2002, էջ 3, 7):

¹⁹ «Il faudrait au moins écarter du déchiffreur tout motif de doute quant à l'infailibilité du texte, - et éloigner par-là toute tentation d'y introduire des corrections conjecturales» (M. Brosset, Bulletin de l'Académie impériale des sciences de St.-Petersbourg, t. V, St.-Petersbourg, 1863, p. 434): Ընդգծելով Ս. Բրոսեի գիտական բարձր պատասխանատվությունը հետազոտական աշխատանքի նկատմամբ, Ա. Դոլխանյանը նշել է. «Հայ պատմիչների թարգմանությունները նախքան առանձին գրքերով

Հայոց հին և միջնադարյան պատմությանը նվիրված իրենց հետազոտություններում Ղ. Ինճիճյանը²⁰, Հ. Տաշյանը²¹, Լեոն²², Ն. Ադոնցը²³, Գր. Ղափանցյանը²⁴, Լ. Մելիքսեթ-Բեկը²⁵, Գ. Սիքաեյլանը²⁶, Ա. Սուքիասյանը²⁷, Ա. Բոռնազյանը²⁸, Խ. Թորոսյանը²⁹, Խ. Մուշեղյանը³⁰, Պ. Մուրադյանը³¹, Ա. Տեր-Ղևոնդյանը³², Ս. Զուլալյանը³³, Ժ. Դեդեյանը³⁴, Կլ. Սուքաֆյանը³⁵, Բ. Հարությունյանը³⁶,

լույս տեսնելը կամ ընդհանուր հատորների մեջ ամփոփելը՝ Մ. Բրոսեն դրանք հրատարակել է Ռուսաստանի գիտական կարևորագույն պարբերականում՝ Կայսերական Ակադեմիայի Գիտությունների Տեղեկագրում» (Ա. Ղուլիսանյան, Մարի Ֆելիսիտե Բրոսեն հայագետ, Երևան, 2002, էջ 14):

²⁰ Ղ. Ինճիճեան, Հնամիսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Գ:

²¹ Հ. Յ. Տաշեան, Փորձ մը լեզուի Վանեան բեւեռագրութեանց, - Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1899, № 1: Նույնի՝ Սկզբնաղբութիւնք Եղեսիոյ եկեղեցւոյն եւ Աբգարու գրոյցը. - «Հանդես ամսօրեայ», 1899, № 3, № 4:

²² Լեօ, Վանի թագաւորութիւնը (Ուրարտու), Թիֆլիս, 1915, նույնի՝ Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966:

²³ N. Adontz, Histoire d'Arménie. Les origines du X^e siècle au VI^e (av. J. C.), Paris, 1946: Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971.

²⁴ Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940:

²⁵ Վրաց աղբյուրները Հայաստանի մասին, Լ. Ս. Մելիքսեթ-Բեկ, հ. Ա, Երևան, 1934:

²⁶ Г. Г. Микаелян, История Киликийского Армянского государства, Ереван, 1952.

²⁷ А. Г. Сукпаян, История Киликийского Армянского государства и права (XI-XIV вв.), 1969.

²⁸ Ա. Վ. Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան Հայկական պետությունում XII-XIV դարերում, Երևան, 1973:

²⁹ Խ. Թորոսյան, «Թագավորների պատմությունն ու զովաբանությունը» որպես Ջաջարյան Հայաստանի ու Ջաջարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992:

³⁰ Խ. Մուշեղյան, Հայաստանի դրամական զանձերը, Երևան, 1973:

³¹ Վրաց ժամանակագրություն (1207-1318 թթ.), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971:

³² А. Тер-Гевондян, Армения и Арабский халифат, Ереван, 1977.

³³ Ս. Կ. Զուլալյան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա, Զաղաքական պատմություն, Երևան, 1990:

³⁴ G. Dédéyan, Les Arméniens entre grecs, musulmans et croisés: étude sur les pouvoirs arméniens dans le Proche-Orient méditerranéen (1068-1150). aux origines de l'état cilicien: Philarete et les premiers Roubeniens. vol. I. de l'Euphrate au Nil: le réseau diasporique. vol. 2. Lisbonne, 2003.

Լ. Տեր-Պետրոսյանը³⁷, Ա. Դոլուխանյանը³⁸, Է. Դանիելյանը³⁹, Վ. Տեր-Ղևոնդյանը⁴⁰ և ուրիշներ բազմիցս անդրադարձել են XIX դարի ֆրանսիացի հայագետների երկերին:

Ֆրանսիացի հայագետներն իրենց աշխատություններում հատկապես անդրադարձել են Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկին: Վ. Լանգլուան բարձր գնահատելով Մովսես Խորենացու գիտական ժառանգությունը և նշելով նրա մեծ ներդրումը՝ «Ասիայի ազգերի տարեգրությունները կազմելու» խնդրում, Պատմահոր երկի աղբյուրագիտական հիմքի պատմագիտական կարևորությունը պայմանավորել է այնտեղ եղած եզակի տեղեկություններով: Մովսես Խորենացուն անվանելով *Հայ Ֆերոդոտոս* (Hérodote arménien)⁴¹ Վ. Լանգլուան նշել է, որ նա «միշտ վեր էր իր ժամանակներում իշխող գաղափարներից, իր

³⁵ Cl. Mutaſian, La Cilicie au carrefour des empires, Paris, t. I, t. II, 1988.

³⁶ Բ. Դ. Հարությունյան, Սեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 36-37, 116, Նույնի՝ «Աշխարհացոյց»-ը և չորս Հայքերի խնդիրը, Երևան, 1997:

³⁷ Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հ. Ա, Երևան, 2005, հ. Բ, 2007:

³⁸ Ա. Դոլուխանյան, նշվ. աշխ., A. Doloukhanyan, L'importance actuelle de l' héritage scientifique de Saint-Martin. arméniste français. - Բանբեր հայագիտության, Երևան, 2014, № 1.

³⁹ Э. Л. Даниелян, Историко-географические комментарии М. Броссе к его переводам армянских источников, – Գիտական աշխատություններ, Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական համալսարան, հաս. գիտ., պրակ առաջին, Երևան, 2002, 126-131 էջ :

⁴⁰ Վ. Ա. Տեր-Ղևոնդյան, Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր արևելքի արաբական երկրները 1145-1226 թվականներին, Երևան, 1994:

⁴¹ Հատկանշական է, որ Է. Պիշարը Մովսես Խորենացուն անվանել է Հայ *Պոմբրոս* (Homère arménien) (C. E. Pichard, Essai sur Moïse de Khoren, Paris, 1866, p. 9). Իսկ Վ. Լանգլուան՝ Hérodote de l'Arménie («Հայաստանի Ֆերոդոտոս») (V. Langlois, Etude sur les sources de l'Histoire d'Arménie de Moïse de Khoren, tiré du Bulletin, t. III, Paris, 1861, pp. 300, 306, 367):

դարի նախապաշարմունքներից և նա շատ մեծ քայլ է կատարել իր հայրենիքի պատմության ուսումնասիրության գործում»⁴²:

Մովսես Խորենացու երկի առնչությամբ դրսևորվող քննադատությունը Վ. Լանգլուան բացատրել է քննադատների կողմից Պատմահոր ապրած ժամանակաշրջանում գերակայող գաղափարների իրական պատկերի անտեսմամբ, քանզի նրանք հաշվի չէին առնում այդ դարաշրջանին բնորոշ գաղափարական սկզբունքները⁴³:

Սեն-Մարտենը և, հատկապես, Վ. Լանգլուան՝ կրոնական գոյաբանության տեսակետից Մովսես Խորենացու՝ հայ ազգի ծագման մասին հայեցակարգի ուսումնասիրությունը կատարում էին աստվածաշնչյան և հայկական ավանդական՝ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող պատկերացումներից բխող տեղեկությունների համադրումով:

Հայ միջնադարյան պատմագրությունում դիտարկելով կրոնական և աշխարհիկ մոտեցումների հարաբերակցության հարցը, Վ. Լանգլուան նշել է, որ, հայ աշխարհիկ գրականությունը շատ ավելի հարուստ է, քան Ասիայի այլ քրիստոնյա ազգությունների գրավոր ժառանգությունը⁴⁴:

Ֆրանսիացի հայագետ Գուստաֆ Շրումֆը (1844-1892 թթ.) բարձր գնահատելով Է. Դյուլորիեի ներդրումը Եվրոպայում հայագիտության զարգացման գործում, կարևորել է նրա մոտեցումը Հայոց պատմության ուսումնասիրության անհրաժեշտությանը և քաղաքակրթական տեսանկյունից արժևորմանը⁴⁵:

⁴² V. Langlois, op. cit., p. 367.

⁴³ Ibid., p. 310.

⁴⁴ Collection des historiens t. I, p. V-VI.

⁴⁵ Այս կապակցությամբ Գուստաֆ Ադոլֆ Շրումֆը մեջբերել է Է. Դյուլորիեի հետևյալ միտքը. «Արդեն արեւելքի քրիստոնեայ ազգերուն մեջ առաջին ըլլալով ուսումնասիրութեան և քաղաքակրթութեան փափաքին կողմանէ, անշուշտ եւրոպացի ազգաց պէս Հայերն ալ պիտի հասկընան թէ առաջին սորվելիքը այս օրուան օրս իրենց սեպիական պատմութիւնն է. և թէ որչափ հարկաւոր է որ փութան իրենց վաղեմի նախնեաց այս պատուական մնացորդները ժամանակին աւերմունքներէն ազատ պահելու» (Գ. Ա. Շրումֆ, Ուսումնասիրու-

Հայ միջնադարյան պատմիչների երկերի թարգմանությունների իրենց մեկնություններում ֆրանսիացի հետազոտողները պատմաաշխարհագրական մեթոդով են հետազոտել Հայաստանի բնապատմական միջավայրը և վարչաքաղաքական պատկերը բնութագրող տեղեկությունները:

XIX դարի ֆրանսիացի հայագետները Հայաստանի պատմաաշխարհագրական հետազոտությանը մոտեցել են որոշակի տեսական հայեցակարգով, որի հիմքում Հայոց պատմական ամբողջական ժառանգության արժևորումն է: Այսպիսի մեթոդաբանությամբ են նրանք անդրադարձել Հայաստանի մի կողմից՝ հին ժամանակաշրջանի պատմությանը և ամբողջական տարածքի աշխարհագրությանը, իսկ մյուս կողմից՝ վաղ միջնադարում տեղի ունեցած պարսկա-բյուզանդական, իսկ ավելի ուշ՝ XVI-XVII դդ. պարսկա-թուրքական բաժանումների հետևանքով ստեղծված իրավիճակներին: Նրանց ուշադրության կենտրոնում է եղել, ինչպես Արևմտյան Հայաստանի, այնպես էլ XIX դ. սկզբներից (պայմանավորված Ռուսական կայսրության Կովկասում⁴⁶ և Անդրկովկասում առաջխաղացմամբ) Արևելյան Հայաստանի վարչաքաղաքական պատկերի վերափոխության հարցերը:

Հայ պատմագիտության զարգացմանը համընթաց եվրոպական գիտական շրջանակներին ու հասարակայնությանը Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության հետ ծանոթացման գործում որոշակի ներդրում ունեն XIX դարի ֆրան-

թիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յարեւմուտս (ԺԴ-ԺԾ դար), թրգմ. լրց. Գ. Ջաբրիանալեան, Վենետիկ, 1895, էջ 150): Ֆրանսիացի հայագետներին և նրանց ուսումնասիրություններին նվիրված Գ. Շրումֆի աշխատությունը, որը թարգմանել է Մխիթարյան միաբանության անդամ, մատենագետ, պատմաբան և բանասեր Գ. Ջաբրիանալյանը, ներառում է Եվրոպայի նաև այլ երկրների հայագետների մասին կենսամատենագիտական տեղեկություններ:

⁴⁶ Մ. Բրոսեն Կովկասյան լեռների առնչությամբ գրել է. «Կովկասյան լեռը (նկատի ունի Կովկասյան լեռնաշղթան) մատնանշում է անկասկած ամբողջ Իբերիան (Վիրք), Աղուանքը (բուն Աղվանք)՝ մինչև Դերբենդ (Collection d'historiens arméniens, t. I, p. 236, com. 1), որի նախկին հայկական անվանումն է Չոր (ճոր-բա-սյախակ) (Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha... p. 99, com. 3):

սիացի հայազետների պատմաաշխարհագրական հետազոտությունները, որոնց հիմքում են հայ միջնադարյան սկզբնաղբյուրների իրենց կատարած ֆրանսերեն թարգմանությունները և դրանց մեկնությունները, ինչպես նաև XVIII-XIX դդ. հայ պատմաբանների աշխատությունները: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Սեն-Մարտենի և Մարի Բրոսեի ուսումնասիրությունները, որոնցում զգալի անդրադարձ է կատարված Սեօ Զայքի, Փոքր Զայքի և Կիլիկիայի պատմաաշխարհագրական բնութագրին:

Ֆրանսիական հայագիտական դպրոցի պատմագիտական հետազոտություններից առաջինը Սեն-Մարտենի աշխատություններն են, որոնցում Զայաստանի ամբողջական տարածքը ներկայացնող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը կատարված է աշխարհագրական և պատմական տեղեկությունների համադրության մեթոդաբանությամբ⁴⁷: Զաջորդ տասնամյակներում նույն մեթոդաբանությամբ են առաջնորդվել ֆրանսիացի մյուս հետազոտողները՝ Զայաստանի և հարևան երկրների պատմության հարցերը քննարկելիս:

Անդրադառնալով Սեօ Զայքի 15 նահանգների գավառների պատմաաշխարհագրական բնութագրին՝ ֆրանսիացի հետազոտողները իրենց ուշադրությունը կենտրոնացրել են տեղանունների ստուգաբանությանը, որպես հիմք ընդունելով Մովսես Խորենացու (V դար) հաղորդած տեղեկությունները: Պատմաաշխարհագրական ընդհանուր տեղեկությունների վերլուծության հետ մեկտեղ Սեն-Մարտենը, Մ. Բրոսեն, Վ. Լանգլուան առանձին դեպքերում մանրամասնել են որոշ տեղանունների թե՛ տեղադրությանը, թե՛ դրանց ստուգաբանությանը վերաբերող իրենց բնութագրերը: Սեն-Մարտենը հիմնվելով հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունների վրա, հայկական որոշ տեղանուններ է հետազոտել, միաժամանակ ցույց տալով օտարների կատարած աղնատումները:

⁴⁷ J. Saint-Martin, *Mémoire historique et géographique sur l'Arménie*. t. I, Paris. 1818.

Հայոց հին պատմության որոշ հարցերի՝ ըստ ասուրական և բաբելոնյան աղբյուրների XIX դ. ֆրանսիացի արևելագետների կատարած վերծանումների և մեկնությունների խնդիրը մինչև այսօր որոշակի հետաքրքրություն է ներկայացնում: Հայ դասական պատմագիտության ավանդույթներին զգալիորեն հետևող ֆրանսիացի հայագետները Առաջավոր Ասիայի երկրներում հայտնաբերվող ու վերծանվող սեպագիր արձանագրությունների նյութերի համադրումով որոշակի մոտեցումներ էին դրսևորում:

Սեն-Մարտենը դեռևս XIX դ. 20-ական թթ. նախաձեռնել էր Հայաստանում սեպագիր արձանագրությունների հայտնաբերման գործը՝ հիմք ընդունելով Մովսես Խորենացու տեղեկությունները վիմագիր արձանագրությունների վերաբերյալ⁴⁸:

Վանում սեպագիր արձանագրությունների հայտնաբերումից հետո ֆրանսիացի արևելագետները և հայագետները իրենց աշխատություններում սկսում են ուշադրություն դարձնել, ինչպես իրենց էին կոչում՝ *Վանի* (Vanique) կամ *քիայնական* սեպագիր արձանագրությունների վերծանումների և լեզվի բացահայտման խնդրին: Եվրոպացի և, մասնավորապես, ֆրանսիացի արևելագետների՝ Վանի սեպագիր արձանագրությունների վերծանումներում *Արմենիա* երկրանվամբ և *հայ՝ արմեն* էթնիկ անվամբ մեկնությունները կարևոր ներդրում էր Վանի թագավորության՝ որպես Հայոց պատմության անքակտելի մասի ուսումնասիրության գործում:

Ֆրանսիական հայագիտության մեջ, մասնավորապես Վ. Լանգլուան ազգաբանությանն վերաբերող հարցերը քննարկելիս պատմակրոնական մոտեցում է ցուցաբերել՝ հիմնվելով հին ավանդույթների, Աստվածաշնչի և Մովսես Խորենացու տեղեկությունների վրա⁴⁹:

⁴⁸ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 54:

⁴⁹ V. Langlois, Mémoire sur les origines de la culture des lettres en Arménie. Revue de l'Orient et de l'Algérie et des colonies. XIV (juillet à décembre), Paris, 1862.

Ս. Բրոսեն հայ պատմիչների երկերի թարգմանությունների մեկնություններում, այլ հարցերի հետ մեկտեղ, կարևորել է Հայաստանում I դարից առաքելական քարոզչության, ինչպես նաև 301 թ. քրիստոնեության՝ որպես պետական կրոն ընդունման խնդիրները:

Հայոց հին և միջնադարյան պատմագիտական, պատմաաշխարհագրական, հոգևոր և քաղաքակրթական հիմնախնդիրների ուսումնասիրությանը նվիրված ֆրանսիացի հայագետների գիտահետազոտական ժառանգությունը⁵⁰, զգալիորեն պահպանելով իր արդիական նշանակությունը, մեծ արժեք է ներկայացնում հայ պատմագրության համար:

⁵⁰ Դրա մասն են կազմում Ս. Բրոսեի (M. Brosset, *Monographie des monnaies arméniennes*. St. Petersburg. 1839). Վ. Լանգլուայի (V. Langlois, *Numismatique de l'Arménie au moyen âge*. Paris. 1855, նույնի՝ *Numismatique de l'Arménie dans l'antiquité*. Paris. 1859) և Է. Բաբելոնի (E. Babelon, *Description historique et chronologique des monnaies de la République romaine vulgairement appelées monnaies consulaires*. Paris. t. I. 1885, t. II. 1886, նույնի՝ *Les Rois de Syrie. d'Arménie et de Commagène*. Paris, Bibliothèque Nationale. 1890, pp. CXCI-CCVIII) դրամագիտական բնույթի աշխատությունները, որոնք բարձր են գնահատվել հայ դրամագետների կողմից (Տես Խ. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 85-122, նույնի՝ «Դրամական շրջանառությունը հին Հայաստանում: Հայկական դրամներ»․ - ԶԺՊ, Երևան, 1971, հ. I, էջ 691-692, 697), P. Z. Bedoukian, *Coinage of the Armenian kingdoms of Sophene and Commagene*. – The American Numismatic Society, Museum Notes, vol. XXVIII, 1983, pp. 71-87, տես Խ. Ա. Մուշեղյանի գրախոսությունը՝ ՊԲՀ, 1985, № 4, էջ 210. Y. T. Nercessian, *Armenian coins and their values*. Armenian Numismatic Society, Special Publication N 8, Los Angeles, 1995, pp. 10, 15, 28):

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿՆԴԻՐԸ ՖՐԱՆՍԻԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԵՐԿԵՐՈՒՄ

1. Հայ պատմագրական ժառանգության արժևորումը Արևելքի պատմության ուսումնասիրության խնդրում

Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության ուսումնասիրության հիմքն են կազմում պատմական սկզբնաղբյուրները, ինչպես նաև դրանց անդրադարձած հայ և օտար հեղինակների պատմագիտական երկերը: Հայոց պատմությունը լուսաբանող հայկական պատմական սկզբնաղբյուրներն արժևորելիս՝ XIX դարի ֆրանսիացի հայագետները կարևորել են դրանց նշանակությունը նաև Արևելքի երկրների պատմության հետազոտման խնդրում:

Սեն-Մարտենը հայկական հարուստ գրական ժառանգության մեջ առանձնացրել է այն երկերը, որոնք կարող են ծառայել Ասիայի տարեգրություններում եղած նշանակալի բացը լրացնելուն, լույս սփռելով ընդհանրապես ամբողջ Արևելքի պատմության վրա՝ «IV դարի սկզբից մինչև առավել արդի ժամանակները»: Միննույն ժամանակ, Սեն-Մարտենը պատմության և բանասիրության բնագավառներում կատարվող հետազոտական աշխատանքներում անհրաժեշտ է համարել հայոց լեզվի և գրականության ուսումնասիրությունը՝ առանց անտեսելու Արևելքի այլ ժողովուրդների գրական ժառանգությունը⁵¹:

Է. Դյուլոթիեն, բարձր գնահատելով հայ գրականությունը, նշել է, որ այն «հարուստ է պատմական երկերով և քրիստոնյա Արևելքի ամենագիտական արտահայտությունն է» (*l'expression la*

⁵¹ J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 3-4.

plus savante de l'Orient chrétien)⁵²:

Վիկտոր Լանգլուան ուշադրություն դարձնելով դեռևս հին ժամանակներում գրական հուշարձանների պահպանության խնդրին՝ գրել է. «Հուշարձանների և պատմիչների վկայությունից մեզ հայտնի է, որ Բ. Ծ. շատ առաջ Պարսկաստանում և Հայաստանում կային արխիվներ և գրադարաններ»⁵³: Այս տեղեկության սկզբնաղբյուրը, անկասկած, եղել է Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը:

Պատմահայրը նախաքրիստոնեական և քրիստոնեական դարաշրջանների վերաբերյալ բավականին տեղեկություններ է հաղորդում Նինվեի, Սինուպի, Մծբինի և Եդեսիայի դիվանների, Բարձր Հայքի Դարանաղի գավառի Անի ամրոցում պահվող գրքերի մասին:

Մովսես Խորենացին երվանդ Վերջին թագավորի և նրա եղբոր՝ Երուազ քրմի վախճանի և Արտաշեսի մասին պատմելուց հետո, նշելով այդ իրադարձությունների կապակցությամբ իրեն սկզբնաղբյուր ծառայած աշխատությունները, գրել է. «Եւ զայս մեզ ստուգապէս պատմէ Ողիւմպ քուրմ Հանույ, գրող մեհենական պատմութեանց, և զայլ բազում գործս՝ զոր ասել կայ մեզ առաջի, որում և Պարսից մատեանքն վկայեն և Հայոց երգք վիպասանաց»⁵⁴:

Պատմահայրը «Պատմութիւն Հայոց»-ի երկրորդ գրքի Թ գլուխն («Յաղագս մերոյ Արշակայ Առաջնոյ եւ նորին զործոց») ավարտելով՝ «Աստոր սպառին բանք ծերունւոյն Սար Աբայ Կատինայ» արտահայտությամբ, այնուհետև տեղեկացրել է, թե որտեղից է քաղել պատմական նյութերը վերջինիս մատյանից հետո: Գրելով իր շարադրանքին սկզբնաղբյուր ծառայած երկերի մասին («Սկիզբն արասցուք պատմել քեզ ի հինգերորդ գրոցն

⁵² E. Dulaurier. Les Arméniens en Autriche, en Russie et en Turquie. La société arménienne au XIX^e siècle, sa situation politique, religieuse et littéraire. - Revue des Deux-Mondes, 1854, p. 213.

⁵³ V. Langlois, Le trésor des chartes d'Arménie ou cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, p. 1.

⁵⁴ Մովսես Խորենացի, էջ 176:

Ափրիկանոսի ժամանակագրի, որում վկայէ Յովսեփոս և Հիւպո-
ղիտայ»⁵⁵, Պատմահայրը հատուկ նշել է, որ Ափրիկանոսը իր
նյութերը քաղել է վերոհիշյալ դիվաններից («...ի քարտեաս դիւա-
նին եղեսիայ, որ է Ուռհայ, որ յաղագս թագաւորացն մերոց
պատմէր. որ մատեանքն ի Մծբնայ էին փոխեալ անդր և ի Սինո-
պայ Պոնտոսէ ի մեհենական պատմութեանցն»: Իսկ իր սկզբնաղ-
բյուրային նյութերի հավաստիության կապակցությամբ Մովսես
Խորենացին հատուկ նշել է. «Մի՛ ոք անհաւատասցի, քանզի եւ
մեզէն իսկ ականատես եղաք այնմ դիւանի») ⁵⁶:

Հիմնվելով դիվանների առնչությամբ Մովսես Խորենացու
հաղորդումների վրա՝ Վ. Լանգլուան հատկապես Եղեսիայի ա-
ռուծով կարևորել է՝ Աբգար թագավորի նախածնունդայամբ Մծբի-
նից Եղեսիա դիվանի տեղափոխման փաստը («գարջունիս իւր
որ ի Մծբին... և զմատեանս մեհենից վարժարանին, և միանգա-
մայն զդիւանս թագաւորացն») ⁵⁷:

Սեն-Մարտենը Եղեսիայի և Աբգար թագավորի մասին գրել է.
«Edesse, հայերեն Եղեսիա և Ուռհա... Օսրոննի մայրաքաղաք,
շատ հայտնի քաղաք է... Համաձայն հայերի՝ այն Հայաստանի
մայրաքաղաքն էր 14-55 թթ.՝ Աբգարի թագավորության ընթաց-
քում, որին նրանք համարում են որպես իրենց թագավոր...» ⁵⁸:

⁵⁵ Մովսես Խորենացի, էջ 120: Այստեղ խոսքը Սեջստ Յուլիոս Ափրիկանոսի (III դ.),
նույն դարաշրջանի եկեղեցական տարեգիր Հիպպոլիտոսի և հին հունա-
րենով գրող Իրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսի (37-100 թթ.) մասին է
(մանրամասն տես Ա. Թովփյան, Մովսես Խորենացու հունական աղբյուրների
խնդիրը, Երևան, 2001, էջ 8):

⁵⁶ Մովսես Խորենացի, էջ 120:

⁵⁷ Մովսես Խորենացի, էջ 144: Եղեսիայի դիվանի մասին Պատմահայրը ևս մեկ
անգամ հիշատակել է Աբգարի կյանքը և գործերը պատմագրած ասորի
պատմիչ Ղեբուբնայի կապակցությամբ. «Ղեբուբնայ որդի Ափշաղարայ դպրի
գրեաց զամենայն գործս, որ ինչ յաւուրս Աբգարու և Սանատրկոյ, և եղ ի դի-
ւանին յեղեսիայ» (Մովսես Խորենացի, էջ 161):

⁵⁸ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 158. Օսրոննի մասին տես՝ Հ. Գ. Մելքոնյան,
Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից (III-V դարեր), Երևան,
1970, էջ 37, ծան. 11, Ասորական աղբյուրներ, Ա, թարգմանությունը բնագրից,
առաջաբան և ծանոթագրություններ Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 132:

Հին Հայոց պատմության ուսումնասիրության համար մեծ հետաքրքրություն ներկայացնող Եդեսիայի դիվանի պատմական գրականության մասին Մովսես Խորենացին գրել է. «... յեդեսիայ դիւանին լինել ամենայն գործոց առաջնոց թագաւորացն մերոց մինչև ցԱբգար... Որ և այժմ կարծեմ գտանի պահեալ ի նոյն քաղաքի»⁵⁹:

Վ. Լանգլուան նշել է, որ «Մծբինի այն զրական արժեքները՝ գրքերը և արխիվները, որոնք Մովսես Խորենացու վկայությամբ Աբգար թագավորի հրամանով տեղափոխվեցին Եդեսիա՝ հարստացրին այնտեղի դիվանի գանձերը: Կարելի է տեսնել, որ այս տարրերը՝ հավաքված ընդհանուր մի կենտրոնում, որտեղ գալիս էին կրթություն ստանալու Պարսկաստանի, Հայաստանի, Ասորիքի, Հունաստանի և միգուցե նույնիսկ Եգիպտոսի ուսյալները, զարգացրին արևմտյան ուսմունքների ոճը: Կարճ ժամանակահատվածում Եդեսիան, հատկապես քրիստոնեության տարածման դարաշրջանում, դարձավ գիտության շտեմարան: Եդեսիայի դպրոցը, որի հետ կապված են Բարդաժանի, Սբ. Եփրեմի և նրա աշակերտների անունները՝ փայլեց անմահության փառքով: Բայց երբ Հայաստանում և Պարսկաստանում հակադարձություն զգացվեց ասորականի դեմ՝ այդ զրականությունը կորցրեց իր կարևորությունը և արագորեն զարգացան հայերենը և հունարենը»: Վ. Լանգլուան վերջիններիս մերժեցումը պայմանավորել է մի իրողությամբ, երբ «արիական ծագմամբ բնական բնազդով մի ժողովուրդ ծգտում է մերժենալ միննույն ընտանիքի մեկ այլ ժողովրդի»⁶⁰:

Այն, որ Եդեսիայի դիվանը մեծ կարևորություն ներկայացնող կենտրոն էր, փաստում է նաև հայ նշանագրերի ստեղծման ժամանակաշրջանում Մեսրոպ Մաշտոցի՝ Եդեսիայի դիվան կատարած այցելությունը⁶¹: Հատկանշական է, որ Եդեսիայի դիվանը շարունակում էր պահպանել իր նշանակությունը V դարի առա-

⁵⁹ Մովսես Խորենացի, էջ 120:

⁶⁰ V. Langlois. Mémoire sur les origines.... p. 222.

⁶¹ Մովսես Խորենացի, էջ 326:

ջին տասնամյակներին⁶²: Եղեսիայի հետ մեկտեղ հայտնի էին Նիմվեի⁶³, Սինուպի⁶⁴, Սծբինի⁶⁵ դիվանները: Մովսես Խորենացին անծամբ եղել էր Եղեսիայի դիվանում, որի մասին գրել է Աստվածաշնչի թարգմանության կապակցությամբ Մեսրոպ Մաշտոցի ու Սահակ Պարթևի հանձնարարությամբ իր ընկերների հետ ուսման նպատակով դեպի Աղեքսանդրիա կատարած ճանապարհորդությանը նվիրված հաղորդման մեջ⁶⁶:

XVIII դարում Աբ. Ղազար կղզում հաստատված Մխիթարյանների միաբանության գործունեությունը Եվրոպայի երկրներում և, հատկապես, Ֆրանսիայում՝ հայագիտության հանդեպ առաջացրել էր արևելագիտությամբ զբաղվող մասնագետների մեծ հետաքրքրությունը: Այս առումով Վ. Լանգլուան նշել է. «Վենետիկում Մխիթար Սեբաստացու (1676-1749 թթ.) կրոնական, քաղաքական և գրական նպատակով հիմնած Աբ. Ղազար միաբանությունը կարողացավ հայագիտությանը մեծ խթան տալ, որի արդյունքը զգացվեց Եվրոպայում հատկապես մեր դարի սկզբում»⁶⁷:

Է. Դյուլոբիեն նույնպես բարձր գնահատելով աբբահայր Մխիթար Սեբաստացու գործունեությունը, գրել է. «Այս միաբանության հիմնադրի, թե՛ կրոնական և թե՛ գիտական մտադրությունն էր իր հայրենակիցների ինտելեկտուալ վերածնունդը», գրաբարի ուսումնասիրության վերականգնումը և հայրենիքի մասին հիշողության պահպանումը, ճիշտ կերպով գրաբարով ստեղծված գրական ժառանգության հրատարակումը՝ այն հարստաց-

⁶² Մովսես Խորենացին Եղեսիան հիշատակել է նաև Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի աշակերտների՝ Հովսեփ Պաղնացու և Եզնիկ Կողբացու կողմից առաջին սուրբ հայրերի գրվածքների հայերեն թարգմանելու վայր լինելու կապակցությամբ (Մովսես Խորենացի, էջ 341):

⁶³ Նույն տեղում, էջ 30:

⁶⁴ Եվքսինյան Պոնտոսի (Սև ծով) ափին (Մովսես Խորենացի, էջ 164):

⁶⁵ Մովսես Խորենացի, էջ 144:

⁶⁶ Այդ ճանապարհորդությունը տեղի էր ունեցել Եփեսոսի՝ 431 թ. Երրորդ Տիեզերական ժողովից հետո (Մովսես Խորենացի, էջ 343-345) ոչ ուշ, քան 435 թ. (Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներածություն և ծան. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1968, էջ 6-7):

⁶⁷ Collection des historiens..., t. I, p. V.

մելով արևմտյան գրականության լավագույն երկերի թարգմանություններով⁶⁸:

XIX դ. եվրոպայում հայ գրականության հանդեպ աճող հետաքրքրության մասին Վ. Լանգլուան գրել է. «Հայ գրականությունը, որը քրիստոնյա Արևելքում առավել արգասաբերներից և հետաքրքրականներից է, Եվրոպայում կես դար է ինչ սկսել է լրջորեն գնահատվել: Մինչ այդ XVII դ. ժ. Վիյոթի և Լա Կրոզի [1661-1739 թթ.], իսկ հաջորդ դարի ընթացքում՝ Վիլֆրոյի, Շրյոդերի և Վիստոն եղբայրների փորձերը մնացել էին առանց արդյունքի»⁶⁹:

Համաձայն Վ. Լանգլուայի՝ զգալի թվով արժեքավոր ծեռագրեր ունեցող Վենետիկի, Փարիզի, Սանկտ Պետերբուրգի գրադարանները «մեծապես նպաստել են եվրոպայում զարգացնելու հայագիտության հանդեպ ճաշակը», նկատի ունենալով այն մեծ հետաքրքրությունը, որն արտացոլվեց Հայոց պատմության, գրականության, լեզվաբանության և արվեստի բնագավառներին

⁶⁸ E. Dulaurier, Les Arméniens..., p. 245. Հայոց ազգային և դավանաբանական տեսակետից հատկանշական է Հունգարիայի Արմենոպոլ քաղաքի հայկաթուղիկ համայնքի (տես Է. Գևորգյան, Հունգարահայ մշակութային զարթոնքը XIX դ. վերջին և XX դ. սկզբին, - 1974, N, 4, էջ 63-71) երկու ներկայացուցիչների հետ Ավստրիայի մայրաքաղաք՝ Վիեննայում հանդիպման ժամանակ (1893թ.) Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա խորհմանի արտասանած խոսքը. «.....Թե որ Դուք Ձեր հօտի անունեն ինձ Ամենայն Հայոց Հայրիկ կանուանեք, ես ձեզ գրկաբաց կոչեմ իմ զաւակներս և լիաբերան օրհնութիւնս եմ տալիս: Ճիշտ է, ցանկալի էր, որ բոլոր հայ ազգը Լուսաւորչի փարախին յարած լինէր, բայց եթէ տարբեր դաւանութիւնների կպատկանին, այդ տեղ եւս Աստուծոյ մատը կը տեսնեմ, վասն զի գուցէ Աստուած այդ միջոցն է գտել Հայ ազգի մէջ լուսաւորութիւն տարածելու համար: Կրօնը խղճմտանքի գործ է և Հայրիկի առաջ տարբերութիւն չունի Լուսաւորչական, կաթոլիկ, բողոքական Հայը: Բաւական է որ նա Հայ է իր ծագումով, ցեղով եւ լեզուով: Մեծ է ազգային համերաշխութեան գաղափարը» (Մեսրոպէ վրդ. Տեր-Մովսիսյանց, Ուղեւորութիւն Տ. Տ. Մկրտիչ Վեհ. Կաթողիկոսի Ամենայն Հայոց Երուսաղէմից – Էջմիածին, Ս. Էջմիածին, 1894, էջ 309-310: Խորհման Հայրիկի ուղևորության մանրամասնությունները տես Կոստանդյան Է., Մկրտիչ խորհման. Հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2008, էջ 351-353):

⁶⁹ Collection des historiens t. I, p. V. Հմմտ. Գ. Ա. Շրոմպֆ, նշվ. աշխ., էջ 105:

նվիրված ֆրանսիացի պատմաբանների, գրականագետների և արվեստաբանների ուսումնասիրություններում⁷⁰։

Ի թիվս այլ գրադարանների, Վ. Լանգլուայի նշած Փարիզի ազգային գրադարանում պահվող հայկական ձեռագրերի ցուցակը տարիներ անց կազմեց և Առաջաբանով («Հայկական ֆոնդեր» խորագրով) հրատարակության պատրաստեց անվանի հայագետ Ֆրեդերիկ Մակլերը (1869-1938 թթ.)։ 1908 թ. լույս տեսած այդ երկը⁷¹ բարձր է գնահատել 1998 թ. Փարիզում հրատարակված Ազգային գրադարանի հայկական գրչագրերի նոր ձեռագրացուցակի (կազմողներ՝ Ռայմոնդ Գևորգյան ու Արմեն Տեր-Ստեփանյան՝ աջակցությամբ հմուտ ձեռագրագետներ Բերնար Ուիտիեի ու Գևորգ Տեր-Վարդանյանի) «Նախաբանը» հեղինակած Ֆրանսիայի Ազգային գրադարանի նախագահ Ժան-Պիեռ Անգրենին, ընդգծելով, որ Ֆ. Մակլերի կազմած ձեռագրացուցակը իր կարևոր դերն է կատարել բանասիրության զարգացման գործում, իսկ նոր ձեռագրացուցակի կապակցությամբ նշել է, որ այն առավել հարուստ է ու կատարյալ, և լիովին գաղափար է տալիս հայ ժողովրդի անցյալի հարուստ գրականության վերաբերյալ⁷²։

XIX դ. կեսերին լույս տեսած «Հայաստանը և հայերը» վերտառությամբ մի աշխատությունում բարձր են գնահատվել հայ գրական արժեքները. «Հայ գրականությունը, որն Արևելքում ամենակարևորներից մեկն է, ընդգրկում է արժեքավոր վավերագրեր... նրանք պահպանում են իրենց պատկերած դարաշրջանի ճշգրիտ բնութագիրը»⁷³։

Սիջնադարյան պատմությանը նվիրված հայ պատմիչների տեղեկությունները գնահատելով՝ Վ. Լանգլուան գրել է. «Հիրավի, այն տեղեկությունները, որ հայ տարեգիրները պատմում են

⁷⁰ Collection des historiens..., t. I, p. V.

⁷¹ Catalogue des manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque Nationale par Frédéric Macler, Paris, 1908.

⁷² R. H. Kévorkian, A. Ter - Stépanian avec les concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, Manuscrits arméniens de la Bibliothèque nationale de France, Catalogue, Paris, 1998, p. V.

⁷³ De l'Arménie et des Arméniens, Paris, 1845, p. 6.

Պարսկաստանի դեմ կրոնական պատերազմների⁷⁴, արաբների և մոնղոլների նվաճումների, Ասիայում խաչակիրների ներկայության վերաբերյալ, ամբողջությամբ նոր լույս և անսպասելի պարզություն են սփռում արևելյան միջնադարյան պատմության վրա»⁷⁵: Վ. Լանգլուան նշել է, որ ֆրանսերեն թարգմանված «Collection des historiens anciens et modernes de l'Arménie» երկհատոր ժողովածուի⁷⁶ հրատարակության նպատակն է գիտական աշխարհին՝ հայ պատմագրության մեծաթիվ հարստություններին ծանոթացնելը»⁷⁷:

Հայ պատմիչների գրական բազմակողմանի ավանդը զնահատելիս՝ Վ. Լանգլուան հատուկ ուշադրություն է դարձրել նրանց կրոնական և աշխարհիկ մոտեցումների հարաբերակցության հարցին, գրելով. «Հայ հեղինակներն անդրադարձել են գրական գրեթե բոլոր ժանրերին, և, չնայած նրանց արձակ և չապածո ստեղծագործություններում խորապես զգացվում է ժողովրդի վրա ազգային հոգևորականության կրոնական ազդեցությունը, այնուամենայնիվ, նրանց աշխարհիկ գրականությունը շատ ավելի հարուստ է, քան Ասիայի այլ քրիստոնյա ազգություններինը: Այն տեղեկությունները, որ ազգային տարեգիրները մեզ հաղորդում են Արևմտյան Ասիայում կատարված իրադարձությունների մասին, սկսած աշխարհի արարումից մինչև մեր օրերը, ամենամեծաթիվ վավերագրերի չընդհատվող շարք են կազմում, ինչը հարևան ազգերի ժամանակագիրներն ամբողջությամբ լռության են մատնել»⁷⁸:

Նմանապես, արժևորելով հայ պատմիչների գործունեությունը Մ. Բրոսեն գրել է. «Չեն խուսափում խոստովանել, թե ինչ առանձ-

⁷⁴ Նկատի ունի Վարդան Մամիկոնյանի (450-451 թթ.) և Վահան Մամիկոնյանի (481-484 թթ.) գլխավորած ապստամբությունները նկարագրող Եղիշեի (Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխատ. Ե. Տեր-Սիմասեան, Երևան, 1957) և Ղազար Փարպեցու (Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատ. Գ. Տեր-Սկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904) երկերը:

⁷⁵ Collection des historiens t. I, p. VI.

⁷⁶ Collection des historiens..., t. I; Collection des historiens..., t. II.

⁷⁷ Collection des historiens t. I, p. VI.

⁷⁸ Ibid., pp. V-VI.

նահատուկ սեր ունեն հայ վարդապետների պատմական երկասիրությունների հանդեպ: Սեծ մասամբ նրանք [իրենց պատմած իրադարձությունների] ականատես վկաներն են»: Բարձր զնահատելով նրանց երկերում Ասիայի այլ երկների հետ հարաբերություններին նվիրված հաղորդումները, Մ. Բրոսեն կարևորել է դրանցում առկա ժամանակագրական ճշգրտությունը⁷⁹:

Վ. Լանգլուան արժարժեցիկ հայկական միջնադարյան սկզբնաղբյուրների՝ մեծ մասամբ հայ հոգևոր հայրերի գրչին պատկանելու խնդիրը, միննույն ժամանակ կարևորել է դրանց պատմագիտական արժեքը, որով, ինչպես ինքն է նշել, «հայ պատմագրությունն առանձնանում է քրիստոնյա Արևելքի ժողովուրդների գրական ժառանգության մեջ»⁸⁰:

2. Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի արժևորումը ֆրանսիացի հայագետների երկերում

XIX դ. ֆրանսիական հայագիտական դպրոցը զարգանում էր հայ դասական պատմագիտության ավանդույթների և Հայաստանում ու հարևան երկրներում հայտնաբերվող ու վերծանվող սեպագիր արձանագրությունների նյութերի, ինչպես նաև աստվածաշնչյան հաղորդումների համադրմամբ:

Հայոց պատմության հին և միջնադարյան հարցերի ուսումնասիրության խնդրում ֆրանսիացի հայագետներից նշանակալից են Ժ. Սեն-Մարտենի, Վ. Լանգլուայի, Մ. Բրոսեի, Է. Դյուլոթիեի աշխատությունները, որոնցում առանձնապես անդրադարձ է կատարվել Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկին:

Ֆրանսիայում Պատմահոր երկի նկատմամբ հետաքրքրությունը դրսևորվել էր դեռևս XVII դարում՝ Լյուդովիկոս XIV-ի

⁷⁹ Collection d'historiens arméniens.... t. I, p. XXIX.

⁸⁰ Collection des historiens t. I, pp. V-VI.

(1643-1715 թթ.) գահակալության ժամանակ⁸¹: Ֆրանսիայի ֆինանսների նախարար Ժան-Բատիստ Կոլբերն Արևելք գործուղված ֆրանսիացի արևելագետ և հնագետ Անտուան Գալլանին (1646-1715 թթ.) հանձնարարել էր գնել հայերեն հին գրքեր, որոնք հնարավոր կլինեին գտնել, և հատկապես՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը, ինչպես նաև Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը⁸²: 1669 թ. Ոսկան Երևանցին Լյուդովիկոս XIV-ին նվիրեց Ամստերդամում լույս տեսած Աստվածաշնչի հայերեն մի օրինակ⁸³:

Համաձայն Ժան-Պիեռ Անգրենիի՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում հայկական ձեռագրերի հարուստ ֆոնդի առաջին նմուշները մուտք են գործել արքունի հավաքածուներ դեռևս XVI դ. կեսին՝ Հենրի II-ի (1547-1559 թթ.) թագավորության օրոք. «Այս ֆոնդի առկայությունը համարվում է հայկական քաղաքակրթության հանդեպ ֆրանսիացի մտավորականների հետաքրքրության արտացոլումը»⁸⁴:

Փարիզի արևելյան լեզուների դպրոցի հայերենի դասախոս Լըվայան Դը Ֆլորիվալը դեռևս 1836 թ. ֆրանսերեն թարգմանել էր Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ը, սակայն թարգմանությունում եղած որոշ անճշտությունների պատճառով այն շուտով հանվել էր շրջանառությունից: 1841 թ. Վենետիկի Սբ. Ղազարում լույս տեսավ Մովսես Խորենացու երկի գրաբար տեքս-

⁸¹ Լյուդովիկոս XIV-ի գահակալության ժամանակաշրջանում Փարիզի Ազգային գրադարանը ձեռք է բերել մի քանի հայերեն ձեռագրեր, իսկ Լյուդովիկոս XV-ի (1715-1774) օրոք, այն հարստացել է Վենետիկի Սխիթարյան միաբանության օգնությամբ: Այնուհետև այդ գործով զբաղվել են աբբաներ Սևինը և Ֆուռնոն, ինչպես նաև Բինյոնը, իսկ աբբա դե Վիլեֆրոյը երկար ու անշահախնդիր աշխատել է հայերեն ձեռագրերի վրա (տե՛ս Ա. Դուլխանյան, Փարիզի Ազգային գրադարանի հայկական ձեռագրացուցակի Ֆրեդերիկ Սակլերի առաջաբանը, - ԴԲՀ, 2010, № 3, էջ 102, 106):

⁸² H. Omont, Missions archéologiques françaises en Orient aux XVII^e et XVIII^e siècles, Paris, 1902, p. 206.

⁸³ Գ. Զարբհանալեան, Պատմութիւն հայկական տպագրութեան..., էջ 114:

⁸⁴ R. Kévorkian, Manuscrits arméniens (de la Bibliothèque nationale de France), Paris, 1998, p. V.

տին զուգահեռ ֆրանսերեն թարգմանությունը Լըվայան Դը Ֆլորիվալի ուղղումներով և լրացումներով⁸⁵: Այս հրատարակությանը, ինչպես նշել է Վ. Լանգլուան, զգալի օգնություն էր ցուցաբերել Մխիթարյան միաբան և Սբ. Էջմիածնի Սինոդի անդամ Գաբրիել Այվազովսկին⁸⁶:

Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկի թարգմանության ծանոթագրություններից երևում է, որ Ս. Բրոսեն տեղյակ էր Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի 1695 թ. Ամստերդամում առաջին տպագրությանը, ինչպես նաև լատիներեն⁸⁷, ռուսերեն⁸⁸, ֆրանսերեն⁸⁹ և իտալերեն⁹⁰ թարգմանություններին:

Ս. Բրոսեն, հետևելով Մովսես Խորենացու երկի շարադրանքին, նշել է, որ այն բաղկացած է երեք գրքից՝ ժամանակագրորեն ընդգրկելով Հայոց պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 441 թ. Սահակ կաթողիկոսի մահը⁹¹: Նա նշել է, որ ենթա-

⁸⁵ P. E. Le Vaillant de Florival, Moïse de Khorène, Histoire de l'Arménie, Venise, 1841.

⁸⁶ Collection des historiens... t. II, p. 52, com. 1; J.-Ch. Brunet Manuel du libraire et de l'amateur de livres: Nouveau Dictionnaire Bibliographique, Paris, 1862, t. III, p. 1921. Հայ անվանի եկեղեցական գործիչ, արքեպիսկոպոս Գաբրիել Այվազովսկի՝ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու ավագ եղբայրը:

⁸⁷ Mosis Chorenensis Historiae Armeniacae, Latine verterunt, notisque illustrarunt Gulielmus & Georgius, Gul. Whistoni Filii, Londini, 1736.

⁸⁸ Арменская История сочиненная Монсем Хоренским с крат. географ. опис. Древней Армениии, перевел с арменского на российский язык Архидиакон Иосиф Иоаннесов, Санктпетербург, 1809; История Армениии Монсея Хоренского, перев. с армян. и объяс. Н. Эмин, Москва, 1858.

⁸⁹ P. E. Le Vaillant de Florival, op. cit.

⁹⁰ Storia di Mosè Corenese, Versione italiana illustrata dai monaci Armeni Mechitaristi, ritoccata quanto allo stile da N. Tommaseo, 1841, Seconda edizione 1850.

⁹¹ Ըստ Մովսես Խորենացու՝ Սահակ Պարթևն աթոռակալել էր «մինչև ցսկիզքն ամին երկրորդի Յազկերտի» և ծանր հիվանդությունից մահացել (Մովսես Խորենացի, էջ 355): Հազկերտ II-ը Պարսկաստանում զահակալել էր 439-457 թթ. (Р. Фраш, Наследие Ирана, Москва, 1972, с. 368): Է. Դյուլորիեն, չիամաձայնվելով Սեն-Մարտենի առաջարկած 440 թ. հետ, ժամանակագրական հաշվարկ է կատարել՝ եզրակացնելով, որ Սահակ Պարթևը մահացել էր 439 թ. (E. Du-laurier, Recherches sur la chronologie arménienne, Paris, t. I, 1859, p. 135). ինչպես և ընդունված է պատմագրության մեջ:

դրվում է, թե եղել է մահ 4-րդ գիրքը⁹², որը ժամանակագրորեն ընդգրկել է մինչև 474 թ.⁹³:

Անդրադառնալով Մովսես Խորենացու մեծ ներդրմանը «Ասիայի ազգերի տարեգրությունները կազմելու» խնդրում՝ Վ. Լանգլուան նրա երկի աղբյուրագիտական հիմքի պատմագիտական կարևորությունը պայմանավորել է այնտեղ եղած եզակի տեղեկություններով, քանզի Պատմահայրը «մեզ համար պահպանել է անտիկ դասական գրողներին անհայտ մնացած փաստերի հիշողությունը, և որ մեզ է փոխանցել կորած հունարեն և քաղղեերեն⁹⁴ աշխատություններից հատվածներ»⁹⁵:

XIX դարի ֆրանսիացի հայագետների մեծագույն մասը Մովսես Խորենացուն համարել է V դարի պատմիչ: Մ. Ժ. Կլապրոթը, հիմք ընդունելով Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Վիստոն եղբայրների հրատարակությունը, նշել է, որ Պատմահայրն ապրել է մինչև մոտ. 463 թ.⁹⁶:

Պատմահոր կենսագրության առնչությամբ դիտարկելով հայ պատմագրության տվյալները՝ Վ. Լանգլուան գրել է, որ նա ծնվել է IV դ. երկրորդ կեսին Տարոն գավառի Խորնի կամ *խորեն*⁹⁷ գյու-

⁹² Մ. Բրոսեն նկատի ունի Ղ. Ալիշանի Թովմա Աթորունու հաղորդումների հիման վրա առաջ քաշած տեսակետը, որ պետք է գոյություն ունեցած լիներ Պատմահոր երկի չորրորդ գիրքը (Ղ. Ալիշան, «Յաղագս Մովսիսի Խորենեցու Ղ անուանեալ գրոյն պատմութեան», «Բազմավեպ», 1851, № 5, էջ 69): Այս խնդրի շուրջ եղած գրականությունը մանրամասն հետազոտել է Ա. Մաթևոսյանը՝ եզրակացնելով. «Հիմք ընդունելով Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ տարբեր հարցերին անդրադառնալու խոստովանությունները և չորրորդ գրքի մասին որոշակի վկայությունը, ինչպես նաև Թովմա Աթորունու ցուցումները չորրորդ գրքից, կասկած չի մնում, որ «Հայոց պատմության» չորրորդ գիրքը գոյություն է ունեցել որպես հավելված՝ նախորդ գրքերի» (Ա. Մ. Մաթևոսյան, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» չորրորդ գրքի հարցը, - ՊԲՀ, 1991, № 2, էջ 204):

⁹³ Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha. Histoire en trois parties traduits par M. Brosset, 1^{re} livraison, St.-Petersbourg, 1870, p. 3, com. 1.

⁹⁴ Իմա՝ բաբելոնյան:

⁹⁵ V. Langlois, Etude sur les sources..., p. 310.

⁹⁶ M. J. Klaproth. Voyage au Mont Caucase et en Géorgie, t. II, Paris, 1823, p. 292, com. 2.

⁹⁷ V. Langlois, Etude sur les sources..., p. 300.

ղում: Հիմք ընդունելով Թովմա Արծրունու հաղորդած տեղեկությունը⁹⁸՝ գիտնականը նշել է, որ Պատմահայրն ապրել է դեռևս 484 թ.՝ բյուզանդական կայսր Ջենոնի (474-475, 476-491 թթ.) ժամանակաշրջանում ու մահացել ավելի քան հարյուր տարեկանում⁹⁹՝ Տարոնում և հողին է համծնվել Սուշ քաղաքի մոտ գտնվող Առաքելոց վանքի եկեղեցում, որը կոչվում է նաև «Ղազար կամ *Ելասար*»¹⁰⁰:

Ա. Բրոսեն նույնպես այն կարծիքին էր, որ Մովսես Խորենացին իր «Պատմություն Հայոց»-ը գրել է V դ.¹⁰¹, նշելով, որ Պատմահայրը ծնվել է 370 թ. Տարոն գավառի Խորեն գյուղում, Սուշի մերձակայքում¹⁰²:

Մովսես Խորենացու՝ V դարի պատմիչ լինելու փաստը և նրա հաղորդած տեղեկությունների հավաստիությունը հատկապես XIX դարի կեսերից պատմագիտական որոշ շրջանակներում «գերքննադատության» ենթարկվեց¹⁰³: Այս հարցը Վ. Լանգլուան հետևյալ կերպ է բացատրել. «Եթե որոշ հայտնի քննադատներ կասկածանքով են վերաբերվել Մովսես Խորենացու բարեխղճությանն ու ճշմարտացիությանն, ապա պատճառն այն է, որ նրանք բոլորովին չեն փորձել համեմատել նրա շարադրանքն իր ժամանակակից Ղազար Փարպեցու երկի հետ, որը նշում է Մովսեսի հիշատակած բազմաթիվ փաստերը, չնայած որ երկու հեղինակներն էլ երբեք իրար հետ չեն խորհրդակցել, և նրանք (քննադատները՝ - Ա. Դ.) բոլորովին չեն փորձել զուգահեռներ անցկացնել Հայաստանի Հերոդոտոսի (Hérodote de l'Arménie) հաղորդած տե-

⁹⁸ Ըստ Թովմա Արծրունու՝ «Մովսես տիեզերահռչակեալ քերթողն» իր երկը «սկսեալ յԱդամայ մինչ ի կայսր Ջենոն...» (Թովմա Արծրունի եւ Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Զննական բնագիրը, առաջաբանը և ծանոթագրությունները Մ. Հ. Դարբինյան-Սելիքյանի, Երևան, 2006, էջ 86-87):

⁹⁹ Collection des historiens..., t. II, pp. 47-48.

¹⁰⁰ Ibid., p. 48.

¹⁰¹ Հմմտ. J. Saint-Martin, op. cit., t. II, pp. 301-302.

¹⁰² Deux historiens arméniens: Kiracos de Gantzac. Histoire d'Arménie. Oukhtanès d'Ourha..., p. 3, com. 1.

¹⁰³ Այս հարցի մասին մանրամասն տե՛ս Ա. Սուշեդյան, նշվ. աշխ., էջ 8-18:

ղեկությունների և հույն ու լատին հեղինակների երկերում եղած հիշատակությունների միջև»¹⁰⁴:

XIX դարում սեպագիր արձանագրությունների հայտնաբերմանն ու վերծանմանը զուգընթաց, պատմաբանասիրության մեջ նաև փորձ կատարվեց հնագիտական նորահայտ փաստերով ստուգել ավանդաբար ընդունված ազգերի բիբլիական ծննդաբանությունը, որի արդյունքում կասկածներ արտահայտվեցին Հին Կտակարանի տեղեկությունների վրա հիմնված ազգերի ծննդաբանությունների մեկնությունների կապակցությամբ¹⁰⁵:

Մովսես Խորենացու երկի առնչությամբ դրսևորվող քննադատությունը Վ. Լանգլուան բացատրել է Պատմահոր դարաշրջանում գերակայող գաղափարների իրական պատկերի անտեսմամբ, նշելով, որ քննադատները հաշվի չէին առնում նրա դարաշրջանին բնորոշ գաղափարական սկզբունքները: Քննադատների նման դիրքորոշումը պայմանավորելով Հայոց հին պատմության սկզբնաղբյուրային փաստերին թերի մոտեցմամբ, Վ. Լանգլուան ուշադրություն է դարձրել այն փաստին, որ Հայոց պատմության

¹⁰⁴ V. Langlois, *Etude sur les sources ...* pp. 305-306. Ստ. Սալխալյանը (Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, էջ 113), Գ. Խ. Սարգսյանը (Мовсес Хоренаци. История Армении. Перев. с древнеармянского яз., введение и прим. Г. Саркисяна, Ереван, 1990, с. XXIII-XXXVI), Ա. Մուշեղյանը («Մովսես Խորենացու դարը», Երևան, 2007, էջ 28) և այլ պատմաբաններ հիմնավորապես հաստատել են Մովսես Խորենացու V դարի հեղինակ լինելու իրողությունը՝ մերժելով Մովսես Խորենացուն ավելի ուշ շրջանի (VII, VIII կամ IX դդ.) հեղինակ համարելու և նրա երկի նկատմամբ «գերքննադատական» դիրքորոշում ցուցաբերած Ա. Կարիերի (A. Carrière, *Nouvelles sources de Moïse de Khoren. Vienne, 1893*, pp. VI-VII), Գր. Խալաթյանի (Մովսես Խորենացու նորագույն աղբյուրների մասին, Հանդես ամսօրեայ, Վիեննա, 1897, № 10, 11, 12, էջ 359, Գ. Халатьянн. Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского, Москва. 1903, с. 359), Ռ. Թոմսոնի (Moses Khorenats'i. *History of the Armenians*, transl. and comment. on the literary sources by R. W. Thomson, Ann Arbor, 2006, pp. 59-60) և այլոց մոտեցումները:

¹⁰⁵ Անհրաժեշտ է նշել, որ դեռևս Մովսես Խորենացին քննադատորեն մոտենալով Հին Կտակարանում արտացոլված ազգաբանության Սեմի ծնողի նկատմամբ միակողմանի մոտեցմանը, գրել է «Մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ զհիւսն ի բաց հատեալ յինքն սեպիական ազգ ելից գայլոցն իբր զարհամարիելեացն և իւրոց անաթան կարգելոց բանից...» (Մովսես Խորենացի, էջ 17):

որոշ հարցերում V դարի պատմիչներն իրենց երկերում հիմնվում էին օտար պատմական սկզբնաղբյուրների և Աստվածաշնչից եկող կրոնագաղափարական ընկալումների համադրման վրա: Պատմափիլիսոփայական մոտեցում ցուցաբերելով՝ գիտնականը գրել է, որ Մովսես Խորենացին, ում որոշ հետազոտողներ համարում էին Եվսեբիոս Կեսարացու (մոտ. 260-340 թթ.) «ժամանականք»¹⁰⁶ «Քրոնիկոն» երկի հայերեն թարգմանության հեղինակ, որպեսզի «գրի իր հայրենիքի ծագման պատմությունը», անկասկած, ներշնչվել է այդ աշխատության ընթերցումից: Համաձայն Վ. Լանգլուայի. «Մովսեսն ապրում էր հիրավի մի դարաշրջանում, երբ գաղափարները շրջադարձ էին կատարում դեպի նախնական սինկրետիզմ»¹⁰⁷, ինչը բացատրում է, թե ինչպես քրիստոնյա հին տարեգիրները լուծեցին դժվարին խնդիրը՝ աստվածաշնչյան տոհմաբանությունը կապելով ազգային ծննդաբանություններին և այս՝ երկարատև կիսա-հերոսական և կիսա-պատմական սերունդները հասցրին մեկ ընդհանուր ակունքի, որի ավանդույթները նվիրված էին գոյին»¹⁰⁸:

XVIII դարում Մ. Լա Կրոզը պատմության վերաբերյալ արտահայտել է հետևյալ միտքը. «Սովորաբար պատմությունը բաժանում են սրբազանի և աշխարհիկի. առաջինը ներառված է Հին և Նոր Կտակարանների սուրբ Գրքերում, երկրորդը՝ Հին աշխարհի մնացած բոլոր հուշարձաններում... Աշխարհիկ պատմությունը

¹⁰⁶ Եւսեբի Պամփիլեայ Կեսարացոյ ժամանականք, աշխատասիրութեամբ Հ. Սկրտիչ Աւգերեանց, Ի Վենետիկ, 1818:

¹⁰⁷ Փիլիսոփայական և կրոնական պատկերացումներում համոզմունքների, պատկերացումների տարբեր համակարգերի համաձայնեցում կամ միաձուլում:

¹⁰⁸ V. Langlois, Etude sur les sources..., p. 310. Այս տեսակետից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Հ. Գևորգյանի այն դիտարկմանը, որ նոր ժամանակներում «գերքննադատության» սկզբնավորման քաղաքական պատճառները պայմանավորված էին ծավալապաշտ տերությունների քաղաքական-գաղափարախոսական նպատակներով (Հ. Ա. Գևորգյան, Փիլիսոփայություն. Պատմություն. Մշակույթ, Երևան, 2005, էջ 481):

բաժանվում է անհայտ և անորոշ, առասպելական և պատմական ժամանակների»¹⁰⁹:

XIX դարում հին և վաղմիջնադարյան պատմության ուսումնասիրության հարցերի նկատմամբ դիտարկվում է կրոնափիլիսոփայական մեթոդաբանությամբ մոտեցում: Պատմության հետազոտության կրոնափիլիսոփայական քննարկումները XIX դարից մեծագույնս պայմանավորված էին սինկրետիկ մեթոդի կիրառման սկզբունքներով¹¹⁰: Այս տեսանկյունից քննարկելով հեթանոսական և քրիստոնեական փոխազդեցությունների խնդիրը՝ Ֆ. Վելանը գրել է. «Դասական հեթանոսական ավանդույթին քրիստոնեության հարաբերակցությունը քաղաքագետները և քաղաքական մտքի պատմության մասնագետները շատ հաճախ դիտել են, որպես մի հակադրություն... Այնուամենայնիվ, արդարության մասին բիրելիական և դասական-փիլիսոփայական գաղափարներն իրենց բովանդակությամբ ամբողջապես միանման են»¹¹¹:

Պատմության՝ կրոնափիլիսոփայական տեսանկյունից հետազոտությունը կատարելով սինկրետիկ մեթոդով, ֆրանսիացի հետազոտողները որոշակի տեղ են տվել Արևելքի քրիստոնյա ազգերի և, մասնավորապես, հայերի ազգաբանության ուսումնասիրությանը: Հայոց էթնոհոգևոր պատմության ուսումնասիրության առանցքում Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկն էր, որը որոշակի հիմքեր է տվել XIX դարի ֆրանսիական հայագիտական դպրոցին տեսական վերլուծություններ կատարելիս:

¹⁰⁹ M. L. a Croze, *Abregé de l'Histoire universelle*, Brems, 1765, p. 1.

¹¹⁰ Պատմությանը կրոնափիլիսոփայական հայեցակարգով մոտեցմամբ ռուս մտածող Լ. Ա. Տիխոմիրովը (1852-1923 թթ.) գրել է. «Փիլիսոփայական ճանաչողության մեջ ծագումն ենք պարզել մեր ուսումնասիրության ներքին իմաստը, իսկ այս խնդիրը մարդկության պատմության հանդեպ բերում է կրոնական տեսակետի ներկրմանը՝ պատմական իրադարձությունների դիտարկման բնագավառ: Պատմագիտությունը մեզ տեղեկություններ կտա այն մասին, թե ինչ ուղիով և արտաքին ինչպիսի պայմանների ազդեցությամբ էր զարգանում մարդկությունը» (Л. А. Тихомиров, *Религиозно-философские основы истории*, Москва, 2007, с. 1).

¹¹¹ Fr. G. Whelan, *Justice: Classical and Christian – Political Theory*, vol. 10, № 3, August, 1982, pp. 435-460.

3. Ֆրանսիացի հայագետների մոտեցումը Հայկազունների տոհմաբանության ավանդությանը

Արևելքի քրիստոնյա ազգերի և, մասնավորապես, հայերի ծագումնաբանությանը ֆրանսիացի հայագետները մոտեցել են սինկրետիկ մեթոդաբանությամբ: Սեն-Մարտենը և, հատկապես, Վ. Լանգլուան՝ կրոնական գոյաբանության տեսակետից Մովսես Խորենացու՝ հայ ազգի ծագման մասին հայեցակարգի ուսումնասիրությունը պայմանավորել են աստվածաշնչյան և հայկական՝ ավանդական՝ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող պատկերացումներից բխող տեղեկությունների համադրումով:

Այս տեսանկյունից Սեն-Մարտենն իր աշխատությունում զգալի ուշադրություն է դարձրել այդ խնդրին և բավականին մանրամասն անդրադարձել Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագրի համապատասխանությանը Սուրբ Գրքի որոշ հաղորդումներին, նշելով, որ Սուրբ Գրքի տարբեր հատվածների ուսումնասիրությունը, որտեղ խոսքը Թորգոմի հետնորդների բնակեցրած երկրամասերի մասին է, վկայում է, որ դրանց մի մասը «համապատասխանում է Արմենիա անունով երկրին»: Սեն-Մարտենը նշել է, որ «դեռևս Եվսեբիոսը և մի քանի հին մեկնիչներ այս երկրում են նշել նահապետի բնակության վայրը, չնայած որ այլ հեղինակներ այն տեղադրել են Փոքր Ասիայի տարբեր մասերում»¹¹²:

Սեն-Մարտենը Սուրբ Գրքի կապակցությամբ գրել է, որ *Արմենիա* (Հայաստան) անունը «հայտնի չի եղել հրեաներին», քանզի նրանք հիշատակել են *Արարատը*¹¹³: Գիտնականը նշում է, որ

¹¹² J. Saint-Martin, op. cit., t. I, p. 258.

¹¹³ Արարատ անունը հիշատակվում է Սուրբ գրքի եբրայերեն բնագրում որպես *Արարատի լեռներ* (The interlinear Bible Hebrew-Greek-English, Massachusetts, 1986, Gen. VIII, 4.), *Արարատի երկիր* (2 Kings XIX, 37; Isaiah XXXVII, 27), *Արարատյան բազավորություն* (Jeremiah LI, 27): Եբրայերեն բնագրում և Յոթնամյացում (մ.թ.ա. III դ.) հիշատակված Արարատի լեռներ արտահայտությունը Վուլգատայում (IV դ. վերջ - V դ. սկիզբ) ներկայացված է որպես Հայաստանի լեռներ՝ montes Armeniae («Requievitque arca mense septimo, vigesimo

չնայած վերջինս Հայաստանում միշտ գործածվել է նահանգ նշանակությամբ, այն հավանաբար ի սկզբանե եղել է ամբողջ Հայաստանի անվանումը, որը «Սուրբ Գրքում գործածվել է միայն այն լեռնաշղթայի առումով որտեղ Նոյի տապանն է կանգ առել»: Սեն-Մարտենը հայ Արշակունի արքաների գահակալության ժամանակաշրջանի առումով վկայակոչել է այդ նահանգի *Արարատ* կամ *Այրարատ* (Ararad ou Aïrarad) անվանածները, նշելով, որ լինելով Հայաստանի նահանգների մեջտեղում, այն գրեթե միշտ եղել է «արքաների նստավայրը և կառավարման կենտրոնը»¹¹⁴:

Հատկանշական է Սեն-Մարտենի մեկնությունը Արարատ անվան կապակցությամբ, որն Աստվածաշնչում մախ հիշատակվել է Ծննդոց գրքում, իսկ այնուհետև Եսայի մարգարեի և «Թագաւորութեանց» գրքերում: Սեն-Մարտենը ուշադրություն է դարձրել, որ *Յոթանասնից* թարգմանությունում, Հովսեփոսի «Հրեական

septimo die mensis super montes Armeniae» (Biblia Sacra Vulgatae editionis iuxta exemplaria ex typographia apostolica Vaticana, Romae 1592 & 1593 inter se collata et ad normam correctionum romanarum exacta auctoritate summi pontificis Pii IX, editit Valentinus Loch, Typis a Sumtibus Georgii Josephi Manz, 1863, t. I, Gen. VIII, 4): *Յոթանասնիցի* εἰς τὰ ὄρε' Ἀραράτ (The Septuagint Version of the Old Testament, with an English translation and with various readings and critical notes, London, 1884, Τωβίτ I, 21)' արտահայտությունը գրաբար թարգմանված է «ի լեռինս Հայոց» (Գիրք Աստուածաշունչը Հին եւ Նոր Կտակարանաց, ի Վենետիկ, 1860, Թովթիթ Ա 24):

¹¹⁴ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 260. Արարատ լեռան անունը նույնացնելով «Աշխարհացոյց»-ի Այրարատ նահանգի անվան, իսկ Աստվածաշնչի հաղորդման մեկնությամբ ամբողջ Հայաստանի հետ Ղ. Ինճիճեանը իրավացիորեն գրել է. «*Արարատ* եր բնիկ անուն դաշտին, որոյ և շրջակայ սահման կացոյց ապա զճին ի հնգետասան նահանգաց Մեծին Հայոց, յանուն նորին նոյնպէս անուանեալ *Արարատ*. և զի այս նահանգ եղև արքայանիստ թագաւորութեան Հայոց, մինչև *կալուած* արքայի կոչել զայն Խորենացոյն («յԱյրարատ ի կալուածս արքայի», Բ, ԿԱ): Նմին իրի համօրէն աշխարհս Հայոց բազում ուրեք յօտարազգ ի մատենագրաց յաւետ ի սուրբ գրոց կոչեցաւ *Արարատ*: Վասն որոյ ուրանօր ի սուրբ գրոց եբրայեցւոց *լեռինք Արարատու* կոչին, զԱրարատն չէ պարտ առնուլ անդ իբր անուն սեփական լեռին, այլ սեփական աշխարհին. որպէս թ ասէր *լեռինք Արարատեան աշխարհին*. այս ինքն է Հայաստանեաց: Եւ սխալին որք զհակառակն դնեն. որպէս թ սուրբ գիրք եբրայականք *Արարատ* անուամբ միայն զգօտի լեռանցն համարին ուր հանգեաւ տապանն Նոյի» (Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա, էջ 56-57):

հնություններ»-ում, Վուլգատայում և Աստվածաշնչի հայերեն թարգմանություն պահպանվել է Արարատ անվանումը, նշելով, որ այն, կամ թարգմանվում է *Հայաստանի լեռներ* կամ *հայերի երկիր* (par les mots de Montagnes d'Arménie ou de Terre des Arméniens): Սեն-Մարտենը գրել է. «Ասորերենով Աստվածաշնչի բոլոր թարգմանիչները և մեկնիչները, երբ չեն պահպանել *Արարատ* սկզբնական արտահայտությունը, այն փոխարինել են *քրդերի լեռներ* արտահայտությամբ: Այս օրինակին են հետևել Աստվածաշնչի արաբերեն թարգմանիչները»¹¹⁵:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սուրբ Գրքի հիմնաստորերեն և արաբերեն թարգմանություններում *Կարդու*, *Քարդու* անվանումները գործածվել են *Արարատ* անվան փոխարեն¹¹⁶:

¹¹⁵ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 261. Սեն-Մարտենը, այս հարցի առնչությամբ իր կողմից քննարկվող սկզբնաղբյուրներում եղած *Կորդուքի լեռներ* (ասոր. «Կարդու») անվանման փոխարեն գործածել է իր ժամանակի առունդով սխալ կերպով կիրառվող «քրդերի լեռներ» արտահայտությունը: Սեն-Մարտենը գրել է, որ Սեծ Հայքի Կործայք նահանգը նաև հայտնի էր Կորդվաց աշխարհ անունով, սակայն սխալ կերպով այն անվանել է նաև «քրդերի երկիր» (Ibid., pp. 176, 262): Հայտնի է, որ Սեծ Հայքի Կործայք նահանգի Կորդուք գավառի (տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 108) կապակցությամբ օտար սկզբնաղբյուրներում եղած վաղ հիշատակություններից է Քսենոփոնի «Անաբասիս» երկում գավառի բնակիչներին *Καρδυχοί* (այսինքն՝ *Կորդուքցիներ*) ձևով հիշատակումը (Xenophon, Anabasis, books IV-V, with an English translation by Carleton L. Brownson and O. J. Todd, London, 1957, IV. I.11, III. 24-27, V. 5.17), որը վերաբերում էր հայ բնակչության Կորդուքում ապրող հատվածին: Հայոց հիմնավոր Կորդուք գավառը, ըստ Պատմահոր, Հայկի թողան Կաղմոսի բնակչության երկրամասն էր՝ «տունն Կաղմեայ» (Մովսես Խորենացի, էջ 34): Այնինչ, Արևմտյան Հայաստանում Օսմանյան կայսրության վարած զավթողական քաղաքականությունում քրդական տարրի օգտագործման մասին գրելիս՝ Ն. Աղոնցը նշել է, որ քրդական ցեղերի գաղթը սկսվել է XVI դ. երկրորդ տասնամյակից (Ն. Աղոնց, Հայկական հարցի լուծման շուրջ, Երևան, 1989, էջ 64-65): Ղրա արտահայտություններից էր նաև հայկական տեղանունների բռնագրոսիկ փոփոխումը (տե՛ս Ch. Texier, Description de l'Arménie, la Perse et la Mésopotamie, Paris, première partie, 1842, p. 67):

¹¹⁶ Հ. Շալեյերը, համարելով, որ Karduk (armen. Korduk) [«Կարդու» (հայերեն՝ Կորդուք)] անվանումը քրիստոնյաները (ի՞նչ ասորի) և ավելի ուշ՝ արաբները գործածել են ըստ «բաբելոնական ավանդույթի» (ի՞նչ ասորերեն և արաբերեն թարգմանություններում), միևնույն ժամանակ գրել է, որ «Gudi» անվանածը կիրառվել է «Քարդու-լեռ»-ան («Qardu-Berg») կապակցությամբ: Նա

Արարատը Կորդուքի հետ նույնացումը մերժելով՝ Սեն-Մարտենը նշել է, որ երկու տիպի թարգմանությունների արդյունքում ստեղծվել են երկու տարբեր կարծիքներ՝ ջրհեղեղից հետո տապանի կանգ առնելու վայրը տեղորոշելիս: Ըստ գիտնականի՝ Միջագետքի և Ասորիքի հյուսիսում տապանի հանգրվանելու տեսակետը, հիմնականում ընդունվել է «արևելյան քրիստոնյաների, ասորիների ու արաբների կողմից»¹¹⁷: Սեն-Մարտենը գրել է. «Այս առաջին ավանդությունը արևելքում բավականին հին էր, քանզի Յովսեփոսի և Եվսեբիոսի վկայությամբ այն զոյություն ուներ քաղղեացի Բերոսոս և Աբյուղենոս պատմիչների ժամանակ»¹¹⁸: Ըստ Յովսեփոս Փլավիոսի Բերոսոս Քաղղեացին, պատմելով ջրհեղեղի ժամանակ տեղի ունեցած դեպքերի մասին, նշել է. «Ասվում է, թե մինչև հիմա էլ նավի մի մասը գտնվում է Հայաստանում, Կորդվաց լեռների մոտ»¹¹⁹, և որ ոմանք (նրա վրայից)

նաև նշել է Արարատի մասին Կեղծ-Յովնաթանի վկայությունը («Արարատի լեռների Լուբարը») «Հոբելյանների գրքում» (H. Speyer. Die biblischen Erzählungen im Quran, Hildesheim, 1988, S. 106-108).

¹¹⁷ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 261.

¹¹⁸ Ibid.

¹¹⁹ Յմտ. Սբ. Հակոբոս Մծբնացու մասին Փավստոս Բուզանդի հաղորդումը. «Այր ընտրեալ յմատուծոյ, յիւրմէ քաղաքէ անտի գալ հասանել ի լերինս Հայոց, ի լեառնն Սարարադայ ի սահմանս Արարատեան տէրութեան ի գաւառն Կորդուաց» (Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1933, էջ 33): Սկստիչ էմինը Փավստոս Բուզանդի «Պատմութիւն Հայոց» երկի ֆրանսերեն թարգմանության մեկնությունում «Սարարադ» անվանաձևի կապակցությամբ նշել է, որ հավանաբար «գրիչների կողմից արված ուղագրական սխալ է» (Collection des historiens... t. I, p. 218, com. 2): Ֆր. Սուրադը ամբողջառանգելով «Արարադ(տ)» ընթերցմանը հնարավոր է համարել, որ «Սարարադ»-ը «ի լերինս Արարադայ» բառերի սխալ տարանջատման հետևանք է (Fr. Murad, Ararat und Masis: Studien zur armenischen altertumskunde und litteratur, Heidelberg, 1901, S. 83-84): Ստ. Մալխասյանը նույնպես «Սարարադ» ձևը կասկածելի է համարել, առաջ եկած երկու կից բառերի սխալ տրոհումից, քանի որ ինչպես ինքն է նշում, «հին ժամանակ երկաթագիրներում բառերն իրար կից էին գրում ԻԼԵՐԻՆՍԱՐԱՐԱՏԱՅ տրոհել են «ի լերին սարարատայ», փոխանակ «ի լերինս Արարատայ» (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծան. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, էջ 423, ծան. 32): Մովսես Խորենացու քննական բնագրի հրատարակությունից երևում է, որ «Արարադ» ընթերցման հետ մեկտեղ ձեռագրական տարընթերցումներում առկա է «Արարատ» անվանաձևը

պոկելով կուպրի կտորներ են բերում, և մարդիկ դրանք կրում են իրենց վրա, իբրև հուռուք»¹²⁰:

Նմանապես Եվսեբիոս Կեսարացին գրել է. «Եւ ի նաւէն՝ ուր չոգաւ դադարեաց ի Զայս, եւ ցայժմ սակաւ ինչ մասն ի Կորդուացոց լերինն ի Զայոց աշխարհին մնալ նշխար ասեն»¹²¹:

Անհրաժեշտ է նկատի ունենալ Եղիշե պատմիչի մեկնությունը. «Արարատու լեռնն ոմանք զԿորդուացն ասեն, այլ ճշմարտութիւն յայտնի առնէ զնա ի Մասիս գոլ»¹²²:

Միջայել Չամչանցը մանրամասն քննելով Սուրբ գրքի եբրայերեն բնագրի և թարգմանությունների խնդրո առարկա տեղեկությունները և դրանց վերաբերյալ հին ու միջնադարյան սկզբնաղբյուրներում եղած տարբեր մեկնությունները, նշել է. «Աշխարհն Արարատեան փոխանակի յոմանս Արարատ կոչի, և յոմանս Արմենիա, և յոմանս Կորդուաց...»¹²³: Հետագայում Վ. Ինգլիզյանը հետազոտելով այս խնդիրը գրել է, որ Ծննդոց գրքի եբրայերեն բնագրի և *Յօթնասնիցի* վերոհիշյալ արտահայտությունը հայերեն թարգմանվել է «ի լերինս Արարատայ», իսկ ասորերեն Պեշիտտա¹²⁴ կոչվող թարգմանությունում՝ «al tu-ra'i qardū...»¹²⁵:

Հովսեպոս Փլավիոսը ի շարունակություն իր վերոհիշյալ տեղեկության գրել է. «Դրանց (իմա՝ Կորդվաց լեռների) մասին հի-

(Սովսես Խորենացի, էջ 33, տարընթերցում 5, էջ 34, տարընթերցում 13): Ինչ վերաբերում է Կորդուքի հիշատակմանը, ապա այն կարելի է ենթադրել Փավստոս Բուզանդի երկում հետագայում կատարված ներմուծում:

¹²⁰ Հին հունական աղբյուրներ Ա. Հովսեպոս Փլավիոս, Դիոն Կասիոս, Հրեական հնախոսություն, Գիրք առաջին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 55:

¹²¹ Եսեբի Պամփիլեսյ Կեսարացոյ ժամանականք, էջ 36-37:

¹²² Լ. Խաչիկյան, Եղիշեի «Արարածոց մեկնություն», Երևան, 1992, էջ 245:

¹²³ Մ. Չամչեանց, Պատմութիւն Զայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 150:

¹²⁴ Հին Կտակարանի թարգմանությունն է, որն օգագործել են ասորի քրիստոնյաները (Ю. Васильчева, Пятикнижие сирийской Пешитты и экзегетические традиции арамейских targumov. - Вестник ПСТГУ. Богословский сборник 11. Москва, 2003, с. 116):

¹²⁵ Հ. Վ. Ինգլիզեան, Զայաստան Սուրբ Գրքի մեջ, Վիեննա, 1947, էջ 5, հմմտ. Հ. Գ. Մելքոնյան, Զայ-ասորական հարաբերությունների պատմությունից, էջ 76-78, Ю. Васильчева, ук. соч., с. 90, 115.

շատակում են նաև Հիերոնիմոս Եգիպտացին (340–420 թթ.)¹²⁶, որը գրել է *Փյունիկյան հնախոսությունը*, Մնասեասը (մ.թ. ա. II դ.) և շատ ուրիշներ, ինչպես նաև Նիկողայոս Դամասկոսցին (մ.թ.ա. I - մ.թ. I դ.) իր իննսունվեցերորդ գրքում պատմելով այդ բոլորի մասին, այսպես է ասում. «Մինիաս (երկրից)¹²⁷ վերև՝ Հայաստանում կա մի խոշոր լեռ Բարիս անունով¹²⁸, որտեղ, պատմության համաձայն, շատերը ապաստանելով փրկություն են գտել ջրհեղեղի ժամանակ, իսկ մեկը տապանի վրա տարվելով, իջել է գագաթին և տախտակների մնացորդները երկար ժամանակ պահպանվել են»¹²⁹:

Սեն-Մարտենը ավելի ճշգրիտ է համարել այն ավանդությունը, համաձայն որի՝ Արարատ լեռը Հայաստանի կենտրոնում է (le mont Ararat dans le centre de l'Arménie), նշելով, որ այն «հավանաբար ի սկզբանե գալիս է *Յոթանասնից* տարբերակից»¹³⁰:

¹²⁶ Լատիներեն «Վուլգատայի» թարգմանիչն է:

¹²⁷ Ս. Ս. Կրկյաշարյանը այս առնչությամբ ծանոթագրել է. «Մինիաս երկիրը Աստվածաշնչում «Միննի» ձևով (ասուրական սեպագիր արձանագրություններում՝ «Մաննա») հիշատակվում է միշտ Արարատի հետ կապակցված» (Հին հունական աղբյուրներ Ա, էջ 102, ծան. 120):

¹²⁸ Ս. Չամչյանը (Պատմություն Հայոց, հ. Ա, էջ 150) Բարիս լեռը նույնացրել է Մասիսի հետ: Իսկ Սեն-Մարտենն այն ենթադրաբար տեղադրել է Հայաստանի մեջտեղում՝ Բագրևանդ գավառում նույնացնելով Փալատոս Բուզանդի հիշատակած (Փալատոս Բիզանդ, էջ 255) Վարազ լեռան հետ (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 265): Մարկվարտը այն նույնացրել է Նեխ-Մասիք-Սիփանին (Jos. Markwart, Sūdarmenien, und die Tigrisquellen: nach griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 78): Հետագայում հետազոտողները իրենց մեկնություններում վերադարձան Բարիս-Մասիս նույնացման տեսակետին (Fr. Murad, op. cit., S. 47-51: Ա. Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2004, էջ 68-73): Ջրհեղեղի մասին հին և միջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկությունները մանրամասն քննել է նաև Ա. Մուշեղյանը, հաստատելով՝ Արարատ-Մասիսը տապանի իջման լեռ լինելու տեսակետը (Ա. Մուշեղյան, «Ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը» (Ըստ ասուրա-բաբելական, հունա-հռոմեական, ասորական և հայկական աղբյուրների)», ՊԲՀ, 2003, № 1 (162), էջ 3-39):

¹²⁹ Հին հունական աղբյուրներ Ա, էջ 55:

¹³⁰ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 264.

Սեն-Մարտենը գրել է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանիչները միշտ հետևել են *Յոթանասնից* տարբերակին և ընդունել այն տեսակետը, ըստ որի՝ «իրենց հայրենիքը մարդկության բնօրրանն է» («...leur patrie le berceau du genre humain»)¹³¹:

VIII-IX դդ. արաբ պատմիչ ալ-Վակիդիի «Ասորիքի նվաճումը» աշխատությունում հաղորդվում է. «Իսկ Վահրն ասել է, թե մեզ պատմել են, որ տապանը... մեկ ամիս կանգնեց Արարադ (Ջուղի) լեռան վրա, որը լեռ է Ջազիրա երկրում...»¹³²: Նման կարծիք են հայտնել նաև IX դարի արաբ մատենագիր ալ-Դինավարի Իբն Կուտայբան, ինչպես նաև ալ-Յակուբին¹³³:

Հետագայում արաբ հեղինակները շարունակեցին տապանին առնչված իրենց մեկնություններում շահարկել Ջուղի լեռան անվանումը: XIII դ. արաբ հեղինակ Իբն ալ-Ասիրը իր «Լիակա-տար պատմություն» աշխատությունում նշել է. «Եվ ծփաց [Նոյի] տապանը երկրի վրա... մինչև որ հասավ ալ-Ջուղի, որը լեռ է Կարդիում. Սոսուլի երկրում, և այնտեղ կանգ առավ»¹³⁴: XII-XIII դդ. արաբ աշխարհագիր Յակուտ Աբու Աբդալլահ Շահաբադդինը (1178-1229) գրել է. «*Նոյի տաճարը մինչև հիմա մնում է Ջուղի լեռան վրա*»¹³⁵:

Հ. Նալբանդյանը, անդրադառնալով այս խնդրին, նշել է. «Ո՛չ Աստվածաշնչում և ո՛չ էլ հայկական հին ավանդություններում չկա, թե Նոյի տապանը Մասիսի կամ Արարատ լեռան վրա իջած լինի»¹³⁶: Նա մեջբերելով Փավստոս Բուզանդի և Թովմա Արծրու-

¹³¹ Ibid., p. 266.

¹³² Արաբական աղբյուրներ Գ, արաբ մատենագիրներ Թ-Ժ դարեր, ներածությունը և բնագրից թարգմանությունները Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 2005, էջ 128:

¹³³ Նույն տեղում, էջ 202, 206, 332:

¹³⁴ Արաբական աղբյուրներ Բ, Իբն Ալ-Ասիր, թարգմանություն բնագրից առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 37:

¹³⁵ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ, կազմ. Հ. Թ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 50:

¹³⁶ Նույն տեղում, էջ 154, ծան. 136: Մ. Տիերին սխալ կերպով հարցը դիտարկելով քաղաքական հանգամանքների տեսանկյունից, Նոյի տապանի հանգրվանելու վայրը համարել է Ջուղին և եզրակացրել, որ Արարատ-Մասիսի ավանդական նույնացումը կատարվել է ավելի ուշ՝ պայմանավորված Հայաստանի

նու տեղեկությունները տապանի վերաբերյալ, ինչպես նաև հիմնվելով «Իսլամի հանրագիտարան»-ում եղած տեղեկության վրա գրում է. «Շփոթություն ստեղծվեց ավելի ուշ: Տրված լինելով, որ այս երկրամասում ամենաբարձր լեռը Մասիսն է, իսկ Վանա հարավակողմը տարածվող Ուրարտու երկրի անունը Հայաստանի լեռան և շուրջը տարածվող նահանգին փոխանցվելով Այրարատ կոչվեց այդ նահանգը, ինչպես նաև Ծննդոց գրքի VIII-4-ի անճիշտ մեկնաբանությունը զուգադիպեցին Ջաբալջուտին նույնացնելու Արարատ լեռան հետ»¹³⁷: Հետազոտողի ուշադրությունից վրիպել է, որ «Իսլամի հանրագիտարան»-ի ֆրանսերեն հրատարակությունում միահյուսելով տարբեր կարծիքները եզրակացվում է նաև, որ ասորեստանյան արձանագրություններում հիշատակված Արարատը, «Վանա լճի հարավում գտնվող երկրամաս էր: ... Մասիսը (Մեծ Արարատ), ինչպես նաև Ջաբալ Ջուդին, երկու գագաթներն էլ, որպես տապանի ավանդական իջնելու վայր, կարող էին լինել, համաձայն բիբլիական վարկածի, Արարատի լեռները»¹³⁸:

Ջուդին որպես տապանակիր լեռ, հիշատակվում է նաև Ղուրանում¹³⁹: Ղուրանի XVIII դ. ֆրանսերեն թարգմանության մեկնությունում Ս. Սավարին հիմնվելով Հնգամատյանի տեղեկությունների վրա, տապանակիր լեռ է համարել Արարատը¹⁴⁰:

քաղաքական բաժանվածությամբ և էջմիածնի ազդեցությամբ (M. Thierry, Le lieu d'échouage de l'arche de Noé dans la tradition arménienne. - Syria, 1995, vol. 72, issue 1-2, pp. 143-158): Մ. Տիերիի նման կարծիքը քննադատվել է պատմագրության մեջ (տե՛ս Հ. Յարութիւն վրդ. Պզտիկեան, Հայ ժողովուրդի ազատագրութեան պայքարը (ԺԹ-Ի դդ.), Երևան, 2004, էջ 82):

¹³⁷ Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 154, ծան. 136:

¹³⁸ Encyclopédie de l'Islam établie avec le concours des principaux orientalistes B. Lewis, Ch. Pellat et J. Schacht, t. II. C-G, Paris, 1965, p. 589.

¹³⁹ Ղուրան, թարգմանեց արաբերենից հայերենի Աբր. Ամիրխանեանց, Վառնա, 1909, Սուրա XI. 46, էջ 205:

¹⁴⁰ Le Coran, traduit de l'arabe, accompagnée de notes, et précédé d'un abrégé de la vie de Mahomet par M. Savary, Paris, 1783, t. I, p. 230.

Ջորջ Սեյլը, որը 1734 թ. հրատարակեց Ղուրանի անգլերեն թարգմանությունը, Ջուդի լեռան մասին իր մեկնությունում գրել է, որ այդ անվանումը հավանաբար աղճատված է, չնայած որ արաբները մշտապես գրել են «Ջորդի» կամ «Ջիորդի» անվանաձևերով¹⁴¹:

1979 թ. Շեյխ Սի Համդա Բուբակյոդի Ղուրանի ֆրանսերեն թարգմանությունում Ջուդի լեռան մասին հետևյալ մեկնությունն է արված. «Հրաբխային մեծ հայկական գագաթներից մեկի անվանումն է, որը հայտնի է Արարատ անվանմամբ և որի ամենաբարձր կետը հասնում է 5157 մ.»¹⁴²: Կարելի է տեսնել, որ այստեղ Ջուդին սխալ կերպով նույնացվել է Արարատ-Մասիսի¹⁴³ հետ:

1947 թ. Մեռյալ ծովի հյուսիս արևմտյան կողմում գտնվող Կումրանի քարայրներից մեկում հայտնաբերվեցին կավե ամաններում թաքցված մագաղաթյա ձեռագրեր¹⁴⁴, որոնք նոր լույս սփռեցին խնդրո առարկա հարցի վրա: Արամներեն բնագրի 10-րդ սյունակի 12-րդ տողում հաղորդվում է, որ տապանը «նստեց

¹⁴¹ The Koran: commonly called The Alcoran of Mohammed, translated into immediately from the original arabic; with explanatory notes, by George Sale, Philadelphia, 1850, p. 179 հմմտ. Le Koran, traduction nouvelle faite sur le texte arabe par M. Kasimirski, Paris, 1865, p. 175.

¹⁴² Le Coran, texte, traduction française et commentaire d'après la tradition, les différentes écoles de lecture, d'exégèse, de jurisprudence et de théologie, les interprétations mystiques, les tendances schismatiques et les doctrines hérétiques de l'Islam, et à la lumière des théories scientifiques, philosophiques et politiques modernes par le Cheikh Si Hamza Boubakeur, Fayard, 1979, t. I, p. 705.

¹⁴³ Ա. Ն. Տեր-Ղևոնդյանը նշել է, որ Մասիս լեռը քաջ հայտնի էր արաբ հեղինակներին, որոնք Մեծ Մասիսը իրենց աղբյուրներում հիշատակել են *Հարիս*, իսկ Փոքրը՝ *Հուայրաս* անվանումով: Նա Մովսես Խորենացու երկում հիշատակված Մասիս լեռան մասին գրույցը համադրել է արաբական աղբյուրներում *Հուայրասի* վերաբերյալ տեղեկություններին, գրելով. «Մասիս լեռան մասին հայկական գրույցը անցնելով արաբական միջավայրը լրացուել է նոր նիւթերով... որի հիմքը հայկական է, բայց ժամանակի ընթացքում արաբական գունավորում է ստացել» (Ա. Տեր-Ղևոնդյան, Մասիս լեռան մասին արաբական գրույցը.- Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, էջ 222, 229):

¹⁴⁴ Այդ ձեռագրերը (մեծ մասը մագաղաթյա է, իսկ մի քանիսը՝ պապիրուսից, մեկն էլ փորագրված է պղնձի վրա) թվագրվում են մ.թ.ա. III - մինչև մ.թ. 70 թ.: Դրանց մեծ մասը եբրայերեն է, մի մասը արամեերեն և մի քանիսը հունարեն (մանրամասն տե՛ս <http://www.deadscrolls.org.il/featured-scrolls/>):

Արարատի լեռներից մեկի վրա» (... l'arche se posa sur l'une des montagnes d'Ararat)¹⁴⁵:

Ֆրանսիացի կուճրանագետ Յ. Լիմյեն, որը հետազոտել է սույն ձեռագիրը, հնարավոր է համարել, որ «այս աշխատությունը եբրայերեն մի բնագրի թարգմանություն է, կամ ավելի հին մի ձեռագրի հարմարեցում»¹⁴⁶: Գ. Վ. Աբգարյանը և Վ. Գ. Աբգարյանը, ուսումնասիրելով այս խնդիրը, եզրակացրել են. «Քարդուի ներմուծումը պարունակող արամեերեն Աստվածաշնչի այսօր մեզ հայտնի տեքստն անհամեմատ ավելի նոր է, քան Կուճրանի ձեռագիրը, որում ներմուծումը դեռ չի կատարված և Նոյի տապանն իջնում է Արարատյան լեռներում»¹⁴⁷:

Սեն-Մարտենը կարևորում է Հայաստանում պահպանված այն տեղանունները, որոնց ստուգաբանությունից երևում է Նոյի բնակության երկրամասերի պատկերը ըստ հին ավանդության:

Գիտնականն այս խնդրում հիմք է ընդունել Մ. Չամչյանցի երկը հիշատակելով հետևյալ տեղանունները.

ա. *Առնոյան* փոքր գավառ, որը նշանակում է «առ Նոյ ոտ»՝ «Նոյի ոտքի մոտ»¹⁴⁸,

¹⁴⁵ Les textes du Qumran traduits et annotés par J. Carmignac, E. Cothenet et H. Lignée, Paris, 1963, p. 225. Joseph A. Fitzmyer, The Genesis Apocryphon of Qumran Cave I (1Q20): A Commentary, Roma, 2004, p. 83.

¹⁴⁶ Les textes du Qumran ..., p. 215.

¹⁴⁷ Գ. Աբգարյան, Վ. Աբգարյան, Արարատը Կուճրանի ձեռագրերում. - Աստվածաշնչական Հայաստան, Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2005, էջ 112-113: Հին Կտակարանի արամեերեն հետազա թարգմանությունների (Օնկելոսի և Պաղեստինյան թարգմանք) և Պեշիտտայի տեքստերում ներմուծված Կարդու անվանը, ինչպես նաև Բերոսոսի և Հովսեփոս Փլավիոսի երկերում խնդրո առարկա հարցին վերաբերող մեկնությունների քննությունը տես Ю. Васильчева, Пятикнижие..., с. 90, 115.

¹⁴⁸ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 266. Սեն-Մարտենը այստեղ նկատի ունի Մ. Չամչյանցի ավանդական մեկնությունը. «... և տեղին այն կոչեցաւ ի հայոց Ակուռի, որ այժմ ի ռամկաց ասի Ակուռի, և գաւառն կոչի Առնոյոտն» (Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, էջ 56-57): Մ. Չամչյանցի երկի վերջում գետեղված անվանացանկում *Առնոյոտն* գավառի տեղադրության մասին նշված է. «Առնոյոտն գաւառ ի Վասպուրական» (Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, Վեներտիկ, 1786 (Երևան, 1984), ժամանակագրութիւն, էջ 134):

բ. Ակոռի բնակավայր, կազմված՝ «Արկ ուռի» բառերից, քանի որ Նոյը իջնելով Արարատ լեռից այնտեղ տնկեց «զուռ որթոյ»¹⁴⁹,

գ. Մարանդ, որպես *Մայր անդ* քաղաք, որտեղ ըստ առասպելական ավանդության թաղվել էր Նոյի կինը՝ Նոյեմզարան,

դ. Նախիջևան քաղաք, որտեղ կանգ էր առել Նոյը՝ տապանից դուրս գալուց հետո¹⁵⁰:

Աեն-Մարտենը Նախիջևանի կապակցությամբ հիշատակում է հետևյալ տեղեկությունը. «Հայերը մինչև օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ, քանի որ այնտեղ է (ջրհեղեղից) փրկվել տապանը, և մինչև օրս այդ վայրում ցույց են տալիս դրա բեկորները»¹⁵¹:

Վ. Լանգլուան անդրադառնալով Աստվածաշնչին, որպես հոգևոր սկզբնաղբյուրի, դրանով է պայմանավորել տարբեր տոհմաբանությունների ուսումնասիրության մեթոդաբանական ընդհանրությունը, մասնավորապես նշելով. «Ասիայի բոլոր քրիստոնյա ազգերը, որոնք հայտնվեցին այդ դժվարության առջև իրենց ծագումը սկզբնավորել են Նոյ նահապետից՝ նրա երեք որդիներից մեկի հետ կապելով իրենց ազգային ծագումնաբանությունները: Հայերն իրենց անվանադիր նախնի Հայկին սերած են համարում Հաբեթից՝ բավականին դժվար ընկալելի ազգակցական կապով: Մովսեսը (Խորենացի - Ա.Դ.) ինքը հաստատում է մի անձի գոյությունը, որի հիշատակությունը Աստվածաշնչում ոչ մի տեղ չի հանդիպում և շտապում է նշել, որ ասորի գիտնականի բարեխղճության հիման վրա է տվել հայ ազգի նահապետների ծննդաբանությունը»¹⁵²:

Ազգածագման (էթնոգենեզ) խնդիրը դիտարկելով պատմաբանասիրական և կրոնափիլիսոփայական գիտելիքների համադրման սկզբունքով՝ Վ. Լանգլուան գրել է. «Այս սինկրետիկ մե-

¹⁴⁹ Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, էջ 57:

¹⁵⁰ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 267.

¹⁵¹ Հին հունական աղբյուրներ Ա, էջ 54:

¹⁵² V. Langlois, Etude sur les sources.... pp. 310-311.

թողը, որը հնարավորություն էր տալիս անցնելու նաև մի այնպիսի բարդ հարցի, ինչպիսին ժողովուրդների ծագումն է, թեպետ և թելադրված էր դարաշրջանների համոզմունքներով, այն հատկապես վերջին ժամանակներում, ենթարկվել է փորձաքննության, և աստվածաշնչյան մեկնողականությունը ջանքեր է գործադրել հատվածաբար քննելու խառը ծննդաբանություններից յուրաքանչյուրը, որտեղ աստվածաշնչյան տարրն արհեստականորեն համատեղվել է աշխարհիկ տարրին և սկզբնավորել անկասկած մի հնարամիտ տեսություն, բայց ոչ մի կապ չունեցող քննադատության ընդունած տվյալների հետ՝ հիմնված՝ փիլիսոփայական գիտության կարևոր սկզբունքների վրա, որոնք ստուգվում են ժամանակակից բանասիրական հայտնագործություններով»¹⁵³:

Ըստ Վ. Լանգլուայի՝ Մովսես խորենացին մի կողմից գործ է ունեցել Ծննդոց գրքի Ժ գլխի տոհմաբանության, մյուս կողմից՝ ազգային ավանդությունների հետ, քանզի՝ «համաձայն իր ժամանակներին դավանած գաղափարների՝ նրան անհրաժեշտ էր միախլուսել հեռոսների և Չայկի ցեղի արքաների հաջորդականությունը Նոյի և Չաբեթի սերունդին: Նրա Պատմության առաջին գլուխներում կարելի է տեսնել այն միջոցը, որ նա օգտագործել է և այն հեղինակությանը (իմա՝ Սար Աբաս - Ա. Դ.), ում նա վկայակոչել է, որպեսզի Գամերի և Թորգոմի միջև, Ծննդոցի անվանակարգից տարբեր՝ ներմուծի մի առասպելական կերպար՝ Թիրասին, ով ծառայում է որպես միավորող կապ Նոյի որդիների և Չայաստանի անվանադիր նախնի Չայկի միջև»¹⁵⁴:

Պետք է նկատի ունենալ, որ Չին Կտակարանում հիշատակված Չաբեթի որդիներից են Գամերը և Թիրասը («Որդիք Չաբեթի՝ Գամեր եւ Մագովզ եւ Մադա եւ Յաւան եւ Ելիսա եւ Թորէլ եւ Մոսոք եւ Թիրաս») ¹⁵⁵: Իսկ, ըստ Մովսես խորենացու պահանջած տեղեկության՝ «Չաբեթ ծնանի գԳամեր. Գամեր ծնանի գԹի-

¹⁵³ Ibid., p. 311.

¹⁵⁴ Ibid., pp. 311-312.

¹⁵⁵ Ծննդ., Ժ. 2:

րաս»¹⁵⁶։ Ըստ Հին Կտակարանի՝ Գամերի որդիներից է Թորգոմը¹⁵⁷, իսկ Սովսես Խորենացու պահպանած ցուցակի համաձայն՝ «Թիրաս ծնանի զԹորգոմ. Թորգոմ ծնանի զՀայկ»¹⁵⁸։ Այսինքն՝ բիբլիական տոհմաբանությամբ՝ Թորգոմը Թիրասի եղբոր՝ Գամերի որդին է, իսկ ըստ Պատմահոր պահպանած տեղեկության, որը վերցված էր Մար Աբասի երկից, Թիրասը Թորգոմի հայրն է։

Հատկանշական է, որ այս տարբերության¹⁵⁹ առնչությամբ Սովսես Խորենացին գրել է. «... ամենայնք ի ժամանակագրացն գրեն ... զԹիրաս՝ չորրորդ ի Նոյէ, իսկ ի Յաբեթայ երրորդ. թեպէտ և ըստ մերում թարգմանութեանս (սբ. Գրքի) ոչ ուրեք ի բնագրի գտանի։ ...Այլ այսպէս զսա կարգեալ գտաք ի յուշնագունէ և յընթերցասիրէ ունեննէ Ասորոյ»¹⁶⁰։

¹⁵⁶ Սովսես Խորենացի, էջ 19։

¹⁵⁷ Ծննդ., ժ. 3։ Մ. Բրոսսեն ուշադրություն է դարձրել «Քարթլիս Ցխովրեբա» ժողովածուի մատենագիրներից՝ Լեոնտի Սրովելու բնագրի ծեռագրական այն տեղեկությանը որ «հին ժամանակներում հայերեն լեզուն համընդհանուր էր բոլոր Թորգոմյանների համար» (dans les anciens temps la langue arménienne était commune à tous les Targamosides)։ Լեոնտի Սրովելու երկի ազգաբանությանը վերաբերող հատվածում «Թորգոմի որդիներից Հայկի և նրան ենթակա եղբայրների (Քարթլոս, Բարդոս, Սովական, Էդրոս...)» մասին տեղեկության վերաբերյալ Մ. Բրոսսեն նշել է, որ իր օգտագործած ծեռագրերը ավելացնում են՝ «բոլորը խոսում էին մեկ լեզվով՝ հայերեն» (Tous parlaient une seule langue. l'arménienne), մինչդեռ, այս տեղեկությունը բացակայում է հայկական ժամանակագրությունում։ Լեոնտի Սրովելու մեկ այլ տեղեկությունում, որը վերաբերում է Նաբուգոդոնոսոր II (մ.թ.ա. 604 – 562 թթ.) արքային ևս ասվում է. «Մինչ այդ ժամանակաշրջանը քարթլոսների օգտագործած լեզուն հայերենն էր» (Jusqu'à cette époque la langue usitée chez les Karthlosides était l'arménienne)։ Մ. Բրոսսեն այս կապակցությամբ տրված իր մեկնությունում նշել է, որ ծեռագրերում գրված է, թե լեզուն «միայն վրացերենն էր» (Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècles traduite du géorgien par M. Brosset, I^{re} partie, St.-Petersbourg, 1849, p. 19, com 1, p. 31, com. 3) «Քարթլիս ցխովրեբայի» թարգմանության համար Մ. Բրոսսեն օգտվել է արքայորդի Էյնյուրազի, ինչպես նաև Ռումյանցևի և Ասիական թանգարանների պատկանող ծեռագրերից (Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle traduite du géorgien par M. Brosset, S.-Petersbourg, 1858, p. II)։

¹⁵⁸ Սովսես Խորենացի, էջ 19։

¹⁵⁹ Այս հարցին անդադարձել է Ստ. Մալխասյանցը՝ քննելով աստվածաշնչյան և Սովսես Խորենացու տոհմաբանական ցուցակները (Ստ. Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1982, էջ 114-118)։

¹⁶⁰ Սովսես Խորենացի, էջ 19-20։

Բ. Եպիսկ. ճուղուրյանցն անդրադառնալով Ա. Գարագաշյանի՝ Պատմահոր շարադրանքի այս հատվածի քննադատությանը, գրել է. «Խորենացու բերած այս ազգաբանության (Յաբեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ) մասին Գարագաշեանն առանց արժանին ուշադրության գրում է. «Յայտնի է թե այս ազգաբանությունը *Ծննդոց է*»¹⁶¹: Այդ անունները յիրաւի կան Ծննդոց Գրքի մէջ, սակայն ոչ նոյն կարգը ազգաբանութեան, այնտեղ Գամեր և Թիրաս եղբայրներ են, մինչ Խորենացու ցանկում՝ հայր և որդի»¹⁶²: Բ. Եպիսկ. ճուղուրյանցը նշել է, որ Պատմահայրը Նոյի երեք որդիների ազգաբանությունը «շարում է իւր Հայոց պատմութեան մէջ... ոչ թէ սբ. Գրքից, որը «գիւրսն ի բաց հատեալ յինքն սեպհական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարհամարիելեացն և իւրոց անարժան կարգելոց բանից: Զորոց մեք սկսեալ ճառեսցուք՝ որքան է կարողութիւն, որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենեկին անսուտ»¹⁶³: Այս տեսակետից Բ. Եպիսկ. ճուղուրյանցն ուշադրություն է դարձրել «ամենայն ի ժամանակագրացն» Պատմահոր արտահայտությանը, կարծիք հայտնելով, որ սբ. Գրքից տարբերվող տոհմաբանության այսպիսի կարգի համար Մովսես Խորենացու սկզբնաղբյուրը հին «ժամանակագիրներից» է եղել¹⁶⁴:

Բարձր գնահատելով Մովսես Խորենացու գիտական ժառանգությունը՝ Վ. Լանգլուան հատկապես ընդգծել է պատմության մեջ նրա ներդրումը, այն է՝ «մեզ է փոխանցել Քաղդեայի (Chaldée), Սիրիայի (Ասորիք՝ Syrie), Հունաստանի հին գրականությունից հատվածներ, որոնք լույս են սփռել նախաքրիստոնեական և քրիստոնեական դարաշրջանների վրա: Մովսեսը միշտ վեր էր իր ժամանակներում իշխող գաղափարներից, իր դարի

¹⁶¹ Ա. Գարագաշեան, Քննական պատմութիւն Հայոց, մասն Ա, Թիֆլիս, 1895, էջ 133:

¹⁶² Բարդուղիմէոս Եպիսկ. Գեորգեան (ճուղուրեանց), Խորենացին Ե դարի առաջին քառորդից մատենագիր, Վաղարշապատ, 1908, էջ 10-11:

¹⁶³ Մովսես Խորենացի, էջ 17:

¹⁶⁴ Բ. ճուղուրեանց, նշվ. աշխ., էջ 11-12:

նախապաշարմունքներից և նա շատ մեծ քայլ է կատարել իր հայրենիքի պատմության ուսումնասիրության գործում»¹⁶⁵:

Հայկազունների տոհմաբանությանը նվիրված իր շարադրանքը Սեն-Մարտենը նախաբանել է հին և միջին դարերում՝ հայերի՝ իրենց անկախության համար օտար տերությունների դեմ մղած պայքարի և Հայոց պատմության ուսումնասիրության կարևորման անհրաժեշտությամբ, գրելով. «Հայոց արքաների և իշխանների քաղաքական՝ պարբերաբար ծավալվող հարաբերությունները օտար ազգերի հետ և գրեթե շարունակական պատերազմները, որոնց ժամանակ նրանց տիրույթները դառնում էին թատերաբեմ, երբ նրանք պաշտպանում էին իրենց անկախությունը պարսիկների, հույների, արաբների դեմ... հանգեցնում են նրան, որ Հայաստանի պատմությունը պետք է անհրաժեշտաբար ուսումնասիրվի՝ գրեթե անթափանցելի մշուշով պարուրված Արևելքի այլ ազգերի պատմության բազմաթիվ դրվագները լուսաբանելու համար»¹⁶⁶:

Սեն-Մարտենը գրել է. «Հայ պատմիչների վկայությամբ»¹⁶⁷, առաջին առաջնորդը կամ իշխանը, որ կառավարել է իրենց երկրում եղել է Հայկը՝ Թագլաթի¹⁶⁸ (fils de Thaglat¹⁶⁹) որդին, որն ըստ նրանց՝ մույն Թոգորմա¹⁷⁰ (Thogorma) նահապետն էր»¹⁷¹:

¹⁶⁵ V. Langlois, Etude sur les sources.... pp. 300, 367.

¹⁶⁶ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 280.

¹⁶⁷ Հետևելով Մովսես Խորենացուն՝ Հայկազունների տոհմաբանությանն անդրադարձ է կատարվել նաև Ամանունի առաջաբանում (Պատմութիւն Սեբեոսի, աշխատ. Գ. Վ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 48-51), Թովմա Արծրունու (նշվ. աշխ.) և Հովհաննես Դրասխանակերտցու (Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912) երկերում:

¹⁶⁸ Մովսես Խորենացու երկում՝ *Թակլադ Թորգոմ* (Մովսես Խորենացի, էջ 32):

¹⁶⁹ Սեն-Մարտենի գրքի I հատորի վերջում (էջ 407) բերված ժամանակագրական ցանկում Հայկ նահապետի անվան կողքը գրված է fils de Gathla, ինչը պետք է վրիպակ լինի, իր կողմից նշված Thaglat-ի փոխարեն:

¹⁷⁰ Սեն-Մարտենը հայկական Թորգոմ անվանածը դիտարկել է սբ. Գրքի եբրայերեն բնագրին [Togamah (The Pentateuch and Haphtorahs, Hebrew text, English translation and Commentary, ed. by Dr. J. H. Hertz, London, 1997, Genesis, X, 3, p. 35)] մոտ ձևով:

¹⁷¹ J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 280-281. Սեն-Մարտենը Մովսես Խորենացուն իրավացիորեն համարելով V դարի հեղինակ (J. Saint-Martin, op. cit., t. II, p.

Սեն-Մարտենը Հայկի ավանդապատումը ներկայացնելիս՝ նրա բնակության վայր է նշել Հայաստանի հարավում գտնվող լեռները¹⁷²։ Հարք գավառի՝ որպես Հայկի բնակության վայրի վերաբերյալ նա գրել է իր աշխատության «Հայաստանի և նրա մի քանի նահանգների տարբեր անվանումների ծագման մասին» բաժնում, միննույն ժամանակ նշելով, որ Հայկը նախ բնակություն էր հաստատել Հայոց Ձորում¹⁷³, այնուհետև՝ Հարքում։ Հայկի և Բելի ճակատամարտի վերաբերյալ Սեն-Մարտենը գրել է, որ այն տեղի է ունեցել «Բզնունյաց լճի ափին... մոտ XXII դ. մ.թ.ա.»¹⁷⁴։ Սեն-Մարտենը այսպիսի կարծիք է հայտնել՝ հետևելով Մ. Չամչյանցի ժամանակագրական աղյուսակին¹⁷⁵։

Այս նույն հարցին անդրադարձել է նաև Մ. Բրոսեն, երբ հայկական տեղանունները ստուգաբանելիս, որպես սկզբնաղբյուր օգտագործել է Մովսես Խորենացու երկը, առանձնակի անդրադառնալով Հայկազունների տոհմաբանությանը և գավառանունների ստուգաբանությանը։ Հայկազունների մասին Պատմահոր և նրան հետևող հայ պատմիչների հիշատակությունների վերաբերյալ Մ. Բրոսեն գրել է. «Հայկը եղել է հայ ազգի հիմնադիրը... Հայկազունները Հայկի հետնորդներն են», Հայկի առաջին նստավայրը Տուրուբերան նահանգի Հարք գավառն է¹⁷⁶, իսկ Հայոց Ձորը,

302), Հայոց ազգաբանությանն անդրադարձած հայկական սկզբնաղբյուրներից առաջինը հիշատակել է նրա երկը։ Պատմահայրը գրել է. «Թիրաս ծնանի զԹորգոմ, Թորգոմ ծնանի զՀայկ»։ Այնուհետև «Թնուլթ Վաղարշակայ արքայի Հայոց առ Մեծն Արշակ արքայ Պարսից» (Թ) գլխում նշելով «Ջանալ ցուցանել զառաջինսն մեր և զբուն հին նախնիս», նա գրել է. «Արդ ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետոսքէ, Մերոդ, Սիրաթ, Թակլադ. որ է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ։ Յետ որոյ նոյն ժամանակագիր յառաջ մատուցեալ ասէ. Հայկ, Արամանեակ, և զայլսն ի կարգի, զորոց յառաջագոյն ասացաք... Հայկ որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամերայ. որդւոյ Յաբեթի, նախնի Հայաստանեայց...» (Մովսես Խորենացի, էջ 19, 32, 42)։

¹⁷² J. Saint-Martin, op. cit., t. I, p. 205.

¹⁷³ Ibid., pp. 205-206.

¹⁷⁴ Ibid., p. 281.

¹⁷⁵ Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. 9, ժամանակագրութիւն, էջ 22։

¹⁷⁶ Histoire de la Siounie par Stépannos Orbélian, p. 15, com. 4, p. 32, com. 3.

որտեղ տեղի է ունեցել Հայկի և Բելի ճակատամարտը, գտնվում է Վանա լճի հարավարևմտյան մասում¹⁷⁷:

Մ. Բրոսեն Հայկի՝ Հայոց Ձորում Բելի դեմ տեղի ունեցած հաղթական ճակատամարտի թվագրման վերաբերյալ անդրադարձել է Մ. Չամչյանցի և Ղ. Ալիշանի ուսումնասիրություններին¹⁷⁸, որոնց թվագրումները այդ ճակատամարտի ժամանակաշրջանի մասին տարբեր են: Մ. Չամչյանցը կազմել և իր աշխատության վերջում տեղադրել է «Ադյուսակ ամաց աշխարհի», «Սկիզբն տրութեան Հայոց ի Հայկայ՝ Նախքան Քրիստոս 2107 թ., չինուածք Հայկայ ի Հարք՝ 2106 թ., պատերազմ Հայկայ ընդ Բելայ՝ 2104 թ.»՝ ըստ ժամանակագիրների տվյալների¹⁷⁹:

Հայկ Նահապետին առնչվող «Հայկայ շրջանի» պարբերականության (1460/1 տարի) տոմարագիտական հաշվարկը կատարել է Ղ. Ալիշանը, ըստ որի, «Յամի 2492 Քրիստոսն առաջ», քանզի Հայկ Նահապետը «մտաւ Այրարատ աշխարհքը... օգոստոսի 11-23-ին, և հրամայեց, որ նոյն օրը տարւոյն սկիզբն սեպտիմբրի... Այս է ահա մեր մէջը օգոստոսի 11-ին տօնին պատճառն»: «Հայկայ դարձեն քիչ տարի վերջը» տեղի ունեցավ Բելի պարտությունը և սպանվելը¹⁸⁰:

Պատմահայրը գրել է, որ «աշխարհս մեր կոչի յանուն նախնւոյն մերոյ Հայկայ՝ Հայք», «աշխարհի Հայկազանց»¹⁸¹, Հայոց հնագույն նահապետական տոհմը, արքայատոհմը Հայկի ա-

¹⁷⁷ Collection d'historiens arméniens, t. I, p. 158, com. 2.

¹⁷⁸ Histoire de la Siounie p. 58, com. 3.

¹⁷⁹ Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Գ, ժամանակագրութիւն, էջ 22: Է. Ղյուլորիեն հայկական տոմարական հարցերը ուսումնասիրելիս, հիմնվելով Ղ. Ալիշանի հետազոտության վրա (Ղ. Ալիշան, Վասն պարունակական կամ Փոքր թուականացն Հայոց, Բազմավեպ, 1848, № 17, էջ 261-264), անդրադարձել է *հայկական մեծ թվականին* («grande ère arménienne»), որն հայտնի է «թուական Հայոց», «տօմար Հայոց», «յաբեթեան տօմար Հայոց», «թուականութիւն թորգոմայ» և այլ անվանումներով. և *փոքր թվականին* («petites eres»), որը զատկի պարբերաշրջանն է 532 (ՇԼԲ) տարի (E. Dulaurier. Recherches sur la chronologie arménienne, t. I, Paris, 1859, p. II, com. 1):

¹⁸⁰ Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1869, էջ 94-95:

¹⁸¹ Մովսէս Խորենացի, էջ 37, 64:

նունով կոչվել են *Հայկազունք*¹⁸²։ Նկատի ունենալով Հայոց թագավորությունների արքայական հարստություններից Հայկազունների առաջնությունը Ասողիկը գրել է. «Արդ երիս զարմս յերիս ժամանակս թագաւորեալ Հայոց՝ ամենեցուն յայտնի է, զՀայկազեանցն ասեմ և զԱրշակունեաց և զԲագրատունեաց»¹⁸³։

Հայաստանի հզորագույն ժամանակաշրջանը Սեն-Մարտենը իրավացիորեն համարել է, իր բնութագրմամբ՝ «մի շարք տաղանդներով և մեծ քաջությամբ» օժտված արքայից արքա Տիգրան II Սեծի (մ.թ.ա. 95-55 թթ.) կայսրության (նոր մայրաքաղաքը Տիգրանակերտ) դարաշրջանը¹⁸⁴։

Մ. Բրոսեն, անդրադառնալով Պատմահոր կողմից Հայկի սերունդների անուններով կոչված մի շարք տեղանուններին, Բզնունիքի և Շիրակի մասին կատարել է հետևյալ նշումները. «Բզնունիք լիճը, որը նույն Վանա լիճն է, այդպես է անվանվել հաճախ արևմտյան մասում գտնվող Բզնունիք գավառի պատճառով»¹⁸⁵։ Իսկ Շիրակը «լինելով հարթավայրային, արգավանդ ու բերրի, գտնվում է Արաքսի հարևանությամբ։ Ըստ ավանդության՝ Շիրակ անվանումը Շարայից է առաջացել։ Հայկի որդի Արամայիսը¹⁸⁶ այն տվել էր նախնիներն իր որդի Շարային, որպեսզի նա, որ հայտնի էր իր շատակերությամբ, հազեցներ իր ախորժակը»¹⁸⁷։ Մ. Բրոսեն

¹⁸² Պատմահայրը հիշատակել է Տիգրան Երվանդյանին որպես *Հայկազն բազմաբյուրավոր* և *Հայկազն Տիգրան* (Մովսես Խորենացի, էջ 74, 85, 290), ինչպես նաև նախարարական տների ներկայացուցիչներին Հայկազն Խոռ, Հայկազն Գուշար (Մովսես Խորենացի, էջ 110, 113, 217) և այլն։

¹⁸³ Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական, ի Ս. Պետերբուրգ, 1885, գլ. Բ, էջ 157։

¹⁸⁴ J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 170-171, 291.

¹⁸⁵ Collection d'historiens arméniens, t. I, p. 191, com. 5. Հայկ նախապետի թողը Բազը ժառանգել էր Վանա լճի հյուսիսարևմտյան ափամերձ գավառը, որը ստացել էր *Բզնունիք* անունը, լիճն էլ կոչվում է Բզնունյաց ծով։ Բազից առաջացել էր Բզնունի նախարարական տոհմը (Մովսես Խորենացի, էջ 38)։

¹⁸⁶ Այստեղ անհրաժեշտ է մի ճշտում կատարել, քանզի Արամայիսը, ըստ Մովսես Խորենացու, Հայկի թոռն էր, Արամանյակի որդին (Մովսես Խորենացի, էջ 39)։

¹⁸⁷ Մովսես Խորենացի, էջ 39-40։

նշել է, որ Շիրակ գավառը կոչվել է նաև Ձորոգետ՝ «ուղղաբերձ ավերով գետ», իր տեղագրական դիրքի պատճառով¹⁸⁸:

Հայկյաններից իր բազում գործերով, ըստ Մովսես Խորենացու, հատկապես նշանավորվեց Հարմայի որդի՝ Արամը, որը «բազում գործք քաջութեան պատմին մարտից նահատակութեան, և ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց. յորոյ անուն և զաշխարհս մեր անուանեն ամենայն ազգք, որպէս Յոյնք՝ Արմէն, իսկ Պարսիկք և Ասորիք՝ Արմէնիկք»¹⁸⁹:

Անդրադառնալով Արամի մասին Մովսես Խորենացու պահպանած տեղեկություններին՝ Սեն-Մարտենը նշել է, որ Հայկի որդւց՝ Արամանյակից¹⁹⁰ սերողներից հինգերորդը՝ Արամը իր թագավորության ժամանակ այնքան նշանավորվեց¹⁹¹, որ օտար ժողովուրդները Հայկյանների (Haïganienne) ազգի բնակեցրած երկիրը անվանեցին *Արմենիա*. Սեն-Մարտենը ենթադրում է, որ այդ անունը «գործածվում է դեռևս շատ վաղ դարաշրջանից: Միգուցե այն նույնն է, ինչ Աստվածաշնչում՝ Ասորիքին և Միջագետքին տրված Արամ անունը»¹⁹²: Ինչ վերաբերում է այդ անվան հիշատակությանն անտիկ սկզբնաղբյուրներում, Սեն-Մարտենը նշել է. «Դեռևս մ. թ. ա. V դարից հույներն այն գիտեին և կիրառում էին այն երկրի համար, որին մենք նույնպես *Արմենիա* ենք կոչում»¹⁹³, և նույնիսկ ավելի ուշ, նրանք այդ անվանումը տվեցին Եփրատի ավերին գտնվող Կապադովկիայի արևելյան մասին»¹⁹⁴:

¹⁸⁸ M. Brosset, Les ruines d'Ani, capitale de l'Arménie, sous les rois Bagratides, aux X^e et XI^e s., Histoire et description. II^e partie. St.-Petersbourg, 1861, pp. 93-94, com. 4.

¹⁸⁹ Մովսես Խորենացի, էջ 42:

¹⁹⁰ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 282, 407.

¹⁹¹ Հայկյան Արամը պաշտպանում և ընդարձակում է Հայոց տերության սահմանները արևելքում և արևմուտքում (Մովսես Խորենացի, էջ 44, 46-47):

¹⁹² J. Saint-Martin, op. cit., t. I, p. 259-260.

¹⁹³ Սեն-Մարտենը գրել է, որ պարսիկները հայերին *Արմեն* են անվանում և այդ անվանաձևը մի փոքր այլ ուղղագրությամբ կա Ջրաղաշտին վերագրվող գեղդերենով ստեղծագործություններում, որտեղ «Հայաստանը անվանված է *Fériéméno*» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 269):

¹⁹⁴ Ibid., p. 260.

Սեն-Մարտենի հետազոտության հիմքում են թե՛ Արամին վերաբերող հնագույն (բուն Հայաստանի սահմանների ընդլայնման մասին) և թե՛ հետագայում՝ Հայաստանի պարսկա-հռոմեական բաժանման ընթացքում (385-387 թթ.)¹⁹⁵ տեղի ունեցած արևելահռոմեական վարչաքաղաքական բաժանումների հետևանքով Առաջին և երկրորդ Արմենիայի (386 թ.) ստեղծման մասին տեղեկությունները:

Հայաստանի հնագույն պատմությանն անդրադառնալիս, Սեն-Մարտենը Արամի մասին գրել է. «Նա ցուցաբերել է խիզախության և պատերազմական շատ գործեր... Արամը ամենմահին թագավորներից էր, ով շատ հայտնի դարձավ իր մեծ նվաճումներով... Արամը ետ շարտեց իր թագավորությունն ասպատակած հարևան ազգերին և նրանց ստիպեց վերադառնալ իրենց բնական սահմանները: Նա հաղթեց Մարաստանի իշխան Նյուքար Մադեսին և նրան գերեվարած տարավ իր մայրաքաղաք Արմավիր, նվաճեց հյուսիսային Ասորեստանի տիրակալ Բարշամի տիրույթները¹⁹⁶ և իր գեներն ուղղեց դեպի Փոքր Ասիա»¹⁹⁷:

Մ. Բրոսեն, նույնպես, Կիրակոս Գանձակեցու երկի թարգմանությունում կատարված համապատասխան մեկնությունում նշել է. «Արամը Հայկի վեցերորդ սերնդից է»¹⁹⁸, հիմքում ունենալով Մովսես Խորենացու պահպանած տեղեկությունը Հայկի և նրա սերունդների Արամանյակի, Արամայիսի, Գեղամի, Հարմայի, Արամի մասին¹⁹⁹:

Մ. Բրոսեն հատկանշական է համարում այն փաստը, որ հայ պատմիչների երկերում որպես Հայկի սերունդների հայրենիք՝ Հայք (Հայաստան) երկրամվան համեմատ *Արմենիա* անվանաձևը

¹⁹⁵ Է. Լ. Դանիելյան, Հայաստանի բաժանման տարեթիվը 387 թե՛ 385, - ՊԲՀ, № 1, 1980, էջ 203-214:

¹⁹⁶ «... Բարշամ անուն, յազգէ սկայիցն, որոյ սաստկագոյնս նեղեալ հարկաց խստութեամբ՝ անապատ զբովանդակ շրջակայն իւր առնէր» (Մովսես Խորենացի, էջ 45):

¹⁹⁷ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 282.

¹⁹⁸ Deux historiens arméniens: Kiracos de Gantzac. Histoire d'Arménie. Oukhtanès d'Ourha.... p. 53. com. 3.

¹⁹⁹ Մովսես Խորենացի, էջ 19:

հազվադեպ է գործածվում: Մ. Բրոսեն, ինչպես և ժամանակին Սեն-Մարտենը, հիմնվելով Պատմահոր վերոհիշյալ հաղորդման վրա²⁰⁰, նշել է, որ Հայոց աշխարհը *Արմենիա* են անվանել հատկապես օտարները²⁰¹:

Հնում գոյություն է ունեցել նաև հունական առասպել Արմենիա երկրանվան ծագման մասին: Ըստ հույն աշխարհագետ Ստրաբոնի (մ.թ.ա. 64 - մ.թ. 23 թթ.) պահպանած հունական առասպելի՝ Արմենիա անվանումը ծագել է *Ոսկե գեղմը* Հունաստան տանելու համար Սև ծովի ափերը նավարկած արգոնավորդներից մեկի՝ Արմենոսի անունից, որն իր ուղեկիցների հետ շրջագայելիս, եկել էր Արմենիա²⁰²: Հայոց հին պատմության վերաբերյալ Սեն-Մարտենը լայնորեն օգտագործել է անտիկ սկզբնաղբյուրները, սակայն, միևնույն ժամանակ, Հայոց ծագումնաբանության առնչությամբ որոշ տեղեկություններ, մասնավորապես, Արմենոսի հետ կապված առասպելը անհավանական է համարել²⁰³, և դրանից առանձին է դիտարկել Արամ նահապետի մասին պատմական ավանդությունը:

4. Հայկյան Արամին վերագրված *չորս Հայքերի* մասին ընդմիջարկության խնդրի Սեն-Մարտենի մեկնությունը

Հայաստանի պատմաաշխարհագրական նկարագրությունը Սեն-Մարտենը սկսել է Մեծ Հայքի (Grande Arménie) և Փոքր Հայքի (Petite Arménie) տեղադրությամբ²⁰⁴, այնուհետև, *Հայքերի*, որպես

²⁰⁰ Նույն տեղում, էջ 42:

²⁰¹ Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha.... p. 214, com. 6.

²⁰² The Geography of Strabo, with an English translation by H. L. Jones, vol. V, London, 1954, XI 4. 7-8.

²⁰³ J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 280-284, 285, 287, 292-294.

²⁰⁴ «Les géographes Arméniens, aussi bien que les géographes Grecs et Latins, partagent ordinairement l'Arménie en deux grandes divisions. La Grande Arménie, *Մեծ Հայք*, qui s'étend depuis l'Euphrate jusqu'à la mer Caspienne; et la Petite, *Փոքր Հայք*, située à l'occident de la Grande, et subdivisée en première, seconde et troisième»

վարչաքաղաքական բաժանումների մասին շարադրանքով, գրելով. «Հայաստանի բաժանումը Մեծ, Փոքր, Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ (Հայքերի - Ա.Դ.)»²⁰⁵ շատ հին է և այն հիշատակում են գրեթե բոլոր հույն պատմիչները: Հայերն այն հասցնում են մինչև իրենց ամենահին արքաներից մեկը՝ Արամը, որը մեծ նվաճումներ կատարեց Փոքր Ասիայում և իր հայրենիքի անունը տվեց բոլոր այն երկրներին, որոնք նա նվաճեց»²⁰⁶:

Սեն-Մարտենն անդրադարձել է Մովսես Խորենացու այն հաղորդմանը, որը վերաբերում է Կապադովկիայում և Փոքր Ասիայի այլ մասերում Արամի գործունեությանը²⁰⁷՝ հատուկ ուշադրություն դարձնելով արևմտյան ուղղությամբ նրա արշավանքի հետևանքով Հայոց թագավորության սահմանների ընդարձակմանը: Պատմահայրը գրել է. «... մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք գլղիմայն գայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք»²⁰⁸:

(«Հայ, ինչպես նաև հույն և լատին աշխարհագետները սովորաբար Հայաստանը բաժանում են երկու մեծ մասերի. Մեծ Հայք, որը ձգվում է Եփրատից մինչև Կասպից ծով և Փոքր Հայք, որը Մեծ Հայքից արևմուտք է և բաժանված է Առաջին, Երկրորդ և Երրորդ [Հայքերի]») (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 17).

²⁰⁵ Փոքր Հայքի և Մեծ Հայքի արևմտյան մասի բյուզանդական վարչատարածքային բաժանումների մասին Սեն-Մարտենի շարադրանքում միահյուսվել են Թեոդոսիոս I Մեծի (379-395 թթ.) և Հուստինիանոս I-ի (527-565 թթ.) օրոք տեղի ունեցած բաժանումները: Թեոդոսիոս I-ը 386 թ. Փոքր Հայքը բաժանել էր Առաջին (կենտրոնը Սեբաստիա) և Երկրորդ (կենտրոնը՝ Մելիտեն) Հայքերի: 536 թ. Հուստինիանոսը Առաջին Հայքից կազմավորեց Երկրորդը, իսկ Երկրորդ Հայքը անվանեց Երրորդ Հայք (Н. Азиев, ук. соч., с. 89, 166):

²⁰⁶ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 17.

²⁰⁷ Սեն-Մարտենի գրքում ժամանակագրական աղյուսակները հիմնականում կազմված են ըստ Մ. Չամչյանցի երկի (Պատմութիւն Հայոց, հ. Գ, ժամանակագրութիւն, էջ 26) և Հայկյան Արամի գահակալությունը նշված է մ.թ.ա. 1827-1769 թթ. (տես J. Saint-Martin, op. cit., t. I, p. 407):

²⁰⁸ Մովսես Խորենացի, էջ 46: Սեն-Մարտենը նշել է, որ «բոլոր այն հայ պատմիչները, որոնք խոսում են այդ մասին, իրենց աշխատություններում փորձել են պահպանել հունարեն այս բառերը փոխադրված հայերեն տառերով»: Նա մասնավորապես հիշատակել է Մովսես Խորենացու, Հովհաննես Դրասխանակերտցու և Սամուել Անեցու աշխատությունները (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 18. com. 2):

Այս նույն հարցի կապակցությամբ Սեն-Մարտենն անդրադարձել է նաև Հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդմանը, ըստ Ֆրանսիայում գտնվող մի ձեռագրի, քանզի, ինչպես ինքն է նշել՝ նրա Պատմությունը դեռևս հրատարակված չէր:

Հովհաննես Դրասխանակերտցին հիմնականում կրկնել է Մովսես Խորենացուն, սակայն որոշ տարբերություններով. «... այլ և զԿապուտեցիս ևս... ընդ իւրեաւ նուաճեալ սեպհականեր. և զկղիմայն զայն և զպռովտոնն ըստ իւրում իսկ անուանն Արմենի անուանէր, որ մինչև ցայսօր այս անուն Յունականաց անտի աշխահին այնմիկ անուանի: Իսկ յԱրմենէն յայնմանէ կոչեցելոյ մինչև ցկողմանս Պոնտացոց Առաջին Հայք զաշխարհն անուանեաց...»²⁰⁹:

Սեն-Մարտենը ուշադրություն է դարձրել Մովսես Խորենացու «Պռոտին Արմենիայի» կապակցությամբ Դրասխանակերտցու տեքստի անհամապատասխանության վրա: Նրա կարծիքով Դրասխանակերտցու Պատմության ձեռագրում աղավաղում է տեղի ունեցել գրիչների՝ հունարեն չիմանալու պատճառով: Նշելով, որ նրանք «երկու տարբեր երկրներ են դարձրել *Առաջին Հայքից* և Կապադովկիայի *πρώτην Ἀρμενίαν* անվանված մասից, բառեր, որոնք ճշգրտորեն նույն նշանակությունն ունեն», Սեն-Մարտենը բացառել է, որ հունարեն իմացող կաթողիկոսը, ով «լավ ծանոթ էր իրենից չորս դար առաջ ապրած Մովսես Խորենացու աշխատությանը, այդպիսի սխալ կատարեր»²¹⁰: Միևնույն ժամանակ, Սեն-Մարտենը գրել է, որ նշված սխալը²¹¹ բացակա-

²⁰⁹ « ... և ի Պոնտոս մինչև ցոլորոս քաղաքին Մելտիմոյ երկրորդ Հայք. և ի Մելտիմոյ մինչև ցսահմանս Ծոփաց՝ երրորդ Հայք. և ի Ծոփաց մինչև ցքաղաքն Մարտիրոսաց և յաշխարհն Աղծնեաց արևմտեայ Չորրորդ Հայք. այս մինչև ցսահմանս բնիկ տերութեան իւրոյ: Իսկ զսեպհական և զբնիկ աշխարհ իւր համատարած զսա Սեն Հայք անուանէ» (Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 18):

²¹⁰ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 21.

²¹¹ Հետագայում ուշադրություն դարձնելով այդ անհամապատասխանությանը՝ Ա. Մուշեղյանն այն համարել է Մովսես Խորենացու խոսքի Հովհաննես Դրասխանակերտցու յուրովի ընկալման հետևանք, նշելով՝ «հակառակ խո-

յում է XII դարում ապրած Սամուել Անեցու (որն, ըստ Սեն-Մարտենի, քաջատեղյակ էր Մովսես Խորենացու ու Հովհաննես Դրասխանակերտցու աշխատություններին) տեքստում²¹². «... անուանեն զտեղին զայն Պրոտոն Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք: Եւ անտի մինչեւ ի սահմանս իւր լից մարդկամբ, որք Երկրորդ եւ Երրորդ անուանեցան Հայք, այլ եւ Չորրորդ: Այս է Մովսէսին»²¹³.

Պատմագրության մեջ պարզվել է, որ Հայկյան Արամի գործունեության կապակցությամբ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում²¹⁴, *չորս Հայքերի* մասին տեղեկությունը հետագա խմբագրական ընդմիջարկության արդյունք է²¹⁵: Այսպիսով, Արամին վերագրված նշված բաժանումների հատվածում Հովհաննես Դրասխանակերտցին և Սամուել Անեցին գործ են ունեցել Մովսես Խորենացու հաղորդած տեղեկության արդեն խմբագրված տարբերակի հետ, միևնույն ժամանակ, տեղյակ լինելով

րենացու, որի մոտ «Պռոտին Արմենիան» կոչվածը Կապադովկիան է Կեսարիա մայրաքաղաքով, Դրասխանակերտցին «Պռոտին» կոչված Արմենիան նույնացնում է Սեբաստիայի Առաջին Հայքի հետ... » (Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 68-69):

²¹² J. Saint-Martin, op. cit., t. I, p. 22.

²¹³ «Իսկ այլ պատմագիրք այսպէս ասեն. ի Կապովկացոց Կեսարեան մինչեւ ԳՊոնտոսի կողմ ասեն Առաջին Հայք, եւ ի Պոնտոսէ մինչեւ ԳՍելիտինէ Երկրորդ Հայք, եւ անտի մինչեւ ցսահմանս Ծոփաց Երրորդ Հայք, եւ անտի մինչեւ ցքաղաքն Մարտիրոսաց, յԱղծնիս արեւմտեայ Չորրորդ Հայք, իսկ զսեպիականն իւր աշխարհ Մեծ Հայք» (Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս ժայրաքաղ արարեալ: Բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը: Առաջաբանը Կ. Մաթևոսեանի: Խմբագրությամբ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2011, էջ 57):

²¹⁴ Մովսէս Խորենացի, էջ 46:

²¹⁵ Հայկյան Արամին վերագրվող չորս Հայքերից «Երրորդ» և «Չորրորդ Հայք» բառերը Ստ. Մալխասյանը հետագա ընդմիջարկություն է համարել (Մովսէս Խորենացի, Հայոց պատմություն, թարգմ., ներածություն և ծան. Ստ. Մալխասյանի, Երևան, 1968, էջ 329-330, ծան. 38, հմտ. է. Լ. Դանիելյան, Հայկական աղբյուրները Արևմտյան Հայաստանի վաղբյուրագնդական բաժանումների մասին.-ՊԲՀ, № 1, 1985, էջ 99-113; Բ. Հ. Հարությունյան, Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 36-37, 116, Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 139):

Հայաստանի արևմտյան մասում իրականացված բյուզանդական ռազմավարչական բաժանումներին²¹⁶:

Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակված *չորս Հայքերի* մասին տեղեկությունները Սեն-Մարտենը դիտարկել է Արևելահռոմեական (Բյուզանդական) կայսրության վարչական բաժանումների տեսանկյունից: Բյուզանդական կայսրության ենթակայությանն անցած Հայաստանի արևմտյան մասի բաժանումների մասին Սեն-Մարտենը նախ նշել է. «Մեծ և Փոքր Հայքի այն մասերը, որոնք ենթակայացվել էին Հունական (իմա՝ Բյուզանդական) կայսրությանը, Հուստինիանոս I-ի (527-565 թթ.) գահակալմամբ կազմում էին հինգ որոշակի մահանգներ. Նախ՝ *Մեծ Հայք*, որը մաս կոչվում էր *Ներքին Հայք*՝ Եփրատից այն կողմ՝ գետի ակունքների մոտ էր: Այնտեղ գտնվում էր Թեոդոսուպոլիսը (Կարին)»: Սեն-Մարտենը նշել է, որ հարավում հայերի և հռոմեացիների կողմից անվանվող Չորրորդ Հայք երկրամասն էր, որն ընդգրկում էր Անձիտ, Անգեղ-տուն, Հաշտյանք, Բալահովիտ գավառները և Ծոփքը՝ Ամիդ և Մարտիրուպոլիս քաղաքներով... «Եփրատից այս կողմ՝ Առաջին Հայքն է Կեսարիա քաղաքով, Երկրորդ Հայքը՝ Մելիտենե քաղաքով և ի վերջո՝ Երրորդ (Հայքը) կամ Պողենոմական Պոնտոսը՝ Տրապեզուստով»: Այս հատվածի ծանոթագրությունում նա նշել է Հուստինիանոս I-ի 31-րդ նովելլան²¹⁷: Սակայն, 31-րդ նովելլայում խոսքը չորս Հայքերի մասին է (Առաջին Հայք՝ կենտրոնը Հուստինիանուպոլիս, Երկրորդ Հայք՝ Սեբաստիա, Երրորդ Հայք՝ Մելիտենե, Չորրորդ Հայք՝ Մարտիրուպոլիս)²¹⁸: Իսկ Սեն-Մարտենի վերոհիշյալ շարադրումը կարելի է տեսնել, որ խառը կերպով միահյուսվել են Մովսես Խորենացու՝ «Պռոտին Արմենիայի» մասին, ինչպես նաև Թեոդոսիոս Ա-ի և Հուստինիանոսի ժամանակներին վերաբերող բաժանումների տեղեկությունները:

²¹⁶ Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 18, 68, Սամուէլ Անեցի, էջ 57:

²¹⁷ J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 23-24. 31-րդ նովելլան հրապարակվել էր 536 թ.

մարտի 18-ին (տե՛ս Н. Адонц, ук. соч., с. 172):

²¹⁸ Н. Адонц, ук. соч., с. 166-172.

Սեն-Մարտենը այնուհետև Հուստինիանոսի կատարած վարչատարածքային բաժանումները նշել է ըստ Թեսալոնիկի արքեպիսկոպոս Եվստաթիոսի (մոտ 1115-1195/6 թթ.) մեկնությունում²¹⁹ առկա վկայության՝ Առաջին Հայք կենտրոնը նշել է Վազանիս (Bazanis-Վժան, Բարձր Հայքի Դերջան գավառում), սակայն կենտրոնը մոտակայքում գտնվող Ցունին-Հուստինիանուպոլիսն էր²²⁰], Երկրորդ Հայք (Սեբաստիա), Երրորդ Հայք (Մելիտենե), Չորրորդ Հայք (Մարտիրոպոլիս)²²¹: Նա գրել է, որ «այդ նոր քաղաքական բաժանումները երկար չտևեցին իրենց ամբողջության մեջ»²²²:

Սեն-Մարտենը գրել է, որ Հայաստանի նշված բաժանումները հիշատակում են միայն բյուզանդական պատմիչները, մինչդեռ անտիկ ժամանակաշրջանի աշխարհագետները վկայում են միայն «երկու մեծ բաժանումները Մեծ և Փոքր Արմենիա», իսկ, երբ «V դարի սկզբին Արշակունիների թագավորությունը անկում ապրեց, և հույներն ու պարսիկները միմյանց միջև բաժանեցին նրանց տիրույթները, Եփրատից այն կողմ (ձախափնյակ - Ա.Դ.) գտնվող Հայաստանի մասը, որը մնաց Կոստանդնուպոլսի ենթակայության տակ, պահպանեց Մեծ Հայք անվանումը (Μεγάλη

²¹⁹ Խոսքը II-III դդ. հեղինակ (հուն. *հեքսեմետր*) Դիոնիսիոս Պերիեգետեսի *քննկնեցված աշխարհի մասին աշխարհագրական նկարագրության* մեկնության մասին է:

²²⁰ Н. Азюм, ук. соч., с. 174.

²²¹ J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 24, 26.

²²² Ibid., p. 25. Պարսկական ենթակայության անցած Հայաստանի արևելյան մի մասի Խոսրով II Փարվեզի (590-628 թթ.) զիջումը Մավրիկիոս կայսրին (582-602 թթ.) հանգեցրեց նոր փոփոխությունների Բյուզանդական կայսրությանը ենթակա Հայաստանի արևմտյան մասում «Մեծ մասն Մեծ Հայոց» (իսկում էր մինչև Սև ծովի ափերը), «Մասն Մեծ Հայոց» (Բարձր Հայք), «Այլ Չորրորդ Հայք», «Չորրորդ Հայք կամ Վերին Սիջագետք», «Մեծ Հայք» (Տուրուբերան), «Խտրագոյն Հայք» (Տայք), «Ներքսագոյն Հայք» (Այրարատ նահանգի մեծ մասը) (Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 68: Տես է. Լ. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը և Հայ առաքելական եկեղեցին (VI-VII դդ.), Երևան, 2001, էջ 28, 48-49):

καλουμένη Ἀρμενία)²²³, իսկ այն մասը, որն անցավ պարսից արքաների գերիշխանության տակ, բյուզանդական պատմիչների կողմից անվանվեց *Պարսկահայաստան* (Persarménie)...»²²⁴:

Այսպիսով, ընդունելով Հայկյան Արամի հնում՝ արևմուտքում ծավալած գործունեության մասին հայ պատմիչների հաղորդումները, Սեն-Մարտենը միևնույն ժամանակ *չորս Հայքերի* ստեղծումը դիտարկել է բյուզանդական վարչաքաղաքական բաժանումների տեսանկյունից²²⁵:

Հայկազունների տոհմաբանության ուսումնասիրությունը, սկզբնաղբյուրային պատմաավանդական նյութի պարունակությամբ, գտնվում էր Հայոց պատմությանը և պատմական աշխարհագրությանը նվիրված ֆրանսիական հայագիտական հետազոտությունների հիմքում:

²²³ Procopius, Buildings (De aedificiis, III, i. 17), with an English transl. by H. B. Dewing. Cambridge, Mass., London, 1954, vol. VII. Մանրամասն տե՛ս H. ԱճՈՒԱ, ԿԿ. ԵՊԿ., Ե. 29:

²²⁴ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 22-23.

²²⁵ Հետազայում Ն. Աղոնցը, ով Մովսես Խորենացու երկը ենթադրում էր ստեղծված մինչև VIII դ. ընկած ժամանակաշրջանը (H. ԱճՈՒԱ, ԿԿ. ԵՊԿ., Ե. 208, 237), կարծիք հայտնեց, որ մինչև Պոնտական երկրամասերը և Մաժաք-Կեսարիա հայկական տիրույթների տարածման մասին Պատմահոր պահպանած ավանդությունը Հուստինիանոսի դարաշրջանի արձագանք է, այլ ոչ թե Արամի հեռավոր ժամանակների, ինչպես ներկայացնում է Մովսես Խորենացին (H. ԱճՈՒԱ, ԿԿ. ԵՊԿ., Ե. 203): Պատմագրության մեջ ապացուցվել է, որ Պատմահայրը V դարի հեղինակ է, իսկ Արամի մասին ավանդությունը Հայոց հնագույն պատմության արտացոլման արգասիք է, որին Մովսես Խորենացու դարաշրջանին հաջորդած ժամանակներում ընդմիջարկությունների հետևանքով միախուլվել են վաղմիջնադարյան բյուզանդական վարչատարածային բաժանումների մասին տեղեկություններին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՄԲ

1. Հայաստանի պատմաաշխարհագրական ժառանգության ուսումնասիրությունը և արժևորումը

XIX դարի ֆրանսիացի հայագետների պատմաաշխարհագրական բնույթի հետազոտությունների հիմքում էին հայ միջնադարյան սկզբնաղբյուրների իրենց իսկ կատարած ֆրանսերեն թարգմանությունները և դրանց մեկնությունները, ինչպես նաև XVIII-XIX դդ. հայ պատմաբանների աշխատությունները: Նրանք որոշակի ներդրում ունեն հայ պատմագիտության զարգացման և եվրոպական գիտական շրջանակներին ու հասարակայնությանը Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության ներկայացման գործում:

Ֆրանսիայում այս խնդրի լուսաբանման գործում առաջիններից էր Սեն-Մարտենի՝ Հայաստանին նվիրված պատմաաշխարհագրական հետազոտությունը, որի «Ներածությունում» նա նշել է. «Հայաստանի մասին այս աշխատությունը առաջինն է, որ լույս է տեսնում եվրոպայում. մենք համարձակություն ունենք կարծելու, որ այն ճշգրիտ կծանոթացնի աշխարհագրական և պատմական տեղեկությունների հետ...»²²⁶: Սեն-Մարտենը նկատի ուներ անտիկ և հայկական սկզբնաղբյուրների վրա հիմնված՝ Հայաստանին նվիրված պատմագիտական և աշխարհագրական բնույթի գիտաճանաչողական աշխատության հրապարակումը եվրոպայում:

²²⁶ J. Saint-Martin, op. cit., t. I, p. IX.

Ամիրաժեշտ է նկատի ունենալ, որ Վ. Լանգլուայի դիտարկմամբ, Եվրոպայում (Փարիզ, Լոնդոն, Վենետիկ) հայագիտության ուղղությամբ մինչ այդ արդեն որոշակի աշխատանք էր կատարվել Հայաստանի պատմության և պատմական աշխարհագրության ուսումնասիրության բնագավառում²²⁷։ Եվրոպացի ընթերցողին հայ մշակութային ժառանգությանը ծանոթացնելու խնդիրը իր դրսևորումն էր ստացել Սեն-Մարտենից մեկ դար առաջ լույս տեսած (1711 թ.) հայերեն լեզվի քերականության մասին գերմանացի հայագետ Շրյոդերի աշխատության ընծայագրում (նվիրված՝ իր մեկենասին)։ «Արեւելից մէջ, ի Մոսկուա և այլուր՝ հմուտ և գիտնական անձանց հետ ունեցած յարաբերութեամբք ստացած տեղեկութեանցս առհաւատչեան քեզ կը վերընծայեմ՝ զԳանձ հայկական լեզուի. գանձ մը՝ ցանկացեալ ցարդ յիմաստնոց Եւրոպայ, և բազմաց անծանօթ իր պարունակութեամբը, նկատմամբ լեզուին մեծարգոյ հմութեանը, կատարելութեան, և աստուածաբանական, պատմական, իմատասիրական ուսմանց մեծապէս օգտակարութեան»²²⁸։

Հայաստանի ամբողջական պատմական տարածքը ներկայացնող սկզբնաղբյուրների հետազոտությունը Սեն-Մարտենը կատարել է աշխարհագրական և պատմական տեղեկությունների համադրման մեթոդաբանությամբ։

Սեն-Մարտենի աշխատության ամբողջական վերնագիրն է՝ «Պատմական և աշխարհագրական յիշատակագիրք ի վերայ Հայաստանեայց»²²⁹, համաձայն Սյունիքի արքեպիսկոպոս Ստեփա-

²²⁷ Collection des historiens ..., t. I, p. V.

²²⁸ Տե՛ս Գ. Շրումպֆ, նշվ. աշխ., էջ 58։ Հայագիտության բնագավառում Գ. Շրումպֆի ունեցած վաստակը զնահատելով, Նորայր Բյուզանդացին նրան հասցեագրված 1890 թ. մայիսի 12-ի նամակում, երախտագիտության զգացումով գրել է. «Եթե հայ հեղինակների մեկնաբանման գործում կարող եմ ձեզ օգտակար լինել, ապա շատ երջանիկ կզգամ ինձ։ Անչափ շատ եմ սիրում այն օտարազգի գիտնականներին, ովքեր լրջորեն զբաղվում են մեր հին գրականությամբ...» (տե՛ս Ա. Վարդանյան, Վ. Վարդանյան, Նորայր Բյուզանդացու անտիպ նամակներից. - «Լրաբեր», հաս. գիտ., 1979, № 5, էջ 95)։

²²⁹ Գ. Շրումպֆ, նշվ. աշխ., էջ 172։

նուս Օրբելյանի՝ «Օրբելյան իշխանների պատմության» հայերեն տեքստի և Մովսես Խորենացուն ու Վարդան վարդապետին վերագրվող «Աշխարհագրություն»-ների, ինչպես նաև Հայաստանի պատմությանը վերաբերող շատ այլ դրվագների, այդ ամենը ուղեկցված ֆրանսերեն թարգմանությամբ և բացատրական նշումներով²³⁰: Սույն հետազոտությունում Սեն-Մարտենը օգտագործել է հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները, ինչպես նաև պատմագիտական երկերից, հատկապես, Սիքայել Չամչյանցի եռախատոր «Պատմութիւն Հայոց»-ը: Սեն-Մարտենը չնայած իր շարադրանքում, ըստ ժամանակագրական կարգի, հիմք է ընդունել վաղմիջնադարյան հայ պատմիչների երկերը, այնուամենայնիվ, սկզբնաղբյուրներից առաջինը նշել է Ստեփանոս Օրբելյանի երկը²³⁰, քանի որ, իր կատարած դրա ֆրանսերեն թարգմանությունն արդեն պատրաստ էր հրատարակության համար²³¹:

Սեն-Մարտենը, մի կողմից Մովսես Խորենացուն իրավացիորեն V դարի հեղինակ է համարել²³², ինչպես նաև, Հայաստանի

²³⁰ Սեն-Մարտենի աշխատության երկրորդ հատորի մեծ մասը նվիրված է Ստեփանոս Օրբելյանի կյանքին և աշխատության թարգմանությանը՝ համապատասխան ծանոթագրություններով (J. Saint-Martin, op. cit., t. II, Paris, 1819, De la vie et des écrits d'Etienne Orbelian, archevêque de Siounie, pp. 1-300): Առաջինը Մ. Բրոսեն է կարծիք հայտնել, որ Ստեփանոս Օրբելյանը պիտի ծնված լիներ 1250-1260 թթ. միջև (տես Histoire de la Siounie par Stépannos Orbelian, traduite de l'arménien par M. Brosset, seconde livraison, introduction, St.-Petersbourg, 1866, p. 170): Այս կարծիքը Ա. Ա. Աբրահամյանը հավանական է համարել (տես Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 6), նշելով, որ պատմաբանների մեծամասնությունը (Ա. Գ. Աբրահամյան, Թ. Խ. Հակոբյան, Ս. Տ. Մելիք-Բախշյան) համամիտ է դրա հետ, բացառությամբ Գ. Մ. Գրիգորյանի, որի կարծիքով «պատմիչը պետք է ծնված լիներ XIII դ. 40-ական թթ. և ապրած ոչ պակաս 60 տարի» (Գ. Մ. Գրիգորյան, Ստեփանոս Օրբելյան. - ՊԲՀ, 1976, N 4, էջ 155, նույնի՝ Սյունիքը Օրբելյանների օրոք, Երևան, 1981, էջ 194): Ստեփանոս Օրբելյանի Պատմության Սեն-Մարտենի ֆրանսերեն թարգմանության մասին տես նաև Ա. Դոլխուսյան. Ստեփանոս Օրբելյանի պատմության ֆրանսերեն առաջին թարգմանությունը. - ՊԲՀ, 2014, № 1, էջ 3-15):

²³¹ J. Saint-Martin, op. cit., t. I, p. IX.

²³² Խոսելով Սահակ Բագրատունու 483 թ. զոհվելու մասին՝ Սեն-Մարտենը նշել է, որ «Մովսես Խորենացու Պատմությունը ստեղծվել է մինչ այդ դարաշրջանը» (J. Saint-Martin, op. cit., t. II, p. 302):

պատմական աշխարհագրությունը ներկայացնելիս մանրամասն անդրադարձել է «Աշխարհացոյց»-ի տեղեկություններին, մյուս կողմից՝ «Աշխարհացոյց»-ում դիտարկելով V դարին չհամապատասխանող որոշ տվյալներ, այն համարել է IX կամ X դարի հեղինակի գործ: «Աշխարհացոյց»-ի ձեռագրերում Մովսես Խորենացու մասին եղած տեղեկությամբ²³³ հակառակ Սեն-Մարտենը իր աշխատության երկրորդ հատորի նախաբանի վերնագրում անհիմն կերպով գրել է «Մովսես Խորենացուն վերագրվող Աշխարհագրության ստեղծման դարաշրջանի մասին ուսումնասիրություն»²³⁴: Սեն-Մարտենի այսպիսի տեսակետը խիստ քննա-

²³³ «Աշխարհացոյց»-ի զգալի թվով ձեռագրերում որպես հեղինակ է հիշատակված Մովսես Խորենացին, ուստի, դեռևս XVIII-XIX դդ. մի շարք հետազոտողներ Մովսես Խորենացուն նշել են որպես V դ. պատմիչ՝ «Պատմութիւն Հայոց»-ի ու «Աշխարհացոյց»-ի հեղինակ (Mosis Chorenensis Historiae Armeniacae. Libri III. Praefatio... Accedit ejusdem Scriptoris Epitome Geographiae. Armeniace ediderunt, Latine verterunt, notisque illustrarunt Gulielmus & Georgius. Gul. Whistoni Filii, Londini, 1736: The London Encyclopedia, vol. XV. L., 1829, p. 172, History of Armenia by Father Michael Chamich, translated from the original Armenian by Johannes Avdall, vol. I, Calcutta, 1827, p. xxxvi-xxxvii, Collection des historiens..., t. I, pp. 385, Géographie de Moïse de Corène d'après Ptolémée. Texte Arménien, traduit en français par le P. Arsen Soukkry Mekhitariste, Venise, 1881): Հետագայում այս տեսակետը պաշտպանեց Բ. Հարությունյանը իր «Մեծ Հայքի վարչաքաղաքական բաժանման համակարգը ըստ «Աշխարհացոյց»-ի (մաս Ա, Արևմտյան և հարավային աշխարհներ)» գրքում (Երևան, 2001, էջ 33): «Աշխարհացոյցի»-ի ընդօրինակությունները պահպանվել են, թե՛ Մովսես Խորենացու և թե՛ Անանիա Շիրակացու երկերը պարունակող ձեռագիր ժողովածուներում (տես՝ Ա. Գ. Աբրահամյան, «Աշխարհացոյց»-ի հեղինակի պորթլենդը, - ԴԲՀ, 1969, № 3, էջ 227), այդ իսկ պատճառով, ըստ մեկ այլ կարծիքի, «Աշխարհացոյց»-ի հեղինակը Անանիա Շիրակացին է (Բ. Պաւտկանյան, Յ. Մարկվարտ, Թ. Հակոբյան, Ա. Գ. Աբրահամյան և ուրիշներ): Հետազոտությունները փաստում են, որ Մովսես Խորենացու V դարի «Աշխարհացոյց»-ը խմբագրել և շարունակել է Անանիա Շիրակացին VII դարում (տես՝ Է. Լ. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը, էջ 37, Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 111, 124):

²³⁴ Սեն-Մարտենը «Աշխարհացոյց»-ի թարգմանության նախաբանում նշել է, որ օգտագործել է Մարսելում 1683 թ. տպագրված ախարհագրական պատանդիկներով մի «Աշխարհագրություն» (ըստ Սեն-Մարտենի՝ այդ օրինակում առկա են մի շարք սխալներ), և պատմությունների ու առակների ժողովածու, որը կոչվել է «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է աղուեսաորը կոչվել է «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է աղուեսաորը»): Մարսելի այդ նույն հրատարակությունը մասամբ օգտագործել են

դատության ենթարկելով²³⁵, Ղ. Ինճիճյանը իրավացիորեն եզրակացրել է. «Այսչափ են ընդդիմութիւնք յառաջ բերեալք 'ի Սէն Մառդէնէ, անզօրք և անբաւականք առ 'ի օտարացուցանել զայն աշխարհագրութիւն թէ չիցէ հարազատ մատենագրութիւն խորենացւոյն. այլ առ մեզ ընդունելի է աներկբայ նորին գոլ ըստ ամենայն խորագրաց օրինակացն. և չգտանենք 'ի նմա տարադէպ ինչ և հակառակ գրուածոց և կամ ժամանակի խորենացւոյն: Եւ եթէ սակս այսպիսի չնչին պատճառաց արժան էր չհամարել զայս աշխարհագրութիւն հարազատ գործ մատենագրին ի դէպ էր յայնժամ և զայլ գործս բազմաց մատենագրաց յունաց և հռոմայեցւոց չհամարել հարազատ գործ նոյն հեղինակաց՝ զորոց զանուանս կրեն. զի և ի նոսա ոչ սակաւ ընդդիմութիւնք այսպիսիք ընդ առաջ ելանեն քաջ քննաբանից. բայց ոչ ոք համարծակի յայսպիսիս»²³⁶:

Վենետիկի Մխիթարյանները իրատարակեցին «Աշխարհացոյց»-ը Մովսես Խորենացու հեղինակությամբ՝ համառոտ խմբագրության վեց ձեռագրերի համեմատությամբ²³⁷: Ա. Սուքրին իրատարակեց «Աշխարհացոյց»-ի ընդարձակ բնագրի ֆրանսերեն թարգմանությունը նախաբանով²³⁸ և հայերեն բնագրով՝ «Աշխարհացոյց Մովսես Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց»²³⁹:

Վիստոն եղբայրները, որոնց կողմից իրատարակված պատառիկները Սեն-Մարտենը գտել է նաև Արքունի մատենադարանի № 100 հայերեն ձեռագրում (J. Saint-Martin, op. cit., t. II, pp. 315-317):

²³⁵ Ղ. Ինճիճեան, Յնախօսութիւն աշխարհագրական Դայաստանեայց աշխարհի, հ. 4, էջ 304-313:

²³⁶ Նույն տեղում, էջ 314:

²³⁷ «Սրբոյ Դօրն Մերոյ Մովսէսի Խորենացւոյ Մատենագրութիւնք», Վենետիկ, 1843:

²³⁸ P. Arsen Soukkry, op. cit., pp. III-VIII, 1-62.

²³⁹ Ibid., pp. 5-46. Ա. Սուքրին քննադատաբար գրել է, որ առաջինը Սեն-Մարտենն էր, ով հերքեց «Աշխարհացոյց»-ի՝ խորենացու գրչին պատկանելը (Ibid., pp. III): Դետագայում Բ. Դարությունյանը նշելով Սեն-Մարտենի աշխարհացոյցյան քննության մի շարք դրական կողմերը, նույնպես քննադատաբար է մոտեցել հեղինակի մասին նրա տեսակետին (Բ. Դ. Դարությունյան,

Սեն-Մարտենն իր աշխատության I հատորի Ներածությունը սկսում է XIX դ. սկզբներին Սեն Դայքի՝ օտար տերությունների միջև բաժանված լինելու իրավիճակի դիտարկմամբ²⁴⁰։ Այստեղ կարևոր է Սեն-Մարտենի մեթոդաբանական մոտեցումը՝ հայկական տարածքները պատմականորեն ամբողջության մեջ ներկայացնելու տեսանկյունից, ինչպես երևում է նրա շարադրանքի հետևյալ տողերից. «Սեն Դայք անունով հայտնի ընդարձակ երկիրը, որի տարածքը բաժանված է թուրքերի²⁴¹, պարսիկների և ռուսների²⁴² միջև, երեք հարյուր լր²⁴³ տարածքով, ձգվում է արևմուտքից արևելք՝ Եփրատի ափերից մինչև Կուրի գետաբերանը և Կասպից ծովը, և հյուսիսից հարավ՝ Վիրքից ու Կովկասի լեռից մինչև Դիարբեքի²⁴⁴ հարավային սահմանները՝ երկու հարյուր հիսուն լր ձգվածությամբ»²⁴⁵։

Սեն Դայքին նվիրված բաժնում (Description de la Grande Arménie) Սեն-Մարտենը, անդրադառնալով Սեն Դայքի նահանգ-

Սեն Դայքի վարչաքաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, էջ 8)։

²⁴⁰ Ինչպես նշել է Սեն-Մարտենը, իր աշխատությունը ավարտվում է 1812 թվականով (J. Saint-Martin, op. cit., t. I, p. ix)։ Սեն-Մարտենի սույն աշխատության վերջում զետեղված ժամանակագրական ցանկերի հիմնական սկզբնաղբյուրը Ս. Չամչյանցի «Պատմութիւն Դայոց» եռահատոր աշխատությունն է, ուստի Մայր Աթոռ Ս. Էջմիածնում նստող կաթողիկոսների ցանկը [վերնագրել է «Հայաստանի (Սեն Դայք և Փոքր Հայք-Ա.Դ.) հայրապետներ»] նա եզրափակել է Դուկաս Ա Կարմեցու (1780-1799 թթ.), իսկ Կիլիկիոյ կաթողիկոսներինը՝ (այս ցանկը նա վերնագրել՝ «Սիսի հայրապետներ») Թորոս Գ Սըսեցու (1784-1796 թթ.) անունով (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 446. 448)։

²⁴¹ Իր ժամանակի առումով Սեն-Մարտենը գրել է. «Բացի ամբողջապես Փոքր Հայքից և Կիլիկիայից, թուրքերը գերիշխում են նաև Սեն Դայքի արևմտյան մասում» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 33)։

²⁴² Սեն-Մարտենը նկատի ունի ռուս-պարսկական պատերազմի հետևանքով հյուսիսարևելյան Հայաստանում ստեղծված վարչաքաղաքական կացությունը՝ 1805 թ. հետո մինչև 1812 թ.։

²⁴³ Ֆրանսիական չափի միավոր, որը համապատասխանում է 4 կմ (Le Petit Larousse, Paris, 1995, p. 601)։

²⁴⁴ Ամիդ։

²⁴⁵ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 1.

ներին (Բարձր Հայք²⁴⁶, Տայք, Գուգարք, Ուտիք, Չորրորդ Հայք²⁴⁷, Տուրուբերան, Այրարատ²⁴⁸, Վասպուրական, Սյունիք, Արցախ²⁴⁹,

²⁴⁶ Հիմք ընդունելով «Աշխարհացոյց»-ի տեղեկությունները՝ Սեն-Մարտենը Բարձր Հայքի դիրքի մասին գրել է, որ այն «գտնվում է Սեծ Հայքի հյուսիսարևմուտքում, արևելքից սահմանակից է Տայք և Արարատ (իմա՝ Այրարատ) նահանգներին, հարավից՝ Տուրուբերանին և Չորրորդ Հայքին, իսկ արևմուտքից Եփրատ գետով Փոքր Հայքին և վերջապես հյուսիսից՝ Տրապիզոնի տարածքին և Կողքիսի մի մասին...»: Սեն-Մարտենը նկարագրել է Բարձր Հայքի տեղադրությունը, զավառները և բնակավայրերը ըստ հին և վաղմիջնադարյան դարաշրջանների, այնուհետև նշել է, որ այդ նահանգը իր ժամանակներում գտնվում էր օսմանյան բռնակալության «գերիշխանության տակ՝ կազմելով Արգրունի (Կարին-Էրզրում - Ա.Դ) փաշալիկը», միաժամանակ հիշատակելով թուրք զավթիչների կողմից իրականացրած բռնազավթումների և աղետալի ավերածությունների մասին (J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 66, 68):

²⁴⁷ Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ «Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն» (տե՛ս Ա. Երեմյան, նշվ. աշխ., էջ 106):

²⁴⁸ Այրարատ անվանումը Սեն-Մարտենը նշել է *Արարատ* ձևով (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 65):

²⁴⁹ Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ «Տասներորդ [աշխարհի] Արցախ յերի կալով Սիւնեաց...» (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109): Արցախի ընդհանուր դիրքի մասին Սեն-Մարտենը գրել է. «Այս նահանգը նախորդից (Սյունիք-Ա. Դ.) արևելք էր և ձգվում էր Գուգարք և Ուտիք նահանգների սահմաններից մինչև Արաքսի ավերը, Կուր գետի և Սյունիք նահանգի միջև» (M. J. Saint-Martin, op. cit., t. I, p. 148): Ուտիքի կապակցությամբ պետք է նկատի ունենալ «Աշխարհացոյց»-ի տեղեկությունը՝ «ընդ մէջ Արցախայ եւ Կուր գետոյ» (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109): Այնուհետև Սեն-Մարտենը նշել է, որ Արցախը նույնիսկ հաճախ ընդգրկվել է Սյունիք նահանգի մեջ: Նա, ամենայն հավանականությամբ, նկատի է ունեցել Մովսէս Խորենացու հաղորդումները «զգունդն որ ի Սիսակայ», ինչպես նաև մանուկ Գրիգորիսի կապակցությամբ («... ի Փոքր Սիւնիս, թաղեցին յԱմարաս աւանի...», Մովսէս Խորենացի, էջ 260) նշելով, որ Արցախը (Փոքր) Սյունիքի «անվանումը կրում էր իր մեծ մասով...»: Սեն-Մարտենը նշել է, որ Արցախը XIII դ. խաչեն էր կոչվում, այնտեղ հիշատակելով Գանձասարը, Ջրաբերդը, Վարանդան, Դիզակը և Արցախին սահմանակից Ուտիք նահանգի Գանձակը և Տավուշը՝ «Գուգարք և Ուտիք նահանգների սահմանին»: Նա ուշադրություն է հրավիրել նաև *Արցախ* նահանգի *Արժախ* անվանածնի վրա. «La province d'Artsakh portait encore le nom d'Ardsakh» (M. J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 148-152): Նշենք, որ Արցախի տարածքում խաչենի իշխանությունը պատմագրության մեջ հայտնի էր X դարից (տե՛ս Կոստանդին Ծիրանածին, Բյուզանդական արքունիքի արարողությունների մասին, գիրք II, գլ. 48. - Բյուզանդական աղբյուրներ, Բ. Կոստանդին Ծիրանածին, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծան. Զր. Բարթիկյանի,

Փայտակարան, Աղծնիք, Մոկք, Կորճայք, Պարսկահայք), գրել է. «Մեծ Հայքի սահմանը արևմուտքում եփրատն է, որն այն բաժանում է Փոքր Հայքից, իսկ հարավում Տավրոսի մի շղթան է»: Մեծ Հայքի սահմաններին հարակից տարածքներից Սեն-Մարտենը այնուհետև հիշատակել է Միջագետքը, իսկ «արևելքում՝ Ատրպատականը և Կասպից ծովը, հյուսիսում՝ Կոլխիդան (Կողքիս), «Իբերիան (Վիրք) կամ Վրաստանը» (Ibérie ou Géorgie) ու «աղվանների երկիրը» (le pays des *Aghovans*) (թուև Աղուանք - Ա.Դ.), որը հույների [հիշատակած] Ալբանիան է...»²⁵⁰:

Մարի Բրոսեն ևս զգալի անդրադարձ է կատարել սկզբնաղբյուրների այն տեղեկություններին, որոնք կարևորություն են ներկայացնում Հայաստանի, ինչպես նաև հարևան երկրների պատմության և պատմական աշխարհագրության լուսաբանման համար հայագիտության, արևելագիտության և կովկասագիտության հիմնախնդիրների քննարկման համատեքստում:

Մ. Բրոսեն անդրադառնալով Հայաստանի տարածքի պատմաաշխարհագրական ընդգրկվածությանը, գրել է. «Հայաստանը քարտեզի վրա զբաղեցրել է մոտավորապես 6° լայնություն՝ Խրամ գետից մինչև Միջագետքի և Ասորեստանի հարթավայրերը և 9° երկայնություն՝ Եփրատից մինչև Մազանդարանի և Գիլանի սահմանը»²⁵¹: Արշակունիների հարստության օրոք այն բաժանված էր 15 նահանգների և 193 գավառների»²⁵²:

Երևան, 1970, էջ 151, 311, ծան. 88: Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X-XI դարերում, Երևան, 1975, էջ 50:

²⁵⁰ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 35.

²⁵¹ Մ. Բրոսեն այստեղ նշել է Մեծ Հայքի տարածքը: Մեկ այլ տեղ նա խոսում է Կիլիկիայի մասին, որը կրում էր նաև Փոքր Հայք անվանումը (M. Brosset, *Analyse critique de la Voeobashaya istoriya de Vardan*, St-Petersbourg, 1862, p. 1), ինչպես և բուն Փոքր Հայքը: Հայտնի է, որ Հայկական լեռնաշխարհը գտնվում է հյուսիսային լայնության 36° 44' - 42° 08' և արևելյան երկայնության (Գրինվիչից) 38° - 47° 32' միջև: Ընդ որում, այն առավելագույն երկարություն ունի Մուշ քաղաքով անցնող զուգահեռականով, իսկ առավելագույն լայնություն՝ Թունդրակ լեռով անցնող միջօրեականով: Հայկական լեռնաշխարհն արևմուտքից սահմանակից է Փոքրասիական, իսկ հարավ-արևելքից՝ Իրանական բարձրավանդակներին, հյուսիս-արևմուտքում հասնում է մինչև Սև

Սեծ Հայքի տասնհինգ աշխարհներին նվիրված շարադրանքում Սեն-Մարտենը անդրադառնալով հետազայում (մինչև իր նկարագրած ժամանակները XIX դ. սկզբները) Հայաստանի համար սեղծված ծանր իրավիճակին, գրել է այդ տարածքների հայկական լինելու մասին²⁵³։ Այդ իրողությունը վկայված է Սեն-Մարտենի երկի մաս առաջաբանի եզրափակիչ հատվածում. «Երկար ժամանակ ի վեր հայերն իրենց անկախության հետ մեկտեղ կորցրել էին քաղաքական կարգավիճակը, որն իրենց երկրի ընդարձակությամբ և կարևորությամբ նրանց իրավունք էր տալիս պահպանել իրենց տեղը Ասիայի այլ ազգերի շարքում»²⁵⁴։

ծով, հյուսիսում և հյուսիս-արևելքում եզերված է Կուրի գետահովտով, իսկ հարավում՝ Հյուսիսային (Հայկական) Սիջազետի հարթավայրերով (Л. Н. Зюграбян, Орография Армянского нагорья (Опыт орографического анализа морфоструктуры), Ереван, 1979, с.16-17, 85:

²⁵² M. Brosset, Les ruines d'Ani.... p. VII.

²⁵³ Օրինակ, գրելով Կուրի ակունքների և վերին հոսանքի մասին, Սեն-Մարտենը նշել է, որ այն «նախ հոսում է հյուսիս-արևելք կտրելով հայկական Տայք և Գուգարք նահանգները...» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 38): 1801 թ. Արևելյան Վրաստանը կցվել էր Ռուսական կայսրությանը։ Վրաց թագավորության հետ Ռուսաստանի տիրապետությանն անցան մեծ շրջանային Հայաստանի մի շարք գավառներ Լոռին, Փամբակը, Ղազախ-Շամշադինը։ 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում, զինադադարի ժամանակ՝ 1805 թ մայիսի 14-ի պայմանագրով Արցախն անցնելու էր Ռուսական կայսրության տիրապետությանը։ Իսկ 1813 թ. հոկտեմբերի 12-ին Գյուլիստանում (Արցախում) կնքված ռուս-պարսկական պայմանագրով Ռուսական կայսրությանը միացվում են «Ղաղստանը, Վրաստանը, Մեզրեխան, Իմերեթը, Գուրիան, Աբխազիան, Ղարաբաղի (Արցախ), Գանձակի, Շաքիի, Շիրվանի, Ղերբենդի, Ղուբայի, Բաքվի և Թալիշի խանությունները, Լոռու, Ղազախի, Շամշադինի, Ջանգեզուրի, և Շիրակի գավառները» (ՀԺՊ, հ. III, գիրք I, Երևան, 2010, էջ 188, 192, 200):

²⁵⁴ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 16. Հատկանշական է, որ Սեն-Մարտենը գրել է մինչև իր ժամանակները պահպանված Արցախի մելիքությունների մասին. «Il existait encore, il y a peu de temps, dans la partie montagneuse de l'Arménie, située à l'occident et au sud Gandjah (Gandzak-A.D.) et de Bardaah (Partav-A.D.), plusieurs petits princes Arméniens... qui prenaient le titre de Մելիք... » (Ibid., p. 34): Ուտիքի Գանձակ և Պարտավ քաղաքներից արևմուտք և հարավ «Հայաստանի լեռնային մաս»-ը նշելով, Սեն-Մարտենը նկատի է ունեցել Արցախը, որտեղ գոյություն ունեցած մելիքությունները մեծ ներդրում են ունեցել հայ ժողովրդի ազատագրական պայքարում (Րաֆֆի, Խամսայի մելիքությունները. - Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1987, էջ 417-433, 476):

Սեն-Մարտենի և Մարի Բրոսեի հետազոտություններում Հայաստանի պատմական աշխարհագրության հիմնահարցերի ուսումնասիրության մեթոդաբանության հիմքում այն դրույթն է, որ Մեծ Հայքի և Փոքր Հայքի տարածքները, անկախ իրենց ժամանակաշրջանում ստեղծված իրավիճակից, պատմականորեն կազմում էին ամբողջական Հայաստանը:

Սեն-Մարտենի հայեցակարգային հիմնադրույթներից էր՝ եվրոպական ընթերցողին Հայաստանի պատմության և աշխարհագրության իրազեկումը: Շատ բնիկ հայկական տեղանուններ աղճատվել էին օտար վարչաքաղաքական բաժանումների հետևանքով տեղի ունեցած այլափոխություններից: Սեն-Մարտենը, պատմաաշխարհագրական հասկացությունների նկատմամբ ճանաչողական մոտեցում ցուցաբերելով և պատմական տեղանունների մասին հիշողության պահպանմամբ նպաստում էր Հայաստանի պատմական ամբողջական պատկերի վերականգնմանը: Սեն-Մարտենը գրելով, որ Արշակունյաց հարստության թագավորության օրոք «Մեծ Հայքը բաժանված էր տասնհինգ նահանգների՝ մեծ թվով ենթաբաժանումներով՝ գավառներով, որոնք կազմված էին բազմաթիվ ինքնիշխան իշխանություններից», այնուհետև, նկատի ունենալով XVIII դ. վերջի և XIX դ. առաջին տասնամյակները, նշել է. «Այս նահանգների մեծ մասը կորցրել են իրենց հին անունները, իսկ քիչ թե շատ ճիշտ ձևով պահպանվածները, չեն նշվում այնպես, ինչպես հայերեն գրքերում են և դրանք հաճախ անտեսվում են օտարների կողմից, որոնք համարյա միշտ օգտագործում են այլ անուններ»²⁵⁵:

Իր շարադրանքի հիմքում ունենալով հայկական սկզբնաղբյուրների տեղեկությունները՝ Սեն-Մարտենը կատարում է բուն հայկական որոշ տեղանունների վերականգնումներ՝ միաժամանակ փաստելով օտարների կատարած աղճատումները: Հետագայում նույնպես, հատկապես, Արևմտյան Հայաստանը և Կիլիկյան Հայաստանը զավթած ու Հայոց ցեղասպանությունը իրա-

²⁵⁵ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 65.

կանացրած հանցավոր թուրքական իշխանությունների կողմից²⁵⁶ Հայոց պատմության կեղծարարություններին և պատմամշակութային հուշարձանների ոչնչացմանը զուգընթաց, շարունակական բնույթ է ստացել՝ հայկական տեղանունների նենգափոխմամբ, դրանց վերացման քաղաքականությունը²⁵⁷: Ուստի, XIX դ. ֆրանսիացի հայագետների մոտեցումները կարևոր պատմագրական նշանակություն ունեն այդպիսի կեղծարարությունները և տեղանվանական այլափոխումները բացահայտելիս և հայկական տեղանունների վերականգման մեթոդաբանությունը կիրառելիս:

Հայաստանի պատմաաշխարհագրական հետազոտության խնդրին ֆրանսիացի հայագետները մոտեցել են որոշակի տեսական հայեցակարգով, որի հիմքում Հայոց պատմական ժառանգության արժևորումն է՝ Հայաստանի ամբողջական տարածքի առումով: Սկզբնաղբյուրների հետազոտությունը Սեն-Մարտենը և Մարի Բրոսեն կատարել են աշխարհագրական և պատմական տեղեկությունների համադրության մեթոդաբանությամբ: Նրանք անդրադարձել են սկզբնաղբյուրների այն տեղեկություններին, որոնք

²⁵⁶ Տե՛ս Զ. Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), Երկրորդ գիրք, Երևան, 1983, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Составитель, отв. ред., автор предисловия и комментария Ю. Г. Барсегов. М., 2002, т. 1. 2003, т. 2, ч. 1. 2005, т. 2, ч. 2. Ռ. Հ. Գասպարյան, Հայկական կոտորածները Կիլիկիայում, Երևան, 2005, Հ. Ռ. Սիմոնյան, Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909, ապրիլ), Երևան, 2009, Alfred de Zayas, The Genocide Against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention, Beirut, Lebanon: Haigazian University Press, 2010 և այլն:

²⁵⁷ Ս. Կ. Զուլպյան, Հայոց պատմության խեղաթուրումը արդի թուրք պատմագիտության մեջ (հին և միջին դարեր), Երևան, 1995, Է. Լ. Ղանիեյան, Հայաստանը և հայկական տեղանունները. Հայոց բնապատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը. «Վեն» համահայկական հանդես, 2009, № 1, էջ 9-25, Բ. Հ. Հարությունյան, Պետական մակարդակի բարձրացված կեղծարարություն. - «Վեն» համահայկական հանդես, 2010, № 4 (32), էջ 24-57, Լ. Սահակյան, Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական թուրքիայում, էջ 27-48 (տես և L. Sahakyan, Turkification of the Toponyms in the Ottoman Empire and the Republic of Turkey, Montreal, 2011) և այլն:

կարևոր են Հայաստանի, ինչպես նաև հարևան երկրների պատմության լուսաբանման համար՝ հայագիտության, արևելագիտության և կովկասագիտության հիմնախնդիրների հետազոտության համատեքստում:

**2. Մեծ Հայքի հյուսիսային սահմանային գոտու
ուսումնասիրության խնդիրը XIX դ. ֆրանսիական
հայագիտական և արևելագիտական
հետազոտություններում**

**Ա. Տայքը սեպագիր և հին հունական ու հայկական
վաղմիջնադարյան սկզբնաղբյուրներում**

Սեն-Մարտենը և Մարի Բրոսեն Հայաստանի պատմաքաղաքական աշխարհագրությանն անդրադառնալիս՝ իրենց հետազոտական և թարգմանական աշխատություններում կարևորել են այն իրողությունը, որ Տայքը հին ժամանակներից եղել է Հայաստանի նահանգներից մեկը: Այս խնդրում հիմք ընդունելով հայկական սկզբնաղբյուրների (հատկապես «Աշխարհացոյց»-ի) տեղեկությունները, ինչպես նաև Մ. Չամչյանցի ու Ղ. Ինճիճյանի աշխատությունները²⁵⁸, Սեն-Մարտենը և Մ. Բրոսեն հատուկ ուշադրություն են դարձրել Մեծ Հայքի Տայք նահանգի աշխարհագրական բնութագրին:

Սեն-Մարտենը գրել է. «Տայք (Տայոց) աշխարհը գտնվում էր Բարձ Հայքից հյուսիս-արևելք՝ Արարատ (իմա՝ Այրարատ - Ա.Դ.) աշխարհից հյուսիս, Գուգարքից արևմուտք, Խաղտիք և Լազիկա երկրներից արևելք... Կոլխիդայից (Կողքիս) և ներկայումս Գուրիել (Գուրիա) թագավորությունը կազմող Իբերիայից (Վիրք)՝ հա-

²⁵⁸ Մ. Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, էջ 208, Ղ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մաս. Ա, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 58:

րավ... Տայք նահանգը նախքան վրացիների ներխուժումը²⁵⁹ բաժանված էր 8 փոքր գավառների»²⁶⁰։ Սեն-Մարտենը Տայք նահանգի 8 գավառից հիշատակել է Կողը, Բերդացփորը, Պարտիզացփորը, Ոքաղեն և Բողխան²⁶¹։

Թովմա Արծրունու և Անանունի «Պատմութիւն Տանն Արծրունեաց» երկի ֆրանսերեն իր թարգմանության ծանոթագրություններում Ս. Բրոսեն, անդրադառնալով *Տայաստան*²⁶² անվանածին, գրել է, որ այն ընդգրկել է ամբողջությամբ Տայք նահանգը։ Նա միևնույն ժամանակ նշել է, որ *իբերացիները* այստեղ են հայտնվել ավելի ուշ, սակայն ոչ շուտ քան մ. թ. X դարը, քանզի Տայքում թվարկվող վայրերը բնակեցված են եղել հայերով, որոնք թողել են բազմաթիվ հուշարձաններ, և մեծ թվով բնակավայրեր դեռևս կրում են հայկական անվանումներ («les contrées énumérées ici ont été habitées par les Arméniens, qui y ont laissé de nombreux monuments, et qu'une foule de localités y portent encore des noms arméniens») ²⁶³։

²⁵⁹ Սեն-Մարտենն ուշ ժամանակների առումով նշել է, որ «վրացիների տիրապետումն ուժգնորեն հանգեցրել է նախկին՝ այստեղ գործածական անվանումների անհետացմանը և վրացերեն անունների ներմուծմանը» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 76)։

²⁶⁰ Ibid, Տայքը, ըստ «Աշխարհացոյց»-ի, ուներ հետևյալ գավառները՝ Կող, Բերդացփոր, Պարտիզացփոր, ճակք, Բողխա, Ոքաղե, Ազորդացփոր, Արսեացփոր (Ս. Երեմյան, Մշվ., աշխ., էջ 110-111)։

²⁶¹ Սեն-Մարտենը Բողխան, վերջինիս *Poukha* ձևով նույնացրել է Կղավդիոս Պտղոմեոսի (83-161 թթ.) Βόχας-ի հետ (Claudii Ptolemaei Geographia, vol. I, pars secunda, Parisiis, 1901, V. 12.4, J. Saint-Martin, op. cit., t. I, p. 76)։ Ս. Բրոսեն նշել է, որ ճորոխի վերին ավազանում գտնվող հայկական սկզբնաղբյուրների *Տայք* անվանման հոգնակի ձևը համապատասխանում է Քսենոփոնի Ταῶχοι անվանածին (Histoire de la Géorgie..., 1858, p. VIII, հմնտ. «*Յայ* անունը ըստ Պ. Կրեչմերի», - «Չանդես ամսօրեայ», 1933, № 7-8, էջ 429 լրավածաբար թարգմանություն՝ Պ. Կրեչմերի հոդվածից, տես P. Kretschmer, Der nationale Name der Armenier// Anzeiger, 69, Jahrgang, 1932, Wien, 1933, S. 28-36)։

²⁶² Թովմա Արծրունի, էջ 322։

²⁶³ Collection d'historiens arméniens ..., t. I, p. 236, com. I, տես Э. Л. Даниелян. Историко-географические комментарии М. Броссе к его переводам армянских источников, с. 126-131։ Վ. Պ. Ստեպանենկոն, անդրադառնալով VIII դարի և դրան նախորդած ժամանակաշրջանի պատմությանը, գրել է, որ Չայաստա-

Տայքի մասին տեղեկություններ են պահպանվել ասուրական ու քիայնական (արարատյան՝ ուրարտական) սեպագիր արձանագրություններում և անտիկ ու միջնադարյան սկզբնաղբյուրներում:

Հայկական լեռնաշխարհի ներխուժած ասորեստանյան արքաներ Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115-1077 թթ.) և Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858-824 թթ.) արձանագրություններում ի թիվս այլ տեղանունների հիշատակվում է Դայանին (Daiaeni կամ Daiani): Թիգլաթպալասար I-ի դեմ դուրս էին եկել Նաիրիի *երկրների* (ասուր.՝ mâtâtî (pl) Nairi) 23, իսկ մեկ այլ դեպքում՝ 60 *արքաները*, որոնց թվում էր նաև Daiaeni *երկրի արքան*²⁶⁴: Անգլիացի

նի կազմում գտնվող Տայքը Մամիկոնյանների կալվածքն է եղել: Նա նշել է, որ Տայքի հայկական անցյալի հետքերը պահպանել են տեղանունները և ճարտարապետական հուշարձանների մնացորդները, ինչպես օրինակ Բանա (Բանակ) (Վանա) բնակավայրի տաճարն է և Ներսես Գ Շինարար կաթողիկոսի Իշխան գյուղում կառուցած եկեղեցին, որ «չի կարող կապված լինել վրացական ավանդության հետ, քանի որ վրացիները այստեղ ավելի ուշ են հայտնվել»: Վ. Ստեպանենկոն (В. П. Степаненко, Чортанели, Торники и Тарониты в Византии (к вопросу о существовании т.н. тайфской ветви Торников), АДСВ, Екатеринбург, 1999, вып. 30, с. 133-134, сн. 17) քննադատել է վրացի այն հեղինակներին (Գ. Չուբինաշվիլի, Վ. Բերիժե), ովքեր դրանք վերագրում են «վրացական ճարտարապետությանը: Սակայն հայտնի է, որ Բանակի տաճարը հին հայկական հուշարձան է, իսկ Իշխան գյուղում գտնվող եկեղեցին պատկանում է Իշխան-Չվարթնոց հայկական հուշարձանների շարքին, որոնք ստեղծվել են հենց Ներսես Շինարարի զործունեության շնորհիվ (Տ. Մարության, Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 11-12, 34):

²⁶⁴ L. W. King, The Annals of the Kings of Assyria, London, 1902, vol. I, col. IV, 82-83, 96-97, p. 67- 68; col V, 9, 22, 29. p. 69-71. D. D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, v. I, 1926, p. 81, 82. Խնդրո առարկա սեպագիր և անտիկ սկզբնաղբյուրներում կիրառվող «երկիր» հասկացության առնչությամբ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ օրինակ՝ հին հունարենում *χώρα* բառն ունի «երկիր», «տարածք, շրջան» և այլ նշանակություններ (H. G. Liddell, R. Scott, Greek-English Lexicon, Oxford, 1996, p. 2015): Կղավդիոս Պտղոմեոսը, նկարագրելով Մեծ Հայքը, նշել է. «Χώρα δὲ εἶσιν ἐν τῇ Ἀρμενίᾳ...» որը լատիներեն թարգմանված է. «Regiones sunt Armeniae...» (Ptol. V.12. 4, p. 937): Հունական սկզբնաղբյուրներում այդպիսի փաստի ուշադրություն է դարձրել Դ. Բարթիկյանը՝ գրելով. «Բյուզանդական սկզբնաղբյուրներում հայկական «աշխարհ»-ը (նահանգ) փոխանցվում կամ թարգմանվում է *χώρα*», օրինակ՝ «Περὶ τῆς χώρας τοῦ Ταρῶν» (Constantine Porphyrogenitus. De administrando imperio, Greek Text edited by Gy. Moravcsik,

արևելագետ Ա. Սեյսը Վանի՝ Սինուա (մ.թ.ա. 810-786 թթ.) և Արգիշտի I (մ.թ.ա. 786-764 թթ.) արքաների արձանագրությունները վերծանելիս, հիշատակելով ասուրական արձանագրությունների Dayaeni (Daiaeni)-ն, կարծիք է հայտնել, որ այն համապատասխանում էր «Diaus անունով արքայի և նրա սերունդների թագավորությանը»²⁶⁵: Այդպիսի կարծիքի էր նաև Ն. Ադոնցը նշելով, որ Թիգլաթալասար II-ի (պետք է լինի Թիգլաթալասար I-ին - Ա. Դ.) նվաճած երկրների մեծ մասը (Daiaeni, Abaeni և այլն), ունեին «հայրանվանական («les patronymiques») անուններ»²⁶⁶:

Բիայնական սեպագիր արձանագրություններում Diau(e)he անվանաձևի հետ գործածված է *m*՝ արական անձի դետերմինատիվը՝ LUGAL²⁶⁷ (թագավոր), KUR (*երկիր*) և URU (քաղաք, բնա-

Washington, 1967, p. 188) (տես Р. Бартикийн, О царском кураторе «MANZHKERT KAI EZS IBHPIAS» Михаиле в связи с восточной политикой Василия II (976-1025 гг.), - Պատմա-բանասիրական հանդես, 2000, № 1, էջ 131, ծան. 8): Ն. Ադոնցը հիմնվելով «Աշխարհացոյց»-ում *Տարութեան աշխարհի* կապակցությամբ հիշատակվող «որ է Տարաւն» արտահայտության վրա՝ նշել է. «Таруберан определяется им» (այսինքն՝ Տարոն գավառով) (II. Адонц, ук. соч., с. 309. Դմտ. Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 85, 107):

²⁶⁵ A. H. Sayce, The Cuneiform Inscriptions of Van, - The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland (JRAS), London, 1882, p. 399, 544. հմտ. J. Sandalagian, Les inscriptions cunéiformes urartiques, Venise, 1900, p. 59.

²⁶⁶ N. Adontz, Histoire d'Arménie, Les origines du X^e siècle au VI^e (av. J. C.), Paris, 1946, p. 220.

²⁶⁷ Ըստ Գր. Ղափանցյանի սեպագրերում «թագավոր» տերմինը նույն բովանդակությունը չի ունեցել, քանի որ «ուրարտական «թագավոր» բառը ոչ միայն հնչել է ereli, այլև ծագմամբ նշանակել է «ժողովրդապետ» և թերև «ցեղապետ»: Այսպիսի ենթադրությամբ համար նա բառի առաջին մասը՝ er-ը համարել է «ցեղ, ժողովուրդ», իսկ ereli՝ «ցեղապետ, ժողովրդապետ»: Գր. Ղափանցյանի մեկ այլ ենթադրությամբ՝ «եղել է և երկրորդ բառ, «թագավոր» իմաստով և LUGAL դետերմինատիվով և ... հնչել է *nu*՝ «արքա-իշխան» նշանակությամբ»: Օրինակ բերելով Արգիշտի I-ի խորխոռյան արձանագրությունից հետևյալ տողը՝ -uštadi ʾDiauchiniedi LUGAL ʾDiauehi LUGAL-nu duabi²⁶⁷ (col. I, 6), որը նա վերծանել է՝ «արշավեցի Դիաույան ցեղի դեմ, թագավորին Դիաու ցեղի արքա արի», Գր. Ղափանցյանը ենթադրել է, որ այս *nu*-ն վասալական առումով է կիրառված (Գր. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 84-85): Սակայն Ն. Դարությունյանը նշել է՝ «LUGAL-նս-«թագավոր»՝ հնչյունական - nu լրացումով հետերոգրամի ուրարտական համապատասխանությունը... Ուրարտական er(i)eli բառի հոմանիշ նույն նշա-

կավայր) հետերոգրամների ուղեկցությամբ (վերջիններս հանդես են գալիս նաև որպես դետերմինատիվներ)²⁶⁸.

Ըստ Գ. Սելիքիշվիլու՝ ասորեստանյան սեպագրության Դ (m) անձի նշանն ուրարտական արձանագրություններում ունի *ցեղ* նշանակությունը: Նա այդպես է եզրակացրել, չհամաձայնելով Ի. Սեշչանինովի²⁶⁹ և Ա. Սեյսի այն կարծիքին, որ «Սարգուրի II-ի մի արձանագրությունում հիշատակված սրսդանի բառի մեջ ասորեստանյան Սրադս-ի ուրարտական համարժեքն է»²⁷⁰: Գ. Սելիքիշվիլին այդ եզրահանգման պատճառ է համարել սրսդանի բառից առաջ օգտագործված ʾMÊLU²⁷¹ դետերմինատիվը, որն ինչպես ինքն է նշում, «ասորեստանյան սեպագրության մեջ դրվում է մասնագիտությունների և ցեղերի անվանումներից առաջ»: Միա-

նակությամբ» (տե՛ս Н. В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Е. 2001, с. 420, 443): Գր. Ղափանցյանը, նույնացնելով Dayasni և Diau(e)ի անվանաձևերը *Տայքի* հետ, միևնույն ժամանակ, Թիզլաթալասար I-ի հիշատակած Նաիրիի 23 կամ 60 «երկրների» առումով նշել է *ցեղեր* և *ցեղապետեր* [Գր. Ղափանցյան, նշվ. աշխ., էջ 84: Հմմտ. Թուրկուքի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1244- մոտ 1208 թթ.) հիշատակության մեկնությունը՝ История древнего Востока, ч. II, М., 1988, с. 102. ԴԺՊ, հ. I, Երևան, 1971, էջ 282)], նաև գրելով՝ «անշուշտ, խոսքը *ցեղերի* կամ *տոհմերի* քանակի մասին է», «դաշնությունը զխավորում էր Dayasni շրջանի արքան» (Г. А. Кананян, Историко-лингвистические работы, т. II, Е., 1975, с. 86-92): Այնինչ, ասորեստանյան արձանագրությունների māṭātu-ն նշանակում է «երկրների» [CAD, 1977, vol. 10, part 1, p. 414-415 (s. mātu (Ibid.)); ... māṭ Nairi (CAD, 1980, vol. 11, part 1, p. 254, 2006, vol. 18, p. 154-155)՝ «Նաիրի երկիր» (ԴԺՊ, էջ 283)] և չի կարող մեկնվել որպես «ցեղեր»:

²⁶⁸ A. H. Sayce, op. cit., p. 421-422. Հմմտ. Н. В. Арутюнян, Корпус..., с. 408-410, 418-419, 424.

²⁶⁹ Ի. Սեշչանինովը ենթադրել է, որ խոսքը «ուրարտացիների» մասին է: (И. И. Мещанинов, Шураа и Урурдан в клинописных памятниках Ванского бассейна. - Доклады Академии наук. Серия В, 1924, с. 19-22):

²⁷⁰ Ա. Սեյսը Սրսդանի բառը Ararat ձևով է կարդացել (A. Sayce, Some New Vannic Inscriptions - JRAS, London, 1929, p. 333, 335):

²⁷¹ Ըստ Ռ. Լաբայի՝ *𐎶𐎵 homme* (մարդ) դրվում է մարդկանց հավաքական անունների (եթնիկական, մասնագիտությունների անվանումների և այլն) առջև՝ «շում. lú, աքքադ. amil» (տե՛ս R. Labat, Manuel d'épigraphie akkadienne, Paris, 1952, p. 26. 151, հմմտ., Samuel A. B. Mercer, Introductory Assyrian Grammar, Dover, 2003, p. 12).

ժամանակ, նա անընդունելի է համարել 𐎶𐎵 -amēlu դետերմինատիվի ընդգրկումը Ա. Սեյսի²⁷² և Ի. Մեշչանինովի²⁷³ ուրարտական սեպագիր նշանների ցանկերում որպես ցեղանունների դետերմինատիվ, քանի որ «ուրարտական տեքստերում իրեն չի հաջողվել գտնել զոնե մեկ դեպք, որ այդ դետերմինատիվը լինի ժողովրդի կամ ցեղային անվանման առջև»²⁷⁴: Սակայն Գ. Մելիքիշվիլու հիշատակած «ուրարտական գրում հազվադեպ օգտագործվող» այդ դետերմինատիվը, որին նա նույնական է համարել մեկ այլ ասորեստանյան սեպանշան 𐎶𐎵, Ա. Սեյսի հետազոտությունում չունի *ցեղանունների* դետերմինատիվի նշանակություն, քանի որ վերջինս 𐎶𐎵 դետերմինատիվը վերծանել է որպես *people* (մարդիկ՝ ժողովուրդ), իսկ 𐎶𐎵 *man* (մարդ)²⁷⁵: *Տեղ* նշանակության համար Ա. Սեյսը նշել է 𐎶𐎵 [language²⁷⁶ (լեզու), *tribe* (ցեղ)] սեպանշանը²⁷⁷: Հետևաբար, *m* արական անձի դետերմինատիվը ուրարտական արձանագրություններում որպես ցեղանունների

²⁷² A. Sayce, *The Cuneiform Inscriptions of Van*, p. 419-422.

²⁷³ И. И. Мещанинов, *Халдоведение*, Б., 1927, с. 74-75.

²⁷⁴ Г. А. Мелikian, К вопросу о древнейшем очаге урартских племен, ВДИ, № 4 (22), М., 1947, с. 26, прим. 2. Գ. Մելիքիշվիլին ¹U¹urudani-ի կապակցությամբ LU դետերմինատիվի նշանակությունների մասին գրել է՝ «մասնագիտություններ, մարդկանց խմբեր և կատեգորիաներ» (Г. Мелikian, УАН, М., 1960, с. 289): Ն. Հարությունյանը Սարգուրի II-ի նշված արձանագրության թարգմանությունում վերծանում է «ուրուրդացիներ» Ի. Մեշչանինովի վերոհիշյալ տեսակետի հիման վրա, իսկ բառացանկում, հետևելով Ֆ. Քյոնինգի կարծիքին, հնարավոր է համարում, որ ¹U¹urudani-ին մասնագիտության անվանում է (F. W. König, *Handbuch der chaldischen Inschriften*, II, Graz, 1957, տես Н. Арутюнян, Корпус..., с. 247, 473):

²⁷⁵ A. Sayce, *op. cit.*, p. 421-422, տես նաև՝ Мещанинов И. И., նշվ. աշխ., էջ 74-75, И. М. Дьяконов, *Урартские письма и документы*, 1963, М.-Л., с. 99, 113: Տես նաև՝ amēlu (CAD.1968, vol. I, part II, p. 48).

²⁷⁶ Հմմտ. R. Labat, նշվ. աշխ., էջ 55.

²⁷⁷ A. Sayce, *op. cit.*, p. 421. Հմմտ. «language, special language or dialect, nationality, person or people speaking a (foreign) language» (CAD. 1973, vol. 9, p. 213).

դետերմինատիվ օգտագործման մասին Գ. Մելիքիշվիլու ենթադրությունը բավարար հիմքեր չունի²⁷⁸:

Համաձայն Ն. Ադոնցի՝ -ի վերջավորությունով հատուկ անունները, որոնք կիրառված են որպես լրացումներ, «ստանում են ածականի»²⁷⁹ ձև կամ գործածվում են որպես բացահայտիչ, օրինակ՝ «Eriaḫini ebanī» «Էրիախիական երկիր»: Ուստի, «-ի-ով հայրանվանական Diaú(e)hi, Abelianī/ehi, Eriaḫi անվանումները գործածված են մաս որպես աշխարհագրական տերմիններ»²⁸⁰: Միաժամանակ, Ն. Ադոնցը -ի-ն²⁸¹ համարել է «էթնիկական ածանց», որը հանդիպում է «...հարավում՝ Ուրարտուի և Ասորեստանի միջև չեզոք գոտում՝ բազմաթիվ անուններում, ինչպիսիք են Kutmu-ի, Bab-ի»²⁸²: Եզրակացնելով՝ Ն. Ադոնցը գրել է. «Ընդհանուր մի շարք անուններ բնորոշվում են -ի, -(i)ni, կամ -ի -ni, -zi, -ri վերջավորություններով: Ուրարտուի հյուսիսում գտնվող ամենակարևոր ցեղերը, որոնք թշնամի էին Տուշաթի տերերի գերիշխանությանը, կոչվում էին Diaue-ի, Eria-ի, Abilianī-ի և այլն»²⁸³:

Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ -ի/e(ni)-ն պատկանելություն արտահայտող ածանց է, որը «հաճախ հանդիպում է ցեղանունների վերջավորության դերում, որոնք, հավանաբար իմաստավորվում

²⁷⁸ Ն. Հարությունյանը նույնպես Ղայանին նույնացնում է Դիաուխիի հետ (Н. В. Арутюнян, Топонимика Урарту. Е., 1985, с. 70-71)՝ տ-ն նշելով որպես ցեղանունների դետերմինատիվ (Նույնի՝ Корпус ..., с. 410, 503):

²⁷⁹ N. Adontz, op. cit., p. 260. Ն. Ադոնցի գրքի հայերեն թարգմանությունում բնագրի՝ «la forme adjective» («ածականի ձևը») արտահայտությունը սխալ կերպով թարգմանված է «սեռականի ձև», ինչպես մաս չի թարգմանված «les patronymiques» բառը (Ն. Ադոնց, Հայաստանի պատմություն: Ակունքները X-VI դդ. մ. թ. ա., Երևան, 1972, էջ 260):

²⁸⁰ N. Adontz, op. cit., p. 260.

²⁸¹ Ն. Ադոնցի աշխատության հայերեն թարգմանությունում «-ni» է (Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 270)՝ ֆրանսերեն բնագրի «-hi»-ի փոխարեն (Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 270):

²⁸² N. Adontz, op. cit., p. 271.

²⁸³ Ibid.

են որպես «այսինչի (անվանադիր-նախնի, աստծո) որդի»²⁸⁴:
 "Diau(e)hi"²⁸⁵, "Abeliani/ehi, "Eriahi, "Erikuahi, "Iganehi անվանա-
 ձևերի դիմաց արական անձնանունների *m* դետերմինատիվը, ըստ
 Գ. Մելիքիշվիլու, ցեղանունների դետերմինատիվ է²⁸⁶: Այս եղա-
 նակով նա ցեղանուններ է համարել արձանագրություններում ո՛ր
 անձի դետերմինատիվով հիշատակվող գրեթե բոլոր տեղանուն-

²⁸⁴ Г. Меллишвили, УКН, с. 51. 424.

²⁸⁵ Ըստ Գ. Կարազյոզյանի ավանդական ընթերցմամբ հայտնի *Դիաուեխի* երկ-
 րանունն անհրաժեշտ է վերծանել *Տեյավեխե* ("Te-i-a-ù-c-he): ^{KUR}Daiaceni և
 "Teiauehe տեղանունների լեզվական քննության արդյունքում նա եզրակաց-
 րել է. «^{KUR}Daiacenu-Տայք ենթադրյալ զուգահեռը առայժմ հնարավոր չէ հիմ-
 նավորել լեզվական ոչ մի օրինաչափությամբ, այն թերևս պատահական
 նմանության հետևանք է և հակառակը՝ "Teiauehe > Տայք անցումը հաստատ-
 վում է վերին աստիճանի ճշգրտությամբ՝ ուրարտա-հայկական հնչյունական
 օրենքներին համապատասխան»: Հետազոտողը համարում է, որ անհրա-
 ժեշտ է տարբերակել *Դայանու* և *Տեյավեխե* «երկրները», քանի որ ասուրա-
 կան աղբյուրներում հիշատակվող *Դայանուն* տեղադրվում է Արածանի գե-
 տի ավազանում, իսկ *Տեյավեխեն*՝ իրականում, ճորոխ գետի ավազանում
 գտնվող Տայքն է (Գ. Կարազյոզյան, Սեպագիր աղբյուրների Դայանու երկի-
 րը, - «Լրաբեր», հաս. գիտ., 1978, № 6, էջ 71, 94: Տես նույնի՝ Հայկական լեռ-
 նաշխարհը սեպագիր աղբյուրներում, Սեպագիր տեղանուններ, հ. 1, գիրք 1,
 Երևան, 1998, էջ 187-188): Ա. Սագոնան ենթադրելով Daiaceni-ի և Diau(e)hi-ի
 նույնությունը, նշել է նաև այլ կարծիքներ (տես A. G. Sagona, Archaeology at
 the North-East Anatolian Frontier. - Ancient Near Eastern Studies, Supplement 14,
 Herent, 2004, p. 30, 34, այս վերնագրում «հյուսիսարևելյան Անատոլիա» տեղ-
 մի՞նը սխալ կերպով կիրառված է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-
 արևմտյան մասի կապակցությամբ, քանզի հայտնի է, որ «Անատոլիա»
 տերմինը վերաբերում է միայն Փոքր Ասիային): Ըստ Ռ. Բարնետի «որոշ
 հեղինակներ բավականին անհամոզիչ Dayaenu-ն նույնացնում են հետագա
 Diaue(khi) ուրարտացիների անվանած թագավորությանը, որոնք կարող են
 նույն այն ժողովուրդը լինել, որին հանդիպել էր Քսենոփոնը IV դարի (պետք
 է լինի մ.թ.ա. V դարի-Ա.Դ.) վերջին՝ Ταόχα անվանումով» (R. D. Barnett, The
 Cambridge Ancient History, Urartu, Vol. 3, 2008, p. 330, com. 123):

²⁸⁶ УКН, с. 51-52, Հիմնվելով Գ. Մելիքիշվիլու տեսակետի վրա, որ "Diau(e)hi-ն
 ցեղանուն է (УКН, с. 424), Ա. Սավինին Dayaeni-ն նույնպես նույնացնելով
 Diau(e)hi-ի հետ, նշել է, որ Թիզլաթպալասար I-ի արձանագրություններում
 Նաիրիի «երկրների» արքաները «ցեղապետեր» են (M. Salvini, Geschichte und
 Kultur der Urartäer, Darmstadt, 1995, S. 22, 54):

ները²⁸⁷ արդյունքում բազմաթիվ աշխարհագրական անուններ դիտելով որպես ցեղերի և ցեղային միությունների անվանումներ:

Ի. Ղյակոնովն անդրադառնալով -*hē/-hī-* ածանցի գործառույթին՝ նշել է, որ, օրինակ՝ «^{KUR}Eriahe սովորաբար, փոխանցվում է որպես գոյական անուն «երիախի», մինչդեռ այն ածական է՝ «երիական», հմմտ. նաև ^{URU}melilēallhē՝ «մելիտեցիներին, Մելիտեա քաղաքի բնակիչներին պատկանող», այլ ոչ թե՝ «Մելիտեալիսի» քաղաք»²⁸⁸: Մինչդեռ նա նշում է, որ Տայքի տարածքում «ապրած ցեղի անվանումը, ինչպես ասորեստանյան («Ղայանե-նի»), այնպես էլ ուրարտական («Ղիաուեխի»)»²⁸⁹ և հունական («Տաոխյո»)»²⁹⁰ տարբերակներում ունի խուրրի-ուրարտական -

²⁸⁷ Բացառություն կազմող անվանումներից են ^m կամ ^{KUR}Igani, ^m կամ ^{KUR}Išqigulu: ^ml-ga-ni-e-hi-ին Գ. Մելիքիշվիլին վերծանում է, որպես «իգանիա-ցի»՝ «иганеи» (УКН, 155С₅₂, с. 302, 430; հմմտ., Н. В. Арутюнян, Корпус ..., с. 509): ^{Išqigulu} անվանման հարցում Ն. Հարությունյանը հետևել է Ֆ. Զյոնին-գի և Պ. Զիմանսկու վերծանմանը՝ ընթերցելով ^{KUR} Išqigulhie, առանց ^m դե-տերմինատիվի (սեռ. հոլովով («страны») Ишкугулхи», տե՛ս Н. В. Арутюнян, Корпус ..., с. 331, 511): Գ. Մելիքիշվիլին այն ընթերցել է ^{LUGÁL} ^m Išqigulhie «царь Ишкугулхи» (УКН, 286. с. 348, 432).

²⁸⁸ И. М. Дьяконов, Урартские письма и документы, М.-Л., 1963, с. 30.

²⁸⁹ Գ. Մելիքիշվիլին ^mDiau(e)hi-ն խուրրիերեն էթնոնիմ է ենթադրել՝ գրելով, թե Նուգիի արծաճագրություններում հիշատակվող «Taiuki» խուրրիական անունը, հնարավոր է հենց «Tai(uki)» ձևով ^mDiau(e)hi անվան նախատիպն է: Նա ենթադրել է, որ տեղական ձևը եղել է Daiuhi (Daiohi) կամ նույնիսկ Daiuki (Daioki) (Г. А. Мелikian, *Արարիկ*. - ВДН, 1950, № 4, с. 30): Այնինչ, «Taiuki»-ն խուրրիական բազմաթիվ անձնանուններից մեկն է (տե՛ս I. J. Gelb, *Nuzi Personal Names*, Chicago, 1943, p. 144-145): Նուգիի (Առապխայի հարևանությամբ) արխիվներում պահպանված արծաճագրություններում հիշատակվող այդ անձնանվան համեմատությունը տեղանվան հետ պատահական բնույթի է: Գ. Մելիքիշվիլու մի վերապահման համաձայն՝ -hi/ hā և (i/a. u)ni վերջածանցները եղել են տեղական անվանաձևերում (ըստ իր կարծիքի՝ դրանց միայն մի մասում) «և չեն կցվել ուրարտացիների կողմից», իսկ հետագայում շարունակել են գոյությունը հայկական շրջանների անուններում (Г. Мелikian, *Արարիկ*, с. 30):

²⁹⁰ Է. Հերցֆելդը հիմք ընդունելով ^mTaôxα = *Տայք* նույնացման կապակցությամբ Զ. Հյոլշմանի տեսակետը (H. Hübschmann, *Die altarmenischen Ortsnamen*, Strasbourg, 1904, S. 276-277)՝ նույնական է համարել՝ ^mDaiaeni-Diaue-Taôxα-Տայքը (E. Herzfeld, *The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East*, Wiesbaden, 1968, p. 116. 121): Բ. Պիտրովսկին նշել է. «Կաս-

ուի, -ի վերջավորություն, ընդ որում, հունարեն փոխանցումը, որը հազիվ թե առաջացած լիներ ուրարտական ավանդույթից, հավանաբար, վերարտադրում է ինքնանվանումը: Խուրրիներեն լեզվի համար բնորոշ է նաև բառասկզբի դ||տ հերթագայում»²⁹¹:

Գ. Վիլհելմը -հե ածանցի կիրառման վերաբերյալ գրել է, որ այն կազմում է պատկանելություն արտահայտող ածականներ՝ «օգտագործվելով նաև աշխարհագրական անունների և ցեղանունների հետ [օրինակ՝ Abiliane=հօ ebanə «Աբիլիանիի երկիր» (ցեղանուն/անձնանուն), Diaue=հօ «Դիաուե-ական [արքա]]»), իսկ -հօ ածանցով հայրանունների կազմությունը համարել է որպես խուրրիներենում զուգահեռ չունեցող (Isruine=հօ, «Իշպուին-ի

կած չի հարուցում Դիաուեխի երկրի ուրարտերեն անվան (ասորեստանյան Դայանի) կապը հույն պատմիչների տառիքների և միջնադարյան Տայք շրջանի միջև» (Б. Б. Пястровский, Ванское царство (Урарту), М., 1959, с. 31): Գ. Ջահուկյանը՝ «ուրարտա-հայկական հնչյունական համապատասխանությունների ընդհանուր պատկերը ամենից ավելի հավաստի հատուկ և հասարակ անունների զուգադիպությունների հիման վրա» կազմած աղյուսակում նշել է, որ «ուրարտ. d-ն հայեր. արտասանվում է տ՝ Diau(e)ի - Տայք» (Գ. Բ. Ջահուկյան, Զայոց լեզվի պատմություն, նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 430): Իսկ «ուրարտական հատկացական իւ/e ածանցը, որ հաճախադեպ է տեղանունների մեջ և հունարեն արտահայտվում է χ-ով (հմտ. Diau(e)ի-Ταόχα), հայերի կողմից կարող էր ընկալվել որպես հոգնակերտ ք-ի համարժեք և արտահայտվել նրա միջոցով՝ Abiliani/eի-Աբեղեանք, Diau(e)ի-Sայք և այլն» (Նույն տեղում, էջ 438): Ταόχα անվան հետ միջնադարյան սկզբնաղբյուրների հիշատակությունները համեմատելիս որոշ հետազոտողներ նախ բերում են «Տաո» ձևը, ապա՝ հայկական սկզբնաղբյուրների՝ Տայք անվանումը (ՄՀԽ, с. 424; Г. Мелikianян, Ашхуи, с. 26-42; А. G. Sagona, նշվ. աշխ., էջ 36 և ուրիշներ): Սակայն հայտնի է, որ Տայքի հիշատակությունը հայկական սկզբնաղբյուրներում ավելի վաղ է:

²⁹¹ Համաձայն Ի. Ղյակոնովի «խուրրիական ցեղանունները կարող էին գոյություն ունենալ այս շրջանում նաև տեղի բնակիչների կողմից խուրրիներեն լեզվի կորուստից հետո, ինչպես նաև չի բացառվում, որ տառիքների ցեղը ժամանակի ընթացքում վրացականացվել է (ճանացվել): Արդյունքում սույն տարածքը հայ-ճանական սերտ հարաբերությունների վայր էր» (И. М. Мелikianян, Предыстория армянского народа, Е., 1968, с. 16, сн. 15): Այդպիսի մեկնաբանմամբ խեղաթյուրվում է հայկական Տայք աշխարհի (նահանգ) պատմությունը:

որդի», Minua=հա, Argište=հա, Sardure= հա, Rusa= հա,)²⁹²: Գ. Վիլհելմը նշում է -հա ածանցով բառակազմության հանգամանքը նաև հասարակ անուններից, օրինակ՝ babana=հա «լեռնային» բառը և այլն²⁹³: Ըստ այդմ, «ուրարտերենում -հե(-հի-)-ն լինելով պատկանելություն ցույց տվող (ածականակերտ) ածանց²⁹⁴՝ *Diau(e)=հե անվանման ուղիղ ձևն է *Diau(e)»²⁹⁵:

Այսպիսով, արարատյան՝ ուրարտական արձանագրություններում արական սեռի անձնանունների ու դետերմինատիվով և -հե(-հի-) պատկանելիություն ցույց տվող ածանցով մի կողմից ունենք *Argište=հե «Արգիշտ-յան/ական (Արգիշտ-ի որդի)», *Išpušaine=հե «Իշպուին-յան/ական (Իշպուին-ի որդի)» և այլն, իսկ մյուս կողմից՝ *^mKURAbeliane=հե «Աբելիան-յան/ական/ցի», *Diaue=հե «Դիաու(ե)-յան/ական/ցի» և այլն: Ինչից չի հետևում, որ վերջինները ցեղանուններ են:

Հայկական սկզբնաղբյուրներում Տայք տեղանվան հետ հիշատակվող *տայեցիք* (հմմտ. Ταόχοι) հասկացությունը Հայաս-

²⁹² G. Wilhelm, *Urtarian, The Ancient Languages of Asia Minor*, Cambridge, 2008, Chapter 10, p. 111.

²⁹³ Ibid.

²⁹⁴ Մ. Խաչիկյանը նշում է, որ ուրարտերենում արդյունավետ էր աշխարհագրական անվանումների ձևավորումն անձնանուններից -հա ածանցի միջոցով որոշ-յալ առումի՝ հոգնակի թվով բացարձակ հոլովի վերջավորության զուգակցությամբ. Rusa-ի/c-ne-լա («Ռուսախինելե (քաղաք)»), Argište-ի/c-ne-լա («Արգիշտեխինելե (քաղաք)»): Նա հավանական է համարում, որ նման ձևով, բայց առանց /-ոս/ հոդի, ուրարտերենում ձևավորվել է աշխարհագրական կամ էթնիկական պատկանելության /-հալա// -լիս/ածանցը, որը ստուգաբանորեն կապված է խուրդիական nomina actoris ձևաբանականի (օրինակ՝ /Melilē-al-իս/ «մելիտեական»;/Komaḫa-lիս/ «կոմախական») (Մ. Л. Хачикян, *Хурритский и урартский языки*, Е., 1985, с. 67-68).

²⁹⁵ Սարգիս Այվազյան, Ուրարտերեն-հայերեն, Երևան, 2008, էջ 135, 225-226: Հետազոտողը Գ. Մելիքիշվիլու կողմից I.UGAI, *Diauehi արտահայտության՝ «արքա Դիաուեխի-ի» թարգմանության (ՄՀԻ, 36¹²⁻¹³, с. 158) փոխարեն առաջարկել է՝ «... արքան (տոհմ) Դիաուե-ական/յան/ցի»՝ *Diaue-ն համարելով անվան ուղիղ ձևը: Իսկ ըստ Մ. Սալվինիի՝ *Diauehi նշանակում է «Diaue-ի ցեղ» (la tribu del Diau) (M. Salvini, *Corpus dei testi Urartei*, vol. I, Roma, 2008, p. 190):

տանի այս տարածքի հայ բնակչության տեղանվանական անվանաձևն է, այլ ոչ թե ցեղանուն, ինչպես երևում է նաև այլ նահանգների (Գուգարք՝ գուգարացիք, Մոկք՝ մոկացիք)²⁹⁶ ու գավառների (Սպեր, Մանանաղի, Դարանաղի, Եկեղյաց, Կարին (Կարնո գավառ), Բասեն, Շիրակ և այլն) անուններով հայ բնակչության հիշատակություններից: Այդ մասին առավել ցայտուն վկայված է Սեբեոսի աշխատությունում՝ «Սպերացիքն..., և Մանաղայքն, և Դարանաղայքն, և որք յԵկեղեաց գաւառէ... և Կարնացիք, և Տայեցիք, և Բասենացիք... Շիրակացիք...»²⁹⁷:

Գ. Մելիքիշվիլին նշելով, որ մ.թ.ա. II հազարամյակի կեսերին «Եփրատ գետի վերին հոսանքում գտնվող» Հայասսյի բնակիչներն էին հայկական ցեղերը, միևնույն ժամանակ, առանց որևէ սկզբնաղբյուրային հիմքի, նրանց վաղեմի հարևաններ է հիշատակել «վրացական ցեղերին»²⁹⁸: Այնուհետև գրել է, որ մ.թ.ա. XII դ. «պատմական Վրաստանի հարավարևմտյան մասի տարածքում առաջացել էր ցեղերի խոշոր միություն, որն ասորեստանյան սկզբնաղբյուրներում անվանվում էր Daiaeni, իսկ ուրարտականում՝ Diauehi-ի... այստեղ էլ ավելի ուշ գտնվել է հին վրացական *Տաո* նահանգը (հին հայկական սկզբնաղբյուրների *Տայքը*), որի անունը, անշուշտ, հասնում է մինչև Daiaeni - Diauehi - Ταόχοι²⁹⁹

²⁹⁶ Մովսես Խորենացի, էջ 114, 331:

²⁹⁷ Սեբեոս, էջ 165: Տայքը հիշատակել է նաև Ստեփանոս Սյունեցին (մահ. 735 թ.)՝ հայերեն լեզվի [*ոստանիկ* (Ոստան Հայոց՝ Արտաշատ, այնուհետև Դվին մայրաքաղաքների)] և նրա գավառաբարբառների («գործայն եւ զՏայեցին եւ զխութայինն եւ զՉորորդ-Հայեցին եւ զՍպերացին եւ զՍիւնին եւ զՎրցախայինն») մասին խոսելիս («Մեկնութիւն քերականին», տես Ն. Ադոնց, Արուեստ Դիոնիսեայ Քերականի եւ հայ մեկնութիւնք նորին.- Երկեր, հ. Գ, Երևան, 2008, էջ 187, 347, հ. II, էջ 437):

²⁹⁸ Դ. Ա. Мелikianшвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 170-171.

²⁹⁹ Գ. Մելիքիշվիլին որպես սկզբնաղբյուրներ նշել է Քսենոփոնի և Առֆայնետոսի աշխատությունները: Ամիրաժեշտ է նշել, որ Քսենոփոնը Ταόχοι և մյուսներին հիշատակելիս *ἔθνος-ցեղ* բառը չի օգտագործել «Καὶ Καρδούχους καὶ Ταόχους καὶ Χαλδαίους καίπερ βασιλέως οὐχ ὑπηκόους ὄντας καὶ μᾶλα φοβερούς ὄμως πολεμίους ἐκτραμεθα διὰ τὸ ἀνάγκην εἶναι λαμβάνειν τὰ

անվանումը»³⁰⁰: Այսպես աղավաղելով Հայաստանի հյուսիսարևմտյան տարածքների՝ Տայքի և Բարձր Հայքի Կարինի (Էրզրում) շրջանի պատմաաշխարհագրական պատկերը, նա շարունակել է. «Diau(e)ի-ի երկրի տարածքը պետք է փնտրել պատմական Վրաստանի հարավարևմտյան շրջաններում... Ըստ ասուրական և ուրարտական սկզբնաղբյուրների՝ ժամանակակից Էրզրում քաղաքի և Արևմտյան Եփրատ գետի վերին հոսանքի շրջանը, թվում է, թե արդեն մտնում էր Դիաուխի մեջ»³⁰¹:

Հին և վաղմիջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակվող Տայքի, ինչպես նաև Կղարքքի մասին տեղեկությունների աղավաղումը և այդ տարածքներն որպես «պատմական Վրաստանի

ἐπιτιθεῖα, ἐπεὶ ἀγορὰν οὐ παρεῖχον (Xenophon, Anabasis, IV.4.18; 7.1-2, V.5.17). Ստեփանոս Բյուզանդացին (VI դ.) հիշատակել է Ταόχοι, որպես սկզբնաղբյուր նշելով՝ «Σοφαίνετος ἐν τῇ ἀναβάσει φησὶ» (Stephani Byzantii Ἐθνικῶν quae supersunt, edidit Antonius Westermann, Lipsiae, 1839, p. 268): Ենթադրվում է, որ խոսքը Սոֆայնետոս Ստինփալոսցու մասին է, որին վերագրվում է նույնպես «Ամբասիս» անունով մի աշխատություն, որից «չորս չնչին պատառիկներ են պահպանվել» Ստեփանոս Բյուզանդացու երկում (A. Gwynn, Xenophon and Sophacetus// Classical Quarterly, 23, 1929, p. 38-39, տես V. Azoulay, «Exchange and Entrapment: Mercenary Xenophon?» in «The Long March. Xenophon and the Ten Thousand», ed. Fox, R. Lane, New Haven, 2004, p. 289-304): Ստեփանոս Բյուզանդացու փոխանցմամբ առկա է *ἔθνος* բառը, որը Հուստինիանոս I-ի դարաշրջանում, ինչպես նշել է Ն. Ադոնցը, բյուզանդական պաշտոնական փաստաթղթերում *gentes*-ի հետ մեկտեղ օգտագործվում էր «հիշխանություն» («իշխանական տուն») իմաստով: Այդպիսին հիշատակվում են բուն հայկական Անձիտ, Հաշտանք, Անգեղ-տուն, Բալահովիտ գավառների իշխանական տները (Н. Алоян, ук. соч., с. 29).

³⁰⁰ Հմմտ. ԿՊՀ, с. 424, տես նաև՝ Г. Мелнкшвили, Диакхи, с. 26-42. Հակառակ այդպիսի կարծիքի, օրինակ՝ «Վրաց ժամանակագրության» հայերեն թարգմանությունում Պ. Մուրադյանը պահպանել է Հայոց տեղանունները՝ Տայք, Կղարք, Տավախք, Թոնքը, Արտահան, Սպեր, Կարս, Կարին, Նախիջևան, Գեղարքունյաց և Արարատյան լեռներ, Այրարատ, Անի, Բաբերդ, Բազավան, Բասին, Բջնի, Գագ, Գանձակ, Գառնի, Դվին («Վրաց ժամանակագրություն» (1207-1318 թթ.): Թարգմանությունը հիմն վրացերենից, առաջարանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 66, 88, 109, 124, 129-130, 169):

³⁰¹ Г. Мелнкшвили, К истории древней Грузии, с. 176.

հարավարևմտյան շրջաններ» ներկայացնելու կեղծիքը³⁰² ներկայումս շարունակվում է վրաց պատմագիտության և քարտեզագրության մեջ³⁰³:

Այնինչ, իրականությունն այն է, որ, ըստ հին հունական³⁰⁴ և վաղմիջնադարյան հայկական սկզբնաղբյուրների, Վիրքը (Ιβηρία) Հայաստանից հյուսիս էր: Մովսես Խորենացու և նրա «Աշխարհացոյց»-ը շարունակող Անանիա Շիրակացու³⁰⁵ համաձայն՝ Տայքը Մեծ Հայքի տասնչորսերորդ աշխարհն (մահանգ) է, Կղարքը՝ Մեծ Հայքի տասներեքերորդ աշխարհի՝ Գուգարքի արևմուտքում գտնվող գավառը: Տայքի արևելքում գտնվող Կող գավառի *Կրիակունք* գյուղի տարածքում է սկզբնավորվում Կուր գետը, որն այնուհետև հոսում է Գուգարքի գավառներով և հյուսիսարևելքում կազմում Հայաստանի սահմանը³⁰⁶ Վիրքի հետ: Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ «Աշխարհ Վիրք, յեւից կալով Եգերայ,

³⁰² Չ. Մելիքիշվիլու խմբագրությամբ «Վրաստանի պատմություն» գրքի I-ին հատորում, Diau(e)hi անվանումը ներկայացվել է «Պիաոխի» ձևով, և կրկին հիշատակվել իբրև «հին Վրաստանի հարավ-արևմուտքում» գտնվող՝ մինչև «ներկայիս Երզրում քաղաքի շրջանը» ձգվող տարածք, մինչև ժամանակ, հայկական Տայք և Կղարք տեղանունները օգտագործված են «Տառ-Կլարքեթի» աղավաղված ձևով (История Грузии, т. I, Т., 1962, с. 28-30, 129; К истории древней Грузии, с. 136, տե՛ս նաև Матiane Картлиса (перевод, введение и примечания М. Д. Лордкипанидзе), Т., 1976, с. 8, տե՛ս նաև՝ П. Рамисвили, Социально-политическая история Грузии – տե՛ս Очерки истории стран Южного Кавказа. Мультиперспективный взгляд на историю. Ереван, 2009, с. 75, 80 և այլն):

³⁰³ Атлас Грузинской ССР, М., 1964, с. 245-250, О. Лордкипанидзе. Наследие древней Грузии, Т., 1989, с. 32. М. А. Бахтадзе, М. Вачнадзе, В. Гурули, История Грузии (с древнейших времен до наших дней), 2000 (http://krotov.info/lib_sec/04_g/ruz/ia_kr2.htm) և այլն:

³⁰⁴ Strabo, XI I.5-6, 2. 19-3.2, 14.2-4, Ptol., V.10.1; 11.3; 12.1:

³⁰⁵ Տե՛ս Է. Լ. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը, էջ 37, Ա. Մուշեղյան, Եշվ. աշխ., էջ 111, 124:

³⁰⁶ Հատկանշական է, որ, Փավստոս Բուզանդը, պատմելով Հայոց զորավար Մուշեղ Մամիկոնյանի IV դարի 60-ական թթ. վերջում ծավալած զործունեության մասին, մասնավորապես, Մեծ Հայքի թագավորության սահմանների վերականգնման վերաբերյալ նշել է. «Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր...» (Փավստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, էջ 216):

յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցԱղուանից³⁰⁷ սահման, եւ մինչեւ ցՀայոց սահման՝ առ Կուր գետովն»³⁰⁸:

Վաղարշակ թագավորի գործունեության կապակցությամբ Մովսէս Խորենացին Տայքի մասին հաղորդել է. «Կարգէ զկողմանս Սաժաքայ և զՊոնտացիս և զԵգերացիս. դառնայ զհիւսիսեաւ առ ստորոտովն Պարխարայ ընդ մէջ Տայոց... գեղեցիկ իմն կարգելով զերկիրն...»³⁰⁹: Փափստոս Բուզանդի³¹⁰, Եղիշեի³¹¹, Ղազար Փարպեցու³¹², Սեբեոսի³¹³, Հովհան Մամիկոնյանի³¹⁴, Ղևոնդի³¹⁵, Մովսէս Կաղանկատվացու³¹⁶, Հովհաննէս Դրասխանակերտցու³¹⁷ հաղորդումները նույնպէս վկայում են Տայքի՝ հնուց Հայոց թագավորության նահանգներից մեկը, ինչպէս նաև հայ նախարարական (Մամիկոնյաններ, Բագրատունիներ) ու

³⁰⁷ Կուր գետի ծախ ակին՝ «... զբուն աշխարհն Աղուանից» (տես Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 105):

³⁰⁸ Նույն տեղում, էջ 104:

³⁰⁹ Մովսէս Խորենացի, էջ 108, 313: Վաղարշակ թագավորը, ըստ Պատմահոր, պարթևական «Արշակ Սեծի» եղբայրն էր (ըստ Գ. Խ. Սարգսյանի՝ Սիիրդատ I, մ.թ.ա. 170-139 թթ.), որի օրոք տեղի ունեցավ պարթևական թագավորության ընդարձակումը (Мовсес Хоренаци, История Армении, перев. с древнеарм. яз., введение и прим. Г. Саркисяна, Е., 1990, с. 222, прим. 56): Իսկ Ա. Մուշեղյանը նշելով Յ. Մարկվարտի տեսակետը, ի դեմս ավանդական Վաղարշակի տեսմունք է «Հայաստանի թագավոր Տրդատ I-ին՝ պարթև թագավոր Վաղարշ I-ի եղբորը» (Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 222):

³¹⁰ Փափստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 58, 76, 137, 273:

³¹¹ Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, աշխատ. Ե. Տէր-Սիմասեան, Երևան, 1957, էջ 28, 127:

³¹² Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատ. Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 44, 73, 94, 110, 111, 121, 135:

³¹³ Սեբեոս, էջ 144, 146 165-169, 175:

³¹⁴ Հովհան Մամիկոնեան, էջ 280:

³¹⁵ Պատմութիւն Ղևոնդեայ, Ա. Պետերբուրգ, 1887, էջ 26, 123, 168:

³¹⁶ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 122:

³¹⁷ Հովհաննէս Դրասխանակերտցի, էջ 68, 178, 185, 186:

հոգևոր իշխանությունների տիրույթը լինելու մասին³¹⁸:

Տայք աշխարհի դիրքի և գավառների մասին «Աշխարհացոյց»-ում հետևյալ տեղեկությունն է հաղորդվում. «Չորեքտասներորդ [աշխարհ] Տայք առ երի կայ Գուգարաց, ամրոցօք ևս բերդօք կառուցեալ, եւ ունի գաւառս ութ. զԿող յելից կուսէ, յորմէ բղխեն աղբիւրք գետոյն Կուրայ... ըստ մտից Կողայ՝ Բերդացփոր, Պարտիզացփոր, զճակս... եւ ըստ հարաւոյ՝ զԲուղխա, զՈքաղէ, զԱզորդացփոր իւրեանց գետակօք, որք յիրար անկեալ իջանեն ի Յոհ (ճորոխ). որոց ըստ մտից Արսեացփոր առ Պարխար լերամբն, ընդ որ իջանէ Յոհ, գալով ի Սպերայ, անցանէ առ Թուխարս բերդով ի Կլարջս, եւ անտի յեզր ...»³¹⁹:

Տայքի մասին հայ պատմիչների հաղորդումների շարքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև Սեբեոսի տեղեկություններին, ինչպես Վարազտիրոց Բագրատունու Բյուզանդիայից 646 թ.³²⁰ վերադարձի («եկն և ամրացաւ ի Դայս ի Տայս»³²¹), այնպես էլ 647 թ. Դայաստան կատարված արաբական ներխուժման (խալիֆայության զորքը, ասպատակելով Այրարատ նահանգը, հասավ «ի կողմանս Տայոց») և այնտեղից «Վրաց և Աղուանից» (բուն Աղուանք) կողմերն արշավելու կապակցությամբ³²²:

Այսպիսով, հայ վաղմիջադարյան պատմիչների հաղորդումները վկայում են, որ Տայք նահանգը ռազմավարական իր կա-

³¹⁸ Տե՛ս Н. Адонц, ук. соч., с. 231, 309, 403, Մ. Յովհաննեսեան, Դայաստանի բերդերը, Վենետիկ – Սբ. Ղազար, 1970, էջ 608, ԴԺՊ, հ. III, Երևան, 1976, էջ 35, 37, 48, 96, 107, է. Լ. Դանիելյան, Դայոց պատմական և քաղաքակրթական արժեհամակարգի պաշտպանության անհրաժեշտությունը. - «Լրաբեր», հաս. գիտ., 2010, № 3, էջ 72 և այլ:

³¹⁹ Մ. Երեմյան, նշվ. աշխ., էջ 110:

³²⁰ Բյուզանդական կայսր Կոստանդին (Կոստաս՝ Կոնստանս) II-ի (641-668 թթ.) զահակալության հինգերորդ տարում (Սեբեոս, էջ 144):

³²¹ Նույն տեղում: Սեբեոսը Տայքի իշխան գյուղը նշել է որպես Ներսես Գ Իշխանցի (Շինարար) կաթողիկոսի (641-661 թթ.) ծննդավայր (Սեբեոս, էջ 165, տես նաև Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, 1913, հ. Ա, էջ 730):

³²² Սեբեոս, էջ 146:

րևոր դիրքով մեծ նշանակություն է ունեցել Հայոց քաղաքական և մշակութային պատմության մեջ:

Բ. Մեծ Հայքի Գուգարք նահանգի սահմանային դիրքի և Գուգարաց բղեշխության հարցի շուրջ

Սեն-Մարտենը տարբեր դարաշրջանների առումով անդրադարձել է Մեծ Հայքի Գուգարք աշխարհի (նահանգ) տեղագրությանը, սահմաններին և գավառներին («Գուգարք, 'ի մոտից կայ Ուտույ, և ունի գաւառս ինն. Չորոփոր»³²³, Ծորփոր, Կողբփոր»³²⁴, Տաշիր»³²⁵, Թռեղք»³²⁶, Կանգարք»³²⁷, Արտահանք»³²⁸, Ջաւախք»³²⁹,

³²³ «Չորափոր, Չորոց փոր, Չորոց աշխարհ, այսինքն՝ *հովիտների հովիտ* կամ *հովիտների երկիր* կամ պարզապես *Չորք*։ Այս երկիրն իր անունը ստացել է ֆիզիկական դիրքի պատճառով։ Այն Տաշիր գավառի հարավում էր։ X և XI դդ. հայտնի էր Չորագետ կամ Չորոյ գետ անվանումով, և իր շրջակա տարածքների հետ միասին (հայ Բագրատունի հարստության-Ա.Դ.) Կյուրիկյան ճյուղի Բագրատունի իշխանների սեփականությունն էր, որոնք հաճախ կոչվում էին *Չորոյ գետ* արքայական տիտղոսով։ Ծոր, Ծորփոր, Ծորափոր կամ Միափոր նախորդից (Չորագետ) հարավ էր։ Արտահանքը... Կուր գետի ավերին է, արևմտյան կողմից» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 82):

³²⁴ Կողբփորը կամ Կողբափորը Գուգարքի արևմտյան մասում էր, Տայք նահանգի հարևանությամբ (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 81):

³²⁵ Տաշիրը «Գուգարք նահանգի ամենահայտնի և ամենանշանակելի գավառն է, այն բոլոր մնացած (գավառների) մեջտեղում էր... » (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 83):

³²⁶ «Թռեղք կամ Թրեղք երկրամասը Տաշիր երկրից հյուսիս է։ Այն համապատասխանում է Ղլիմինոսի հշատակած Triare տարածքին» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 82-83):

³²⁷ «Կանգարքը Գուգարք նահանգի արևելյան ծայրամասում է, այստեղ է գտնվում Մթին լեռը...» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 83):

³²⁸ «Քարթլիս Ցխովրեբա» ժողովածուի մատենագիրներից՝ Լեոնտի Արովելու տեքստի թարգմանիչ Մ. Բրոսեն՝ «Արտանը այդ ժամանակ կոչվում էր Քաջաքալակ, իսկ հիմա՝ Հուր» տեղեկության առումով, փաստերի համադրմամբ, նշել է, որ բնագրում առկա են որոշ հակասություններ, քանզի Արտանը մեր օրերի Արտահանն է (Ardahan ou Ardahan), իսկ «Քաջաքալակի»՝ նրա նախկին անվանումը լինելու կապակցությամբ, գրել՝ «վրացերենում ոչ մի իմաստ չունի, մինչդեռ հայերենում Քաջատուն անվանումը նշանակում է «քաջերի

Կղարջք³³⁰ ...)»³³¹, ինչպես նաև գլխավոր քաղաքներին, բերդերին, ավաններին և վանական կենտրոններին (Լոռի³³², Ախալքալաք, Դմանիս³³³, Կայան³³⁴, Կայծոն³³⁵, Հաղբատ (Հաղպատ), Սանահին³³⁶ և այլն...) հիմնվելով իր կողմից թարգմանված «Աշխար-

տուն» (Histoire de la Géorgie..., 1849, p. 22, com. 4): Հմմտ. Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 41, 89:

³²⁹ Ջավախքը «Կուր գետի ափերին է, Ախալցխեից արևելք: Այն սահմանակից էր Տաշիր երկրամասին» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 82): «Ջավախք» (քիսայնական սեպագիր աղբյուրներում՝ *Ջաբախա*) տեղանվան մասին տես Ա. Մելքոնյան, Ջավախքի տեղանունների հարցի շուրջ - տես Դայոց հյուսիսային դարպասները. Ջավախք, Լոռի (նյութերի ժողովածու) 6, Երևան, 2011, էջ 94-95):

³³⁰ Մովսես Խորենացու հաղորդմամբ երանելի Նունեն քարոզում է «ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց» (Մովսես Խորենացի, էջ 234): Ըստ Ն. Հարությունյանի Արգիշտի I-ի «Խորխոռոյան տարեգրություն»-ում Կղարջը հիշատակվել է Կատարգա (Katarza) անվանաձևով (Н. Арутюнян. Топонимика..., с. 105: Հմմտ. Καταρχήν (Prot. V. 12.4) - Կղարջ, տես Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 59): Կղարջ գավառի մասին Սեն-Մարտենը նշել է, որ այն «գտնվում է Հայաստանի հյուսիսային ծայրամասում՝ Ջավախք գավառի ուղղությամբ: Այն շատ լեռնային է և լի ամրոցներով» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 83, Collection d'historiens arméniens. t. I, p. 236):

³³¹ J. Saint-Martin, op. cit., t. II, p. 366-367. «Երեքտասներորդ աշխարհի Գուգարք ի մոտից Ուտիացուց, ունի գաւառս ինն. զՉորոփոր, զԿողբոփոր, զԾորբոփոր, զՏաշիր, զԹռեղս, զԿանգարս, զՋաւախս Վերին, զԱրտահան, զԿղարջս» (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 110):

³³² «Լոռին Գուգարք երկրամասի քաղաքներից ամենանշանակալիցն էր...» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 85):

³³³ Ստ. Օրբելյան, նշվ. աշխ., էջ 308: J. Saint-Martin, op. cit., t. I, p. 85.

³³⁴ «Լոռուց հյուսիս-արևմուտք՝ Կայենոյ ձոր կոչվող մի հովտի մեջտեղում...» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 85): Անհրաժեշտ է նշել, որ տեղագրական և պատմագիտական ուսումնասիրությունների արդյունքում ճշտված է Կայան բերդի և գավառի տեղադրությունը՝ Լոռի բերդից արևելք, Դեբեդ գետի ափին, Հաղպատի դիմաց (Մ. Վ. Յովհաննեսյան, նշվ. աշխ., էջ 544, Ռ. Մաթևոսյան, Տաշիր-Չորագետ, (X դ.-XII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 21):

³³⁵ «Լոռուց հարավ-արևելք՝ Ուտիք նահանգի սահմանների ուղղությամբ» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 85):

³³⁶ «Սանահին քաղաքը Լոռու հյուսիսարևելյան մասում է, որտեղ գտնվում է Աշոտ Գ-ի կնոջ Խոսրովանուշ թագուհու 964 թ. հիմնած մի հայտնի վանք: Այս վանքն այժմ մի հայ արքեպիսկոպոսի նստավայրն է» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 85-86):

հացոյց»-ի և այլ սկզբնաղբյուրների ու հետագա ժամանակների ուսումնասիրությունների վրա:

Ըստ «Աշխարհացոյց»-ի՝ «Տայք առ երի կայ Գուգարաց... Գուգարք ի մտից Ուտիացոց...»³³⁷: Գուգարքի դիրքի մասին Սեն-Մարտենը ընդհանուր առմամբ գրել է. «Այս նահանգը գտնվում էր Տայքից արևելք, Այրարատ և Սյունիք նահանգներից հյուսիս, Ուտիքից արևմուտք»³³⁸:

Այրարատի ու Սյունիքի կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ իրոք՝ Գուգարք նահանգը հարավից իր մեծագույն մասով սահմանակից էր Այրարատին, իսկ Սյունիքի հետ այն անմիջական շփման եզրեր չունեին: Քանի որ Սեն-Մարտենը Սյունիքի տարածքը նկարագրելիս նշել է, որ այն բոլոր կողմերից շրջապատում էր Սևանա լիճը³³⁹, ուստի նրա պատկերացմամբ Գուգարքը հարավից սահմանակից էր Սյունիքին: Սակայն, ինչպես հայտնի է «Աշխարհացոյց»-ից, Գուգարքի և Սյունիքի միջև գտնվում էին Այրարատ աշխարհի Վարաժնունիք³⁴⁰ և Մազազ գավառները³⁴¹, համապատասխանաբար Սևանա լճից հյուսիս և արևմուտք:

Ըստ Սեն-Մարտենի՝ Գուգարքը «հյուսիսային կողմից սահմանակից էր Վիրքին, Կուրը այն (Գուգարքը - Ա.Դ.) ողողում էր

³³⁷ Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 109-110:

³³⁸ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 79.

³³⁹ Ibid., p. 142.

³⁴⁰ Սեն-Մարտենը հետևելով «Աշխարհացոյց»-ի տեքստին՝ ֆրանսերեն թարգմանությունում Վարաժնունիքը նշել է որպես գավառ (J. Saint-Martin, op. cit., t. II, p. 367), իսկ իր գրքի առաջին հատորում՝ «տոհմանուն», նույն Այրարատ աշխարհի Կոտայք գավառում՝ Գառնիի շրջակայքում (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 242): Սեն-Մարտենի այսպիսի մոտեցումը պայմանավորված էր Մովսես Խորենացու՝ Վարաժի մասին հաղորդման («Բայց տայ (Արտաշես - Ա.Դ.) զՏիգրան որդի իւր ցպատանի ոմն Վարաժ անուն, որդի Դատայ, որ ի գաւակէ Գառնկայ՝ որ ի Գեղամայ, քանզի էր պատանին նշաւակ ի նետածութիւն կորովութեան, ուսուցանել զՏիգրան: Ձնա իշխան արքունականացն արարեալ որսոց, և շէնս պարգևեալ նմա գ՜րազդան գետով՝ յանուն նորա կոչի ազգն Վարաժնունի», Մովսէս Խորենացի, էջ 121) իր մեկնությամբ:

³⁴¹ Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 111:

արևմուտքում և արևելքում»³⁴²։ Սեն-Մարտենն այստեղ նկատի ունի այն ժամանակաշրջանը, երբ Հայաստանի ու Վիրքի միջև սահմանը Գուգարքի (Պարուար, Ծորոփոր և այլ գավառների) հյուսիս-արևելքից Կուր գետով էր, որը կազմում էր Սեն Հայքի հյուսիսարևելյան սահմանը Վիրքի հետ։ Իսկ Գուգարքի արևմուտքով հոսելու կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Կուրը սկիզբ առնելով Տայքի արևելքից, այնուհետև հոսում է Գուգարքի Արտահան, Ջավախք գավառներով³⁴³։

Գուգարքի տեղադրության խնդիրը քննելիս Սեն-Մարտենն անդրադարձել է հին հունական և վաղմիջնադարյան սկզբնաղբյուրների տեղեկություններին՝ գրելով. «Գուգար կամ Գուգարք երկրանունը անծանոթ չէր հին աշխարհագետներին։ Ստրաբոնն այն հիշատակել է բավականին ճշգրիտ։ Այս աշխարհագետը այն կոչում է Գոգարենե Դաչարոյ՝ և տեղադրում Կուրի ափերի մոտ՝ Հայաստանի հյուսիսային մասում»³⁴⁴։

Ստրաբոնը, հիշատակելով Հայաստանի լեռները, սարահարթերը և հովիտները նշել է, որ Դաչարոյ-ի (Գուգարք) հարևան էր Շակաշեն գավառը (Ուտիքում) և Հայաստանի այս հատվածը Կուր գետով էր սահմանազատված «Ալբանիայից» (բուն Աղուանք)³⁴⁵։

Դաչարոյ (Գուգարք) անվան հիշատակության կապակցությամբ Սեն-Մարտենն անդրադարձել է նաև Պտղոմեոսի ու Ստեփանոս Բյուզանդացու աշխատություններին, նշելով, որ նրանք այն աղավաղված են ներկայացրել. առաջինը՝ Դաչարոյ, իսկ երկրորդը՝ Ուչարոյս ձևով, «որն անկասկած պետք է ուղղել՝ Դաչարոյս, ինչպես դա արդեն նկատել է Ս. Սեն-Կրուան»³⁴⁶։

³⁴² J. Saint-Martin, op. cit., t. I, p. 79.

³⁴³ Ս. Երեմյան, նշվ. աշխ., քարտեզ, տես նաև՝ Ս. Վ. Յովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, Ս. Ղազար, 1970, էջ 532, R. H. Hewsen, Armenia. A Historical Atlas, Chicago, 2001, p. 101:

³⁴⁴ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 81.

³⁴⁵ Strabo, XI. 14. 2-4.

³⁴⁶ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 81.

Անհրաժեշտ է նշել, որ Պտղոմեոսի երկի փարիզյան հրատարակությունում, որը լույս է տեսել Սեն-Մարտենի աշխատությունից յոթ տասնամյակ անց, Դասարդոյ և Ղճարդոյ անվանածները բերված են ծանոթագրություններում³⁴⁷, իսկ բուն տեքստում կարդում ենք. «παρά δὲ τὸν Κύριον ποταμόν ἢ τε Ὀβάρην καὶ ἢ Ὠτρήν»³⁴⁸։ Սեն-Մարտենի աշխատությունում Ղճարդոյ անվանածի փոխարեն նշված Ղճարդոյ հավանաբար վրիպակ է³⁴⁹։

Ստեփանոս Բյուզանդացու (VI դ.) երկի լայացիզյան հրատարակությունում առկա են թե՛ Դալարդոյ և թե՛ Ղճարդոյ անվանածները³⁵⁰։ Ղճարդոյ և Դալարդոյ անվանածների և հայկական Գուգարք անվան նույնականությունը, արդեն իսկ նշել էր Պտղոմեոսի երկի հրատարակիչ Կ. Մյուլերը³⁵¹։

Գուգարքի կապակցությամբ Մովսես Խորենացին նախ գրել է Շարայի որդիներից Հայկազուն Գուշարի³⁵² ժառանգական տի-

³⁴⁷ Ptol., p. 937.

³⁴⁸ Ibid., V.12.4.

³⁴⁹ Բ. Հարությունյանն անդրադառնալով այս անվանը՝ Սեն-Մարտենի կարծիքն ուղղակի նշել է այն հեղինակների շարքում, որոնք, «քննության ենթարկելով Սեն Հայքի պտղոմեոսյան նկարագրությունը, համզել են տրամաբանական այն եզրակացությանը, որ *Օբարենեն* պետք է սրբագրել *Գուգարենեն*» (Բ. Հարությունյան, Սեն Հայքի Գուգարք աշխարհը՝ ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՀ, 1977, № 2, էջ 178)։ Այստեղ խոսքը կարող է լինել Սեն-Կրուայի առաջարկված Դալարդոյ ընթերցման մասին՝ Ղճարդոյ տարընթերցվածը՝ Ղճարդոյ սրբագրմամբ։

³⁵⁰ Stephani Byzantii, p. 96. 315.

³⁵¹ Ptol., p. 937.

³⁵² Բ. Հարությունյանը նախ գրել է «ըստ Պտղոմեոսի Գուգարենեն ստրատեգիա», այնուհետև հավանական համարելով, որ Tosarene տարընթերցումը բնագրային բնույթ կարող էր ունենալ, ենթադրել է, որ «դժվար չէ նրանից վերականգնել Դասարդոյ ձևը, որն անտարակույս սերտ աղերս ունի Պատմափոր Գուշարի հետ, ուստի և իր տարածքային ընդգրկումով պետք է համապատասխաներ Գուգարաց բոլեշխությունը։ Եզրակացությունը մեկն է, արդեն գոյություն ունեի Գուգարաց բոլեշխությունը. բոլեշխական ժառանգական հարստությունը կոչվում էր Գուշարունի, որի անունով էլ Պտղոմեոսը ստրատեգիան կոչել է Գոսարենեն՝ Գուգարենեի փոխարեն»։ Նա նշել է, որ «Ստեփանոս Բյուզանդացու կողմից Օբարենեն և Գուգարենեն ձևերի օգտագործումը արդյունք է մի կողմից Գուգարենեի, այսինքն Գուգարքի փաստական գոյության, մյուս կողմից՝ Պտղոմեոսի երկի ազդեցության... մ. թ. 2-րդ դարում Գուգարաց բոլեշխությունը կամ, ըստ Պտղոմեոսի, Գուգարենեն ստրատե-

րույթների մասին («Իսկ Գուշարայ, որ յորդուցն Շարայի, ժառանգեաց զլեառն Մթին, որ է Կանգարք, և զկես մասինն Ջաւախաց, զԿողք, զԾոր, զՁոր, մինչև ցամուրն Զնարակերտ: Բայց զւղերութիւնն Աշոցայ, և զսեպհականութիւնն Տաշրաց կարգէ Վաղարշակ ի զաւակացն Գուշարայ Զայկազնոյ»³⁵³), այնուհետև՝ Գուգարաց բղէշխության հաստատման («Իսկ ընդդէմ լերինն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհօր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացուց, որ էր լեալ ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի. զոր ածեալ Աղեքսանդրի՝ թողու իշխան ի վերայ գերութեանն ի Վերիացուց»³⁵⁴ ազգացն, զոր էած Նաբուգոդոնոսոր, որպէս Աբիւղենոս պատմէ...»³⁵⁵) մասին:

«Դարեհի նախարարի՝ Միհրդատի զավակին» առնչվող տեղեկությունն իր արտահայտությունն է գտել նաև հետևյալ հաղորդման մեջ, «(Արտաշեսը) զդուստր իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ունեմն Վրաց բղէշխի մեծի, որ էր ի զաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի»³⁵⁶: Տարբեր ժամանակներին վերաբերող տեղեկությունների այսպիսի միահյուսումն ազդել է Մ. Բրոսեի հետևյալ մեկնության վրա. «Արշակն ունեցավ մի դուստր, որն ամուսնացավ Իբերիայի բղէշխ ոմն Միհրդատի հետ, այսինքն՝ Վիրքին հարևան Զայոց Գուգարք նահանգի կառավարչի հետ...

գիան... իր տարածքով համապատասխանում էր հտրեմացու կողմից հիշատակված Գուշարի ժառանգությանը» (Բ. Զարությունյան, նշվ. աշխ., էջ 178, Նույնի, Արցախի, Զայոց Արևելից կողմերի և Դարաբաղի տարածքի հարցի շուրջ, ՊԲՀ, 1995, № 1, էջ 191-192): Այս ենթադրությունը կառուցված է Դաչադուրի տեղանվան թերի տարբերությունների վրա և թեական է:

³⁵³ Մովսես Խորենացի, էջ 113:

³⁵⁴ Պատմահոր նկարագրությամբ՝ «Եւ է Վերիայն յեզր երկրի յարևմուտս» (Մովսես Խորենացի, էջ 114), որը համապատասխանում է Իսպանիային:

³⁵⁵ Նույն տեղում, էջ 114:

³⁵⁶ Նույն տեղում, էջ 121: Գ. Խ. Սարգսյանն ուշադրություն է դարձրել, որ Գուգարաց բղէշխությանը վերաբերող Մովսես Խորենացու շարադրանքում միահյուսված են տարբեր անձանց, վայրերի և ժամանակների մասին տեղեկություններ՝ Նաբուգոդոնոսոր II-ից (մ.թ.ա. 605-562 թթ.) մինչև Դարեհ III Կողոմանոս (մ.թ.ա. 336-330 թթ.), ինչպես նաև՝ Վիրքի հետ շփոթմամբ՝ Իսպանիայի Իբերիայից մինչև Պոնտոս և Կովկասի լեռներ (Мовсеев Хоренаци, с. 235. прим. 236-239):

Այն ինչ վերաբերում է Գուգարք նահանգին նույն պատմիչը հաղորդում է, որ Վաղարշակը այնտեղ նշանակեց բղեշխ կամ կառավարիչ ոմն Միհրդատին, ով Ալեքսանդրի ժամանակների այն անձի սերունդներից է... »³⁵⁷:

Գուգարք նահանգի հյուսիսային սահմանի կապակցությամբ ուշադրություն դարձնելով *բղեշխ*³⁵⁸ տերմինին, Սեն-Մարտենը գրել է. «Արշակունի արքաների և նույնիսկ նրանցից հետո պարսից արքաների օրոք անյո նահանգը վստահված էր *բղեաշխ* կամ *բղեշխ* կոչվող զինվորական հրամանատարներին, որոնք այն պետք է պաշտպանեին վրացիների և հյուսիսի ժողովուրդների ներխուժումներից: Քանի որ նրանց կուսակալությունը սահմանակից էր Վիրքին և մեծամասամբ բնակեցված էր միևնույն տոհմի մարդկանցով, այս պաշտոնյաները կոչվում էին տարբեր ձևերով՝ *Գուգարաց կամ Վրաց զինվորական հրամանատարներ (Commandans militaires de Koukark 'h ou de Géorgie)*՝ *Բղեաշխ Գուգարացուց* կամ *Բղեշխ Վրաց*»³⁵⁹:

Բղեաշխ կամ *բղեշխ* կոչվող զինվորական հրամանատարների պարտականությունն էր, ըստ Սեն-Մարտենի, Գուգարաց նահանգը պաշտպանել «վրացիների և հյուսիսի ժողովուրդների ներխուժումներից», իսկ քանի որ բղեշխների իրավասությանն ենթակա Գուգարաց «կուսակալությունը սահմանակից էր Վիրքին», ուստի պաշտոնյան ուներ նաև «բղեշխ Վրաց» տիտղոսը: Այսպիսով՝ Սեն-Մարտենի հայեցակարգային մոտեցմամբ *Գուգա-*

³⁵⁷ Histoire de la Géorgie.... 1849, p. 46-47, com. 4.

³⁵⁸ Համաձայն Ս. Կրկյաշարյանի՝ Հայկական լեռնաշխարհում Վանի թագավորության ժամանակաշրջանում «գուցե և դրանից էլ առաջ, եղել են երկրամասերի իշխաններ, որոնք կոչվել են բղեշխներ»: Միևնույն ժամանակ նա նշել է. «Բղեշխներն ու բղեշխությունները վերջնականապես ձևավորվել են Տիգրան II-ի ժամանակ, երբ Հայկական թագավորության սահմանները դուրս եկան Հայկական լեռնաշխարհի բնական-աշխարհագրական սահմաններից, դրանով իսկ ստեղծվեցին նյութական պայմաններ բղեշխությունների առաջացման համար: Բղեշխները որպես «զահերեց» և «բարձերեց» իշխաններ, թագավորի մերձավորագույն զինակիցներն էին» (Ս. Մ. Կրկյաշարյան, Բղեշխությունների առաջացումը Հայաստանում, ՊԲՀ, 1966, № 4, էջ 259, 262):

³⁵⁹ M. Saint-Martin, op. cit., t. I, p. 79.

րաց բղեշխը կոչված էր պաշտպանել Հայաստանի հյուսիսային սահմանը արտաքին ներխուժումներից, ինչպես նաև *Գուգարաց բղեշխի* իշխանությունը, տարածվելով Վիրքի հետ սահմանային գոտու վրա կոչվում էր նաև «բղեշխ Վրաց»:

Սեն-Մարտենը Գուգարաց բղեշխության հարցի կապակցությամբ հիմնվել է Մովսես Խորենացու և Ղազար Փարպեցու հաղորդումների վրա: Պատմահայրը Հայաստանի հյուսիսային մասում հաստատված և *բղեշխ Գուգարացվոց* անվամբ հայտնի մահապետության մասին գրել է. «Իսկ ընդդէմ լերիմն Կաւկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ (Վաղարշակ թագավորը - Ա.Դ.) զմեծ և զհզոր ազգն, և նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացւոց...»³⁶⁰

Խոսքով Կոտակի գահակալության (330-337 թթ.) ժամանակաշրջանի կապակցությամբ Մովսես Խորենացին հաղորդել է, որ «միագլուխ սպարապետ և ամենայն Հայոց զօրավար» Արտավազդ Մանդակունու մահվանից հետո Տրդատ Գ Մեծի նշանակած Հայոց բանակի չորս զորահրամանատարները վերահաստատվեցին իրենց զինվորական պաշտոններում: «Առաջին՝ Բագարատ ասպետ, զօրավար արևմտեան զնդին»³⁶¹, երկրորդ՝ Միհրան առաջնորդ Վրաց և բղեաշխ Գուգարացւոց³⁶², սպարապետ հիւսիսային զօրուն. երրորդ՝ Վահան նահապետ Ամատունեաց, զօրավար արևելեան զնդին. չորրորդ՝ Մանաճիհր նահապետ Ռըշտունեաց, սպարապետ հարաւային զօրուն: Եւ բաժանեալ ետ

³⁶⁰ Մովսես Խորենացի, էջ 114:

³⁶¹ Դեռևս Արտաշես I արքան Սմբատ Բագրատունուն «թագակապ ասպետության» պաշտոնի հետ մեկտեղ նշանակել էր «արևմտեան զօրուն» և «զամենայն զօրս Հայոց» հրամանատար (Մովսես Խորենացի, էջ 174):

³⁶² Այս արտահայտության կապակցությամբ Գ. Խ. Սարգսյանը նշել է. «Այլ դեպքերում *բղեաշխ Գուգարացվոց* և *Վրաց արքան* տարբեր անձինք են» (Мовсес Хоренаци. с. 256, прим. 593): Մովսես Խորենացու սույն հաղորդումից կարելի է ենթադրել, որ «Վրաց առաջնորդ Միհրանը» եղել է Հայոց արքայի ենթական՝ ընդգրկված լինելով Հայաստանի ռազմական համակարգում:

նոցա զհրաքանչիւր զօրս»³⁶³: Այս փաստը խոսում է այն իրողության մասին, որ Մեծ Հայքի թագավորության Գուգարաց բղեշխի պաշտոնավարության ներքո էր նաև Վիրքը:

Գուգարքը IV դարում եղել է Մեծ Հայքի թագավորության անքակտելի մասը, քանզի, համաձայն Փավստոս Բուզանդի հաղորդման, Գուգարքի բղեշխը, որ «յառաջն ծառայէր թագաւորին Հայոց», Արշակ Բ թագավորի օրոք անհնազանդութիւն ցուցաբերեց, սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը հնազանդեցրեց ու վերականգնեց «զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր»³⁶⁴:

Մեծ Հայքի թագավորության *բղեաշխ Գուգարացւոց* մասին Մովսես Խորենացին հիշատակել է նաև Մեսրոպ Մաշտոցի քարոզչական գործունեության կապակցությամբ. «Հրաւիրի անտի ի բղեշխն Գուգարացւոց Աշուշայէ՝ յաղագս նորին գործոյ գալ յիւր իշխանութիւնն ի գաւառն Տաշրաց. ուր երթեալ՝ լաւագոյնս վարդապետեաց և հաստատագոյնս քան զամենայն աշակերտեալսն. առ որով ժամանակաւ Արծիլ ոմն էր կացեալ թագաւոր Վրաց»³⁶⁵:

Հատկանշական է, որ Մովսես Խորենացին Աղծնիքի կապակցությամբ բղեշխութիւնների առաջացման խնդիրն արծարծելով, գրել է. «... զՍմանասարն. և ի սմանէ աճունմն և բազմասերութիւն լեալ՝ լցին զՍիմն ասացեալ լեառն: Իսկ պերճքն և զլխաւորքն ի նոցանէ յետոյ ուրեմն մտերմութիւն վաստակոց առ թագաւորսն մեր ցուցեալ՝ զբղեշխութիւն կողմանցն արժանաւորեցան առնուլ»³⁶⁶: Պատմահոր սույն հաղորդումը վկայում է, որ Մեծ Հայքի *բղեշխութիւնները* հաստատել էին Հայոց թագավորները:

Գուգարաց բղեշխության հարցի քննութիւնը հայկական վաղմիջնադարյան սկզբնաղբյուրներում հիշատակվող «բղեշխ» տիտղոսի և «բղեշխութիւն» ռազմավարչական միավորի՝ սահ-

³⁶³ Մովսես Խորենացի, էջ 262:

³⁶⁴ Փավստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 215-216:

³⁶⁵ Մովսես Խորենացի, էջ 340-341:

³⁶⁶ Նույն տեղում, էջ 70:

մանակալության խնդրի ուսումնասիրության շրջանակներում է: Մ. Բրոսենը նշել է, որ բղեշխը նահանգային կառավարիչ էր և «այդ տիտղոսը ամբողջությամբ հայկական է...»³⁶⁷:

Գ. Խ. Սարգսյանը, բղեշխությունների խնդիրը դիտարկելով Մեծ Հայքի սահմանային ռազմավարչական կուսակալությունների առումով, նշել է. «*Բղեշխ* կամ *բղեշխ* տիտղոսը հին Հայաստանում կրում էին Մեծ Հայք պետության չորս կարևորագույն շրջանների՝ Ծովքի, Անգեղ-տան, Աղծնիքի և Գուգարքի կառավարիչները: Տվյալ դեպքում խոսքը Աղծնիքի բղեշխության մասին է»³⁶⁸:

Հ. Մանանդյանը հետազոտելով Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու հաղորդումները, եզրակացրել է, որ բղեշխները եղել են թագավորներին գրեթե իրավահավասար իշխաններ, նախարարական կազմի շրջանակից դուրս են համարվել, ինչը նաև երևում էր նրանից, որ նրանք Արշակունյաց թագավորության մեջ չէին վարում գործակալական պաշտոններ³⁶⁹:

Առանձնակի ուշադրություն է գրավում Տրդատ Գ Մեծի հետ Հռոմեական կայսրություն զնացած չորս բղեշխների մասին Ագաթանգեղոսի հաղորդումը. «Եւ ի զինուորական կողմանէն՝ զչորեսին զահերեցսն իւրոյ տաճարին, որ բղեշխքն կոչին. զառաջին

³⁶⁷ Histoire de la Géorgie, 1849, p. 80, com. 2.

³⁶⁸ Мовсес Хоренаци. с. 229, прим. 154. Անհրաժեշտ է նշել, որ Մեծ Հայքի հարավի սահմանակալները հայտնի էին նաև որպես Նոր-Շիրականի, «յևսորեստանեայց», «յվրուստան»-ի կողմերի բղեշխներ (Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, գլ. 873, էջ 459):

³⁶⁹ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Երկեր, Դ, Երևան, 1981, էջ 214: Հ. Մանանդյանը, ուշադրություն է դարձրել Պլուտարքոսի՝ Տիգրան Մեծին սպասարկող «չորս թագավորների» (ուղեկցող կամ թիկնապահ) մասին տեղեկության (Plutarch's. Lives, with an english translation by Bernadotte Perrin, London, 1959, Luc. 21.5) կապակցությամբ Մարկվարտի հայտնած այն կարծիքին (J. Marquart, Eranshahr, Berlin, 1901, S. 171-173, նույնի՝ Հայ բղեշխք, քննական ուսումնասիրութիւն, թարգմ. Հ. Թովմաս Կետիկեան, Վիեննա, 1903, էջ 23), համաձայն որի բղեշխությունների ծագումը և կազմակերպումը տեղի էր ունեցել Տիգրան Մեծի օրոք:

սահմանակալն ի Նոր Շիրական կողմանեն, և գերկորդ սահմանակալն յԱսորեստանեայց կողմանեն, և գերորդն՝ յԱրուաստան կողմանեն, գշորորդն՝ ի Մասքթաց կողմանեն»³⁷⁰: Վերջինիս դեպքում Ագաթանգեղոսը նկատի ունի Հայաստանի հյուսիսարևելյան սահմանակալին, այսինքն՝ «Գուգարաց բղեշխին», որի տիրույթների սահմանը կազմող Կուր գետից արևելք գտնվող բուն Աղուանքի և Կասպից ծովի միջև տեղադրված էր Մասքթաց թագավորությունը: Այս համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Մովսես Խորենացու՝ խնդրո առարկա հասկացությունները ներառող վերոհիշյալ հաղորդմանը. «ի Կղարջաց (Գուգարքի արևմուտքից - Ա.Դ.) սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց»³⁷¹: Այստեղ անհրաժեշտ է նշել, որ Փավստոս Բուզանդը Արշակ Բ-ի ժամանակաշրջանի առումով հիշատակել է «Գուգարաց բղեշխին»³⁷²:

Հ. Մանանդյանը նշել է, որ Արշակունյաց թագավորության հյուսիսում գտնվող Գուգարքի բղեշխությունը, լինելով Հայաստանի՝ «սահմանապահը» կամ «սահմանակալը» կոչվող չորս բղեշխություններից մեկը, պահպանում էր Հայաստանի սահմանը հյուսիսային կողմից Կուր գետով³⁷³: Ըստ Ն. Ադոնցի՝ Տիգրան Մեծի ժամանակներից, սահմանային, այսպես կոչված «արքայիկները», ճանաչելով Հայոց արքաների գերակայությունը, դարձել էին սահմանապահ-կուսակալներ³⁷⁴:

³⁷⁰ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Գ. Տէր-Սկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տփղիս, 1909, գլ. 873, 459-460 էջ: Իսկ Հ. Մանանդյանը ենթադրել է, որ «ի Մասքթաց կողմանէ» արտահայտությունը պետք է կարդալ «Մեսխեթի շրջանի», որի դիմաց իշխում էր «չորրորդ սահմանակալը»՝ Գուգարաց բղեշխը (Հ. Մանանդյան, Երկեր, Բ, Երևան, 1978, էջ 308):

³⁷¹ Մովսես Խորենացի, էջ 234:

³⁷² Փավստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, էջ 166: Այդ նույն տիտղոսը Ղազար Փարպեցին նշել է հաջորդ դարում տեղի ունեցած իրադարձությունների առումով Աշուշայի կապակցությամբ (Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխատութեամբ Գ. Տէր-Սկրտչեան եւ Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, էջ 47, 52, 55, 111):

³⁷³ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 308, հմմտ. Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 48:

³⁷⁴ Н. Адонци, ук. соч., с. 283-284.

Հայ Արշակունիների թագավորության անկումից հետո Գուգարաց բղեշխության կարգավիճակը փոփոխություններ կրեց³⁷⁵։ Ա. Մելքոնյանը նշում է, որ «428 թ. հայ Արշակունիների կործանումից հետո Գուգարաց բղեշխությունը միացվեց Սասանյան Իրանից կախյալ և փաստորեն սովորական պարսկական մարզպանության կարգավիճակ ունեցող Վրաց թագավորությանը։ Այստեղից էլ ծագեց բղեշխի նոր տիտղոսը՝ «բղեշխ վրաց և Գուգարաց»³⁷⁶։

Այսպիսով, ընդունելով այն տեսակետը, որ Գուգարաց բղեշխ տիտղոսի կողքին «բղեշխ Վրաց» տիտղոսն առաջացել է հայ Արշակունիների թագավորության անկումից հետո, կարելի է եզրակացնել, որ «բղեշխ Վրաց» հավելումը *Գուգարաց բղեշխ* հայկական տիտղոսի կողքին ոչ թե էթնո-տարածքային, այլ Սասանյանների վարած վարչաքաղաքական բաժանումների հետևանք էր։

Սեն-Մարտենն անդրադառնալով Գուգարաց աշխարհի առանձին հատվածների տարբեր ժամանակաշրջանների կարգա-

³⁷⁵ Բ. Գրորյունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, ԲԵՀ, 1977, № 2, էջ 386-388։ Ա. Զրիստենսենը V դարի առումով ներկայացնելով Սասանյան Իրանի պաշտոնական տիտղոսները, բավականին անորոշ ծնով նշել է. «Հայաստանի և Վիրքի մարզպանները պահպանեցին *բղեշխի* տիտղոսը։ 430 թ. Հայաստանը դառնում է պարսկական կայսրության նահանգ և մարզպանի կառավարման տակ է անցնում» (A. Christensen, L'Iran sous les Sassanides, Copenhagen, 1944, p. 137, com. 1)։ Նա ենթադրել է, որ Սասանյանների տիրապետության սկզբնական ժամանակաշրջանում նահանգների կառավարիչները անվանվել են *սատրապներ* կամ *բղեշխներ*, իսկ *մարզպան* բառն ընդհանուր է դարձել ավելի ուշ (Ibid., p. 102)։ Հետազոտողն այստեղ պետք է նշեր, որ Հայաստանի արևելյան մասն էր 428 թ. անցել պարսկական տիրապետության ոլորտը՝ «մարզպանության» կարգավիճակով։ Կ. Թումանովը, անդրադառնալով *բղեշխ* տերմինի և *բղեշխություն* վարչատարածքային հասկացության խնդիրներին, առաջարկել է զանազանել տերմինի և պաշտոնի ծագումը, ընդգծելով, որ իմաստ չունի հայկական պաշտոնը ենթադրել փոխառնված Պարթևքից կամ սասանյան պետությունից (C. Toumanoff, Introduction to Christian Caucasian History: II: states and dynasties of the formative period, 1961, p. 8-10)։

³⁷⁶ Ա. Մելքոնյան, Հավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 42։

վիճակին՝ IX-XI դդ. առումով գրել է. «Թվում է, որ Գուգարք³⁷⁷ նահանգը, որը երկար ժամանակ բաժանված է եղել մեծ թվով փոքր իշխանությունների միջև, որոնք ճանաչում էին Հայոց արքաների գերիշխանությունը, այնուհետև անցավ վրաց արքաների տիրապետության տակ, որոնք չոչնչացրին այստեղ գտնվող փոքր ինքնիշխանությունները: Սկզբնապես այս նահանգը հոգևոր առումով կախյալ էր Վիրքի պատրիարքից: Այն ներկայումս Հաղպատի արքեպիսկոպոսի ենթակայության տակ է, որն էլ ենթակա է Մեծ Հայքի պատրիարքին: IX դ. վերջին և X դ. սկզբին Հայոց արքաները փորձեցին վերադարձնել այս երկրամասի բնակիչներին իրենց տիրապետության տակ: XI դ. ընթացքում այս նույն երկրամասին տիրեցին Բագրատունիների թագավորական ցեղից սերող հայ իշխանները, որոնք կազմեցին Կյուրիկյան հարստությունը, որի նստավայրն էր Լոռի քաղաքը...»³⁷⁸:

Սեն-Մարտենի նման կարծիքի³⁷⁹ պատճառն է Հովհաննես Դրասխանակերտցու՝ Կյուրիոնի գործողությունների կապակցությամբ հաղորդման թերի մեկնությունը: Այնինչ պատմիչը գրել է. «Այս Մովսես³⁸⁰ գԿիւրիովմ՝ սրբոյ Կաթողիկէի վանաց երէց, ձեռնադրէ յարքեպիսկոպոսութիւն Վրաց նահանգին և Գուգարաց և Եգերացոց՝ ըստ օրինակի կարգացն առաջնոց: Իսկ ապա մերծի վախճանն Մովսեսի՝ Կիւրիոն զճշմարիտ կարգաց և գկրօնից ուղղութիւնն ի բաց խզեալ, զոր ի Հարցն մերոց ուղղափառաց աշակերտեալ էին կողմանքն այնոքիկ՝ միտէր զհետ... Ժողովոյն Քաղկեդոնի, զկնի փառամով ամբարիաւաճութեանն իւրոյ ձգեալ

³⁷⁷ Հաճաձայն Հ. Կարազյոզյանի՝ Գուգարքը հիշատակվում է Իշպուհինի և Սենուայի, ինչպես նաև Արգիշտի I-ի Խորխոռոյան տարեգրությունում, որպես *Վիտերուխե* (տե՛ս Հ. Կարազյոզյան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, Սեպագիր տեղանուններ, հ. 1, գիրք 1, Երևան, 1998, էջ 186-187):

³⁷⁸ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 79-80.

³⁷⁹ Ibid.

³⁸⁰ Հայոց կաթողիկոս Մովսես Բ Եղիվարդեցի (574-604 թթ.):

դաւաճանեալ զնախահարս աշխարհին: Ապա վաղվադակի իսկ ի դերև ելանէր խոկացեալ նորայն դաւաճանութիւնն»³⁸¹:

Յովհաննէս Դրասխանակերտցու հաղորդումից հետևում է, որ «Վրաց նահանգ»-ում, Գուգարքում ու Եգերքում, «ըստ օրինակի կարգացն առաջնոց», արքեպիսկոպոս էր ձեռնադրում Յայոց կաթողիկոսը, ինչն այն իրողության արտացոլումն էր, որ, մասնավորապես, Վիրքը ենթակա էր Յայ Առաքելական եկեղեցուն և խոսք անգամ չի կարող լինել Գուգարքի՝ «հոգևոր առումով Վիրքի պատրիարքից կախված լինելու» մասին³⁸²: Կյուրիոնի արքեպիսկոպոս նշանակումը Յայ Առաքելական եկեղեցու հոգևոր ուղորտում գտնվող տարածքում Յայաստանի հյուսիսային Գուգարք նահանգում, Վիրքում ու Եգերքում տեղի էր ունեցել նախքան հայ-վրացական եկեղեցական պառակտումը: Ուստի, Յովհաննէս Դրասխանակերտցու հաղորդումը վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ Վրաց եկեղեցին ճանաչում էր Յայ Առաքելական եկեղեցու գերակայությունը, իսկ այնուհետև Մովսես Բ Եղվարդեցուն հաջորդած Աբրահամ Ա Աղբաթամեցու (607-615 թթ.) կաթողիկոսության ընթացքում, Կյուրիոնի գործողությունների հետևանքով տեղի էր ունեցել հայ-վրացական եկեղեցական խզումը (608 թ. վերջ/609 թ. սկիզբ)³⁸³:

³⁸¹ Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 65: Այս նույն ժամանակաշրջանում Յայ Առաքելական եկեղեցու դավանության նախանձախնդիր Յուրտավի եպիսկոպոս Մովսեսը «Վրաց աթոռին եպիսկոպոսներուն մէջ Կիրիոնի միտքին չէր հետեւեր... մինչեւիսկ համարձակապէս քաղկեդոնականութեան դէմ կը քարոզէր, եւ Վրաց կաթողիկոսարանին երկդիմի ընթացքը կը քննադատէր» (Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 600):

³⁸² Սեն-Մարտենի այս կարծիքը հակասում է իր իսկ հայեցակարգին, երևում է նախ այն փաստից, որ հենց ինքը, հիմնվելով հայկական սկզբնաղբյուրների վրա, նշել է, որ Գուգարքը Մեծ Յայքի նահանգներից մեկն էր: Եվ երկրորդ իր ժամանակաշրջանի առումով Սեն-Մարտենը, ինչպես վերը տեսանք, նկատի ունենալով Գուգարքը, նշել է, որ այն Յաղպատի «արքեպիսկոպոսի ենթակայության տակ է, որն էլ ենթակա է Մեծ Յայքի պատրիարքին», այսինքն՝ Յայոց կաթողիկոսին:

³⁸³ Ն. Ալիմեան, Կիրիոն կաթողիկոս Վրաց: Պատմութիւն հայ-վրական յարաբերութեանց եօթներորդ դարու մէջ, Վիեննա, 1910, էջ 242-256, Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 636, Լեո, Յայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. Բ,

Ինչպես հետևում է Ազաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Մովսես Խորենացու և Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումներից, ի սկզբանե Վրաց եկեղեցին եղել է Հայ Առաքելական եկեղեցու իշխանության տակ:

Ազաթանգեղոսը հաղորդելով Հայոց կաթողիկոս ծեռնադրվելու համար Գրիգոր Լուսավորչի Կեսարիա մեկնելու կապակցությամբ Տրդատ Գ Մեծի հրամանով Հայոց թագավորության իշխանների, կուսակալների, հազարապետների հավաքի մասին, նրանց թվում հիշատակել է Գուգարաց նահանգի իշխանին, որն անվանվում էր «միւս բղեաշխ» (Աղծնիքի իշխանը անվանվում էր «բղեաշխն մեծ»)³⁸⁴: Ազաթանգեղոսը նրանց բոլորին անվանում է «այս իշխանք են ընտիրք... Հայաստան աշխարհի, տանն Թորգոմայ»³⁸⁵, այսինքն՝ այդտեղ հիշատակված հայկական իշխանությունների (Անգեղ-տուն, Աղծնիք, Կորդուք, Ծոփք, Ռշտունիք, Մոկք, Ծավղեք՝ Արցախ նահանգը և Սյունյաց նահանգի Սողք գավառը³⁸⁶, Հեր, Ջարևանդ և այլն) թվում Գուգարքը ևս կազմում էր Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության տարածքը: Ուստի, խոսք չի կարող լինել «ի սկզբանե» «Վրաստանի պատրիարքից» Գուգարքի «կախվածության» մասին:

Դեռևս Գրիգոր Լուսավորչի թոռը՝ Գրիգորիսը ստացել էր «յեպիսկոպոսութիւն կողմանց Աղուանից և Վրաց»³⁸⁷: Ըստ Մովսես Խորենացու՝ «գործակալք կողմանց արևելից հիւսիսոյ, վերակացուք հեռաւոր քաղաքին, որ կոչի Փայտակարան» Տրդատ արքայից խնդրեցին իրենց ուղարկել «եպիսկոպոս ի գաւալէ սրբոյն Գրիգորի» և արքան «տայ նոցա եպիսկոպոս զմանուկն Գրիգոր»:

Երևան, 1967, էջ 236, է. Դանիելյան, Հայաստանի քաղաքական պատմությունը, էջ 94-95 և այլն:

³⁸⁴ Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, գլ. 795, էջ 414:

³⁸⁵ Նույն տեղում, գլ. 796, էջ 415:

³⁸⁶ Ազաթանգեղոս Պատմություն Հայոց, Աշխարհաբար թարգմանությունը ներածականով ու ծանոթագրություններով Արամ Տեր-Ղևոնդյան, Երևան, 1977, էջ 178, ծան. 42:

³⁸⁷ Փավստոսի Բիւզանդացոյ Պատմություն Հայոց, էջ 22:

րիս, գերեց որդին Վրթանիսի»³⁸⁸: Այսպիսով, Փափստոս Բուզանդը ևս փաստում է IV դարից Վրաց եկեղեցու Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո լինելու մասին:

Հայ Բագրատունիների թագավորական հարստության մի ճյուղի՝ Կյուրիկյանների Գուգարքում հաստատման փաստի Սեն-Մարտենի կողմից ժամանակագրումը XI դարով, կարիք ունի ճշտման, քանի որ, ինչպես հայտնի է, Գուգարքում Տաշիր-Չորագետի թագավորությունը՝ Լոռի մայրաքաղաքով հիմնվել էր X դարի երրորդ քառորդից՝ 966 թ. և գոյատևել մինչև 1113 թթ.³⁸⁹:

Գ. Հայաստանին վրացիների կողմից տրված «Սոմխիթ» անվանման հարցի շուրջ

Վրաց սկզբնաղբյուրներում Հայաստանին տրված *Սոմխիթ* անվանումը վերաբերում է Հայաստանի տարածքին³⁹⁰, սակայն

³⁸⁸ Սովսես Խորենացի, էջ 259: Նկատի ունենալով այս փաստը, Մաղաքիա արք. Օրմանյանը գրել է. «Լուսաւորչին օրէն ներքին միաւորութիւն մը հաստատուած էր Հայոց և Վրաց եկեղեցիներուն մէջ: Գրիգորիս Լուսաւորչի թողը, որ հիւսիսային երկիրներու կաթողիկոս ձեռնադրուեցաւ ընդհանուր եպիսկոպոսապետ եղաւ Կովկասի կողմերը եղող ազգերուն. բայց յետ ժամանակաց երկու աթոռներ զատուեցան, երբոր Վրացիներ ու Աղուաններ զատ զատ թագաւորութիւններ եղան. բայց երկուքն ալ Հայոց աթոռին գերիշխանութիւնը կը ճանչնային, կաթողիկոսնին Հայոց աթոռէն կը ձեռնադրուէին, և դաւանական խնդիրներու մէջ Հայոց կը հետեւէին, և Հայոց ժողովներուն կը մասնակցէին իբրեւ նոյն եկեղեցւոյ անդամներ» (Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, էջ 588-589):

³⁸⁹ Տե՛ս Ռ. Մաթևոսյան, Տաշիր-Չորագետ, (X դ.-XII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 74, 106:

³⁹⁰ Խ. Թորոսյանը, հետազոտելով «Շուշանիկի վկայաբանության» վրացերեն համառոտ (ենթադրվում է X դարից առաջ) խմբագրությունը, Արսեն Սափաբեցու (IX դ.) «Յաղագս բաժանման վրաց և հայոց», Ջուանջերի (XI դ.) «Վախթանգ Գորգասալի կյանքը», ինչպես նաև «Թագակիրների պատմությունն ու զովաբանությունը» և այլ երկեր, նշել է, որ դրանցում օգտագործվել է *Սոմխիթի* անվանածը՝ «միշտ Հայաստան իմաստով» (Խ. Թորոսյան, «Թագակիրների պատմությունն ու զովաբանությունը» որպես Ջաբարյան Հայաստանի ու Ջաբարյանների պատմության սկզբնաղբյուր, Երևան, 1992, էջ 120-122, 161):

վրաց պատմագրությունում գերիշխում է *Սոմխիթի* հասկացությանը տարբեր «էթնո-քաղաքական» իմաստներ տալու մոտեցումը³⁹¹։ Հայաստանի Գուգարք նահանգի հյուսիսարևելյան տարածքը «վրացականացնելու» նպատակով³⁹²։

Սեն-Մարտենը վկայել է, որ օտար զավթումների հետևանքով կատարված քաղաքական բաժանումներն իր ժամանակի առումով հանգեցրել էին առկա վարչատարածքային իրավիճակին։ Այսպես, Գուգարքի արևմտյան հատվածը հայտնվել էր «Ախլցխայի փաշայի» կառավարած «վերին Վրաստանի արևմտյան մասում, իսկ արևելյանը՝ «Ռուսաստանի կայսրության ենթակայության տակ³⁹³ գտնվող վրացերենով՝ *Սոմխիթի* կամ հայերենով *Սոմխեթ*³⁹⁴ նահանգի» մեջ, ինչն ուղեկցվում էր հայկական տարածքների պատմաաշխարհագրական անվանումների խեղաթյուրմամբ³⁹⁵։ Սեն-Մարտենը «*Սոմխիթի*»-ից ծագած է

³⁹¹ Stéu X. Топосы, Топонимы "Сомхити" в грузинских первоисточниках, Ереван, 2003, с. 24-35.

³⁹² Այնպես, ինչպես, օրինակ՝ որոշ վրաց պատմաբաններ աղավաղելով հայկական Զավախքի, Կղարքքի, Տայքի անվանումները, «ստեղծում» են ցեղեր՝ «ջավախներ, կղարքներ, տաոյցիներ» և ներկայացնում իբրև, ի թիվս այլոց, «վրաց ազգը» ձևավորած ազգակից ցեղեր (Н. Бердзенишвили, Н. Джавахашвили, С. Джанашиа, История Грузии, под ред. С. Джапашиа, Тбилиси, 1946, с. 6, հմմտ. П. Рамишвили, Социально-политическая история Грузии – տե՛ս Очерки истории стран Южного Кавказа, Мультиперспективный взгляд на историю, Ереван, 2009, с. 75, 80 և այլն)։

³⁹³ XIX դ. առաջին երկու տասնամյակներում Հյուսիսային Հայաստանի, Արևելյան Վրաստանի, Արևելյան Անդրկովկասի տարածքներն անցել էին Ռուսական կայսրությանը (տե՛ս Ա. Մեքոնյան, Գլվ. աշխ., էջ 154)։

³⁹⁴ Թ. իս. Հակոբյանը, Ստ. Տ. Մելիք-Բախշյանը և Հ. իս. Բարսեղյանը Գլվ. են. «Սոմխեթ-զավառ Թիֆլիս նահանգում։ Ոմանք վրաց աղբյուրներում ամբողջ Հայաստանին տրված այս անվամբ կոչում են նաև Թիֆլիսից հարավ ընկած Գուգարք աշխարհի Ծոբոփոր զավառը» (տե՛ս Թ. իս. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. իս. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Երևան, 1998, հ. 4, էջ 657)։

³⁹⁵ Սեն-Մարտենը Հայաստանի, մասնավորապես, նրա հյուսիսային նահանգների տեղանունների վերաբերյալ հաղորդել է, որ իր ժամանակ «զավառների մեծ մասի անուններն ամբողջությամբ մոռացված են» բացառությամբ *Տաշիքի, Զավախք, Թոնդը, Արտահան* տեղանունների» (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 76. 83)։

համարել «սոմեխի» անվանումը, որով վրացիները անվանում են հայերին»³⁹⁶.

Մ. Բրոսեն «Քարթլիս ցխովրեբա»³⁹⁷ և Վախուշտիի (1696-1757 թթ.)³⁹⁸ «Քարթլիի աշխարհագրական նկարագրություն» երկերի ֆրանսերեն թարգմանությունների մեկնություններում³⁹⁹ անդրադառնալով վրաց մատենագրությունում Հայաստանին տրվող անվանման խնդրին՝ գրել է, որ «Սոմխեթ» անունը վրացերենում ունի երկակի նշանակություն. նախ բուն Հայաստանն է, որի 15 նահանգները նկարագրել է Մովսես Խորենացին (V դ.)⁴⁰⁰ իր Աշխարհացույցում»⁴⁰¹: Այնուհետև, Բրոսեն նկատի ունենալով Հայաստանի հյուսիսարևելյան մասում հետագայում Վրաստանի

³⁹⁶ Ibid., p. 79.

³⁹⁷ Մ. Բրոսեն «Քարթլիս ցխովրեբա» («Քարթլի կյանքը») ժողովածուն հրատարակել է «Վրաստանի պատմություն՝ անտիկ ժամանակաշրջանից մինչև XIX դ.» վերտառությամբ աշխատությունում: Նա նշել է, որ իր թարգմանած այդ ժողովածուն Վրաստանում հայտնի է (ჰართლის ცხოვრება) («Քարթլի կյանքը») վերնագրով, որը «տրվել է այս ոճի մի պատմությանը XIII դարում, քանզի հայ հեղինակ Ստեփանոս Օրբելյանը այն հիշատակում է իր տոհմի պատմության մեջ (Բրոսեն Ստեփանոս Օրբելյանի աշխատությունը այստեղ հիշատակել է Սեն-Մարտենի հետազոտության միջոցով, տե՛ս J. Saint-Martin, op. cit., t. II, p. 64): Այնուամենայնիվ, ժամանակագրությունները, ընդհանուր առմամբ, բոլոր վրաց պատմաբանների կողմից անվանված են ცხოვრებად»՝ «կյանք» (վրացերենում նշված է հոգնակի ձևով): Եթե ես փոխարինել եմ «կյանք» բառը մեկ այլ բառով՝ դա ոճի խնդիր է: Ինչ վերաբերվում է *Քարթլիին*, որը փոխարինում եմ *Վրաստան* բառով, ապա XV դարից առաջինն ունի առանձնակի նշանակություն, իսկ երկրորդը ավելի ընդարձակ՝ ընդհանրական. այս երկուսը պետք չէ շփոթել» (Histoire de la Géorgie..., 1849, p. I, com. 1):

³⁹⁸ Մ. Բրոսեն Վախուշտի մահվան տարեթիվը նշել է 1770 թվականից հետո (Description géographique de la Géorgie par tsarévitch Vakhoucht d'après l'original autographe par M. Brosset, S.-Petersbourg, 1842, p. IX):

³⁹⁹ Մ. Բրոսեն Վախուշտիի «Քարթլիի աշխարհագրական նկարագրությունը» երկի ֆրանսերեն թարգմանությունը հրատարակել է վրացերեն բնագրին զուգահեռ օգտվելով «հեղինակի բնագրային մեռագրից» (Description géographique de la Géorgie par tsarévitch Vakhoucht..., p. X):

⁴⁰⁰ Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie. Oukhtanès d'Ourha..., էջ 3:

⁴⁰¹ Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle traduite du géorgien par M. Brosset, S.-Petersbourg, 1858, p. X.

(Géorgie) կողմից կատարված գավթումները, գրել է, որ «Սոմխեթ է» նաև այն երկրամասը, որը «հաճախ անցել է մի ազգից մյուսին...»⁴⁰²։ Բրոսենն նշել է, որ «վրաց արքաների» իշխանության տակ գտնվող տարածքների սահմանները հստակ չէին, քանի որ «ղրանք հազվադեպ և երբեք որոշակի ժամանակով չեն միավորվել նրանց գավազանի ներքո, քանզի շատ թույլ էին, որպեսզի ամբողջությամբ հաստատեին իրենց անկախությունը. այս արքաները իրենց ազատագրման համար ինացել են միայն օգտվել իրենց վրա տիրապետողների թուլությունից»⁴⁰³։

Վախուշտին «Սոմխիթի» տերմինը ընդհանուր առմամբ օգտագործել է Հայաստանի առումով⁴⁰⁴ և, մասնավորապես, նրա հյուսիսարևելյան⁴⁰⁵ այն մասի կապակցությամբ, որը Դեբեդի և Բոլնիսից⁴⁰⁶ արևելք գտնվող փոքր լեռան միջև է՝ Քջիայից մինչև «Լելվար» (Լալվար) և Լոք լեռները։ Վախուշտին նույն այդ տարածքի առումով օգտագործել է նաև «Ներկայիս Քարթլի-Սոմխիթի» (ქართლი-სომხეთი) արտահայտությունը, որն, ըստ Մ. Բրոսեի, պետք է հասկանալ այն «Սոմխեթ»-ը⁴⁰⁷, որը «վրացական Հայաստանն» է (Arménie géorgienne)⁴⁰⁸։ Այսինքն՝ Մ. Բրոսենն նկատի ունի Հայաստանի հյուսիսարևելյան մասի վարչաքաղաքական

⁴⁰² Ibid.

⁴⁰³ Ibid., p. X-XI.

⁴⁰⁴ Histoire de la Géorgie depuis l'antiquité jusqu'au XIX^e siècle traduite du géorgien par M. Brosset, II^e partie. Histoire moderne. S.-Petersbourg, 1856, p. 13, 29.

⁴⁰⁵ Պ. Մուրադյանը նշել է, որ *Սոմխիթը* մասնավոր նշանակությամբ, որպես Գուգարքի հյուսիս-արևելքում գտնվող տարածք, հիշատակված է վրաց Շահնավազ (Վախտանգ Ե) թագավորի կողմից՝ Սանահինի առաջնորդ Սարգիս Եպիսկոպոս Արղությանին ուղղված նվիրագրում (տե՛ս Պ. Մուրադյան, Հայ եկեղեցու պատմության սկզբնաղբիւներ Ա, Յիշատակարան Սանահինյ վանից (Սանահինի քեթուկը), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2007, էջ 186-187)։

⁴⁰⁶ Բոլնիսը (Բոլնիս-խաչեն գյուղը) Գուգարաց աշխարհի Բողոնփոր գավառի կենտրոնն էր (Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 45)։

⁴⁰⁷ Մ. Բրոսեն Վախուշտի տեքստերի թարգմանություններում «Սոմխիթի» (სომხეთი) անվանածը նշել է «Սոմխեթի» (Somkheti) ձևով (Description géographique de la Géorgie pp. 140-141, 146-147, Histoire de la Géorgie...., 1856, p. 12-13, 29)։

⁴⁰⁸ Description géographique de la Géorgie...., p. 145, 147.

դրությունը՝ Վախուշտի նկարագրած ժամանակաշրջանի առումով:

Կարևոր է Մ. Բրոսեի կարծիքը, որ՝ վրացիների կողմից հայերին տրվող «սոմեխի» անվանածնը ծագել է «հարավ» («le sud») նշանակություն ունեցող «սամխոթթի» (սամեթցո)՝⁴⁰⁹ բառից, որն ըստ նրա «կարող է մատնանշել երկու ազգերի փոխադարձ դիրքը», այնպես ինչպես հայերն էլ «վրացիներին» են անվանել «Վիրք», որը հնարավոր է համարել՝ առաջացած հայերեն «վեր» բառից՝⁴¹⁰:

Սոմխիթ/Սոմխեթ անվան ծագման կապակցությամբ հետազայում հայտնվել են տարբեր կարծիքներ, այն կապելով սեպագիր աղբյուրներում հիշատակված *Սուխմե* տեղանվան հետ: Գ. Խալաթյանը Հայաստանին և հայերին տրվող «Սոմխեթ» և «սոմեխ» վրացերեն անվանածները ենթադրաբար ծագած է համարել ասորեստանյան արձանագրությունների «Սուխմե երկրի»՝⁴¹¹ անվանումից՝⁴¹², որը տեղադրվում էր Արածանիից դեպի հյու-

⁴⁰⁹ Նամեթցո («հարավ»), Նամեթցոն («հարավային») (տես Ռ. Կ. Գորգածե, Վրացերեն-հայերեն բառարան, Երևան, 2005, էջ 491)։

⁴¹⁰ Histoire de la Géorgie... 1849. p. 15, com. 5. Նման տեսակետ է հայտնել Կ. Եզյանցը, գրելով. «Грузины называют Армению Сомхетиею, т.е. странюю юга» (Դ. Ա. Էզով. Внутренний быт древней Армении, историческое исследование, Санкт-Петербург, 1859. с. 3)։

⁴¹¹ Խեթական սեպագիր արձանագրություններում «Ցուխմա» (տես В. Н. Хачатрян. Восточные провинции хеттской империи, Е., 1971. с. 114), (հմտ. Սուխմե Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985. с. 174), Օուխապա (Օուխմա), որը տեղորոշվել է Իսուվայի (Օուփք) և Հայասայի հարևանությամբ (Ա. Քոսյան, Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 104-105: Ռ. Ղազարյան, Հայաստ. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009, էջ 68)։

⁴¹² Այն հիշատակվում է Թիզլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115-1077 թթ.) և Սալմանասար III-ի (մ.թ.ա. 858-824 թթ.) ասորեստանյան սեպագիր արձանագրություններում (տես И. М. Дьяконов. АВВВ. - ВДИ. 2(36). 1951. 17. с. 280, 27. с. 295)։

սիս⁴¹³, որտեղ, ըստ նրա «գտնվում էր բուն հայկական շրջանը»⁴¹⁴:

Ն. Մառը հավաստում է, որ «Սոմեխիա», այսինքն՝ «Somqəθ» վրացերեն նշանակում է *Չայաստան*։ Ինչ վերաբերում է անվան ստուգաբանությանը, ապա նրա առաջարկած ենթադրություններում⁴¹⁵ առկա են էթնիկական հասկացությունների անհամապատասխանություններ:

Գ. Մելիքիշվիլին հետևելով Գ. Խալաթյանցի կարծիքին՝ ենթադրել է, որ վրացիների կողմից հայերին տրվող «սոմեխի» անվանաձևը, հավանաբար առաջացել է ասորեստանյան և խեթական սկզբնաղբյուրներում հիշատակվող *Սուխմի* երկրանունից (նրա ենթադրությամբ՝ «Սոխմի» արտասանությունից), ինչը Մելիքիշվիլին բացատրել է *Սուխմի* երկրին վրացական ցեղերի իբրև թե մերձավորությամբ: Այսպիսի մոտեցմամբ, ըստ նրա տեսակետի, *Սուխմե* երկիրը «Արածանիից ձգվում էր դեպի հյուսիս-

⁴¹³ Դմիտ. К. Патканов, Ванские надписи и значение их для истории Передней Азии, С. Петербург, 1881, с. 132, 141.

⁴¹⁴ Г. А. Халатъянц, О некоторых географических названиях древней Армении в связи с данными ванских надписей, (Б. м. и г.), с. 7.

⁴¹⁵ Ն. Մառը նախ՝ նշելով, որ Թամար թագուհու (1184–1207/1213 թթ.) դարաշրջանում՝ նրա գահակալության առաջին տասնամյակներին հիշատակվող «մեսխ» (mes'q) կամ «մեխ» (me'q) -ը նշանակում էր «զավառական վրացի», գրել է. «Ավելի հին ժամանակներում վրացիների մոտ այդ տերմինի հետ կապվել է թեպետև քարթեր (քարթվել)-վրացիներին ազգակից, սակայն մի ինքնուրույն ցեղի մասին պատկերացում»: Նա ենթադրել է, որ me'q -i (<*meh'q -i//mes'q -i) տերմինից է առաջացել so-me'q -i, նշանակելով «մեխ»-երի կամ «մեսխ»-երի երկիր», և «իրենց համար էկզոտիկ այդ ձևը փոխառնելով վրացիները... դրանից հասցրեցին ձևավորել տեղանվան քարթական ձևը—e ածանցով»՝ Somq-eθ-i, Somqiθ-i վրացիների մոտ *Չայաստան* նշանակությամբ (որի համար ինքը նշել է Somq-eθ-i անվանաձևը), իսկ someq-i՝ *հայ* (Н. Я. Марр, О языке и истории абхазов, Москва-Ленинград, 1938, с. 51, հմտ. ԴժՊ, Երևան, 1971, հ. I, էջ 240): Ի. Դյակոնովը ենթադրել է, որ «մոսխ» տերմինը ընդհանրապես ցեղանուն չէ, այլ տարբեր ցեղերին տրված մականուն է» (И. М. Дьяконов, Предыстория армянского народа, Ереван, 1968, с. 217-218): Կարելի է տեսնել, որ *Սոմխիթ*// *Սոմխեթ* անվանման ստուգաբանությունը «մեսխ» կամ «մեխ» բաղադրատարրերով անհիմն է՝ պայմանավորված իրարամերձ ենթադրություններով:

արևելք՝ մինչև ներկայիս Երզրունը»: Նրա անհիմն կարծիքով, արևելավրացական ժողովրդի կորիզը հանդիսացող վրացական ցեղերը բնակվել են «ներկայիս Վրաստանից արևմուտք՝ ճորոխի ակունքների մոտ»⁴¹⁶։ Նմանապես, առանց որևէ սկզբնաղբյուրային հիմքի, Գ. Մելիքիշվիլին «վրացական ցեղերին» նշել է մ.թ.ա. II հազարամյակի կեսերին «Եփրատ գետի վերին հոսանքում գտնվող» Հայաստյի հարևանությամբ⁴¹⁷։

Ի. Դյակոնովը Սալմանասար III-ի արձանագրություններում հիշատակված Սուխմուի վերաբերյալ գրել է, որ այն «պետք է փնտրել ներկայիս Մազկերտի»⁴¹⁸-Երզնճանի⁴¹⁹ շրջանում՝ միաժամանակ նշելով «հմմտ. վրաց. Սոմխեթի - Հայաստան»⁴²⁰, «սոմեխի» հայ նշանակում է վերին Եփրատի վրա գտնվող Սուխմու շրջանի բնակիչ»⁴²¹։

Ս. Երենյանը ասուրական արձանագրություններում հիշատակված Սուխմե երկիրը տեղադրելով Արածանիի հովտում Բա-

⁴¹⁶ Գ. Մելիքիշվիլին անհիմն կերպով «մուշկերին» համարել է «վրացախոս ցեղեր», իսկ «քարթվեցների» ինքնանվանումը համադրել Կորդվաց լեռների «կարդուխներ լեռնային ցեղերի հետ», ինչպես նաև «վրացախոս ցեղերի» ներկայություն է ենթադրել Կիլիկյան Տավրոսում մ.թ.ա. I հազարամյակի սկզբին (Г. Меликишвили, К истории древней Грузии, Тбилиси, 1959, с. 78, 108)։ Ի. Դյակոնովը քննադատաբար նշել է, որ անհնարին է «Տաբալ» և «իբեր» տերմինների համադրումը՝ «տիբարեններ» տերմինի միջոցով (տե՛ս И. Дьяконов, ук. соч., с. 218)։

⁴¹⁷ Г. Меликишвили, ук. соч., с. 170-171. Սեպագիր սկզբնաղբյուրներում Օուխապայից (Սուխմե) հյուսիս-արևելք և Հայաստյի հարևանությամբ գտնվող տարածքների առնչությամբ ոչ մի վկայություն չկա «վրացական ցեղերի» վերաբերյալ։

⁴¹⁸ Մազկերտը գտնվում էր Բարձր Հայք աշխարհից հարավ Օտիպաց աշխարհի Պաղնատուն գավառի հյուսիսում (տե՛ս Հ. Միքայել Յովհաննեսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ – Ս. Ղազար, 1970, էջ 108)։

⁴¹⁹ Երիզա-Երզնկա (տե՛ս Ս. Երենյան, նշվ. աշխ., էջ 50)։

⁴²⁰ АВИИУ, с. 296, прим. 12.

⁴²¹ И. Дьяконов, ук. соч., с. 196. Ի. Դյակոնովը անհիմն գրել է, որ «Սուխմու շրջանը, որ խեթական ժամանակներից հայտնի էր «Ցուխմա» անվամբ, հավանաբար մտել է հայ ժողովրդի կազմավորման շրջանի մեջ, որպես նրա հյուսիսային սահման, քանզի դրանով նրա հյուսիսային հարևան վրացիները՝ կազմել են «սոմեխի»՝ «հայ» բառը» (տե՛ս История Древнего Востока, ч. II, с. 109, прим. 2).

լու քաղաքի շրջանում, գրել է. «Գ. Խալաթյանցի այն պնդումը, թե someh-i տերմինը ծագում է Zuhma կամ Suhmu (աքքադերեն) երկրի անունից, որը պաշտպանեցին Բ. Բ. Պիոտրովսկին և Գ. Ա. Մելիքիշվիլին առկա փաստերով չի հաստատվում...»⁴²²:

Հայ մատենագրության մեջ Հայաստանին վրացիների կողմից տրվող «Սոմխիթ» անվանումը հիշատակվել է «Սոմխեթ» ձևով: Այսպես, Վարդան Արևելցին (XIII դ.), պատմելով Սմբատ Բ Տիեզերակալի (977-989 թթ.) կրտսեր եղբոր՝ Գուրգենի՝ Մեծ Հայքի Գուգարք աշխարհի արևելքում ժառանգած տիրույթների և նրանից սերած հայ Բագրատունիների ճյուղավորման, Կյուրիկյանների Տաշիր-Ձորագետի թագավորության մասին գրել է. «Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ. սա զմեծանիստ պարիսպն Անույ շինեաց, եւ զկաթուղիկէն հիմնարկէ. եւ կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սեւորդուլքն Ձորոյգետին. եւ զԿայեն եւ զԿայծոն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի եւ Խոռակերտ, եւ զԲագունիք՝ որ է Բագկերտ ի գաւառն Տաշրայ. եւ այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սոմխեթ կոչեն: եւ ի նմանէ սերեցան թագաւորքն Դաւիթ»⁴²³, Աբաս եւ Կիրիկէ»⁴²⁴:

⁴²² Տե՛ս ԶԺՊ, հ. I, էջ 240, ծան. 34: Գ. Ջահուկյանը, քննադատելով Ն. Սառի և Գ. Ղափանցյանի կարծիքը (համաձայն որի՝ հայերի somehi անվանումը «ծագում է mesxi»-ից՝ մուշկերի անվանման քարթվելական ձևից»), ինչպես նաև չընդունելով Գ. Խալաթյանցի տեսակետը, որին հետևում էին Բ. Պիոտրովսկին, Գ. Մելիքիշվիլին և Ի. Դյակոնովը, ավելի հավանական է համարել «somehi-ի համեմատությունը խեթական արձանագրություններում հիշատակված Samuha քաղաքի անվան հետ. այդ քաղաքը հիշատակվել է Բարձր երկրի, Բիթիառիզայի ու Ազգիի հետ առնչված և հարևան է եղել Հայասա երկրին» (Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 288):

⁴²³ Գուրգեն I-ի որդին՝ Դավիթ Անհողին (989-1048 թթ.):

⁴²⁴ Հաւաքումն Պատմութեան Վարդանայ Վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 90: Հովհաննես Դրասխանակերտցին, պատմելով Սմբատ I Բագրատունու (890-914 թթ.) և Գագիկ I Արծրունու (908-943 թթ.) (տե՛ս Վ. Մ. Վարդանյան, Վասպուրականի թագավորության սահմանները IX-XI դարերում. - ՊԲՀ, 4, 1969, էջ 234) ժամանակների մասին, Սևորդիներին հիշատակել է որպես Ուտիք աշխարհի Ուտի գավառի տեր (Յովհաննես Դրասխանակերտցի, էջ 127): Իսկ, ինչպես հետևում է Վարդան Արևելցու հաղորդումից Սմբատ Բ Տիեզերակալի ժամանակաշրջանում նրանց իշխանական տիրույթների մեջ

Ղ. Ինճիճյանը, անդրադառնալով Վարդան Արևելցու հաղորդմանը, «Սոմխեթ» տեղանվան առնչությամբ նախ ընդհանուր առմամբ նշել է. «Յայս անուն կոչեն Վիրք զՀայաստան... և այս չէ ինչ նոր սովորութիւն, զի և Վարդան զբազում տեղիս Հայաստանեաց յիշեալ յաւուրս Գուրգենայ եղբօր ք. Սմբատայ 'ի տասներորդ դարուն, 'ի Վրաց կոչին ասէ Սոմխեթ, յորմէ յայտ է թէ նաև 'ի գիրս նոցա կոչի այնպէս»⁴²⁵: Այնուհետև Վարդան Արևելցու նույն հաղորդման մեջ Կայան բերդի հետ հիշատակվող Կայծոն բերդի⁴²⁶ կապակցությամբ Ղ. Ինճիճյանը գրել է, որ Գուրգենին ժառանգություն հասած գավառների տարածքն է անվանվել «Սոմխեթ»: Մեկ այլ հատվածում նա նշում է. «Կայծոն: Յիշատակէ զայս Վարդան երկիցս, և ցուցանէ լինել ի կողմանս Գուգարաց՝ զի ասէ. «Եւ կրտսեր եղբայրն (ք. Սմբատայ) ժառանգէ զՏաշիր Սևորդովքն Զորոգետին, և զԿայեան, և զԿայծոն... ի գաւառն Տաշրայ, և այլ բերդք անուանիք եհաս Գուրգենայ՝ զոր Վիրք Սոմխեթ կոչեն»⁴²⁷:

«Սոմխիթ» և «Սոմխեթ»⁴²⁸ անվանաձևերը անհիմն կերպով տարբերակելով որպես տարբեր պատմաաշխարհական և էթնի-

էր նաև Զորագետը, որը Գուրգեն I-ը միավորեց Տաշիր-Զորագետի իր նորաստեղծ թագավորության կազմի մեջ:

⁴²⁵ Ղ. Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Ա, էջ 9:

⁴²⁶ Ըստ Մխիթար Այրիվանցեոյ «Բջնոյ, Կայենոյ և Կայծոնոյ» բերդերը կառուցել էր Պաիվալունյաց տոհմից Հոլուն Վասակը՝ Գրիգոր Մագիստրոսի հայրը (Մխիթարայ Այրիվանցեոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Սկրտիչ Էմին, Մ., 1860, էջ 57-58): Մ. Հովհաննիսյանի կարծիքով Հոլուն Վասակը ոչ թե ամբողջությամբ էր կառուցել Կայան և Կայծոն բերդերը, այլ ի թիվս շատ այլ բերդերի՝ նորոգել և վերակառուցել էր (Հ. Միքայել Վ. Յովհաննեսեան, նշվ. աշխ., էջ 578):

⁴²⁷ Ղ. Ինճիճեան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Մեծ Հայք, էջ 524: Դավիթ Շինարար թագավորի կողմից հայկական հողերի զավթելու մասին վրաց սկզբնաղբյուրում նշված է, որ նա «գրավեց Հայքի (Սոմխիթի) բերդերը, Գագ, Տերունական, Նոր բերդ, Մանիցզոմ...» (տես Լ. Մ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի մասին, հ. Ա, Երևան, 1934, էջ 218):

⁴²⁸ Ըստ Ա. Շանիձեի «-ջտ (-եթ) վերջածանցը աշխարհագրական անունների հատուկ ածանցիչ է, օր.՝ Նոմեջտո - Հայաստան, ՆՅահեջտո - Պարսկաստան» (Ա. Շանիձե, Հին վրացերենի քերականություն, վրացերենից թարգմ. Հ. Գ. Մարգարյան, Պ. Ա. Զորբանյան, Երևան, 1983, էջ 68):

կական իմաստ արտահայտող հասկացություններ, վրաց պատմագրության մեջ գերակայում է այն տեսակետը, թե «Սոմխիթ» նշանակում է «Ստորին Քարթլի»⁴²⁹: Պ. Չոբանյանը քննադատելով այսպիսի տեսակետը՝ նշել է, որ XVIII դարից նման մոտեցում է մշակվել վրացական պաշտոնական փաստաթղթերում և պատմագրությունում: 1770 թ. Յերակլ II-ի Ռուսական արքունիք ուղարկված մարդահամարի ցուցակում «Սոմխիթի» անվան հետ արհեստականորեն նույնացվել է «Ստորին Քարթլի» անվանումը⁴³⁰: Պ. Չոբանյանը նշել է, որ վրաց իրականության մեջ Վրաստանի թագավորի տիտղոսաշարը՝ երբեք պատմական բովանդակություն ունեցող բանաձևի չվերածվելու ավանդույթը «խախտելու վճռական քայլ կատարվեց ժԸ դարի երկրորդ կեսին... ինչը և շարունակվում է մինչև այսօր՝ վրաց հետազոտողների կողմից ետադարձ ժխտելով նաև նախորդ դարերի մտայնությունն ու իրականությունը վերածելով բանավեճային խնդրի»⁴³¹:

Ս. Երեմյանը նկատի ունենալով «Աշխարհացոյց»-ի հաղորդումը՝ Մեծ Յայքի և Վիրքի միջև Կուր գետի հուսիսարևելյան սահման լինելու մասին («Աշխարհ Վիրք, յելից կալով Եգերայ, յերի Սարմատիոյ առ Կաւկասով, մինչեւ ցԱղուանից սահման, եւ մինչեւ ցՅայոց սահմանն՝ առ Կուր գետովն...»⁴³²), այսինքն, Վիրքի՝ Կուրից հյուսիս-արևելք գտնվելու հանգամանքը, քննադա-

⁴²⁹ Վրաց պատմագրության մեջ այս տեսակետի և դրանից բխող կեղծիքների մանրամասն քննադատությունը տես Խ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 150-166:

⁴³⁰ Յերակլ II-ի (1745-1798 թթ.) ուղարկած մարդահամարի ցուցակի այդ հատվածը քննելով՝ Պ. Չոբանյանը նշել է, որ վրացերեն բնագրի խնդրո առարկա հատվածի («Եւ այս Սոմխիթը (Յայք) ու Սաբարաթաշվիլոն հավասարեցված (նույնացված՝ - Պ. Չ.) են Քարթլիին, կիսով Քարթլի են անվանում և այժմ կոչում են Ստորին Քարթլի [Ստորին Վիրք]») ռուսերեն թարգմանության մեջ հրատարակողը «թույլ է տվել բնագրի ընկալման ազատություն» (Պ. Չոբանյան, Յայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ժԸ դարերի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 135-136):

⁴³¹ Նույն տեղում, էջ 134-135:

⁴³² Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 104: Դմմտ. «Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկիրն Յայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր...» (Փաստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Յայոց, բնագիրը Բ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 322):

տել է Ի. Ջավախաշվիլիի հրատարակած «Վրաստանի պատմական քարտեզում» ներկայացված Վիրքի բաժանման համակարգը, նշելով որ «հնում «Քվեմո Քարթլի» («Ստորին Քարթլի») հասկացողությունն չի եղել... Վրաց աշխարհի այս բաժանումը՝ *վերին, միջին և ստորին* մասերի հնում գոյություն չի ունեցել և այս երկրի կենտրոնական մասն է միայն կոչվել «Վերին աշխարհ Վրաց»...»⁴³³:

Խ. Թորոսյանը, քննելով սկզբնաղբյուրների հաղորդումները նշել է, որ վրաց սկզբնաղբյուրներում ոչ միայն չկա «Քվեմո Քարթլի» («Ստորին Քարթլի») արտահայտությունը, այլև՝ «հին հեղինակների գործերում չկա «Սոմխեթի» ձևը, այլ միայն՝ «Սոմխիթի» տեղանունն է: Միևնույն ժամանակ, ըստ նրա կարծիքի, ««Սոմխեթի» և «Սոմխիթի» նույն բառն է, նույն բառի երկու տարբերակը», որը նշանակում է Հայաստան⁴³⁴:

«Վրաստանի դարձը» երկի վրացերեն տեքստը հայտնաբերվել է 1888 թ., որը 1890 – 1891 թթ. հրատարակել է Ե. Թաղայշվիլին: 1900 թ.⁴³⁵ լույս տեսած դրա ռուսերեն թարգմանությունում Ալեքսանդր Մակեդոնացուն առնչվող հաղորդման մեջ ի թիվս այլ երկրների հիշատակված Сомхития երկրանունը Ե. Թաղայշվիլին ծանոթագրել է. «Сомхития иначе Армения...»⁴³⁶, իսկ Տրդատ Գ

⁴³³ Ս. Երեմյան, նշվ. աշխ., էջ 83: Իսկ Պ. Մուրադյանը գրել է, որ «մի դեպքում վրաց տեքստի «Սոմխիթ»-ը համապատասխանում է ստորին Քարթլիի մի մասին, մյուս դեպքում՝ Հայաստանին առհասարակ, իր հյուսիսային մասով» (Վրաց ժամանակագրություն (1207-1318), թարգմանությունը հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պ. Մուրադյանի, Երևան, 1971, էջ 31): Սակայն ինչպես նշվեց, Մեծ Հայքի Գուգարք նահանգի տարածքում «Ստորին Քարթլի» հասկացություն գոյություն չի ունեցել:

⁴³⁴ Х. Торосян, Топоним «Сомхити» в грузинских первоисточниках, Ереван, 2003, с. 122-124; Խ. Թորոսյան, նշվ. աշխ., էջ 123, 149, 152, 160, 161, տես նաև՝ Ա. Մելքոնյան, նշվ. աշխ., էջ 38, Պ. Չոբանյան, նշվ. աշխ., էջ 132: Հմմտ. Հ. Դավթյան, Կրկին հյուսիսային Գուգարքի տեղանունների շուրջ, ՊԲՀ, 2012, № 3, էջ 120-122:

⁴³⁵ Обращение Грузии. Перевод с древнегрузинского Е. С. Такайшвили, – տես Ե. С. Такайшвили, Источники грузинских летописей. Три хроники. – СМОМПК, вып. XXVIII, Т., 1900, с. 1-216.

⁴³⁶ Там же, с. 8, прим. I.

Մեծի ժամանակների առումով ուղղակի նշել է Армения-Հայաստան⁴³⁷: 1989 և 2008 թթ. այդ երկը վերահրատարակվել է Ռ. Կ. Կիկնաձեի խմբագրությամբ և երկու դեպքում էլ տեքստի թարգմանությունում նշվել է Армения-Հայաստան երկրանունը: Բայց թարգմանության 13-րդ ծանոթագրությունում խմբագիրը գրել է. «Տվյալ հուշարձանում վկայված «Սոմխիթի» տեղանունը հավասարազոր է «Սոմխեթի» - Հայաստան: Սակայն համեմատաբար ավելի ուշ սկզբնաղբյուրներում «Սոմխիթի» առավելապես նշանակում է Հայաստանին սահմանակից Վրաստանի նահանգ»⁴³⁸: Այնինչ Ե. Թադաջվիլու հրատարակությունում խոսքը միայն Հայաստանին տրված «Սոմխիթ»-ի անվան մասին է: Վրաց պատմագրությունում «Սոմխիթ»-ին «Սոմխեթ»-ից հասկացությունից տարանջատումով, և նույնիսկ «Ստորին Քարթլի» անվանման հորինումով «Սոմխիթի»-ն Վրաստանի նահանգ համարելը, սկզբնաղբյուրներով չհիմնավորված և քաղաքականացված նենգափոխություն է:

Այսպիսով, Հայաստանին տրված «Սոմխիթ» վրացական անվանումը (և նրա «Սոմխեթ» անվանաձևը) ծագումնաբանորեն էթնիկական հիմք չունի և իր ընդգրկմամբ սկզբնաղբյուրներում կիրառվել է Վիրքից հարավ գտնվող տարածքի կապակցությամբ: Այս տեսակետից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Մ. Բրոսեի այն կարծիքին, ըստ որի՝ Սոմխիթ/Սոմխեթ անվանումը ծագել է հայերին վրացիների կողմից տված «սոմեխի» անվան՝ «սամխեթի» (სამხეთი), «հարավ» նշանակությամբ բառից: Ուստի, Սոմխիթ/Սոմխեթ անվանաձևերի կիրառման երկու դեպքում էլ խոսքը Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմանը կազմող Կուր գետով անցնող՝ Վիրքի սահմանից հարավ գտնվող Հայաստանի մասին է թե՛ ամբողջ երկրի և թե՛, մասնավորապես, նրա հյուսիսային նահանգի՝ Գուգարքի արևելյան գավառների առումով:

⁴³⁷ Там же, с. 18.

⁴³⁸ <http://lib.rus.ec/b/132065/read#t1>:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. Հայաստանի մասին հնագույն վկայությունների լուսաբանումը

XIX դարի ֆրանսիական արևելագիտության մեջ զգալի տեղ է տրվել Հայաստանի հին և միջին դարերի պատմության ուսումնասիրությանը, ինչը կարևոր նշանակություն ունեցավ հայագիտության զարգացման գործում: Այդ ասպարեզում մեծ է Մ. Բրոսեի ներդրումը, որն օգտագործելով եգիպտական, ասուրական և քաղդեական (իմա՝ բաբելոնյան) հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների հաղորդումները, դրանք համադրել է իր կողմից թարգմանված մի շարք հայկական միջմադարյան սկզբնաղբյուրների՝ հին ժամանակների պատմությանը վերաբերող որոշ տեղեկությունների հետ: Մ. Բրոսեի ուսումնասիրության ոլորտում են եղել հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների վերծանման հիման վրա Առաջավոր Ասիայի երկրների պատմության հարցերի հետազոտությանը նվիրված Ժ.-Ֆր. Շամպոլիոնի (1790-1832 թթ.), Ժ. Օպերտի (1825-1905 թթ.), Ֆր. Լենորմանի (1837-1883 թթ.) և այլոց աշխատությունները, որոնցում արծարծվել են նաև հին Հայաստանի պատմության որոշ հարցեր:

Մ. Բրոսեն չէր բացառում, որ այդ աշխատություններն արտացոլելով հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների վերծանման սկզբնական փուլի արդյունքները կարող էին հաճախ անհասկանալի բացեր ունենալ: Միևնույն ժամանակ, գիտնականը կարևորում էր թե՛ պատմական որոշ անունները և թե՛ «բիբլիա-

կան պատմութեան» և հոյն պատմիչների հիշատակած փաստերի համադրութիւնը⁴³⁹:

Մ. Բրոսեն գրել է. «Մ.թ.ա. XVII դարում՝ XVIII հարստութեան ժամանակաշրջանում, եգիպտական հիերոգլիֆ արձանագրութիւններում Սիջագետքի հյուսիսում հիշատակվող երկիրը կոչվում էր Ռեմենե (Remene), իսկ ազգը, որն ապրում էր այնտեղ՝ Ռեմենեն (Remenen)»: Ըստ Մ. Բրոսեի՝ այն պետք է Արմենիայի և արմենների եգիպտական անվանաձևը լիներ (nom égyptien de l'Arménie et des Arméniens), քանի որ *Արմենիա* (Armenia) դասական անվանաձևի ծագումը շատ վաղ ժամանակներից է գալիս⁴⁴⁰:

Կառնակի տաճարի պատին փորագրված Թութմոս III-ի⁴⁴¹ արքայական տարեգրության տեղեկության Մ. Բրոսեի մեկնաբանությունից հետևում է, որ եգիպտոսի փարավոնի գործերը հասել էին մինչև Բաբելոն և Արմենիա: Իսկ նրա թագավորության վերջին տարիներին՝ Սիջագետքից հյուսիս գտնվող լեռներ կատարած արշավանքի ժամանակ արմենները (les Remenen ou Arméniens) հիշատակված են որպես հարկ վճարողներ⁴⁴²:

Համաձայն Հ. Բրուզշի՝ պատմական արձանագրութիւնների ուսումնասիրութիւնը ցույց է տալիս, որ «այս աշխարհի (ե-

⁴³⁹ Մ. Բրոսեն ուշադրութիւն է հրավիրել մինչև իր ժամանակներն անծանոթ մնացած տեղանունների և որոշ թագավորների անունների վրա, նշելով, որ դրանք կարող են ապագա բացահայտումների հիմք դառնալ (M. Brosset, Sur l'histoire ancienne de l'Arménie, d'après les textes hiéroglyphiques et cunéiformes. - Bulletin de l'Académie Impériale des sciences de St-Petersbourg. 1871, t. seizième, p. 333):

⁴⁴⁰ Ibid., p. 334.

⁴⁴¹ Եգիպտական XVIII հարստութեան 6-րդ փարավոնն էր Թութմոս III-ը (մ.թ.ա. XVI դ. վերջ - XV դ. կեսեր) (История Древнего востока, ч. II, с. 238):

⁴⁴² M. Brosset, op. cit., p. 335. Fr. Lenormant, Manuel de l'histoire ancienne de l'Orient, Paris, 1869, t. I, pp. 374, 379, 385. Fr. Tournabize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1900, pp. 15, 16. H. Brugsch, Histoire d'Égypte dès les premiers temps de son existence jusqu'à nos jours, Égypte sous les rois indigènes de Ména jusqu'à Ramses II, I^{ère} partie, Leipzig, 1859, p. 104. P. Gaffarel, Histoire ancienne des peuples de l'Orient jusqu'au premier siècle avant notre ère, Paris, 1876, p. 39. Henry et Charles de Riansey, Histoire du monde ou histoire universelle depuis Adam jusqu'au pontificat de Pie IX, t. 2, Paris, 1866, p. 99.

գիպտոսի թագավորություն - Ա.Դ.) հյուսիսը սահմանակից էր Հայաստանի լեռներին, որոնք անվանված են *երկնքի չորս հեռաբաններ*» (L'étude des inscriptions historiques nous a appris aujourd'hui, que le nord de ce monde était borné par les montagnes de l'Arménie, appelées *les quatre supports du ciel*)⁴⁴³:

Ըստ Հ. Ռիանսեյի՝ եգիպտական XIX հարստության (մ.թ.ա. 1292 - 1186 թթ.) Սեթի I փարավոնը (մ.թ.ա. 1290-1279 թթ.) իրեն հարկատու երկրների թվում հիշատակել է նաև հայերին՝ «Arménien ou Remenen», «որոնք իրենց անտառներում ծառեր էին կտրում, որպեսզի իր համար ճանապարհ բացեն»⁴⁴⁴: Հ. Ռիանսեյը նշում է, որ արմենների մեծ առաջնորդները («grands chefs des Remenen»)՝ եգիպտոսի տիրակալին խոնարհվելով և նրա խիզախությունը փառաբանելով, ասում էին. «Դու հայտնվում ես ինչպես քո հայր *Արեզակը* և վերակենդանանում ենք քո հայացքից» (Tu apparais comme ton père le soleil et on est vivifié par tes regards): Հետազոտողը նշել է, որ «Հայաստանն առաջիններից էր, որը թոթափեց եգիպտական լուծը» (l'Arménie fut une des premières à secouer le joug égyptien)⁴⁴⁵:

Ֆր. Լենորմանը հիշատակել է Հայաստանը («Armenen ou Remenen») Ռամզես II-ի (մ.թ.ա. 1279-1212 թթ.) դեմ ծագած ապստամբության մասնակից երկրների շարքում, նշելով, որ Նեղոսի ափերի հուշարձանները վկայում են Ռամզես II-ի հաղթանակների, ինչպես նաև նրա դեմ դուրս եկած Վերին Նեղոսի ազգաբնակչության ապստամբությունների մասին: Ապստամբներին էին միացել Հայաստանը (Arménie), Ասորեստանը, Միջագետքը և այլ երկրներ⁴⁴⁶:

XIX դ. 80-ական թթ. վերջից Ռեմենեի՝ Արմենիայի հետ նույ-

⁴⁴³ H. Brugsch, op. cit., p. 4.

⁴⁴⁴ Հմմտ. Fr. Lenormant, op. cit., t. I, p. 399.

⁴⁴⁵ H. de Riancey, Le Monde Ancien: Histoire du monde, d'Adam à Notre-Seigneur Jésus-Christ, t. 2. Paris, 1865, p. 302.

⁴⁴⁶ Fr. Lenormant, op. cit., t. I, p. 409.

նացման կարծիքի կողքին մեկ այլ կարծիք առաջարկվեց՝ «Լիբանուն» (Լիբանանում) դրա գտնված լինելու մասին, որի համար հիմնական փաստարկ է ծառայեցվել մայրիների հիշատակությունը՝ եգիպտական սկզբնաղբյուրում: Պ. Գիեյսը խնդրո առարկա արծանագրության վերծանման տարբերակ է նշել. «Ռեմենենների երկրի մեծ առաջնորդներն խոնարհվելով երկու շրջանների տիրոջը, գովաբանելով նրա քաջությունն ասում են. «Դու հայտնվում ես քո հայր Ռաի նման և կյանք ենք ստանում քեզ տեսնելով»⁴⁴⁷: Հետագոտողը ծառերի հատմանը վերաբերող հատվածում ընթերցում է. «Ռեմենենների երկրի ծառերը հատեցին և տարան նավով Նեղոսի գետաբերանը, ինչպես նաև՝ Ամոնի մեծ առաջաստների համար, որոնք կառուցեցին խաղաղ և հզոր կյանքում, ինչպես Ռան է, ամեն օր»⁴⁴⁸: Ռեմենենների երկրի առնչությամբ Պ. Գիեյսը նշել է, որ «ծառերի՝ հավանաբար մայրիների շահագործումը, կարող էր միայն շահավետ լինել հարևան երկրի ափամերձ մի մասում: Ըստ Պ. Գիեյսի՝ *Լիբանի* (Լիբանան) բնակչության՝ «ռեմենենների» գլխավոր քաղաքը գտնվում էր ճահճային վայրերից մեկում՝ ափամերձ կողմում, կամ Սերբոնիս լճի ծովախորշերից մեկի նման վայրում, որը հիմա այլևս գոյություն չունի Սիրիայի ափամերձ մասում»⁴⁴⁹:

⁴⁴⁷ P. Guieysse, *Inscription historique de Sêti I^{er}*, Recueil de travaux relatifs à la philologie et à l'archéologie égyptiennes et assyriennes, publié sous la direction de G. Maspero, t. 11, Paris, 1889, p. 56.

⁴⁴⁸ Ibid.

⁴⁴⁹ P. Guieysse, op. cit., p. 56, com. 5. Մայրի ծառերի եգիպտոս ներկրման հեռավոր լեռնային երկրի մասին տեղեկության առումով հետաքրքիր է դրա համադրությունը աքքադական սկզբնաղբյուրներում Սարգոն Աքքադացու (մ.թ.ա. 2316-2261 թթ.) և նրա թոռան՝ Նարամ-Սուենի (մ.թ.ա. 2236-2200 թթ.) արշավանքների վերաբերյալ պատմաաշխարհագրական բնույթի հաղորդումներին, որոնցում հիշատակված Արմանում (Արմանի) երկրանվանը առնչվող հարցերի քննությունը Ա. Գ. Կիֆիշինին բերել է այն եզրահանգման, որ «ավելի շուտ մեր առջև Արմենիայի (Հայաստան) հնագույն հիշատակությունն է (մ.թ.ա. III հազարամյակ), որը մ.թ.ա. I հազարամյակից հիշատակվում է որպես Արմե երկիր» (А. Кишшин, Географические воззрения древних шумеров при патеси Гудеа (2162-2137 гг. до н.э.). -- «Палестинский сборник», вып. 13 (76), 1965, с. 66, հմմտ. Вяч. Вс. Иванов, Выделение разных хронологических слоев в

Համաձայն Մ. Շաբայի՝ մայրին հին ժամանակներում իր հսկայական բարձրության պատճառով համարվում էր հրաշագործ հատկություններով օժտված ծառ: Եգիպտոսում այն օգտագործվում էր տաճարաշինության, պալատաշինության, պաշտամունքային արձաններ պատրաստելիս, դրանց վերագրելով մայրիից եկող որոշ գերբնական ուժ⁴⁵⁰:

«Թութմոս III. Նոր կենսագրություն» աշխատության խմբագրեր՝ Է. Բլայնը և Դ. Օ'Քոննորը նույնպես անդրադարձել են Ռեմենեի տեղադրությանը⁴⁵¹: Հետազոտողները փաստում են, որ Թութմոս III-ի կոթողային արձանագրությունը տեղեկություններ է հաղորդում ոչ միայն նրա դեպի Ասորիքի և Պաղեստինի տարածքները կատարած արշավանքների, այլև բուն Եգիպտոսում դրանց արդյունքների մասին⁴⁵²: Նրանք գրելով, որ ասորա-պաղեստինյան տարածաշրջանը բաժանված էր երեք՝ «Դջահի, Ռեմենեն և Ռետենու» անվանվող շրջանների, նշել են. «Այս երեքը աղոտ նշանակություն ունեն և չեն կարող դիտարկվել ճշգրիտ բնութագրվող սահմաններով... Դջահը կարող է մոտավորապես նույնացվել Պաղեստինի հետ... Ռետենու անվանումը տրվել է մի շրջանի, որն ակնհայտորեն ձգվում էր Ասորիքից մինչև Պաղես-

древнеармянском и проблема первоначальной структуры гимна Вахагн, - ՊԲՀ, 1983, № 4, с. 32-33):

⁴⁵⁰ Steu V. Loret. Etude sur quelques arbres Egyptiens, Recueil de travaux relatifs à la philologie et à l'archéologie égyptiennes et assyriennes, t. II, seconde année, Paris, 1880, p. 62. Հատկանշական է եգիպտական մի արձանագրության ժ. Դոռակի վերծանությունը, որը նա համարել է իույն պատմիչ Դիոդորոս Սիկիլացու (Diodorus Siculus, with in English translation by C. H. Oldfather, books I and II, London, 1960, I, 57.5) այն տեղեկության հետ, համաձայն որի Սեոսոսիս թագավորը կառուցել էր մայրու փայտից մի նավ՝ 280 կանգուն երկարությամբ, որի դրսի կողմը ոսկեգօծ էր, իսկ ներսը արծաթապատ, և որը նվիրաբերված էր Թեբեի գլխավոր պաշտամունքին (J. de Horrack, Notice sur le nom égyptien du cèdre, Revue archéologique ou recueil de documents et de mémoires, Paris, 1864, vol. IX, pp. 44-47):

⁴⁵¹ Thutmose III: A New Biography, Eric H. Cline, David O'Connor, editors, Michigan, 2005.

⁴⁵² Ibid., p. 371-372. Կառնակի արձանագրությունում նշված «տուրքերի» մեծագույն մասի ցուցակները վերաբերում են նվաճված տարածքներից (Ասորիք), Պաղեստին և Նուբիա) կանոնավոր մուտքագրումներին:

տին»։ Իսկ Ռեմենեն հետազոտողները նշել են որպես Լիբանանի մաս, գրելով. «Lebanon /Remenen and Palestine/»⁴⁵³։ Կարելի է տեսնել, որ է. Բլայնի և Դ. Օ'Քոննորի կարծիքը Remene-ի տեղադրության կապակցությամբ, փաստորեն, համահունչ է Պ. Գիեյսի դեռևս 1889 թ. հայտնած վերոհիշյալ կարծիքին⁴⁵⁴։

Այսպիսով, XIX դ. մինչև 70-ական թվականների կեսերը ֆրանսիական արևելագիտության և հայագիտության մեջ գերակայում էր Ռեմենեն Չայաստանի հետ նույնացման կարծիքը, այնուհետև՝ Լիբանանում տեղադրելու ենթադրությունը։ Կարելի է փաստել, որ Ռեմենեն՝ Արմենիա-Չայաստանի հետ նույնացումը հայեցակարգային նշանակություն է ունեցել ֆրանսիացի հայագետների համար, ինչը պահպանում է իր կարևորությունը խնդրի հետագա ուսումնասիրության ասպարեզում։

Ֆ. Շամպոլիոնը Եգիպտոսի առևտրական ուղիները նկարագրելիս կարևորել է «մի շատ հայտնի ճանապարհ, որը հենց Մեմֆիսից տանում էր Փյունիկիա, որտեղից մնացած ճանապարհները ձգվում էին դեպի Չայաստան և Կովկաս, ինչպես նաև Պալմիրայով դեպի Բաբելոն»⁴⁵⁵։

Ժ. Օպերտը նշել է. «Նիմվեի արձանագրություններում Urarta-ն բառացի արտահայտում է Արարատ անունը, որը բիբլիական տեքստերում նշանակում է Չայաստան» («Urarta, ce qui exprime à la lettre le nom Ararat qui signifie l'Arménie dans les textes bibliques») ⁴⁵⁶։ Է. Կավենյակը նշել է. «*Ուրարտուի հայկական թագավորություն*» (le royaume arménien d'Ourartou (Ararat)) ⁴⁵⁷։

Ս. Բրոսեն հետևել է Ֆր. Լենորմանի ընդունած ժամանակագրական կարգին, ըստ որի մ.թ.ա. 930 թ. հուլիսի 2-ին գահ բարձ-

⁴⁵³ Ibid., pp. 373-375.

⁴⁵⁴ P. Guieysse, op. cit., p. 56, com. 5.

⁴⁵⁵ M. Champollion-Figeac, Egypte ancienne, L'Univers. Histoire et description de tous les peuples, Paris, 1839, p. 206.

⁴⁵⁶ J. Oppert, Expédition scientifique en Mésopotamie, Paris, 1863, liv. I, ch. I, com. 2, p. 18. Դմնտ. A. H. Layard. Discoveries in the ruins of Ninveh and Babylon, London, 1853, p. 403.

⁴⁵⁷ E. Cavaignac, Histoire générale de l'antiquité, Paris, 1946, p. 155.

րացած Թիզլաթալասարը բազմաթիվ արշավանքներ է կատարել դեպի *Հայաստանի լեռներ* (dans les montagnes de l'Arménie)⁴⁵⁸։

Ըստ Ֆր. Տուրնեբիզի՝ ասուրական աղբյուրներում *Արմենիա* չի առնչվող վաղ հիշատակությունը վերաբերում է մ.թ.ա. 1300 թ. Սալմանասար I-ի ժամանակաշրջանին⁴⁵⁹, իսկ Թիզլաթալասար II-ի⁴⁶⁰ արշավանքների մասին վկայում են Էլասսար (Elassar)⁴⁶¹ պալատի սեպագիր արձանագրությունները, որոնց համաձայն՝ «նա նվաճել էր Նաիրին, որը հին Հայաստանի հարավային մի մասի ասուրական անվանումն էր (nom assyrien d'une partie de l'ancienne Arménie méridionale) և գտնվում էր Մասիուսի⁴⁶² երկու լանջերի՝ Վերին Տիգրիսի և Եփրատի միջին հոսանքի մասում»⁴⁶³։

Ըստ Ժ. Օպերտի՝ Սարդանապալ III-ի Կալախի կամ Նիմրուդի (Calakh ou Nimroud)⁴⁶⁴ մի մեծ արձանագրությունում ասվում է, որ մ.թ.ա. 920 թ., լուր ստանալով, որ «հայ Ամիկան» (Amika, l'Arménien)⁴⁶⁵ հրաժարվել էր իրեն հարկ վճարել, Սարդանապալը

⁴⁵⁸ Fr. Lenormant, Manuel de l'histoire ancienne..., t. II, p. 66, 67.

⁴⁵⁹ Fr. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, I, p. 16. Արդի ընդունված ժամանակագրությամբ Սալմանասար I-ի գահակալության տարիներն են մոտավորապես մ.թ.ա. 1274-1245 թթ. (+/-10) (История Древнего Востока, т. II, с. 100):

⁴⁶⁰ Համաձայն ներկայիս ընդունված ժամանակագրության՝ Թիզլաթալասար II-ը գահակալել է մ.թ.ա. 967-935 թթ., (Ռ. Ղազարյան, Սերժանդը և Միջին Արևելքի երկրների պատմության հիմնահարցեր (Ք.ա. IV հազարամյակի վերջ - Ք.ա. I հազարամյակի վերջ), Երևան, 2011, էջ 53):

⁴⁶¹ Լարսա, Բիբլիական էլասսար՝ հարավային Բաբելոնիայում։

⁴⁶² Strabo, XI, 12, 3-4.

⁴⁶³ Fr. Tournebize, op. cit., p. 16, 17.

⁴⁶⁴ Նիմֆեից հարավ, Տիգրիսի ափին գտնվող արդի Նիմրուդ քաղաքի տեղում հնում հիմնված քաղաքը կոչվել է Կալիու (A. Kuhrt, The Ancient Near East, London and New York, vol. I, 1997, p. 362):

⁴⁶⁵ J. Oppert, op. cit., liv. III, ch. IV, p. 318. Ժ. Օպերտը Նիմրուդի այս արձանագրությունը վերծանելիս Ամիկային հիշատակել է «հայ Ամիկա» անվանաձևով, մինչդեռ Ղ. Լուկենբիլը իր վերծանած տեքստերում հայ էթնիկական անվան փոխարեն ընթերցել է «Ամեկա և Առաշտուա» «... Ameka and Arashtua had discontinued the tribute...» (Annals of the kings of Assyria, vol. I, London, 1902, p. 311, col. II, 50; D. Luckenbill, Ancient Records of Assyria and Babylonia, Chicago, 1926, p. 151).

արշավել էր Ջամուա⁴⁶⁶ երկրի Ամիկայի մայրաքաղաք՝ Ջամրի (Zamri)⁴⁶⁷:

Ֆր. Լենորմանը նշել է, որ մ.թ.ա. 877 թ. Սալմանասար IV-ը⁴⁶⁸ 27-րդ արշավանքի ժամանակ իրեն էր հպատակեցրել Հայաստանի տարբեր մասերը և թալանի ենթարկել Վանը⁴⁶⁹:

Հաջորդ հարյուրամյակում, ըստ Մ. Բրոսեի, մ.թ.ա. 741 թ. «հայ Սարդուրը (Arménien Sardur) Մատիելի⁴⁷⁰ (Matiel) հետ դեմ է դուրս գալիս «Թիգլաթպալասար IV-ին»: Կունուխի⁴⁷¹ քաղաքի շրջանում ասուրական թագավորը գրավեց շատ քաղաքներ և հիմնադրեց Հայաստանում Ասուրբազա քաղաքը»⁴⁷²: Այստեղ

⁴⁶⁶ Այն հիշատակվում է ասորեստանյան թագավոր Սարգոն II-ի՝ Վանի թագավորություն կատարած ներխուժման ժամանակ (մ. թ. ա. 714 թ.), երբ, ի թիվս հարևան երկրամասերի, նա գրավել էր Ջամուան (տե՛ս ԴԺՊ, հ. I, էջ 325): Ջամուան Փոքր Ջաբի վերին հոսանքից հյուսիս՝ դեպի Ուրմիա ընկած տարածքում էր (ABNIIY, 1951, № 2, с. 289, прим. 51):

⁴⁶⁷ J. Oppert, op. cit., liv. III, ch. IV, pp. 318, 319.

⁴⁶⁸ Ըստ ներկայումս ընդունված ժամանակագրության՝ Սալմանասար IV-ը գահակալել է (մ.թ.ա. 782–773 թթ.), իսկ մ.թ.ա. 877 թ. Աշուրնասիրպալ II-ի (մ.թ.ա. 883–859 թթ.) (A. Kuhrt, op. cit., t. II, p. 479) 6-րդ տարին էր:

⁴⁶⁹ Ֆր. Լենորմանն այս մասին գրում է. «Սալմանասար IV-ի 27-րդ արշավանքը դեպի Հայաստան մեծ պատերազմն էր, որն ավարտվեց այս երկրի տարբեր մասերի հպատակեցմամբ, որոնք դեռևս դիմադրում էին ասուրական միապետին: 31-րդ արշավանքի ժամանակ թագավորը նորից ուղարկում է իր զլխավոր զորահրամանատարին Հայաստան, ով թալանի է ենթարկում 50 քաղաք, այդ թվում Վանը» (Fr. Lenormant, Manuel de l'histoire ancienne..., t. II, p. 72): Դրանից հետևում է, որ «Սալմանասարին» (ին՝ա՝ Աշուրնասիրպալ) չէր հաջողվել Հայաստանն ամբողջությամբ հպատակեցնել, քանի որ տեղացիների կողմից կար դիմադրություն, որն էլ հավանաբար նրա 31-րդ արշավանքի պատճառը եղավ մ.թ.ա. 873 թ.: Ըստ Ֆր. Տուրնեբիզի՝ այս երկրամասերը երբեք ամբողջությամբ չեն ենթակայեցվել (Fr. Tournabize, op. cit., p. 17):

⁴⁷⁰ Բիբլ-Ազուսիի թագավորը՝ Դյուսիսային Ասորիքում (ԴԺՊ, հ. I, էջ 315):

⁴⁷¹ Ասուրական սեպագիր սկզբնաղբյուրների Կունուխ, Կունմուխուն համապատասխանում է անտիկ սկզբնաղբյուրների Կոմնագենեին (ABNIIY - ВДИ, 2(36), 1951, 42., с. 313, прим. 1).

⁴⁷² M. Brosset, op. cit., p. 338; J. Oppert, op. cit., liv. III, ch. IV, p. 337. Ս. Բացիեվի ընթերցմամբ՝ «Աշուրիքիշա» (տե՛ս ABNIIY, с. 313):

խոսքը Սարգուր II-ի (մ.թ.ա. 764-735 թթ.) մասին է⁴⁷³, որի ժամանակակիցն էր Թիգլաթպալասար III-ը (մ.թ.ա. 745-727 թթ.)⁴⁷⁴:

Համաձայն Ֆր. Լենորմանի՝ Ասորեստանի կործանումը բաբելոնացի արքայի և նրան միավորված «մար Արբակի» (հմա՝ Վարբակ - Ա.Դ.) կողմից, տեղի էր ունեցել մ. թ. ա. 789 թ. «Սարդանապակի» ժամանակ⁴⁷⁵: Մ. Բրոսեն հիշատակել է Ասսուրբանիպալին, ով հունական աղբյուրներում Սարդանապալ անունով է հիշատակվում: Նա նշել է, որ «Սարդանապալ պատերազմող»-ը (*Sardanapalle guerrier*) տարբերվում է այն մյուս նույնանուն արքայից, ում օրոք մ.թ.ա. 789 թ. կործանվեց Նինվեի կայսրությունը⁴⁷⁶: Նինվեի կործանման մասին տեղեկությունը, ինչպես և արքայական ցանկը, շատ ավելի վաղ է թվագրված, քան ընդունված է պատմագիտության մեջ, ըստ որի՝ Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն կործանվել էր մ.թ.ա. 612 թ. Բաբելոնի և Մարաստանի⁴⁷⁷ և Հայաստանի դաշնակից ուժերի կողմից, իսկ Ասորեստանը վերջնականապես ջախջախվեց մ.թ.ա. 605 թ.: Ֆր. Լենորմանի հիշատակած Արբակը (Վարբակ)՝ Մեդիայի (Մարաստանի) թագավոր Կիաքսարն է, իսկ Բաբելոնի թագավորը՝ Նաբոպալասարը (մ.թ.ա. 626-605 թթ.):

Մովսես Խորենացու երկում, Կիաքսարը հանդես է գալիս Վարբակես անունով, իսկ Ասորեստանի թագավորին Պատմահայրը Սարդանապալ անունով է հիշատակել: Ըստ Մովսես Խորենացու՝ Հայաստանում կառավարող Պարույրը («որդի Սկալորդույ») մասնակցել էր Ասորեստանի կործանմանը (մ.թ.ա.

⁴⁷³ Արևմուտքում Սարգուր II-ի ստեղծած դաշնությունը միացյալ ուժերով հարձակման անցավ Ասորեստանի դեմ, սակայն Արպադուր (Հյուսիսային Ասորիք) տեղի ունեցած ճակատամարտում (մ.թ.ա. 743 թ.)՝ Վանի թագավորության և նրա դաշնակիցների զորքերը ծանր պարտություն կրեցին (ՀԺՊ, հ. I, էջ 317):

⁴⁷⁴ A. Kuhrt, op. cit., t. II, p. 479, 557. Այդտեղ, որպես Էրեբունիի (Երևան) և Արգիշտիխիլիի հիմնադիր է համարվել Սարգուրի II-ը (*Ibid.*, p. 557), սակայն, ինչպես հայտնի է, իրականում դրանց հիմնադիրը Արգիշտի I-ն է:

⁴⁷⁵ Fr. Lenormant, op. cit., t. II, pp. 77-80.

⁴⁷⁶ M. Brosset, op. cit., p. 339.

⁴⁷⁷ История Древнего Востока, М., 1979, с. 166.

612 թ.)⁴⁷⁸: Ըստ Պատմահոր՝ «... զմերս ասեմ Պարոյր առ Սարդանապալլաւ, որ ոչ փոքր ինչ օգնականութիւն տուեալ գտանի Վարբակայ Սարի, բառնալով զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ»: Մարաց թագավոր Վարբակ-Կիաքսարը «զքաջն մեր նախարար յանգուցանէ զՊարոյր թագաւորութեան շուք և ձև նմա խոստանալով... Իսկ մեր առաջին ի Վարբակայ մարէ պսակեալ Պարոյր, որդի Սկայորդոյ»⁴⁷⁹:

Սեն-Մարտենը գրել է, որ համաձայն Մովսես Խորենացու, Պարոյր Սկայորդին Հայկի հաջորդներից 36-րդն էր, այսինքն՝ Հայկազուն էր⁴⁸⁰:

Պատմահայրը Սկայորդուն որպէս «մեր քաջ նախնի» հիշատակել է Ասորեստանից Հայաստան փախած թագավորասպան արքայորդիների կապակցությամբ⁴⁸¹: Մ. Բրոսեն նրան նշել է Հայոց թագավորների շարքում⁴⁸²: Մ. Բրոսեն անդրադարձել է նաև Նինվէի Սինաքերիբ (Սեննքերիմ) արքայի (մ.թ.ա. 704–681 թթ.) իր որդիների՝ Ադրամէլեքի և Սարասարի կողմից մ.թ.ա. 681 թ. Նեսրաք աստծո տաճարում սպանվելու մասին սկզբնաղբյուրների հիշատակությամբ⁴⁸³:

Մ. Բրոսեն Մովսես Խորենացուն, իրավացիորեն համարելով V դարի հեղինակ⁴⁸⁴, նշել է, որ հին Հայոց պատմության մասին մեր ունեցած սկզբնաղբյուրը Պատմահոր հաղորդած տեղեկու-

⁴⁷⁸ Տե՛ս Գ. Ա. Տիրացյանի գրախոսականը. Հ. Ժամկոչյան, «Հայաստանը նախնադարյան համայնական հասարակության և ստրկատիրության շրջանում», - Տեղեկագիր ՀԳ, 1962, № 4, էջ 91-92: ՀԺՊ, հ. I, էջ 433:

⁴⁷⁹ Մովսէս Խորենացի, էջ 64-65, 68:

⁴⁸⁰ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 283.

⁴⁸¹ Պատմահայրը գրել է, որ Սեննքերիմին (Սինաքերիբ) «սպանեալ որդւոց նորա Ադրամէլեքայ և Սանասարայ՝ եկին փախստական առ մեզ: Յորոց զմիմն յարևմտից աշխարհիս մերոյ, մերծ ի սահմանս նորին Ասորեստանի բնակեցուցանէ Սկայորդին մեր քաջ նախնին, այսինքն է զՍանասարն...» (Մովսէս Խորենացի, էջ 70):

⁴⁸² M. Brosset, op. cit., p. 333.

⁴⁸³ Թագաւորութեանց Դ., ԺԹ, 36–37: ՀԺՊ, հ. I, էջ 427: Թովմա Արժրունի, էջ 43-44, M. Brosset, op. cit., p. 338.

⁴⁸⁴ Deux historiens arméniens: Kiracos de Gantzac, Histoire d'Arménie, Oukhtanès d'Ourha..., p. 3, com. I.

թյուններն են: Ըստ գիտնականի՝ արձանագրություններում հանդիպող հայ՝ Ամիկա (Amika), Սարդուր (Sarda), Ուրզահա (Urzaha) անուններով թագավորները Պատմահոր երկուն չեն հիշատակված, մինչդեռ մի շարք ասուրա-քաղղեական թագավորների անուններ առկա են Թովմա Արծրունու աշխատությունում⁴⁸⁵, որոնք Մ. Լենորմանի կողմից նշված փաստերի հիմքում են⁴⁸⁶:

Մ. Բրոսեն նշել է, որ համաձայն Խորսաբադի (Նինվեից հյուսիս)՝ 20 կմ հեռավորության վրա՝ ներկայիս Իրաքի հյուսիսում) արձանագրության, «Սարգոնն արշավել է Յայաստան և իրեն ենթարկել Վանի տիրակալ Իրանզուին (Iranzou): Վերջինիս որդին էր Ազան, որի դեմ է ապստամբում հայ Ուրզահան (Urzaha): Ուլլուսունը (Ulloussoun)՝ Ազայի եղբայրն ու հետևորդը, իրեն է ենթարկում Ուրզահային, բայց Սարգոնը հաղթում է վերջինիս և Ասորեստանին միացնում Յայաստանի քաղաքները»⁴⁸⁷: Այստեղ խոսքը Սարգոն II-ի մ.թ.ա. 714 թ. Յայաստան կատարած ավերիչ ներխուժման մասին է:

Ֆր. Լենորմանի կարծիքով Ուրզահան կամ Ուրտսան (Urtsa) Յայաստանի թագավորն էր (Urtsa, roi d'Arménie)⁴⁸⁸, որի վասալներից էր Վանի Ուլլուսունը (Ulloussoun de Van)⁴⁸⁹: Սակայն Ազան, ինչպես նաև նրա եղբայր Ուլլուսուն, ոչ թե Վանի, այլ Ուրմիա լճից հարավ ընկած Մանայի թագավորներն էին, որոնց նշանակել էր Սարգոնը⁴⁹⁰: Ուրզահա կամ Ուրտսա անվանաձևերը միևնույն՝

⁴⁸⁵ Ասորեստանի թագավորների մասին Թովմա Արծրունու հաղորդումների (Թովմա Արծրունի, էջ 43), համադրությունը պատմագիտության տվյալների հետ ցույց է տալիս, որ խոսքը Թիգլաթպալասար III-ի (մ.թ.ա. 745–727 թթ.), Սալմանասար V-ի (մ.թ.ա. 726–722 թթ.) (История Древнего Востока, с. 155–156) և այլոց մասին է:

⁴⁸⁶ M. Brosset, op. cit., p. 338.

⁴⁸⁷ Ibid.

⁴⁸⁸ Դետաքքիի է Դովսեպոս Փլավիոսի հետևյալ հաղորդումը. «Յայաստանը (հաստատեց) Ուրտսը» (Դին հունական աղբյուրներ, Ա, էջ 56: Մ. Կրկյաշարյանը նշել է «Մի ձեռագրում Ուրտսի փոխարեն կարդում ենք Օսրոս...» (Նույն տեղում, էջ 102, ծան. 129):

⁴⁸⁹ Fr. Lenormant, op. cit., t. II, p. 367.

⁴⁹⁰ ԴԺՊ, հ. I, էջ 324–325:

Ռուսա անվան տարբերակներն են և, ինչպես նշել է Ֆր. Լենորմանի՝ եղբոր մահից հետո գահակալած Ռւլլուսունը «...հաշտվում է Ռուսայի հետ և նրան տալիս քսաներկու ամրոցներ իրենց կայազորներով»⁴⁹¹:

Ֆր. Լենորմանը Ռուսային նույնացրել է Պարույրի որդի Յրաչային⁴⁹²: Անհրաժեշտ է նշել, որ սեպագիր արձանագրությունների տեղեկությունների հիման վրա Լենորմանի ներկայացրած իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության շրջանակներում խոսքը կարող է լինել Ռուսա I-ի (մ.թ.ա. 735-713 թթ.) մասին: Իսկ քանի որ Պարույր Սկայորդու մասին Մովսես Խորենացու վերոհիշյալ հաղորդումը առնչվում է Ասորեստանի կործանման ժամանակաշրջանին, պետք է ենթադրել, որ Ֆր. Լենորմանը միահյուսել է Ռուսա I-ի և Ռուսա III-ի (մ.թ.ա. 629-601 թթ.) կերպարները:

Հատկանշական է, որ Մ. Բրոսեի հիշատակած XIX դ. վերոհիշյալ արևելագետներն ասուրական արձանագրությունները վերծանելիս Վանի թագավորության արքաներին հիշատակելով տարբեր անուններով, միևնույն ժամանակ, նրանց նշել են հայկական էթնիկ բնութագրմամբ (Amika l'Arménien, Arménien Sardur, Ursa⁴⁹³, roi d'Arménie): Ֆր. Տուրնեբիզը նույնպես նրանց հիշատակելով որպես Հայոց արքաներ, միևնույն ժամանակ որպես երկրանուն գործածել է «Ուրարտի» (Արարատ) [Ourarti (Ararat)]⁴⁹⁴: անվանաձևը⁴⁹⁵:

⁴⁹¹ Fr. Lenormant, op. cit., t. II, p. 91. Ռուսա I-ը Ռւլլուսունի հետ զաղտնի կապ էր հաստատել ընդդեմ Ասորեստանի, սակայն Սարգոն II-ը պարտության էր մատնել Մանայի թագավորին: Մ.թ.ա. 715 թ. Ռուսան գրավել էր Մանայի 22 ամրոց, իսկ շուտով Սարգոնը կրկին հարձակվում և գրավում է այդ երկիրը (ՅժՊ, հ. I, էջ 325):

⁴⁹² Fr. Lenormant, op. cit., t., p. 367.

⁴⁹³ Յմնտ. J. Oppert, op. cit., liv. III, ch. V, p. 354.

⁴⁹⁴ Fr. Tournabize, op. cit., p. 17. *Ուրարտի* կամ *Արարատ* (Ourarti ou Ararat) անվանաձևը հիշատակվում է Ժ.-Ա. Գառնիբասի «*Հայաստանը և հայերը*» աշխատությունում: Նա նշել է. «...Մ.թ.ա. 1130 թ.՝ ասուրական առաջին դինաստիայի օրոք, երբ ասորեստանցիներն առաջին անգամ նվաճեցին Նախ-

Անգլիացի հետազոտող Յ. Ռաուլինսոնը (1810-1895 թթ.) *Արամա* թագավորի մասին հիշատակություն պարունակող մի ասուրական արձանագրությունում *Արարատ* անվան ընթերցումը նույնացրել է *Արմենիային* («I may here notice, once for all, that there is no doubt whatever about the reading of Ararat, nor its identity with Armenia»)⁴⁹⁶:

Հատկանշական է, որ ասորեստանյան զորքերի հյուսիս կատարած արշավանքները նկարագրող սեպագիր արձանագրություններում հիշատակված որոշ տեղանուններ ժ. Օպերտը, Յ. Ռաուլինսոնը, Յ. Լեյարդը համեմատել են Աստվածաշնչում և Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում եղած համապատասխան տեղեկությունների հետ: Օրինակ՝ մի արձանագրությունում «*Մինի*» մահանգի կապակցությամբ, Յ. Ռաուլինսոնը նշել է, որ այն հիշատակված է մաև Խորսաբադի և Վանի հայտնի արձանագրություններում և համապատասխանում է Երեմիայի մարգարեությունում հիշատակված «զազգս, կոչեցէք ի վերայ դուրա զթագաւորութիւնս Արարատայ, Մինւոյ, եւ Ասքանազայ...»⁴⁹⁷: Այս կապակցությամբ Յ. Ռաուլինսոնը հիշատակել է Արժեշը, երբ «Արարատի թագավորն Արաման» էր, ում նշել է Հայկից սերող սերունդների շարքում⁴⁹⁸: Այս փաստի հիմքում Մովսես Խորենացու հաղորդումն է⁴⁹⁹, որը հետազոտողը շաղկապել է մ.թ.ա. IX դ. ա-

րի երկիրը՝ Տիգրիսի և Եփրատի ակունքների շրջանը, «Ուրարտի հայկական ցեղերը» (les tribus arméniens de l'Ourarti) բավականին հզորացել էին կամ միավորվել դաշնություններում» (J. - A. Gattegny, L'Arménie et les Arméniens, Paris, 1882, pp. 14.15).

⁴⁹⁵ АВНУ, 29, с. 298-299.

⁴⁹⁶ H. C. Rawlinson. A Commentary on the Cuneiform Inscriptions of Babylonia and Assyria, London, 1850, p. 40.

⁴⁹⁷ Երեմիա, ԾԱ, 27:

⁴⁹⁸ H. C. Rawlinson. op. cit., p. 46.

⁴⁹⁹ Մովսես Խորենացի, էջ 19:

ռաջին կեսին ապրած Արամե կամ Արամու Արժիշեցու մասին սեպագիր արձանագրություններից հայտնի տեղեկության հետ⁵⁰⁰:

Ասորեստանյան գործի մի արշավանքը նկարագրող արձանագրության թարգմանությունում Յ. Ռաուլինսոնը անդրադարձել է ասորեստանցիների՝ «դեպի *Արմենիա*» կատարած ներխուժմանը և Artseni գետանունը նույնացնելով՝ Ἀρσένιας (*Արածանի*), նույն տեղում, որպես երկրանուն հիշատակվող Արարատը համադրել է *Մեծ Հայքի* (Great Armenia) հետ, իսկ թագավորին հիշատակել է Սարդուրի անունով [«Asiduri (Sarduri - Ա.Դ.) of Armenia»⁵⁰¹]:

Վանում և դրա շրջակայքում հայտնաբերված մի շարք արձանագրությունների կապակցությամբ Յ. Ռաուլինսոնը նշել է. «Այս արձանագրությունները ես կոչում եմ հայկական: Դրանք գրված են նույն նշաններով, որոնք օգտագործվում էին Ասորեստանում, սակայն օգտագործված են այլ լեզվով. մի լեզու, իրոք, որը, թեպետ ասուրերենից բազում բառեր է ներմուծել, սակայն, հավատացած եմ, որ պատկանում է որոշակիորեն այլ [լեզվա]ընտանիքի...»⁵⁰², որպիսին հնդեվրոպականն է: Այնուհետև Յ. Ռաուլինսոնը հիշատակել է բիայնական սեպագիր արձանագրություններից քաղված վեց անձերի անունները՝ *Իսբուին* (Իշպուինի), *Մանուա* (Մինուա), *Արիմենա* (Էրիմենա) և այլն, որոնց նա համա-

⁵⁰⁰ Այս կապակցությամբ Յ. Ռաուլինսոնը նշել է. «Ես հազիվ թե առաջարկեմ որևէ պատմական հետևություն անվան այսպիսի համընկնումից» (H. C. Rawlinson, op. cit., p. 46, com. 1):

⁵⁰¹ Ibid., p. 44.

⁵⁰² Նա այդպիսին թյուրիմացաբար համարել է «սկյութականը» (Ibid., p. 75). Հետազոտողն այստեղ «սկյութ» ցեղանվամբ «[լեզվա]ընտանիքի» հիշատակությամբ, փաստորեն, նկատի է ունեցել հնդեվրոպական լեզվաընտանիքի մի ճյուղը, քանզի սկյութները իրանական ցեղ էին (Р. Фраш, укр. соч., с. 27): Հ. Հյուբշմանը հնդեվրոպական լեզուների ոլորտում հայերեն լեզվի դիրքին նվիրված իր հայտնի աշխատությունում (1875 թ.) ցույց է տվել, որ հայերենը «հնդգերմանական»՝ հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ է (Հ. Հյուբշմանի տեսակետի մանրամասն անդրադարձը տես Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 86-90):

րել է «հայկական ճյուղին» պատկանող և, որ այդ ընտանիքը լայն դիրքեր ուներ *Արմենիա-Յայաստանում*⁵⁰³:

Ֆ. Սոլսին անդրադարձել է Յայաստանի հիշատակությանն «Արմինա» (Armina) ծնով⁵⁰⁴, որն առկա է Բեհիսթունի սեպագիր ե-ռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և բաբելոնյան՝ ուշ աքքադերենով) արձանագրությունում (Armina/Arminiya=Uraštu)⁵⁰⁵: Մ. Բրոսեն նույնպես անդրադարձել է Յայաստանի հիշատակությանը Բեհիսթունի արձանագրությունում⁵⁰⁶:

Այսպիսով, XIX դարի եվրոպացի և, մասնավորապես, ֆրանսիացի արևելագետների և հայագետների աշխատություններում՝ վերծանված սեպագիր արձանագրությունների հիման վրա Յայաստան երկրանվան և հայ էթնիկ անվան կապակցությամբ արված մեկնությունները կարևոր ներդրում էին հնագույն ժամանակների և, հատկապես, Վանի թագավորության ժամանակաշրջանի Յայաստանի և Յայոց պետականության պատմության ուսումնասիրության գործում:

2. Մովսես Խորենացու «Պատմութիւն Յայոց»-ի նշանակությունը Վանի սեպագիր արձանագրությունների հայտնաբերման գործում

Յայաստանի հին դարերի պատմությանն անդրադառնալիս՝ Մովսես Խորենացու հաղորդած տվյալների հետ մեկտեղ ֆրանսիացի հետազոտողները, ինչպես նշվեց, օգտագործում էին նաև սեպագիր աղբյուրների տեղեկությունները:

⁵⁰³ H. C. Rawlinson, op. cit., p. 75.

⁵⁰⁴ F. de Saulcy. Recherches analytiques sur les inscriptions cunéiformes du système Mé-dique. - Journal Asiatique, Août-Septembre, t. XIV, 1849, p. 97.

⁵⁰⁵ P. Lecoq. Les inscriptions de la Perse achéménide, Gallimard, 1997, pp. 139, 246.

⁵⁰⁶ M. Brosset, op. cit., p. 339.

Սեն-Մարտենը դեռևս XIX դ. 20-ական թթ. նախածեռնել էր Հայաստանում սեպագիր արձանագրությունների հայտնաբերման գործը՝ հիմնվելով Մովսես Խորենացու երկի՝ Վան քաղաքի շինարարությանը նվիրված շարադրանքում վիմագիր արձանագրությունների մասին տեղեկություններին⁵⁰⁷:

Մովսես Խորենացու պահպանած առասպելում հիշատակված Շամիրամին և նրան վերագրված Վան քաղաքի շինարարությանը, ջրանցքի կառուցմանը և այլ գործերին⁵⁰⁸ ֆրանսիացի հայագետներից և արևելագետներից հատկապես անդրադարձել են Ս. Բրոսեն⁵⁰⁹, Մ. Լենորմանը⁵¹⁰, Ժ. Օպերտը⁵¹¹:

Գ. Խ. Սարգսյանը, ուսումնասիրելով Արայի և Շամիրամի առասպելում այլաբանորեն ներկայացված պատմական տեղեկությունները, գրել է, որ Ասորեստանի առասպելական Շամիրամ թագուհու պատմական նախակերպարն է ասորեստանյան թագուհի Շամմուրամաթը (մ.թ.ա. 812-803 թթ.): Շամիրամ-Սեմիրամիդայի մասին «հին աշխարհում բազմաթիվ առասպելներ են գոյություն ունեցել, որոնց մի մասը մեզ է հասել հույն հեղինակների՝ Քթեսիասի, Դիոդորոսի և այլոց երկերի միջոցով: Դրանք շոշափելիորեն ազդել են Մովսես Խորենացու՝ Շամիրամի մասին համապատասխան շարադրանքի վրա: Սակայն Խորենացին պահպանել է նաև բուն Հայաստանում նրա մասին ձևավորված հայկական տարբեր գրույցներ՝ նրա գործունեությունը կապելով

⁵⁰⁷ Մովսես Խորենացի, էջ 50:

⁵⁰⁸ «Եւ անցեալ ընդ բազումս ի տեղեաց՝ գայ հասանէ յարեւելից կողմանէ յեզր ծովակին աղւոյ... Եւ հրամայէ նախ զամբարտակ գետոյն ապառաժիւք և մեծանէծ վիճօք շինել... [հայտնի է, որ Հայոց Ձորից մինչև Վան քաղաքը ձգվող ջրանցքը կառուցել է Սինուա արքան (մ.թ.ա. 810-786 թթ.)] ընդ բազում ասպարէզս անցուցեալ զամբարտակն՝ հասուցանէ ի նկատեալ տեղի քաղաքին... Իսկ զծայր քաղաքին և որ ինչ ի նմա հրաշակերտութիւնք՝ բազմաց ի մարդկանէ ոչ հասու լեալ... Ձորոյ պարսպեալ զգագաթնն՝ դժուարամուտս ոմանս և դժոխելանելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս...» (Մովսես Խորենացի, էջ 51-54):

⁵⁰⁹ M. Brosset, op. cit., p. 337.

⁵¹⁰ Fr. Lenormant, op. cit., t. II, pp. 76-77.

⁵¹¹ J. Oppert, op. cit., liv. II, ch. V, p. 185.

Վան քաղաքի, այն խմելու ջրով մատակարարող ջրանցքի շինարարությամբ⁵¹² և, որ կարևոր է, հայ առաջնորդ Արա Գեղեցիկի հետ»⁵¹³:

Պատմահայրը վիճազիր արձանագրությունների մասին գրել է. «Իսկ զամենայն երեսս քարին իբրև գրչաւ զմոծ հարթեալ՝ բազում գիրս ի մնա գրեաց. որոյ հայեցուածն միայն զամենայն ոք ի զարմանս ածէ: Եւ ոչ միայն այս, այլ և ի բազում տեղիս յաշխարհին Հայոց արձանս հաստատեալ, նովին գրով յիշատակ ինչ իւր հրամայէ գրել. և ի բազում տեղիս սահմանս նովին գրով հաստատէր»⁵¹⁴:

XIX դարում արդեն սկսվել էին արևելյան երկրներում եվրոպական արշավախմբերի հիերոգլիֆ և սեպագիր արձանագրությունների հայտնագործման և վերծանման աշխատանքները, ուստի Սեն-Մարտենը, ուշադրություն դարձնելով Մովսես Խորենացու վերոհիշյալ հաղորդումներին, անհապաղ միջոցներ ձեռնարկեց Հայաստանում սկսել սեպագիր արձանագրությունների հայտնաբերման և վերծանման աշխատանքները:

1823 թ. Սեն-Մարտենի առաջարկով ֆրանսիական կառավարությունն ստեղծում է հանձնաժողով, որը պետք է զբաղվեր Հայաստանում վիճազիր արձանագրությունների ուսումնասիրու-

⁵¹² Կ. Լեհման-Հաուպտը նշված ջրանցքը, որն հայերն անվանել են նաև «ամբարտակ գետոյն», ավելի կատարյալ էր համարում հին արևելյան ջրամատակարարման շատ այլ համակարգերից՝ այն համեմատելով դեռևս Բաբելոնի արքա Համմուրաբի (մ.թ.ա. 1792-1750 թթ.) կողմից կառուցված «Սարդկանց երջանկություն» անունը կրող ջրանցքի հետ (К. Ф. Леман-Хаупт, Вступительная лекция по истории и культуре халдов. - Труды Тбилисского гос. университета, 1938, № 6, с. 248, տես նաև Ս. Հմայակյան, Ե. Գրեկյան, Վանը հնադարում (Տուրուշպա, Տուշպա, Տոսպ), ՊԲՀ, 2010, № 3, էջ 5, 16):

⁵¹³ Մովսես Խորենացի, էջ 50, 64: Ի դեմս Արա Գեղեցիկի հանդես է գալիս բնության մեռնող և հարություն առնող աստվածությունը» Мовсес Хоренаци, с. 226-227, прим. 120:

⁵¹⁴ Մովսես Խորենացի, էջ 54: Ըստ Գ. Խ. Սարգսյանը, խոսքը Հայաստանում Արգիշտի I-ի ստեղծած տեղության տարբեր մասերում, գտնված արձանագրությունների (մասնավորապես Խորխոռյան) մասին է (Мовсес Хоренаци, с. 227, прим. 125):

թյամբ: Հետագայում Ա. Սեյսը առավել մանրամասն անդրադառնալով Վանի սեպագիր արձանագրությունների հայտնաբերման պատմությանը՝ նշել է, որ ֆրանսիացի պրոֆ. Սեն-Մարտենը *Journal Asiatique*-ում տեղեկացրել էր Վանի հնությունների մասին և ուշադրություն հրավիրել այն փաստի վրա, որ «հայ պատմիչ Մովսես Խորենացին դրանք այնպիսի մանրամասնությամբ էր նկարագրել՝ հավանական դարձնելու համար, թե ինքը դրանք տեսել է իր սեփական աչքերով»⁵¹⁵: 1827 թ. ֆրանսիայի Ասիական ընկերությունն այդ նպատակով պրոֆեսոր Ֆրեդերիկ Շուլցին գործուղում է Վան: Ժամանելով Արևմտյան Հայաստան՝ Շուլցին հաջողվում է ընդօրինակել 42 արձանագրություն Վանում և նրա հարակից տարածքներում: Շուլցի կատարած աշխատանքը, որի արդյունքները ետմահով⁵¹⁶ հրապարակվեցին 1840 թ. «*Journal Asiatique*» ամսագրում⁵¹⁷ Սեյսը բարձր է գնահատել, նշելով, որ Շուլցը չէր ճանաչում սեպերը, ինչպես նաև սեպագրերի լեզուն, բայց նա արձանագրությունները փայլուն կերպով էր ընդօրինակել⁵¹⁸: Նույնատիպ արձանագրություններ գտնվեցին Արևմտյան Հայաստանի՝ 1840 թ. Արածանիի (Արևելյան Եփրատ) հովտի Բալու և Արևմտյան Եփրատի աջափնյա Մալաթիա քաղաքների (հին Սելիտենե) տարածքներում⁵¹⁹:

1860-ական թթ. Արևելյան Հայաստանում Մեսրոպ վարդապետ Սմբատյանը սեպագիր արձանագրություններ է հայտնաբերում և հրապարակում «Արարատ» (Էջմիածին) և «Բազմավեպ» (Վենետիկ) ամսագրերում, ինչպես նաև «Համբաւաբեր Ռուսիոյ»

⁵¹⁵ A. H. Sayce, op. cit., p. 377.

⁵¹⁶ 1829 թ. նրան սպանեց մի քուրդ ցեղապետ:

⁵¹⁷ Fr. Ed. Schulz, Mémoire sur le lac de Van et ses environs. *Journal Asiatique*, Paris, 1840, III^e série, t. IX.

⁵¹⁸ A. H. Sayce, op. cit., p. 377.

⁵¹⁹ Notice sur deux inscriptions cunéiformes, découvertes par M. Kästner dans l'Arménie russe, Notice de M. Lerch, Bulletin de l'Académie Impériale des sciences de St-Petersbourg, 1863, t. cinquième, p. 431, Inscriptions in the cuneiform character from Assyrian monuments, discovered by A. H. Layard, London, 1851, Fol., p. 74 (Inscription at Palou, on the Euphrate).

(Մոսկվա) շաբաթաթերթում: Անգլիացի արևելագետ Հենրի Օստին Լեյարդը, գերմանացի հետազոտող Վոլդեմար Բելքը, ֆրանսիացի հոգևորականներ Մյուլլեր-Սիմոնը և աբբա Հիվերնան⁵²⁰, գերմանացի ասորագետ Կարլ Ֆրեդերիկ Լեհման-Հաուպտը⁵²¹ և այլոք շարունակեցին սեպագիր արձանագրություններ հայտնաբերման ուղղված հետազոտությունները Արևմտյան Հայաստանում: 1893 թ. Մոսկվայի ռուսական կայսերական հնագիտական ընկերությունը գործուղում է Մ. Նիկոլսկուն և Ա. Իվանովսկուն Անդրկովկաս մասնավորապես Արևելյան Հայաստան, մանրամասն ուսումնասիրելու սեպագիր արձանագրությունները⁵²²:

Ֆրանսիացի արևելագետները և հայագետները իրենց աշխատություններում առանձնակի ուշադրություն են սկսում դարձնել, ինչպես իրենք են նշել, Վանի սեպագիր արձանագրությունների վերծանումների և լեզվի (Vanique-վանյան) բացահայտման խնդրին:

XIX դ. երկրորդ կեսին սեպագիր արձանագրությունների վերծանման և նրանց լեզվի պատմահամեմատական մեթոդով դասակարգման շուրջ ծավալված քննարկումները տարբեր կարծիքների տեղիք են տվել: Նկատի ունենալով, որ Վանի սեպագիր արձանագրությունների համար օգտագործվել են ասորական բեռագրերը⁵²³, ինչպես նաև վաղագույն արձանագրություններում կիրառվել է աքքադական լեզվի ասորական բարբառը⁵²⁴, եվրո-

⁵²⁰ P. Müller-Simonis, H. Hyvernart, Du Caucase au golf Persique à travers l'Arménie, le Kurdistan et la Mésopotamie, Washington, 1892.

⁵²¹ C. F. Lehmann-Haupt, Corpus inscriptionum Chaldicarum, Berlin und Leipzig, 1928.

⁵²² М. В. Никольский, Клинообразные надписи ванских царей, открытых в пределах России, Москва, 1893.

⁵²³ Դեռևս 1848 թ. ասորագետ Ֆ. Սոլսին նշել էր, որ Վանի արձանագրություններում օգտագործվել է ասորական գիրը (F. de Saulcy, Recherches sur l'écriture cunéiforme assyrienne. Inscription de Van, Paris, 1848, p. 3):

⁵²⁴ Ն. Հարությունյանը նշել է, որ Վանի ժայռի ստորոտում կառուցված շինության շինարարական քարերի վրայի Լուտիպրիի որդու Սարդուրի I-ի արձանագրությունները «կազմվել են ասորա-բաբելական (աքքադական) լեզվի ասորական բարբառով, քանզի ուրարտերեն գիրը ավելի ուշ է ստեղծվել» (Н. Арутюнян, Корпус..., с. 9-11):

պացի արևելագետները, նախ փորձեցին ընթերցել որոշ գաղափարագրեր: Միաժամանակ, սկսեցին անդրադարձ կատարել Վանի արձանագրությունների լեզվի խնդրին այն ժամանակ, երբ դեռևս պարզաբանված չէր դրա քերականությունը, իսկ բառապաշարն էլ կարգավորված չէր:

Ինչպես նշել է Մարի Բրոսեն, 1850 թ. Ֆ. Լուզատոն, անդրադառնալով վերոնշյալ արձանագրություններին, գրել է. «Վանի արձանագրությունները պարունակում են թագավորական մի դինաստիայի կատարած գործերը: Նրանք իրենց անվանել են Քանայի (de Qana) (?), Մատիենեի (de la Matiane) և Հայաստանի (de l'Arménie) արքայից արքաներ (rois des rois): Այս թագավորների անունները և նրանց ժամանակաշրջանը անհայտ է պատմությանը»⁵²⁵:

Իսկ ավելի ուշ, Ժյուլ Օպերտը ասուրական արձանագրությունների մեկնությանը նվիրված իր աշխատությունում, պայմանավորված սեպագրերի փոխառման հանգամանքով, անդրադառնալով դրանց, ինչպես ինքն է ասում «ոչ արիական ձեռագրին» (écriture anarienne), Վանի սեպագիր արձանագրությունների մասին գրել է. «Վանում գտնված սեպագիր արձանագրություններն ունեն միևնույն գաղափարագիր նշանները և նույնամիշ արտահայտությունները, ինչպես ասուրական և բաբելոնյան արձանագրություններում է: Օրինակ՝ «արքա, որդի, հայր, երկիր, աստված» և այլն, այստեղ ընթերցվում են նույն տառերով, որպեսզի ստանան վանկային հնչյուններ»: Նա՝ որպես օրինակ, նշել է Խորսաբաղում հայտնաբերված արձանագրությունում հիշատակված Արարատի թագավոր Արգիշտիի (roi d'Ararat, Argistes) անունը: Ժ. Օպերտը գրել է. «Այս թագավորի անունը միևնույն ձևով գրված հանդիպում ենք Վանում, որտեղ նույն միապետն արձանագիր հուշարձաններ է թողել»⁵²⁶:

⁵²⁵ Տե՛ս M. Brosset, *Bulletain...*, t. XVI, p. 432.

⁵²⁶ J. Oppert. *op. cit.*, liv. I, ch. V, p. 69.

Ժ. Օպերտը Վանի արձանագրությունների լեզուն տարբերելով ասուրաբաբելականից, նշել է, որ դրանցում օգտագործվել է վերջինիս նշանային համակարգը: Միևնույն ժամանակ նա դժվարացել է բացատրել արձանագրությունները, քանի որ կան բառեր, որոնք ցույց են տալիս, որ այն այլ լեզվի է պատկանում: Կատարելով լեզվական խմբավորում՝ Ժ. Օպերտը Վանի սեպագիր արձանագրությունների լեզուն կոչել է *արմենիակ* (arméniaque)⁵²⁷: Նա նշել է, որ Բեհիսթունյան արձանագրությունում բաբելական ձևով հիշատակվող *Ուրաշտուն* (Uraštu) նույն Հայաստանն (Arménie) է, իսկ նինվեյան արձանագրությունները ներկայացնում են Ուրարտու (Uratu)՝ Արարատ (Ararat) անվանաձևը⁵²⁸:

Ֆր. Լենորմանը կատարել է լեզվական հետևյալ խմբավորումը⁵²⁹.

1. *Ասուրական*, որը պատկանում է սեմական ընտանիքին և այդ լեզվով խոսել են Նինվեում և Բաբելոնում:
2. *Արմենիակ* (Arméniaque), որն արիական կամ հնդեվրոպական բարբառ է, ծառայել է Հայաստանի ազգաբնակչությանը (les populations de l'Arménie) մ.թ.ա. IX - VII դարերում: Այդ լեզվին են պատկանում բազմաթիվ սեպագիր արձանագրություններ, որոնք փորագրված են Վան քաղաքի հարևանությամբ գտնվող ժայռերին:
3. *Սուզյան* (susien), որը Սուզա (Շոշ) կամ Էլամ երկրի բոլոր արձանագրությունների լեզուն է:
4. *Մարական* (mède), որը գերակայում է Մարաստանում: Աքեմենյան Պարսկաստանի ամբողջ պաշտոնական (officiels) արձանագրությունները գրված են պարսկերեն, ասուրերեն և մարերեն:
5. *Քաղդեերեն*, որը եղել է քաղդեացիների ազգային լեզուն, մինչև նրանց Բաբելոնում հաստատվելը և հետո:

⁵²⁷ Ibid., pp. 69-70.

⁵²⁸ Ibid., liv. II, ch. V, p. 223.

⁵²⁹ Fr. Lenormant, op. cit., t. II, pp. 155-156.

Ի տարբերություն Յ. Ռաուլինսոնի (որը, ինչպես վերը նշվեց, Վանի արձանագրությունները հայկական (Armenian) էր համարում), նրա կրտսեր եղբայրը Գեորգ Ռաուլինսոնը (1812-1902 թթ.) հակառակ կարծիքի էր, որին անդրադարձել է Լեոն. «Անգլիացի բևեռագետ (իմա՝ սեպագրագետ) Գ. Ռաուլինսոնը առաջինն էր, որ սկսեց պնդել, թե ուրարտացիները ոչ մի նմանություն չեն ունեցել հայերին և վանյան արձանագրությունների լեզուն ոչ մի ազգակցություն չունի հայերենի հետ»⁵³⁰:

Է. Զինկսը Վանի արձանագրություններին նվիրված իր հետազոտությունում եզրակացրել է. «Վանի և Մալաթիայի (Մելիտենե) արձանագրությունները հնդեվրոպական արմատից են (de racine indo-européenne)»⁵³¹: Նա կարծում էր, որ արձանագրությունների լեզուն արիական (arienne) է:

Եվրոպական արևելագիտության մեջ տիրող այսպիսի տարակարծության պայմաններում, երբ դեռևս ուսումնասիրված չէր Վանի բիայնական սեպագրերի լեզվի քերականական բնույթը, իսկ բառապաշարն էլ ամբողջացված չէր, այդ կապակցությամբ իրարամերժ կարծիքներ էին հայտնվում:

Ֆր. Լենորմանը հետևելով իր ուսուցչի՝ Օպերտի տեսակետին, 1869 թ., խոսելով Վանի թագավորության մասին, նրա արքաներին համարում էր հայկական: Սակայն երկու տարի անց Ֆր. Լենորմանը հայտնեց դրան հակասող մեկ այլ կարծիք, իբրև թե Չայաստանի սեպագիր արձանագրությունների լեզուն «վրացերենի նմանություն» է ցուցաբերում⁵³²: Այնինչ, վրացերենի հետ ազգակից կապը⁵³³ ժամանակին մերժել էր դեռևս Մ. Նիկոլսկին՝

⁵³⁰ Լեո, Չայոց պատմություն.- Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 18:

⁵³¹ M. Brosset, op. cit., p. 433, E. Hincks, On the inscriptions at Van, Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland, 1848, vol. IX, p. 387-449.

⁵³² Fr. Lenormant, Lettres Assyriologiques, Paris, 1871, t. I, pp. 124-127. Տես նաև՝ Լեո, Վանի թագավորությունը (Ուրարտու), Թիֆլիս, 1915, էջ 66: Լեոն վանյան սեպագիր արձանագրությունների լեզվի խնդրում իրարամերժ կարծիքներ է հայտնել (Լեո, նշվ. աշխ., էջ 18):

⁵³³ Տես նաև՝ Սարուխան, Վրաստան եւ հայերը, Զանդեւ ամսօրեայ, 1933, № 1, 2, էջ 58-75:

վանյան (բիայնական) արձանագրությունների լեզվի վերաբերյալ գրելով. «Մինչ այժմ չի հաջողվել գտնել այն ազգակից լեզվաընտանիքը, որին կարելի է վերագրել այս լեզուն: Այն իրենից բացարձակ մեկուսացված լեզու է ներկայացնում: Որոշ եզակի՝ վրացերենի հետ նմանակվող դեպքեր, ազգակից կապ հաստատելու իրավունք չեն տալիս»⁵³⁴: Բ. Պատկանյանը, անդրադառնալով այս խնդրին, նույնպես քննադատորեն է մոտեցել Ֆր. Լենորմանի երկրորդ տեսակետին այն համարելով հեղինակի «հապճեպ աշխատանքի արդյունք»⁵³⁵:

1871 թ. գերմանացի արևելագետ Ա. Դ. Մորդմանը հոդված հրապարակեց *վանյան* արձանագրությունների լեզվի հին հայերեն լինելու վերաբերյալ⁵³⁶: 1882 թ. լույս տեսած Ա. Մորդմանի աշխատությունը (որում հեղինակը այն համոզմունքն էր հայտնում, որ Վանի արձանագրությունների լեզուն մաքուր հայերենն է, որը փոփոխման է ենթարկվել հազարամյակի ընթացքում և պատկանում է արիական ընտանիքին), քննադատության ենթարկվեց մի շարք հետազոտողների կողմից⁵³⁷:

1882 թ. Ա. Սեյսը, իսկ 1883 թ. ֆրանսիացի ասուրագետ Ս. Գյուլյարը փորձեցին⁵³⁸ ներկայացնել *վանյան* սեպագիր արձանագրությունների բառապաշարը և քերականության աղյուսակը: Զննելով Ռաուլինսոնի, Լոռանի և Մորդմանի կարծիքները Ա. Սեյսը գրել է. «Առանց քերականության ոչ մի վերծանում հնարավոր չէ և մինչև մենք ի վիճակի չլինենք կազմել այդպիսին, պարզ է, որ մեր ջանքերը թարգմանելու այդ լեզուն ոչ մի հաջողություն չեն

⁵³⁴ М. Никольский, ук. соч., с. 3.

⁵³⁵ K. Patkanoff, Sur l'écriture cunéiforme arméniaque et les inscriptions de Van. Congrès international des orientalistes. Paris. 1876, t. II, p. 429.

⁵³⁶ A. D. Mordtmann, Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der Umgegend. - Zeitschri. d.d.m.G., Leipzig, 1872, pp. 465-696.

⁵³⁷ K. Patkanoff, op. cit., p. 431, М. Никольский, ук. соч., с. 2.

⁵³⁸ A. H. Sayce, op. cit., p. 377-733, St. Guyard, Les inscriptions de Van.-Mélange d'assyrologie, 1883, Paris, p. 113-144.

ունենա»⁵³⁹։ Իր աշխատության եզրափակիչ մասում Սեյսը կրկին անդրադառնալով Vanique՝ վանյան լեզվի անբավարար ուսումնասիրությանը⁵⁴⁰ գրել է. «Դեռևս շատ անելիք կա մինչ *վանյան* արձանագրությունների վերծանումը հիմնավորապես բավարար հիմքի վրա դրվի»⁵⁴¹։

Հակոբոս Տաշյանը (1866-1933 թթ.) նշելով, որ Ս. Գյուլարը «Վանեան բեռնագրութեան լեզուն» «անժանոթ լեզու» է համարել, գրել է «Ինչպես կրնան բեռնագիրներ կարդացուիլ եւ նաև մեկնուիլ, ասոնցմէ ազգի մ' ամբողջ պատմութիւնը հանուիլ, եւ սակայն լեզուին՝ որով գրուած են՝ ինչ կարգի ըլլալուն նկատմամբ տարակոյսներ ունենալ»⁵⁴²։

Հովսեփ վարդապետ Սամտալճյանը 1900 թ. ֆրանսերենով լույս տեսած իր աշխատությունում այն տեսակետն էր պաշտպանում, որ վանյան սեպագրերը հայկական ծագում ունեն⁵⁴³։

XX դարում գերիշխեց վանյան՝ բիայնական սեպագրերի լեզուն որպես *ուրարտերեն* համարվող տեսակետը, ըստ որի՝ այն «սերտ ազգակցական կապեր ուներ խուռերեն լեզվի հետ»⁵⁴⁴։

⁵³⁹ Ա. Սեյսը անդրադառնալով, Վանի սեպագիր արձանագրությունների աշխարհագրական անուններին նշել է, որ Բիայնա անունը չի հանդիպում ասուրական արձանագրություններում։ Ասորեստանյան թագավոր Սարգոնի արշավանքի կապացությամբ նշված Urardhu անվան կողքին փակագծերում նշել է Armenia։ Այդ կապակցությամբ նա գրել է «Վանի իշխանների թագավորության անվանումը ասուրական արձանագրություններում Ուրարդու կամ Արարատ է» (A. Sayce, op. cit., pp. 382-383, 389-390)։

⁵⁴⁰ Ա. Սեյսը, անդրադառնալով Վանի արձանագրություններում Ս. Գյուլարի կողմից մի զարգափարագրի վերծանմամբ որոշակի արտահայտության ընթերցմանը («անեծքի բանածև»), նշել է, որ այն առկա է նաև «ասուրական և արեմենյան պարսկական արձանագրություններում»։ Այնուհետև Սեյսը, հիմք ընդունելով նրա դրույթները, գրել է. «*Վանյան* (Vannic) գրիչների կողմից այդքան ազատորեն կիրառված զարգափարագրերը ինձ արդեն ցույց են տվել, որ ոչ միայն նշանները, այլև արձանագրությունների ոճը և դարձվածաբանությունը այնպիսին էին, ինչպիսին Ասուրնասիրպալի և Սալմանասար II-ի ժամանակների ասուրական տեքստերինը» (A. Sayce, op. cit., p. 387)։

⁵⁴¹ Ibid., p. 679.

⁵⁴² Զ. Տաշեան, Փորձ մը լեզուի..., էջ 16։

⁵⁴³ J. Sandalagian, Les Inscriptions Cunéiformes Urtartique, Venise, 1900.

⁵⁴⁴ Դ. А. Меликишвили, Урартский язык, Москва, 1964, с. 10-14, И. М. Дьяконов, Языки Древней Передней Азии, М., 1967, с. 113-165.

Իսկ «ուրարտերենի և հայերենի միջև եղած ընդհանրությունների խնդիրը» ներկայացնելով այդ տեսանկյունից, եզրակացվեց, որ «այստեղ ազգակցություն չկա, լեզուները տարբեր լեզվական ընտանիքների են պատկանում»⁵⁴⁵:

1988 թ. Գ. Ջահուկյանն անդրադառնալով խուռերենի և ուրարտերենի որպես մերձավոր ցեղակից լեզու լինելու խնդրին, գրել է. «Իհարկե, այս ընդհանրություններն այն աստիճանի չեն, որ հնարավոր լինի ուրարտերենի մասին խոսել որպես խուռերենի շարունակության: ...Առավելագույնս կարող է խոսք լինել հեռավոր ցեղակցության (միևնույն նոստրատիկ ընդհանրությանը պատկանելու) մասին»⁵⁴⁶:

XX դ. վերջին Գ. Ջահուկյանը «Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հայկական բնույթ կրելու

⁵⁴⁵ Այսպիսի հայեցակարգով դիտարկվեց նաև հայ ժողովրդի կազմավորումը, այն համարելով «հայկական ցեղերի և ուրարտացիների միաձուլման», «հայոց լեզվի մեջ ուրարտերեն լեզվի բառապաշարի նշանակալից տարրերի ներթափանցման», «հնդեվրոպական-հայկական լեզվի տարրերի ուրարտերենի մեջ ներթափանցման», ինչպես նաև «ծովի ժողովուրդների» շարքում թրակափոխական ցեղերի Բալկաններից դեպի Փոքր Ասիա գաղթի ընթացքում ի թիվս մյուս ցեղերի «նախահայկական» ցեղերի այդտեղ հաստատվելու և հեթական թագավորության կործանումից հետո (մ.թ.ա. 1200-1118 թթ.) ասորաբաբելական աղբյուրների հիշատակած «փոյուզիացի-միսիացիների մուշկեր» և «արիմ-ուրումեացիների» անվան տակ դեպի Եփրատ շարժվելու և այնտեղից էլ Հայկական լեռնաշխարհի մուտք գործելու և հաստատվելու արդյունք (ՉժՊ, հ. I, էջ 230-237, 418-419): Սակայն պետք է նշել, որ «ծովի ժողովուրդների» հետ հայ ժողովրդի կազմավորման խնդիրը կապելու տեսակետը չի հաստատվում պատմագիտության տվյալներով: Ա. Քոսյանը, հիմք ընդունելով գերմանացի եգիպտագետ Վ. Հելքեի ուսումնասիրությունները, նշել է, որ նա «բացառում է հաթթուսայի կործանման արտաքին պատճառը՝ թշնամական հարձակումը: Ինչ վերաբերում է «ծովի ժողովուրդների» մասնակցությունը հաթթիի անկմանը, ապա նրանց տեղաշարժերը ընթացել են արևելամիջերկրածովյան ավազանի սահմանափակ առափնյա շերտում, ընդ որում դրանք առավել ինտենսիվ բնույթ են կրել միայն մ.թ.ա. 1208-1206 թթ. միջև Սիրիայի արևմուտքում՝ Լիտանի գետի ավազանում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո» (Ա. Քոսյան, Կրկին եթնիկական տեղաշարժերի մասին, ՊԲՀ, 1994, № 1-2, էջ 247-248):

⁵⁴⁶ Բ. Ն. Առաքելյան, Գ. Բ. Ջահուկյան, Գ. Խ. Սարգսյան, Ուրարտու-Հայաստան, Երևան, 1988, էջ 132, 134:

մասին» իր հոդվածում այդ բանաձևերի վերլուծության հիման վրա նոր եզրահանգումներ առաջադրեց.

«1. Բավական համոզչությամբ ապացուցվում է ներածական բանաձևերի հայկական բնույթը. դրանց բառապաշարը հիմնականում հայկական է, քերականական առանձնահատկությունները հնարավոր է բացատրել նախագրաբարյան շրջանի քերականական բառապաշարով:

2. Այդ բանաձևերը հնարավորություն են տալիս կատարելու հայերենի նախագրաբարյան շրջանի բառային վերականգնումներ, պարզելու հետագա՝ փոխառությունների բուն հայկական համարժեքները՝ հնդեվրոպական նախաձևերի և ուրարտական կոչված արձանագրությունների ձևերի համեմատության հիման վրա»⁵⁴⁷:

Այսպիսով, նորագույն հետազոտությունները վկայում են XIX դարի Ֆրանսիական արևելագիտական և հայագիտական հետազոտություններում՝ Վանի թագավորության սեպագիր արձանագրությունների վերծանման և լեզվի ուսումնասիրության սկզբնավորման ժամանակաշրջանից (հայեցակարգային տարբեր մոտեցումների առկայությամբ) հայերենի հետ նույնացնելու հիմնախնդրի ուսումնասիրության կարևորության մասին:

⁵⁴⁷ Գ. Տահուկյան, Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, ՊԲՀ, 2000, № 1, էջ 127-128: Սարգիս Այվազյանը, հետազոտելով այս խնդիրը եզրակացրել է. «Ուրարտերենը հավանաբար հին հայերենի բարբառ է» (S. Ayyvazyan, Urartian-Armenian. Lexicon and comparative-historical grammar, Yerevan, 2011, p. 9):

ՀԱՅՈՑ ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

1. Հայաստանը XVIII-XIX դդ. ֆրանսիացի հայագետների պատմահոգևոր ընկալումներում

XVIII դ. պատմափիլիսոփայական զարգացումները հանգեցրին *քաղաքակրթություն* հասկացության ծնավորմանը, որը կարևոր էր համաշխարհային պատմության առումով պատմահասարակական արժեհամակարգերի ուսումնասիրության գործում: Համաշխարհային պատմագրության մեջ *քաղաքակրթություն* հասկացության⁵⁴⁸ օգտագործման ակունքներում է ֆրանսիական պատմագիտական միտքը: Ֆրանսիացի լեզվաբան և բանասեր Էմիլ Բենվենիստը (1902–1976 թթ.) նշել է, որ ...առաջինը մարքիզ Միրաբոն էր (1749–1791 թթ.)⁵⁴⁹, ով «կրոնը դիտարկում էր որպես քաղաքակրթության առաջին գործոն»⁵⁵⁰:

Ֆրանսիական պատմակրոնական մտքի ոլորտում էր Հայաստանի քաղաքակրթական արժևորումը համաշխարհային պատմահոգևոր երևույթների՝ աստվածաշնչյան ընկալումների լույսի ներքո: Այս տեսակետից անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ֆրանսիացի աստվածաբան⁵⁵¹ Դոմ Ագուստին Կալմեի (1672–1757 թթ.) հետևյալ մեկնությանը՝ «Հայաստանը ... եղել է մարդ-

⁵⁴⁸ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ *քաղաքակրթություն* բառը սկզբնապես օգտագործվել է համամարդկային քաղաքակրթության նշանակությամբ (R. Velkley, «The Tension in the Beautiful: On Culture and Civilization in Rousseau and German Philosophy», Being after Rousseau: Philosophy and Culture in Question, Chicago, 2002, p. 11–30):

⁵⁴⁹ V. Riquetti, (Marquis de Mirabeau), L'Ami des hommes ou traité de la population, nouvelle édition corrigée, Première partie, Avignon, 1762, p. 192.

⁵⁵⁰ E. Benveniste, Civilisation. Contribution à l'histoire du mot.- Problèmes de linguistique générale, Paris, 1966, pp. 336–345.

⁵⁵¹ Էկզեգետ բիբլիական տեքստերի մեկնիչ:

կության բնօրրանը» («l'Arménie... fut le berceau du monde») ⁵⁵². Կալմեն նկատի է ունեցել Դրախտի և տապանակիր Արարատ լեռան մասին Օմնդոց գրքի հաղորդումները ⁵⁵³:

XIX դ. հեղինակ Վոլֆ Շարլ-ժոզեֆ-Ֆրանսուան արհացիների վերաբերյալ իր աշխատությունում գրել է՝ Արարատը «լեռ է, որն արհացիները դիտարկում էին որպես մարդկության սրբազան բնօրրան» (montagne que les Aryas regardaient comme le berceau sacré de l'humanité) ⁵⁵⁴:

Ֆրանսիացի հայագետ է. Բորեն, անդրադառնալով հայ ժողովրդի պատմության ավանդական նահապետական ուղով թագավորական իշխանության անցմանը, գրել է. «Հայ ազգն ունի ավանդություններ, որոնք անկասկած ապացուցում են նրա հին լինելը և մեզ ցույց են տալիս քրիստոնեության դարաշրջանից շատ առաջ փառահեղ՝ Հաբեթի թոռ Թորգոմից սերած արքայատոհմերի կողմից կառավարվելու մասին: Նրա կառավարման ձևը երկար ժամանակ նահապետական էր, որն հանգեց բուն միապետության, ինչպես ընդունված էր հին Արևելքում» ⁵⁵⁵:

Վ. Լանգլուան կարևորել է հայ ազգի տոկունությունը, որով նա դիմակայել է արհավիրքներին դարերի ընթացքում. «Այն ազգերի մեջ, որոնց ծագումը վեր է ելնում վաղագույն ժամանակներից և որի նախնական պատմությունը պարուրված է թանձր մշուշով, կա մի ազգ, որն Ասիայի թատերաբեմում անդադար ընդդիմացել է բոլոր ցնցումներին՝ ցուցաբերելով ուժեղ դիմադրություն, անփոփոխ կերպով՝ անընդհատ շարունակել է, և այսօր դեռևս պահպանել է բոլոր այն առանձնահատկությունները, որոնք

⁵⁵² Dictionnaire historique, archéologique, philologique, géographique et littéral de la Bible par le Rev. Père dom Augustin Calmet, quatrième édition, revue, corrigée, complétée et actualisée par A. F. Jame, publiée par M. l'abbé Migne, t. premier, Paris, 1846, p. 590.

⁵⁵³ Օմնո., Բ, 8-10; Ը.4:

⁵⁵⁴ Charles-Joseph-François (Gal) Wolff, Recherches sur les Aryas, 1893, p. 128.

⁵⁵⁵ E. Boré, Le couvent de Saint-Lazare à Venise, ou histoire succincte de l'ordre des Méchitaristes Arméniens; suivie de renseignements sur la langue, la littérature, l'histoire religieuse et la géographie de l'Arménie, Paris, 1837, p. 42.

թույլ են տալիս նրան տարբերվել և հետևել անցյալի երկար ուղուն»⁵⁵⁶.

Վ. Լանգլուան հնագույն պատմության մասին խոսելիս մի քանի վարկածներ է առաջադրել.

1. Հայաստանի «էթնո-մահապետական» (մախնադարյան) դարաշրջան. «Հայաստանը վաղ շրջանում մի ցեղ էր՝ երկրի վրա ձևավորված մարդկային վաղ հասարակությունների մահապետական մի ձև»⁵⁵⁷:

Վ. Լանգլուան շաղկապելով տարբեր բնույթի տեղեկությունները, գրել է. «Առաջին և ամենահին պատկերացումները, որ մեզ է հաղորդել ավանդությունը աշխարհի թատերաբեմում հայ ազգի հայտնվելու կապակցությամբ, սկսվում է մարդկանց ցրումով⁵⁵⁸... որը տեղի է ունեցել մոտավորապես մ.թ.ա. 20 դար առաջ..., որոնք ազգերի ճնշումից, կուտակվում են Կովկասի մերձակայքում, իսկ քամայան մեծ կայսրությունների ստեղծմամբ՝ Տիգրիսի ափերին, և ի վերջո արիացիների ներխուժմամբ՝ Արփաքսաղում⁵⁵⁹... կամ Կասդեսների (Kasdes)⁵⁶⁰ երկրում, այսինքն՝ Հայաստանի... լեռնային և հարևան շրջաններում... »⁵⁶¹:

⁵⁵⁶ V. Langlois, *Mémoire sur les origines...*, p. 200.

⁵⁵⁷ V. Langlois, *Numismatique de l'Arménie...*, 1859, p. I.

⁵⁵⁸ «Մարդկանց ցրում» և «այդտեղ հաստատված բնակիչներ» արտահայտությունները արտացոլում են Ծննդոց գրքի հետևյալ տեղեկությունը. «Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի երեսս ամենայն երկրի» (Ծննդ., ԺԱ.8): Այս տեղեկությունն առկա է նաև Մովսես Խորենացու երկում, երբ Պատմահայրը, շարադրելով Հայկի մասին ավանդությունը, սկզբնական մասում գրել է. «Երթեալ բնակէ ի լեռնաոտին միում ի դաշտավայրի, յորում սակաւք ի մարդկանէ յառաջագոյն ցրուելոցն դադարեալ բնակէին» (Մովսես Խորենացի, էջ 33):

⁵⁵⁹ Ըստ Դովսեպոս Փլավիոսի («Նոքոսի (Նոյ-Ա.Դ.) երրորդ որդին՝ Սեմը, ունեցավ հինգ զավակ... Արփաքսաղը, իշխելով այժմյան քաղղեացիներին, նրանց անվանեց արփաքսաղյաններ» (Հին հունական աղբյուրներ Ա, էջ 56): Քաղղեացիների երկիրը Վ. Լանգլուան «Արփաքսաղ» կամ «Կասդեսների» երկիր է անվանել:

⁵⁶⁰ Վ. Լանգլուան նշել է, որ հունարեն *քաղղեացիներ* անվանաձևի եբրայերեն անվանաձևն է *Կասդես* (Collection des historiens t. I, p. 3).

⁵⁶¹ V. Langlois, *Mémoire sur les origines...*, pp. 200–202. Այս խիստ թեական վարկածն առաջադրելիս Վ. Լանգլուան օգտագործել է Է. Ռեմանի աշխատություն-

Վ. Լանգլուան այս վարկածի շարունակությունում գրել է. «Առաջին հայ պատմիչ Մովսես Խորենացին պատմում է⁵⁶², որ հիփրավի, համաձայն հին ավանդությունների, Քաղդեայից (Բաբելոնիա) եկած գաղթականների մի զգալի խումբ Կուրի և Վերին Տիգրիսի ու Եփրատի միջև գտնվող լեռնային շրջաններում հանդիպեց այդտեղ հաստատված բնակիչներին»⁵⁶³։ Վ. Լանգլուան նշել է, որ նրանք Հայկի անունն էին կրում։ Այնուհետև ընդգծելով, որ մյուս ավանդությունները, որոնք կապում են Հայկի տոհմը, ըստ բիբլիական ծագումնաբանության՝ Նոյի որդիների հետ, նրան ներկայացնելով Թորգոմից սերած «քրիստոնեական գրականության արդյունք են, քանի որ Հայաստանում քրիստոնեության հաստատումից հետո և Միջագետքում քրիստոնեական գրականության ստեղծման ժամանակաբաժանում հայ պատմիչները հայերի ազգաբանությունը կապեցին Հաբեթի սերնդի աստվածաշնչյան ավանդույթին»⁵⁶⁴։

2. Հին և միջնադարյան ժամանակներ, Հայաստանը հարատևեց հայության ազգային համախմբվածության շնորհիվ. «Ասորեստանցիների, պարսիկների հռոմեացիների և ավելի ուշ հույների (իմա՝ բյուզանդացիներ-Ա.Դ.) ու արաբների ներխուժումները, տարածքի բաժանումը, Հայաստանը չգրկեցին իր համախմբվածությունից...։ Մինչ մենք տեսնում ենք՝ Ասիայի մեծ կայսրությունները, որոնք լինելով շատ հզոր, անհետացել են, ...հայ ազգը՝ ընդհակառակը, դիմադրել է ամեն ինչին, նույնիսկ ժամանակին, որը ոչինչից չի խնայում»։

3. Հայերի հարատևումը, ըստ Վ. Լանգլուայի, պայմանավորված է նրանց ազգային ներքին կառուցվածքի ամրությամբ. «Այսօր քիչ ազգեր են մնացել, որոնք դեռևս ապրում են, չնայած լինելով ստրկացված և բաժանված, և որոնք բացարձակապես չեն

նր (E. Renan, Histoire générale et système comparé des langues sémitiques, Paris, 1858, p. 33)

⁵⁶² Մովսես Խորենացի, Էջ 17։

⁵⁶³ V. Langlois, Mémoire sur les origines..., p. 200-202.

⁵⁶⁴ Ibid.

կորցրել հիշողությունը իրենց տարեգիրների, իրենց փառավոր անցյալի և իրենց ազգության մասին: Հայաստանի կառավարումը այնպես է կազմված, նրա կազմավորումը այնպիսին է, որ նա հասել է կատարելիության...»⁵⁶⁵:

Հայաստանի պատմության, մասնավորապես, ազգաբանությանն առնչվող հարցերը քննարկելիս ֆրանսիական հայագիտության մեջ պատմահոգևոր մոտեցում է ցուցաբերվել՝ հիմնվելով հին ավանդույթների, Աստվածաշնչի և Մովսես խորենացու տեղեկությունների վրա:

2. Ֆրանսիացի հայագետների անդրադարձը Հայաստանում վաղ քրիստոնեական զարգացումների պատմական հանգամանքների

Հայաստանում քրիստոնեության տարածման և հայերի քրիստոնեության ընդունմանը նվիրված Ս. Բրոսեի սկզբնաղբյուրային մեկնությունները և ուսումնասիրությունները հիմնված են հայ պատմիչների հաղորդումների և հայագիտական հեղափոխությունների վրա: Հայ պատմիչների երկերի թարգմանությունների մեկնություններում, գրելով հնուց հայոց ազգային պատմության ուղու մասին, Ս. Բրոսեն կարևորել է I դարից քրիստոնեության հետ դրա փոխկապակցված լինելու փաստը:

Ըստ Հայ Առաքելական եկեղեցու ավանդության, Մովսես խորենացու և Փափստոս Բուզանդի⁵⁶⁶ պահպանած տեղեկու-

⁵⁶⁵ V. Langlois, Numismatique de l'Arménie....., p. II.

⁵⁶⁶ Փափստոս Բուզանդը իր երկի սկզբում գրում է. «Ի քարոզութենն Թադևոսի Առաքելոյ և Նորուն յելից և ի մարտիրոսութենն մինչեւ ի կատարուն վարդապետութեանն Գրիգորի և իւրոյ հանգստեանն, և յառաքելասպան Սանատրկոյ արքայն մինչեւ յականայ հնազանդելն հաւատոցն արքային Տրդատայ և ի նորուն հանգիստն, զանցեալ իրացն զառաջնոցն զվարսն լաւացն, և որ զնոցուն հակառակ ընդդիմակաց, այն ամենայն ի ծեռն ալլոցն զրեցան»: Պատմիչը այնուհետեւ Հայոց հայրապետական աթոռի եւ Հայ եկեղեցու մասին խոսելիս գրել է. «յաթոռն Առաքելոյն Թադեոսի», «զվիճակին Թադեոսի

թյունների հայ հոգևոր կյանքում քրիստոնեությունը պատմակա-
նորեն վկայվել է I դարից: Ս. Բրոսեն անդրադառնալով հայերի
քրիստոնեության ընդունման խնդրին՝ հիմնվել է Մովսես Խորե-
նացու հաղորդած տեղեկությունների վրա⁵⁶⁷, որոնք նա բնար-
կել է հատկապես Յ. Շահխաթունյանցի մեկնությունների միջո-
ցով⁵⁶⁸:

Պատմագրության մեջ ուշադրություն է դարձվել, որ Մովսես
Խորենացու հաղորդումը Եդեսիայի Հայոց արքա Աբգար թագա-
վորի մասին⁵⁶⁹ հաստատվում է ասորի պատմիչ Անանուն Եդեսա-
ցու (XII դ. 2-րդ կես – 1234 թ.) տեղեկությամբ, որի համաձայն՝ Ա-
լեքսանդր Մեծի զորավար Սելևկոսից սերող Ուռհայի թագավոր-
ների սերնդի ընդհատվելուց հետո այնտեղ բնակություն հաստա-
տած և հզորացած հայերից մեկը՝ Աբգարը թագավոր հռչակվեց և
նա ու նրա սերունդները կոչվեցին Աբգար ու տիրեցին Ուռհային
ու Սիջագետքին⁵⁷⁰:

առաքելոյն» (Փաստոսի Բիզանդացոյ Պատմութիւն Հայոց. գլ. Ա, էջ 17, գլ.
ԺԲ, էջ 40, գլ. ԺԴ, էջ 51):

⁵⁶⁷ Մովսես Խորենացի, էջ 150-152:

⁵⁶⁸ Յ. Շահխաթունեանց, նշվ. աշխ. հ. I, էջ 140-145:

⁵⁶⁹ Մովսես Խորենացի, էջ 154-156: Յ. Շահխաթունեանց, նշվ. աշխ. հ. I, էջ 140-
145: Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ,
հ. I և II, ի Ս. Կաթողիկէ Էջմիածին, 1842: Յ. Տաշեան, Սկզբնաւորութիւնը
Եդեսիոյ եկեղեցւոյն եւ Աբգարու զրոյցը. - «Հանդէս ամսօրեայ», 1889, N3, էջ
47-51, № 4, էջ 63-67: Տես նաև՝ Է. Լ. Դանիելյան, Սուրբ Թադէոս առաքյալի
ավանդության արտացոլումը հայ պատմագրության մեջ. - տես Հայաստա-
նը և քրիստոնյա Արևելքը, Ժողովածու, Երևան, 2000, էջ 49-54:

⁵⁷⁰ Անանուն Եդեսացի, Ժամանակագրություն, թարգմ. բնագրից և առաջ. և ծան.
Լ. Յ. Տեր-Պետրոսյանի. - տես Ասորական աղբյուրներ Բ, 12, Երևան, 1982,
էջ 195-196: Աբգար V-ի կերպարում տեսնելով Աբգար VIII-ին, նշվել է.
«Աբգար V Ուրբանա (Սև) որդի Մանուի - Օսրեյենեի (Եդեսիայի) թագավոր
(մ.թ.ա. 4 - մ.թ. 7 թթ., մ.թ. 13-50 թթ.), որի անվան հետ՝ ըստ ավանդության,
կապվում է քրիստոնեության հաղթանակը Եդեսիայում, թեև իրականում դա
տեղի է ունեցել Եդեսիայի Աբգար VIII Մեծ թագավորի օրոք (177-212 թթ.)»
(Լույս տեղում, էջ 239, ծան. 588): Այստեղ հաշվի չեն առնվել Պատմահոր և
Անանուն Եդեսացու տեղեկությունները:

Մովսես Խորենացին Աբգարին հիշատակել է որպես Հայոց արքա: Մ. Բրոսեն ուշադրություն է դարձրել⁵⁷¹, որ Աբգարը Հիսուս Քրիստոսի ժամանակակիցն էր⁵⁷² և իր ժողովրդի հետ մկրտվեց Աբ. Թովմաս (Աբ. Թոմաս) առաքյալի եղբոր՝ Աբ. Թադեոսի կողմից⁵⁷³, որը նահատակվեց Վասպուրական նահանգի Արտազ (Շավարշան) գավառում, Սանատրուկ արքայի կողմից⁵⁷⁴: Մ. Բրոսեն եզրակացրել է, որ «Եդեսիայի հայերը բոլոր իրենց հայրենակիցներից ավելի վաղ են ընդունել քրիստոնյա հավատքը»⁵⁷⁵:

Պետք է նկատի ունենալ, որ Մովսես Խորենացու հաղորդումներից հետևում է, որ՝ Եդեսիայում քրիստոնեությունն առաջինն ընդունել է «Աբգար արքայ Հայոց»⁵⁷⁶ (Աբգար V-ը՝ 4-7 թթ., 13-50 թթ.):

Մ. Բրոսեն նշել է, որ Վարշամակը, որի վրա Փրկչի դեմքն էր դրոշմված, ըստ Մովսես Խորենացու պահպանած ավանդության՝

⁵⁷¹ Մ. Բրոսեն նշել է, որ Աբգարը «Արշակունի» էր, նկատի ունենալով Մովսես Խորենացու այն տեղեկությունը, որ Աբգարը գնում է Արևելք, իմանալով, որ «խոռվութիւն անկեալ ի մէջ ազգականաց իւրոց, թագաւորութեանն Պարսից» (I դարում Իրանում գահակալող հարստության առումով «Պարսից» ասելով պետք է հասկանալ «Պարթևաց», քանի որ մինչև 226 թ. այնտեղ պարթև Արշակունիներն էին գահակալում): Աբգարը հաշտեցնում է պարթևական տոհմերի ներկայացուցիչներին՝ Կարենյան և Սուրենյան Պահլավ կոչվածներին իրենց թագավորի հետ՝ «զօր ժողովեալ անդր չուէր ի համոզել և ի դադարեցուցանել զնոսա» (Մովսես Խորենացի, էջ 145):

⁵⁷² Եվսեբիոս Կեսարացին իր «Եկեղեցական պատմութեան» մեջ համառոտ անդրադարձել է այս ավանդությանը: Ըստ պատմիչի Աբգարը, իմանալով Հիսուս Քրիստոսի գործած զօրության մասին, «արծակեաց առ նա ի ձեռն ծառայից իւրոց աղաչաւորս և նամականի» (Եւսեբիոսի Կեսարացու Պատմութիւն Եկեղեցւոյ, ի Վենետիկ, 1877, էջ 60):

⁵⁷³ Պատմահոր տեղեկությունների համապատասխան Հ. Շահխաթունյանը նշել է, որ «Թադէոս առաքեալ ... զայ յեդեսիա քաղաք առ Աբգար արքայ Հայոց ... և մկրտէ զԱբգար և զբազմութիւն քաղաքին» (Հ. Շահխաթունյան, նշվ. աշխ., հ. I, էջ 145):

⁵⁷⁴ Մովսես Խորենացի, էջ 157:

⁵⁷⁵ Histoire de la Siouanie par Stepannos Orbelian, traduite de l'arménien par M. Brosset. St.-Petersbourg, 1864, pp. 13-14, com. 3.

⁵⁷⁶ Մովսես Խորենացի, էջ 154-156:

Եղեսիայի Արզար թագավորին բերել էր Անանը⁵⁷⁷: *Վարշամակը* (Քրիստոսի անձեռագործ պատկերը՝ Սուրբ Դաստառակը, որը Պատմահայրն անվանել է «զկենդանագրութիւն փրկչական պատկերի»⁵⁷⁸), քրիստոնեական մյուս սրբությունների (Գեղարդ, Տիրամոր պատկեր, Սյուռոն⁵⁷⁹) թվին էր պատկանում, որոնք համարվում են նվիրական սրբություններ:

Մ. Բրոսեն հետևելով Զ. Շահխաթունյանցին՝ նշել է, որ հայ ժողովրդի քրիստոնեության ընդունման հաջորդ հանգրվանը ժամանակագրորեն եղել է Սյունիքը՝ Սբ. Բարդուղիմեոսի քարոզչությամբ: Այնուհետև, նկատի ունենալով սկզբնապես Թադեոսի, այնուհետև նրա աշակերտի՝ Եղիշե առաքյալի քարոզչությունը, Մ. Բրոսեն գրել է, որ հերթը հասել էր Մեծ Զայքի՝ Արցախ և Ուտիք նահանգներին, այնուհետև Կուր գետից արևելք գտնվող՝ [բուն] Աղուանքին: Ըստ Մ. Բրոսեի ընկալման՝ այս առաքելական շրջանից հետո հավատքը մի որոշ ժամանակ Արզարի տոհմի անկման պատճառով անհետացել էր և մինչև Սբ. Գրիգորի քարոզչությունը քրիստոնեության որոշ հետքեր Զայաստանում առկա էին միայն սյունեցիների մոտ⁵⁸⁰:

Մ. Բրոսեն նշել է, որ Սբ. Բարդուղիմեոսի, Սբ. Թոմասի, Սբ. Թադեոսի գերեզմանները գտնվում են Զայաստանում: Կոտուրի լեռնաշղթայի հյուսիսարևելյան ծայրամասին է հարում Արտազ գավառը, որտեղ հողին էր հանձնվել Սբ. Թադեոս առաքյալի մարմինը⁵⁸¹: Մ. Բրոսեն հիմնվելով սկզբնաղբյուրների տեղեկությունների, և մասնավորապես Զովհաննես կաթողիկոսի տեղեկության վրա, նշել է, որ միայն Սբ. Բարդուղիմեոսի և Սբ. Թադեոսի Զայաստանում պահպանված մասունքները բավական են թվում,

⁵⁷⁷ Collection d'historiens arméniens, Arakel de Tauriz, XVII^es., Livre d'histoires, traduits par M. Brosset, St.-Petersbourg, t. I, p. 578, com. 1.

⁵⁷⁸ Մովսես Խորենացի, էջ 150:

⁵⁷⁹ Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա հատոր, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 21-23:

⁵⁸⁰ Histoire de la Siouanie..., p. 13, com. 3.

⁵⁸¹ Collection d'historiens arméniens, t. I, p. 206.

որպեսզի խոսել «7-րդ անկախ պատրիարքության» (7^e patriarchat indépendant) հիմնադրման մասին⁵⁸²:

Մ. Բրոսեն Ստ. Օրբելյանի երկի թարգմանությամբ⁵⁸³ մեկնությունում գրել է. «Տրդատի գահակալության 17-րդ տարում, հետևաբար մ. թ. 301 թ. Սբ. Գրիգոր Լուսավորիչը հայ մեծամեծ ազնվականների մեծ շքախմբով, որոնց մեջ էր նաև Սյունիքի իշխանը, գնում է Կեսարիա: Արքեպիսկոպոս Սբ. Ղևոնդիոսի կողմից եպիսկոպոս (ըստ Ագանթագեղոսի՝ քահանայության կարգը) ձեռնադրվելուց հետո... Սբ. Գրիգորը վերադառնալով Մեծ Հայք, Տարոնի Աշտիշատից հետո գնում է Արածանիի ակունքների վայրը, որը կոչվում է Բագավան՝ «Աստվածների քաղաք», և մկրտում թագավորին, նրա շքախմբին՝ իշխանների հետ միասին, որոնց թվում էր նաև Սյունիքի իշխանը»: Մ. Բրոսեն նշել է, որ այս տեղանքը «այժմ կոչվում է «Երեք եկեղեցիներ»⁵⁸⁴:

Հիշատակելով ձեռնադրություն ստանալու համար Գրիգոր Լուսավորչի Կեսարիա մեկնելու և դրան հաջորդած իրադարձությունների մասին՝ Մ. Բրոսեն հիմնվել է Ագաթանգեղոսի երկի վրա, համաձայն որի, հայոց Տրդատ արքան Վաղարշապատում ավագանուն և ժողովրդին հրավիրում է խորհրդի և Գրիգոր Լուսավորչին կարգում են եպիսկոպոսապետ: Հայոց մեծամեծերի ուղեկցությամբ նա մեկնում է Կապադովկիայի Մաժաք-Կեսարիա քաղաքը, որտեղ կատարվում է նրա ձեռնադրությունը⁵⁸⁵: Մեծ

⁵⁸² Մ. Բրոսեն պատրիարքությունները թվարկել է հետևյալ կարգով. Հռոմ, Անտիոք, Աղեքսանդրիա, Եփեսոս, Երուսաղեմ և Կոստանդնուպոլիս (Stéphano-Orbélian, Histoire de la Siounie..., p. 16, com. 4).

⁵⁸³ Վ. Իստրինը ուշադրություն է դարձրել (տե՛ս В. Истрия, Откровение Мефодия Патараского и апокрифические видения Ланнилы в византийской и славяно-русской литературе., М., 1897, Исследование, с. 23), որ Մ. Բրոսեն կատարել է Պատարի (Լիկիայում, Փոքր Ասիա) եպիսկոպոս Սբ. Մեթոդիոսի (մահ. 312թ.) տեսիլքի Ստեփանոս Օրբելյանի երկում եղած հայերեն խմբագրության ֆրանսերեն թարգմանությունը (Histoire de la Siounie..., pp. 89-94):

⁵⁸⁴ Histoire de la Siounie, p. 9, com. 2.

⁵⁸⁵ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 420: Կեսարիայի աթոռից ձեռնադրություն ստանալու այդպիսի արարողությունը վերացրեց Պապ թագավորը (տե՛ս Փաւստոսի Բիւզանդացոյ Պատմութիւն Հայոց, դպ. Ե, գլ. ԻԹ, էջ 230):

Հայք վերադառնալով՝ Սբ. Գրիգորը Տարոն գավառի Աշտիշատ ավանում եկեղեցի է հիմնում, այնուհետև Նպատ լեռան ստորոտում Տրդատ թագավորին, նրա ընտանիքին, արքունական բանակին և բյուրավոր այր, կին ու մանուկ տանում է Արածանիի ափն ու այնտեղ կատարում մկրտությունը⁵⁸⁶:

Մ. Բրոսեն հետազոտելով վաղմիջնադարյան հայկական սկզբնաղբյուրները՝ անդրադարձել է նաև «Ղաշանց թղթի» (lettre de paix) խնդրին, այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ դրա վավերականության շուրջ հայ պատմագրության մեջ քննարկումներ էին ծավալվել: Նա նշել է, որ «Ագաթանգեղոսի վերջին ընդօրինակումը կատարվել է 1121/1672 թ.», իսկ վերջնամասը, որ ընդօրինակել են Պողոս Բաղիշեցին և Գրիգոր Երեցը գիտնական վարդապետ Վարդան Բաղիշեցու խնդրանքով, թվագրում չի պարունակում: Մ. Բրոսեն նշել է. «Ագաթանգեղոսի երկի վերջնամասում կարդում ենք մի հատված, որը կոչվում է «Ղաշանց թուղթ», որն, ինչպես ինձ տեղեկացրել են, հրատարակվել է այս պատմիչի երկի Կոստանդնուպոլսի հրատարակությունում⁵⁸⁷, բայց ես հնարավորություն չունեցա կարդալ, քանի որ առաջին հրատարակությունն այստեղ բացակայում է...»⁵⁸⁸:

Եթե նկատի ունենանք, որ «Ղաշանց թղթի» առաջին հրատարակությունը լատիներեն թարգմանությամբ եղել է Վենետիկում

⁵⁸⁶ Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, էջ 433: Մ դ. հույն եկեղեցական պատմագիր Սոդոմենոսը գրել է. «Ես տեղեկացա, որ հայերն ընդունել են քրիստոնեությունն ավելի առաջ լքան վրացիներն ու ուրիշները...» (տե՛ս Գ. Սմանդյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 130):

⁵⁸⁷ Գիրք վիպասանութեան որ կոչի հոմանունակի Ագաթանգեղոս. Շարադրեալ զսա Ագաթանգեղոսի մեծի իմաստասիրի. Ատենադպրի Տրդատայ արքային Հայոց. Յաղագս ծննդեան, և սննդեան, և վարուց: Տպագրեցաւ ի քաղաքիս Կոստանդինուպօլսոյ, 1709, էջ 413-422: Գ. Տաշյանը, անդրադառնալով Ագաթանգեղոսի երկի XVIII-XIX դդ. հինգ հրատարակություններին, Կոստանդնուպոլսի հրատարակության կապակցությամբ նշել է. «Գիրքը յառաջաբանով եւ յիշատակարանով հանդերձ *դժիթ* (429) էջ է, բայց բուն Ագաթանգեղոսը կը սպառի յէջն *գճդգ* (396), որուն կը յաջորդեն *Ղաւանութիւն* մը եւ *Ղաշանց թուղթը*» (Յ. Տաշեան, Ագաթանգեղոս առ Գեորգայ ասորի եպիսկոպոսին եւ ուսումնասիրութիւն Ագաթանգեղայ գրոց, Վիեննա, 1891, էջ 1):

⁵⁸⁸ M. Brosset, Rapports sur un voyage p. 45.

1682 թ.⁵⁸⁹, իսկ Ազաթանգեղոսի երկի առաջին հրատարակության կազմում՝ 1709 թ., ուրեմն Մ. Բրոսեն իրոք իր ձեռքի տակ ունեցել է Ազաթանգեղոսի ձեռագիր մի ընդօրինակություն: Նաև հնարավոր է, որ նրան ծանոթ է եղել Ազաթանգեղոսի երկի երկրորդ հրատարակությունը (Կոստանդնուպոլիս, 1824 թ.), որի վերջնամասում ևս առկա է «Ղաշանց թուղթը»⁵⁹⁰:

Ազաթանգեղոսի երկի 1709 թ. հրատարակության կապակցությամբ Միքայել Չամչյանցը նշել է. «...յորոյ ի վերջն եղեալ կայ և թուղթն ղաշանց բազում յաւելուածով»⁵⁹¹: Այստեղից Հր. Բարթիկյանը եզրակացրել է, որ ըստ Մ. Չամչյանցի՝ «Ղաշանց թուղթը» նույն Ազաթանգեղոսի գործն է, «բայց հետազայում այլևայլ օտարոտի շարադրանքներով ճոխացված»⁵⁹²:

Մ. Բրոսեն անդրադառնալով Ազաթանգեղոսի երկի վերջնամասի հատվածին՝ նշել է, որ այն վերնագրված է՝ «Բարեկամության և համաձայնության թուղթ՝ մեծ կայսր Կոստանդիանոսի և սուրբ պապ Սիլվեստրոսի, Հայաստանի թագավոր Տրդատի և Ար. Գրիգոր Լուսավորիչի միջև», այսինքն՝ տեքստը նման է կայսեր և պապի կողմից Տրդատին և Ար. Գրիգորին ուղղված շնորհագրի⁵⁹³:

Մ. Բրոսեն այնուհետև նշել է, որ Տրդատի և Գրիգոր Լուսավորիչի կատարած բազմաթիվ հրաշքները նկարագրելուց հետո «Ղաշանց թղթի» հեղինակն ասում է. «Իմ *ֆրեթ* (եղբայր) Տրդատը ինձ պատմել է Ար. Գրիգորի կրած հալածանքների մասին ... Բնօրինակը գրվեց լատիներենով, կնքվեց կայսերական կնիքով և Գրիգորը Ազաթանգեղոս քարտուղարի կողմից մեկ օրինակ ստա-

⁵⁸⁹ Dashants tught=Lettera dell amicitia a dell unione di Costantino gran cesare a disan Siluestro sommo pontefice, e di Tirdade re della Armenia, e dis. Gregorio / illuminatore della natione armena scritta nell anno del Signore 316 [Letter of Concord] (Armeno-Italian), Venice, 1682).

⁵⁹⁰ Յ. Տաշեան, նշվ. աշխ., էջ Բ:

⁵⁹¹ Մ. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Ա, էջ 10:

⁵⁹² Հր. Բարթիկյան, «Ղաշանց թուղթ. կազմը, ստեղծման ժամանակը, հեղինակն ու նպատակը», ՊԲՀ, 2004, № 2, էջ 66:

⁵⁹³ M. Brosset, Rapports sur un voyage.... p. 45.

ցավ կայսերական ջամբռուն»⁵⁹⁴: Մ. Բրոսեին անհեթեթ է թվում այն, որ IV դարի փաստաթղթում երկու անգամ հանդիպում է ֆրանսերեն *ֆրեր* (եղբայր)⁵⁹⁵ և *ջամբռ* (պալատ) բառերը: Ըստ Բրոսեի «Ղաշնաց թուղթը» պետք է լինի մի գրողի ստեղծագործություն, որն ապրել է XIII դարում, երբ ֆրանսերեն լեզուն մասնակիորեն ուներ արդեն ներկայիս ձևը, կամ էլ այն պետք է կազմվեր դեռևս առաջին խաչակրաց արշավանքից հետո (XI դարի վերջ)⁵⁹⁶:

Մ. Բրոսեն իր հետազոտությունը այնպիսի մի ժամանակաշրջանում է հրատարակել, երբ «Ղաշանց թղթի» վավերականության շուրջ բախվում էին իրարամերժ տեսակետներ: Վ. Լանգլուան «Ղաշանց թղթի» վերաբերյալ նշել է, որ այն կեղծ է⁵⁹⁷ (apocryphe) և XII կամ XIII դ. գրողի ստեղծագործություն է (oeuvre d'un écrivain)⁵⁹⁸:

⁵⁹⁴ Ibid., p. 46.

⁵⁹⁵ «Ղաշանց թղթում» հանդիպող *ֆրեր*-frère (M. E. Shirinian, «The Letter of Love and Concord» between Rome and Armenia. A Case of Forgery from the Crusaders Period, *Orientalia Lovaniensia Analecta*, 125. East and West in the Crusader States, Context -Contacts -Confrontations, III, edited by K. Ciggaar and H. Teule, Leuven, 2003, p. 85), օֆրանդ-օֆրանդե, տամուժեկ-demoiselle, շամբռ-chambre և այլ ֆրանսերեն բառերը վկայում են գրության երկրորդ մասի ավելի ուշ ժամանակներում կազմվելու մասին (Յր. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 113): «Ղաշանց թղթի» կրոնաքաղաքական շարժառիթների մասին հիշատակելով Անապատականի (Տիրայր վարդապետ Փանոսյան) «Համառօտ պատմութիւն հայկազնական յարաբերութեանց սկիզբէն մինչեւ 1382» (Անթիլիաս-Լիբանան, 1973, էջ 31-32, 141) աշխատությունը, Ա. Մուշեղյանը կարևորել է «Ղաշանց թղթի» վավերականությունը (Ա. Մուշեղյան, «Զորս Հայքերի առեղծվածը Մովսես Խորենացու Պատմության մեջ». - «Վերածնված Հայաստան», 1990, № 5, էջ 49-58) և այս ուղղությամբ բարձր գնահատել Յր. Բարթիկյանի կատարած հետազոտությունը (Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 94. ծան. 1):

⁵⁹⁶ M. Brosset, op. cit., p. 47.

⁵⁹⁷ Աշ. Գովհաննիսյանը «Ղաշանց թուղթը» «անվավեր» համարելով նշել է, որ «այստեղ գործ ունենք ոչ միայն ժողովրդական լեզունների, այլև մի կեղծիքի հետ, որի վրա դժվար չէ նշմարել ուշ ժամանակների եկեղեցաքաղաքական տենդենցը» (Աշ. Գովհաննիսյան, Ղրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. I, Երևան, 1957, էջ 68, 79):

⁵⁹⁸ Collection des historiens..., t. I, p. 103.

Հետազոտելով պատմագրության մեջ «Ղաշանց թղթի» շուրջ եղած սկզբնաղբյուրային տեղեկությունները և դրանց նվիրված ուսումնասիրությունները՝ Հր. Բարթիկյանը եկել է այն եզրակացության, որ այն իրենից երկու աղբյուր է ներկայացնում՝ «Տրդատ-Կոստանդին պայմանագիրը և մեր համոզմամբ՝ XIII դ. կեղծիքը»⁵⁹⁹։ Հետազոտողը իրավացի է համարել այն կարծիքը (Հ. Բարսեղ վ. Սարգիսեան, Ա. Տեր-Միքելյան), որ պայմանագրի կնքման վայրը ոչ թե Հռոմն էր, այլ Բյուզանդիայի Նիկոմեդիա քաղաքը՝ Փոքր Ասիայում⁶⁰⁰։ Հր. Բարթիկյանը այդ պայմանագրում մի շարք հոդվածներ է դիտարկում, որոնք վերաբերում են պայմանավորվող պետությունների (Արևելահռոմեական կայսրություն և հայ Արշակունիների թագավորություն) տարածքային ամբողջականությանը, Տրդատի և Կոստանդին Մեծի միջև կնքված «բանկանության և փոխադարձ օգնության պայմանագրին», Փոքր

⁵⁹⁹ Հր. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 82: Հատկապես ընդգծելով այդ սկզբնաղբյուրի եզրափակիչ խոսքերը («... իսկ միև գիրս փոխադրեալ ատենադարին Հայոց թագաւորին Տրդատայ մեծի Ազաթանգեղոսի, քաջ ճարտար գրչի և տարեալ ի Հայս...») Ա. Մուշեղյանը նշել է, որ դրանք «Ղաշանց թղթին» «վերագրում են պատկառելի հնություն և նրա ստեղծումը հասցնում մինչև IV դարի առաջին տասնամյակները»։ Հետազոտողը որպես դրա գոյության փաստ V դարում, հիշատակել է եղիշեի այն հաղորդումը, որ «451 թ. Ավարայրի ճակատամարտի նախօրյակին հայ նախարարները հռոմեացիների թեոդոս Փոքր կայսրից ռազմական օգնություն խնդրելով ընդդեմ պարսիկների ներկայացրին նախնյաց հիշատակարանները, որ վկայում էին Հայաստանի և Հռոմի միջև վաղուց կնքված դաշինքի մասին, և, որ Հռոմեական արքունիքում ևս այդ ժամանակ պահվում էին մատյաններ, «որ գնոյն ուխտ հաստատութեան ի ներքս գտանէին»... Ամենկին չեն ժխտում հետսամուտ աղավաղումների, բնագրական ձեռնամխության, թերևս նաև լատիներենից ուշ թարգմանված որոշ շերտերի առկայությունը «Ղաշանց թղթի» մեզ հասած ձեռագրերում, որի հետևանքով նրանցում տեղ են գտել Կիլիկյան շրջանին բնորոշ ֆրանկյան և այլ բարբառային բառեր: Այսուհանդերձ այն փաստը, որ դաշինքի իրողությունը միահամուռ հաստատում են Ազաթանգեղոսը, Փավստոսը, Եղիշեն և Մովսես Խորենացին, համոզիչ ցույց է տալիս, որ այդ վավերագիրը գոյություն ուներ արդեն իսկ V դարում» (Ա. Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, էջ 95-97):

⁶⁰⁰ Հր. Բարթիկյան, նշվ. աշխ., էջ 84, 87:

Հայքի հայ քրիստոնյա դատապարտյալների ազատմանը և այլն⁶⁰¹:

Չոգևոր պատմությանը Ս. Բրոսեի անդրադարձի արտահայտություններից է եկեղեցական աստիճանակարգի զարգացման դիտարկումը՝ Հայ եկեղեցու նվիրապետության ընդլայնման տեսանկյունից: Գրելով վաղ քրիստոնեական շրջանից հաստատված Ամտիոքի, Չոռնի, Ալեքսանդրիայի և Եփեսոսի՝ չորս ավետարանիչների աթոռների, ինչպես նաև Կոստանդնուպոլիսի և Երուսաղեմի աթոռների մասին, նա միևնույն ժամանակ նշել է, որ

⁶⁰¹ Նույն տեղում, էջ 88-97: Ինչպես նշել է Ա. Մուշեղյանը՝ «XIX դարի կեսերին բուռն վեճեր ծագեցին «Դաշանց թղթի» վավերականության խնդրի շուրջ (Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 95-97): Եղած թեր ու դեմ կարծիքները հիմնականում անփոփոխված են երկու քննախոսություններում Մատթեոս կաթողիկոսի «Հաստատութիւն ստուգութեան Դաշանց թղթոյն» (Մատթեոս կաթողիկոս Ամենայն Հայոց, Հաստատութիւն ստուգութեան Դաշանց Թղթոյն, զոր Կոստանդիանոս մեծ ինքնակալն Չոռվմայ և Ս. Սեղբեստրոս Հայրապետն Չոռվմայ տուած են Տրդատ թագաւորին և Աբ. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին. - ճառքառ, 1861, հ. Բ, տետրակ ԺԵ, էջ 237-244, ԺԶ, էջ 253-260) և Ս. Էջմիածնի միաբան Կարապետ վ. Շահնազարյանի «Դաշանց թղթոյ քննութիւնն ու հերքումը» [Կ. Շահնազարեանց, Դաշանց Թղթոյ քննութիւնն ու հերքումը, Պարիս, 1862, էջ 90-111: Ս. Զուլալյանը անդրադառնալով Վ. Ռուբրուկի ճանապարհորդական տեղեկություններին՝ նշել է, որ նա ի թիվս Թավրիզի, Շամախու, Թիֆլիսի, Նախիջևանի, Կարինի մասին տվյալների, հատուկ հիշատակել է, որ «Դաշանց թղթի» զաղափարը այդ ժամանակաշրջանում մեծապես տարածված էր հայերի միջավայրում (Ս. Կ. Զուլալյան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա, էջ 15): Ա. Մուշեղյանը ենթադրել է, որ պայմանագիրը կնքվել էր «կամ Կոստանդնի ամուսնության հանդեսի (որին հրավիրված էր Տրդատը), կամ էլ Լիկինիոսի դեմ կայսեր տարած հաղթանակի առթիվ Նիկոմեդիա քաղաքում կազմակերպված հանդիսավորությունների ժամանակ, որոնց մասնակցելու համար պիտի հրավիրված լիներ հայոց արքան»: Իսկ XIII դարում ստեղծված «կեղծիքը», ըստ Յր. Բարթիկյանի, մի նպատակ էր հետապնդում: Քրիստոնեական եկեղեցու կողմից մեծ հեղինակություն վայելող, այդ թվում և Հայոց եկեղեցու կողմից Սեղբեստրոս պապի (314-335 թթ.) անվամբ ու հեղինակությամբ ամրագրել և տարածաշրջանի լատիներների ուղեգրություններից զերծ պահել Սուրբ վայրերի հայոց շարժական և անշարժ զույքը, այն պահպանել «հաստատուն և անփոխադարձ... Դա կիլիկյան իշխանությունների ներքին քաղաքականության արտահայտությունն է, որով մեկ տասնյակ թշնամական պետությունների շրջապատում հայ Կիլիկիան գոյատևեց ամբողջ երեք դար...» (Ա. Մուշեղյան, նշվ. աշխ., էջ 87, 110-112):

հայերը, բացի Էջմիածնի, Աղթամարի և Սսի իրենց կաթողիկոսներից ունեն Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքներ: Նա նաև հիշատակել է Աստրախանի, Ղրիմի, Թիֆլիսի, Արցախի⁶⁰² և Շամախի հինգ հայ առաջնորդներին կամ թեմերի եպիսկոպոսներին⁶⁰³:

Քրիստոնեության առաջին դարերին վերաբերող Մ. Բրոսեի հայացքները վկայում են հայկական սկզբնաղբյուրների հաղորդումների տեղեկություններին՝ հայագիտության մեջ ընդունված ավանդական դիրքերից մոտեցման մասին: Այդ տեսանկյունից դիտարկելով անվանի գիտնականի կողմից սկզբնաղբյուրների ուսումնասիրությանը՝ կարելի է տեսնել նրա գիտաքննական մեթոդաբանության հետ մեկտեղ ավանդական պատմության նկատմամբ մեծ զգուշավորությունը: Մ. Բրոսեն համարում էր, որ յուրաքանչյուր դարաշրջանի սկզբնաղբյուր իր ժամանակի ծնունդն է և սկզբնաղբյուրային տեղեկություններն անհրաժեշտ է հասկանալ և մեկնաբանել ըստ բովանդակած նյութի: Հայ պատմագիտության մի շարք կարևորագույն հարցեր, որոնք հետազայում քննության ենթարկվեցին և բանավեճերի առարկա դարձան, Մ. Բրոսեի հետազոտություններում զբաղեցնում են իրենց կայուն տեղը: Այսպիսով, Մ. Բրոսեի կողմից ընդունված հայեցակարգի համաձայն՝ Մովսես Խորենացին V դարի հեղինակ է, եղեսիայում I-ին դարի առաջին կեսին գահակալած և քրիստոնեություն ընդունած Աբգարը՝ Հայոց թագավոր էր, Հայաստանում I դ. առաքելական քարոզությամբ էին Հայ Առաքելական Եկեղեցու հիմքերը դրվել, քրիստոնեությունը պետականորեն ընդունվել էր 301 թ. Հայոց արքայական ընտանիքի, բանակի և ժողովրդի մկրտությամբ:

⁶⁰² Մ. Բրոսեն Արցախ անվան հետ մեկտեղ (la province arménienne d'Artsakh) հիշատակել է նաև շատ ավելի ուշ *Քարաբաղ* (Qarabagh) անվանածը (Deux historiens arméniens: Kiracos de Gantzac..., p. 88, com. 5):

⁶⁰³ Histoire de la Siounie..., p. 68, com. 3.

3. Հայ գրերի գյուտի և V դարի գրականության արժևորումը

Հայ գրերի գյուտը արժևորելիս Սեն-Մարտենը նշել է, որ Մես-րոպ Մաշտոցը Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի աջակցությամբ իր ազգի համար այբուբեն ստեղծեց և համընդհանուր դարձրեց իր հայրենիքում⁶⁰⁴։ Հայերի համար այս մեծ ազգային գործը ֆրասիացի հետազոտողի հայեցակարգի համաձայն, պայմանավորված էր հայ ժողովրդին եկեղեցական արարողության լեզուն մայրենիով հասկանալի դարձնելը⁶⁰⁵, ինչպես նաև պարսից արքայի հրահանգներով հունարեն լեզվով գրականության ոչնչացմամբ⁶⁰⁶։

Սեն-Մարտենը հիմնվելով Մովսես Խորենացու հաղորդման վրա⁶⁰⁷ նշել է, որ չնայած պարսից պաշտոնյաները IV դ. երկրորդ կեսին հունարենով բազմաթիվ գրքեր էին ոչնչացրել, այնուամեն-

⁶⁰⁴ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 7.

⁶⁰⁵ Այս կապակցությամբ Սեն-Մարտենը հիմնվել է իր կարծիքով Կորյունին պատկանող (J. Saint-Martin, op. cit., t. I, p. 12) Փարպեցու հետևյալ հաղորդման վրա. «Եւ այսպէս բազմաժամանակեայ մտածութիւնն երանելոյ առն Մաշտոցի ընկալեալ յամենախնամ մարդասիրեն Աստուծոյ՝ զօրացոյց զնա հոգւով ողորմութեան իւրոյ։ Քանզի հոգացեալ յարաժամ տրտմէր երանելի այրն Մաշտոց, տեսանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանցն Հայաստան աշխարհիս. որք բազում թոշակօք և հեռագնաց ճանապարհօք և բազմաժամանակեայ դեզերմամբք մաշէին զաւուրս իւրեանց ի դպրոցս ասորի գիտութեան։ Քանզի պաշտօն եկեղցւոյ և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և յեկեղեցիս Հայաստան ժողովրդոցս. յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այախսի մեծ աշխարհի, և լինէր պաշտօնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանլրութեն լեզուին ասորւոյ» (Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց եւ Թուրք առ Վահան Մամիկոնեան, էջ 13)։

⁶⁰⁶ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 7.

⁶⁰⁷ «Յետ մահուանն Արշակայ զումարեաց Շապուհ զօր բազում ի ծոնն Մեհրուժանայ, և արծակեաց ի Հայս... Որոյ յանձն առեալ և եկեալ... Եւ զամենայն կարգ քրիստոնէութեան ջանայր խափանել... Եւ զորս միանգամ գիրս գտանէր՝ այրէր, և հրաման տայր մի ուսանել զդպրութիւն յունարէն, այլ զպարսիկ, և մի ոք իշխեսցէ յոյն խօսել կամ թարգմանել. այսպիսի ինչ պատճառաւ, զի ամենեւին մի լիցի Հայոց ընդ Յունաց ծանօթութիւն և հաղորդութիւն սիրոյ, այլ ճշմարիտ խափանել զքրիստոնէութեան ուսումն. զի յայնժամ գիր դպրութեան Հայոց չև ևս էր լեալ, և յունականաւ վարէին եկեղեցւոյ կարգք» (Մովսէս Խորենացի, էջ 301)։

նայնիվ, նրանք ի վիճակի չեղան ճնշելու դրանց նկատմամբ հայերի ունեցած ճաշակը, արդյունքում՝ «նոր ուժով հունական գրականության ուսումնասիրության վերածննդի ականատեսն ենք դառնում»⁶⁰⁸։ V-VII դարերում Հայաստանում տեղի ունեցած գրական շարժումը Սեն-Մարտենը պայմանավորել է հունարեն լեզվով եղած գրականության հայերեն թարգմանության և հայերենով ստեղծվող ինքնուրույն գրականության հետ⁶⁰⁹, որով հայ ժողովուրդն ընդդիմանում էր պարսից ճնշմանը քաղաքական և գաղափարական ուղորտներում։

Հիմնվելով Մովսես Խորենացու աշխատության վրա⁶¹⁰ Սեն-Մարտենը նշել է, որ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի հիմնած դպրոցներում ուսուցանվող բազմաթիվ աշակերտներ իրենց կրթությունը շարունակում էին Եդեսիա, Աղեքսանդրիա, Անտիոք, Բյուզանդիոն, Աթենք և Հռոմ քաղաքներում, ուսուցանելու հունարեն լեզուն, փիլիսոփայությունը և գրականությունը⁶¹¹։

⁶⁰⁸ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 7. Հ. Մանանդյանը հատուկ հետազոտել և գնահատական է տվել Հայաստանում հունաբան դպրոցի զործունեությանը (տե՛ս Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները, Վիեննա, 1928)։ Հունաբան դպրոցի զործունեությունը և փիլիսոփայական աշխարհայացքը մանրամասն ուսումնասիրել է նաև Սեն Արևշատյան (С. Арешатян. Формирование философской науки в древней Армении. Ереван, 1973, с. 141-327)։

⁶⁰⁹ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 7. Սեն-Մարտենը, անդրադառնալով վաղ միջնադարյան հայ գրականության ստեղծման դրդապատճառներին, և այդ խնդրում կարևորելով քաղաքական գործոնը, մասնավորապես, ընդգծել է հայ Արշակունիների թագավորության անկման հանգամանքը և դրա հետևանքները (Ibid., p. 9, 14, 32)։

⁶¹⁰ «Ընդ այն ժամանակս եկեալ Մեսրոպայ, և բերեալ զնշանագիր մերոյ լեզուիս, և հրամանաւ Վռամշապիոյ և մեծին Սահակայ ժողովեալ մանկունս ընտրեալս... և դպրոցս կարգեաց յամենայն գաւառս... Ապա եկեալ և առեալ Մեսրոպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփ և զմիւս ընկեր մին ի Կողբ գեղջէ, որում անուն եզնիկ կոչէր՝ առաքեն ի Միջագետս ի քաղաքն Եդեսիայ... առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիայ..., յԵդեսացոցն հասանեաք քաղաք... մտաք յեզիպտոս... յորում բարեյարմար մեծն Աղեքսանդրիայ է շինեալ քաղաք բարեժամանակ ի մէջ ծովուն... Նաւել յելլադայ կանելով՝ յիտալիա բռնութեամբ անկաք հողոնց... սակաւ ինչ մնացաք յԱթենս...» (Մովսէս Խորենացի, էջ 328, 341, 343-346)։

⁶¹¹ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 7.

Հունա-հռոմեական գիտական կենտրոններում ուսումը շա-
րունակելու ավանդույթը զալիս էր դեռևս մախորդ դարաշրջա-
նից: Առավել նշանավոր էր հայազգի ճարտասան և փիլիսոփա
Պրոտերեսիոսը (276-367 թթ.), ում գործունեությունը բարձր գնա-
հատելով է. Դյուլորիեն նշել է, որ նա արտասահման մեկնած և
հռետորական արվեստի ու փիլիսոփայության բնագավառում
նշանավորված հայ երիտասարդներից էր. «Ատտիկայի մայրա-
քաղաքում (Աթենք - Ա. Դ) Հայաստանի ներկայացուցիչներից ա-
մենահայտնին Պրոտերեսիոսն էր, որի մասին պատմում է Եվնա-
պիոսը իր «Փիլիսոփաների վարքեր»-ը երկում: Պրոտերեսիոսն
այնպիսի համբավ ձեռք բերեց, որ Հռոմում նրա պատվին արձան
կանգնեցվեց հետևյալ արձանագրությամբ. «Regina rerum Roma
regi eloquentiae»⁶¹²:

Անհրաժեշտ է նշել, որ հույն հռետորաբան և պատմագիր Եվ-
նապիոսի (345-420 թթ.)⁶¹³ երկի ամբողջական վերնագիրն է «Փի-
լիսոփաների և սովեստների վարքեր»-ը⁶¹⁴: Է. Դյուլորիեի մեջբե-
րած լատիներեն արտահայտությունը հունարեն բնագրում հե-
տևյալ կերպ է նշված. «Η ΒΑΣΙΛΕΥΟΥΣΑ ΡΩΜΗ ΤΟΝ

⁶¹² E. Dulaurier, Les Arméniens en Autriche, en Russie et en Turquie. La société arménienne au XIX^e siècle, sa situation politique, religieuse et littéraire. - Revue des Deux-Mondes, April 15, 1854, p. 210. Ս. Արևշատյանը նշել է. «Rerum regina Roma - regi Eloquentiae» ձևով է թարգմանել. «Царница вселенной Рим - царю красноречия») (С. Арешатян, укр. соч., с. 26):

⁶¹³ Եվնապիոսը Պրոտերեսիոսի (Προταρέσιος) աշակերտն էր և կենսագիրը: Նրա համբավավոր աշակերտներից էին մահ. Բարսեղ Կեսարացին (330-379 թթ.), Գրիգոր Նազիանզացին (330-390 թթ.) և հայ եպիսկոպոս Եվստաթիոս Սե-
բաստացին (մահ. 380 թ.) (С. Арешатян, укр. соч., с. 25-26):

⁶¹⁴ Ευνάπιου, Βίοι φιλοσόφων καὶ σοφιστῶν, տե՛ս Philostratus and Eunapius. The Lives of the Sophists, with an English translation by Wilmer Cave Wright, London, 1922, p. 342. Ըստ Եվնապիոսի հաղորդման Պրոտերեսիոսը Հայաստանի այն մասից էր, որն առավել մոտ էր Պարսկաստանին [Ibid., op. cit., pp. 480-481: Դեռևս 1884 թ. հայ մեծանուն գրող ԲաժՖին Պրոտերեսիոսին նույն Պարոույր Հայկազնին նվիրված վիպակ է գրել (ԲաժՖի, «Պարոույր Հայկազն».- Երկերի ժողովածու, հ. IV, 1963, էջ 165-207): Տես նաև С. Арешатян, укр. соч., с. 25-26. Ա. Դյուլիսանյան, Էդուարդ Դյուլորիեն հայազետ, Եվրոպացի հայազետ-ներ մատենաշար IV, Երևան, 2004, էջ 14]:

ΒΑΣΙΛΕΥΟΝΤΑ ΤΩΝ ΛΟΓΩΝ»⁶¹⁵: Այս արտահայտությունը եվնապիոսի երկի անգլերեն հրատարակությունում Վ. Ռայթը ներկայացրել է. «Rome the Queen of cities to the King of Eloquence» («Քաղաքների թագուհի Ռոմը՝ ճարտասանության արքային»)՝⁶¹⁶:

Սեն-Մարտենը նշել է, որ V դ. Սահակ-Մեսրոպյան դպրոցի առավել հայտնի աշակերտներից էին Մովսես Խորենացին, ով իր հմայիչ գրելաոճի համար անվանվել է Քերթող, այսինքն՝ Քերական, Մամբրե Վերծանողը, Կորյունը, Եղիշեն, Դավիթ փիլիսոփան և ուրիշներ⁶¹⁷: Շնորհիվ այդ դպրոցի շրջանավարտներից շատերի գործունեության՝ «հույների երկերի թարգմանությունների մեծ մասն այժմ գոյություն ունեն»⁶¹⁸:

Սեն-Մարտենը ոսկեդարյան հայերեն թարգմանություններից նախ հիշատակել է Մեսրոպ Մաշտոցի կատարած Աստվածաշնչի թարգմանությունը Յոթանասնից տարբերակից: Այնուհետև նա նշել է, որ Եվսեբիոսի «Եկեղեցական պատմության», եկեղեցական հայրերի, Արիստոտելի և Պլատոնի երկերի թարգմանությունների մեծագույն մասը թարգմանել է «Դավիթ փիլիսոփան՝ Մովսես Խորենացու համադասարանցին, որն ապրել է V դարի կեսերին»⁶¹⁹:

Սեն-Մարտենը բարձր գնահատելով նշված հունարեն երկերի հայերեն թարգմանությունները՝ գրել է. «Եթե դատելու լինենք այս թարգմանությունների մասին այն ամենից ինչ ունենք թագա-

⁶¹⁵ Philostratus and Eunapius, op. cit., p. 508.

⁶¹⁶ Ibid., p. 509.

⁶¹⁷ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 318-319.

⁶¹⁸ Ibid., p. 7-8. Հայտնի է, որ Եվսեբիոս Կեսարացու «Ժամանակականցի», Արիստիդես Աթենացու (II դ.) «Քրիստոնեական հավատի ջատագովության», Փիլոն Ալեքսանդրացու (մ.թ.ա. 25 - մ.թ. 50 թ.) 7 աշխատությունների, Հերմես Եռամեծի «Սահմանք»-ի, Իրենիոսի զնոստիկների վերաբերյալ աշխատության, Տիմոթեոս Ալեքսանդրացու (IV դ. վերջ - 477 թ.) Հականառության», Եվագրիոս Պոնտացու և այլ երկերի հին հունարեն բնագրերը ժամանակի ընթացքում կորել են և պահպանվել են միայն դրանց հայերեն թարգմանությունները (С. Арешатян, ук. соч., с. 19, 38, 79):

⁶¹⁹ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 8.

վորական գրադարանում⁶²⁰, նրանք ամենայն մանրակրկիտ ճշգրտություն ունեն և կծառայեն ավելի ճշգրտորեն բնորոշելու այս փիլիսոփաների տեքստերի բազմաթիվ հատվածների իմաստը, որոնք փոփոխվել են գրիչների չիմացության պատճառով»: Սեն-Մարտենը նշել է, որ ավելի ուշ Հայաստանը ունեցավ Հիպոկրատեսի և Գաղենոսի երկերի մի տարբերակ, ինչպես նաև «Հոմերոսի պոեմների արծակ» թարգմանությունը⁶²¹:

Հատկանշական է, որ իր շարադրանքի ընթացքում Սեն-Մարտենը պարբերաբար ուշադրություն է դարձրել հունական սկզբնաղբյուրներից կատարվող հայերեն թարգմանությունների վրա⁶²²: Միաժամանակ, հիմնվելով Սովսես Խորենացու հաղորդումների վրա⁶²³, Սեն-Մարտենը նշել է հունարեն լեզվով նրա օգտագործած սկզբնաղբյուրների հեղինակներին՝ Հովսեպոս Փլավիոս, Բերոսոս, Աբյուղենոս, Կեփաղիոն, Ողիմպիոդորոս, Մանեթոն, Հուլիոս Ափրիկանացի, Փղեգոնիոս Թրալացի⁶²⁴:

Սեն-Մարտենը հիմնվելով Միքայել Չամչյանցի տեղեկության վրա⁶²⁵ նշել է, որ VII դ. վերջին Հայոց իշխան Ներսես Կամսարականի հանձնարարությամբ Փիլոն վարդապետը թարգմանեց Սոկրատեսի «Եկեղեցական պատմությունը», որից մի զգալի հատված, ինչպես ինքն է ասում, պահվում է Ֆրանսիայի թագավորական գրադարանում⁶²⁶: Սեն-Մարտենը Ֆրանսիայում պահվող ևս մեկ հայերեն ձեռագիր է հիշատակել. «Մենք թագավորական գրադարանում ունենք մի թարգմանություն, որը կատարվել է

⁶²⁰ Ներկայումս՝ Ֆր. Միտերանի անվան Ֆրանսիայի Ազգային գրադարան:

⁶²¹ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 8, com. 4.

⁶²² Սեն-Մարտենը հաջորդ դարերի հայ թարգմանիչներից հիշատակել է նաև Գրիգոր Մագիստրոսին (XI դ. կեսեր): Հիմք ընդունելով Միքայել Չամչյանցի աշխատությունը (Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 927-928) նա գրել է. «Հայ իշխան Գրիգոր Մագիստրոսը՝ Արշակունիների տոհմից, որը հայտնի էր իր գիտելիքներով և ռազմական տաղանդով, թարգմանել է հույն մաթեմատիկոսների շատ աշխատություններ» (J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 9-10):

⁶²³ Սովսես Խորենացի, էջ 9, 13-14, 21-22, 120, 124-125:

⁶²⁴ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 9.

⁶²⁵ Ս. Չամչյանց, Պատմութիւն Հայոց, հ. Բ, էջ 375:

⁶²⁶ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 9.

1245 թ. Հայոց 694 թ.՝ «Պատմություն տիեզերական» երկը, որը կազմել է XII դ. վերջում մահացած Անտիոքի Հակոբիկյան պատրիարք Սիբայելը: «Պատմություն տիեզերական» երկում հաճախ գովաբանությամբ մեջքերվող ժամանակագրությունը, ասորերեն գրել է Գրեգորի Աբուլֆարաջը (Բար Հեբրայոս), որն Ասսեմանի⁶²⁷ գիտնականին հայտնի չէր: Այդ տեքստի բնագիրը որքանով ինձ հայտնի է՝ Եվրոպայի ոչ մի գրադարանում գոյություն չունի»⁶²⁸:

Վ. Լանգլուան նույնպես բարձր գնահատելով թարգմանիչների կատարած գործը՝ նրանց անվանել է «սուրբ թարգմանիչներ»⁶²⁹:

428 թ. Արշակունյաց թագավորության անկմանը հաջորդած ժամանակաշրջանի կապակցությամբ Սեն-Մարտենը հատուկ անդրադարձել է Հայաստանի նկատմամբ պարսից արքունիքի վարած քաղաքականությանը: Հիմք ընդունելով Եղիշեի և Ղազար Փարպեցու հաղորդումները՝ Սեն-Մարտենը նշել է, որ մոզերը օգտվում էին պարսից արքաների հզորությունից և պաշտպանությունից Հայաստանում զրադաշտական կրոնը հաստատելու համար: Հակառակ դրան, հայ աստվածաբանները քրիստոնեական բովանդակության գրականություն էին ստեղծում՝ պաշտպանելով քրիստոնյա հավատքը և իրենց իշխաններին հորդորում հեռու մնալ օտար կրոնից: Սեն-Մարտենը հատկապես բարձր է գնահատել քրիստոնեական ուսմունքի պաշտպանությանն ուղղված Եզնիկ Կողբացու ջատագովական եռանդը⁶³⁰:

Սեն-Մարտենը պարսկական արքունիքի վարած կրոնական քաղաքականության արտահայտությունն է համարել հայերին զրադաշտություն պարտադրող Վեի Միիր Ներսեսի (Միիրներսես Վզուրկ) հրովարտակը⁶³¹, որը հետազոտողի բնութագրմամբ՝ մի

⁶²⁷ Ծագումով Լիբանանից՝ իտալացի արևելագետ Սիմոն Ասսեմանի (1752-1821 թթ.):

⁶²⁸ J. Saint-Martin, op. cit., t. I, pp.13-14.

⁶²⁹ V. Langlois, Mémoire sur les origines..., p. 200.

⁶³⁰ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 14.

⁶³¹ Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, էջ 24-27:

երկարավուն, պարսկական «աստվածաբանական դոկտրին (ուսմունք)» էր⁶³²:

Սեն-Մարտենը անդրադարձել է նաև ասորական գրականությանը, որն, ինչպես ինքն է նշում, քրիստոնեության վաղ ժամանակաշրջանում կարևոր էր համարվում «քաղաքական, և եկեղեցական պատմության, ինչպես նաև հայրախոսության համար»⁶³³: Դրա հետ մեկտեղ, հիմնվելով Բրքիշոյի և Շմուելի՝ Սասանյան արքունիքի կողմից Հայոց կաթողիկոսական աթոռին ապօրինի նշանակվելու մասին Մովսես Խորենացու տեղեկություններից⁶³⁴, Սեն-Մարտենը նշել է, որ պարսից արքաները Սբ. Գրիգորի աթոռից օրինական կաթողիկոսին հեռացնելու և նրա տեղը ասորիներ նշանակելու քաղաքականություն էին վարում, ինչը հայերի մեջ «մեծ ատելություն առաջացրեց ասորիների նկատմամբ, ինչպես մեծ մասամբ կարելի է տեսնել նրանց աշխատություններում, ինչպես նաև կրոնական խնդրում, քանզի, չնայած նրանց տեսակետներում առկա են նմանություններ, սակայն միմյանցից շատ էին հեռացել»⁶³⁵:

Սեն-Մարտենը գրել է Հայ եկեղեցու դեմ մարտնչող պարսից արքունիքից հովանավորվող զրդաշտականությանը և ասորական, հատկապես, հայոց դավանանքի նկատմամբ Նեստորական եկեղեցու՝ ոտնձգություններին դիմակայող հայ հեղինակների մասին: Այնուհետև, նկարագրել է Վարդան Մամիկոնյանի գլխավորած հայ ժողովրդի ապստամբությունն ընդդեմ պարսից բռնակալության⁶³⁶: Այս առիթով Սեն-Մարտենը նշել է, որ բացի Եղիշեի⁶³⁷ երկից «հայերն ունեն նաև բազմաթիվ աստվածաբանա-

⁶³² J. Saint-Martin, op. cit., t. I, pp. 14-15.

⁶³³ Ibid., p. 10.

⁶³⁴ Մովսես Խորենացի, էջ 350, 353-354:

⁶³⁵ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 11.

⁶³⁶ Ibid., pp. 13-14.

⁶³⁷ Եղիշեի աշխատության մի ձեռագիր օրինակի կապակցությամբ Վ. Լանգլուային տեղեկություն էր հասել, որի համաձայն՝ «Վենետիկի հայկական ակադեմիայի» հայր Գրիգոր Կարապետը գրանցել էր Յովհաննես Դադյանի՝ ծնունդով Իսպահանի հայ Խաչատուր Յովհաննիսյանի արած բացահայտումը՝

կան աշխատություններ, որոնք նվիրված են տարբեր հեղինակների և աղանդների սխալների դեմ պայքարին, այդպիսիններից Հայաստանում և հյուսիսային Միջագետքում հայտնի էին Արևորդի կամ արևի զավակները, թոնդրակեցիները՝ ոմն Ղազար Թոնդրակեցու անունից..., որոնք թվում է, թե պահպանել էին Ասիայի հին ազգերի կրոնական բազում հայացքները»⁶³⁸:

Այսպիսով, ըստ Սեն-Մարտենի, Մեսրոպ Մաշտոցի կողմից հայ գրերի ստեղծման և դրան անմիաջապես հաջորդած թարգմանական և ինքնուրույն գրականության ստեղծման հիմնական պատճառն էր հայ ժողովրդի դիմակայությունը պարսից արքունիքի վարած նվաճողական քաղաքականությանը, քանզի այդ ընթացքում Հայաստանում Սասանյանները ոչնչացնում էին հունարեն լեզվով եղած գրականությունը, այնուհետև կիրառելով մաս կրոնական բռնաճնշումներ թե՛ Հայ եկեղեցու կաթողիկոսական աթոռին ասորական դրածոների նշանակմամբ և թե՛ գրադաշտականության (մազդեզականություն) պարտադրմամբ:

V դարում մշակութային և քաղաքական ասպարեզներում հայ ժողովրդի ազգային ինքնության պաշտպանության ոգու հա-

Սամարղանդի ամրոցի մի աշտարակում պահված հայերեն անտիկ գրքերի մասին: Սակայն, ըստ Վ. Լանգլուայի, քաղաքում այդպիսի պահոց չի եղել և ողու ճանապարհորդներին արևելագետ Մ. Խանիկովը հաստատում է, որ «Սամարղանդի անհավանական նկարագրությունը ապացուցում է, որ նա (Խաչատուրը - Ա.Դ.) երբեք չի տեսել Թամերլանի... մայրաքաղաքը» (V. Langlois, *Mémoire sur les origines* p. 217): Իսկ Գ. Կարապետի վկայությունները հավաստում են, որ եղիշեի աշխատության և Խաչատուր Հովհաննիսյանին առնչված տեղեկությունները պետք է համապատասխանեն իրականությանը: Եղիշեի աշխատության ձեռագիր օրինակը նա նույնպես հիշատակել է Խ. Հովհաննիսյանի վկայած Սամարղանդի պահոցի գրքերի թվում: Գ. Կարապետը գրել է, որ «Վենետիկի, Վիեննայի, Հռոմի, Մոսկվայի ակադեմիաների լուսավորյալ հայերը մեկ դարից ավել է, ինչ նվիրվել են ջանասիրաբար հայ գրականության և հայոց լեզվի ուսումնասիրությանը...» (*Soulèvement national de l'Arménie chrétienne au V^e siècle contre la loi de zoroastre. sous le commandement du prince Vartan le Mamiconien. ouvrage écrit par Elisée Vartabed. traduit en français par M. l'abbé Grégoire Kaharagy Garabed. Paris, 1844. p. 349-353*):

⁶³⁸ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 15. Թոնդրակյան շարժման հիմնադիրն էր Սմբատ Ջաղեհավանցին (IX դ.) իսկ Ղազարը (XI դ. կեսեր.) նրան հաջորդած աղանդապետերից էր (ՀԺՊ, հ. Գ, էջ 305):

յեցակարգով է Սեն-Մարտենը մոտեցել Հայոց պատերազմին և, հիմնվելով Եղիշեի հաղորդումների վրա, գրել. «Սինչ Վարդանը փառքով էր պսակվում Կուրի և Կասպից ծովի սահմաններին, մարգպան Վասակը, որը բավականին երկար ժամանակ գախտնորեն գործում էր ի օգուտ Հազկերտ II-ի, օգտվեց Վարդանի բացակայությունից, որպեսզի դեն նետի դիմակը, և ուրացավ քրիստոնեությունը... 451 թ. գարնանը Հազկերտի զորքերի հրամանատար Մուշկան Նյուսալավուտը՝ հսկայական բանակով մտավ Հայաստան: Վարդանը և մյուս նախարարները հավատարիմ իրենց երդմանը՝ զորքերը հավաքելով գնացին պարսիկների և դավաճան Վասակի դեմ»⁶³⁹: Սեն-Մարտենը նշել է, որ Տղմուտի ափին՝ Ավարայրի ճակատամարտում հայերը մեծ քաջություն ցուցաբերեցին⁶⁴⁰:

Վ. Լանգլուան նույնպես անդրադառնալով հայոց լեզվի պատմության և հայ գրերի խնդրին՝ բարձր է գնահատել Հայաստանում դարերի ընթացքում ստեղծված հարուստ գրական մշակույթը: Կարևորելով այդ փաստը՝ նա անդրադարձել է V դարի շարժմանը նախորդած ժամանակներում հայերեն զարգացած խոսքի բանավոր գոյության իրողությանը⁶⁴¹: Այդ մշակույթի հետքերը, ըստ Վ. Լանգլուայի, երևում են Մովսես Խորենացու *Պատմության* մեջ և բավարար են, որպեսզի հնարավոր լինի գաղափար կազմելու դեռևս բավականին վաղ ժամանակներում հայոց լեզվի վիճակի մասին: Ըստ գիտնականի՝ այդ են վկայում ազգային և ժողովրդական երգերը, էպիկական բովանդակության պատառիկներ պահպանած տեքստերը, որոնցում «հմուտ ռիթմիկ համաչափությամբ շարահյուսվում են երկրի հին ավանդույթները, որոնք կրոնական և աշխարհիկ տոներին ժողովուրդը երգում էր երաժշտական գործիքների նվագակցությամբ»⁶⁴²: Անդրադառ-

⁶³⁹ J. Saint-Martin, op. cit., t. I, p. 326.

⁶⁴⁰ Ibid., p. 327.

⁶⁴¹ V. Langlois, *Mémoire sur les origines* ..., p. 203.

⁶⁴² Ibid., p. 204.

նալով Հայաստանի տարբեր գավառներին՝ ֆրանսիացի հայագետը Գողթան գավառի կապակցությամբ նշել է Սովսես Խորենացու վկայությունը, որի համաձայն՝ նա այնտեղ այդ ավանդությունները դեռևս երգեցողությամբ էր լսել:

Վ. Լանգլուան որպես ուշագրավ փաստ է նշել այն հանգամանքը, որ դարերի ընթացքում այդ ավանդությունները չնայած փոփոխության են ենթարկվել, այնուամենայնիվ պահպանել են իրենց հիմքը: Այդ կապակցությամբ նա գրել է. «Այդ բանաստեղծական պատառիկները բացատրում են, թե ինչպես V դարի առաջին տարիներին Հայաստանն արդեն այդպիսի բարձր մակարդակի հասած գրականություն ուներ», որը ստեղծվեց ու հզորացավ խնդրո առարկա դարաշրջանում⁶⁴³:

Վ. Լանգլուան հայոց լեզվի և գրականության զարգացման գործում բարձր գնահատելով ավանդության դերը, եզրակացրել է, որ ուշադրության արժանի երևույթ է, այն, որ պատմությամբ այդպիսի հին ազգը մտքով չափազանց մեծ առաջընթաց ապրեց շնորհիվ ավանդության⁶⁴⁴:

Վ. Լանգլուան նախամաշտոցյան գրերի գոյության առնչությամբ հնարավոր է համարել, որ հայերը «հնում ունեցել են այբուբեն, ինչպես մտածել է տալիս, բացի Վանի ժայռին փորագրված հին արձանագրություններից, Փիլոստրատոսի մի պարբերությունը, որի համաձայն՝ Արշակ արքայի օրոք⁶⁴⁵ հայերը իրենց լեզվի համար ունեին իրենց պատկանող պատկերային համակարգը»⁶⁴⁶:

Միևնույն ժամանակ Վ. Լանգլուան ենթադրել է, որ «հայերեն լեզուն միայն խոսակցական է եղել՝ ժողովրդի օգտագործման համար, մինչև քրիստոնեության հանդես գալու և առաջընթացի

⁶⁴³ Ibid.

⁶⁴⁴ Ibid., p. 205.

⁶⁴⁵ Philostratus. Life of Apollonius of Tyana, Vol. 1: Books 1-4, Translated by Christopher P. Jones, Cambridge, Mass., London, 2005, p. 135.

⁶⁴⁶ V. Langlois, op. cit., p. 207.

պահը, և, որ բնակչության կրթված մասը գրելու համար օգտագործում էր հարևան ժողովուրդների գիրը, ինչպես հաղորդում են Պոլիենը⁶⁴⁷, Դիոդորոս Սիկիլիացին⁶⁴⁸ և Մովսես Խորենացին⁶⁴⁹ իրենց պատմությունների բազմաթիվ պարբերություններում»⁶⁵⁰:

Անդրադառնալով տարբեր լեզուներով (քաղղեերեն, արամեերեն, ասորերեն) ստեղծված գրականությանը՝ Վ. Լանգլուան նշել է, որ հավանաբար, դրա կողքին գոյություն է ունեցել մի խոսակցական լեզու, որը «մենք սահմանում ենք *արմենիակ* անվանումով»⁶⁵¹: Հիշատակելով *արմենիակ* կոչված «խոսակցական լեզուն»՝ Վ. Լանգլուան, փաստորեն կրկնել է ասուրագետ Ժ. Օպերտի կարծիքը, որն *արմենիակ* է անվանել Վանի սեպագիր արձանագրությունների լեզուն⁶⁵²:

Վ. Լանգլուան ենթադրելով, որ մինչ Մեսրոպ Մաշտոցի կողմից իր ժողովրդին գրեր պարզեցնելը Հայաստանում այբուբեն է գոյություն ունեցել, եզրակացրել է, որ այդ այբուբենը Փիլոստրատոսի հիշատակածն է⁶⁵³:

Հայ պատմագրության մեջ նախամաշտոցյան գրերի մասին օտար սկզբնաղբյուրներից Փիլոստրատոսի հաղորդմանը առաջինն անդրադարձել է Դ. Ինճիճյանը՝ գրելով. «Ունիմք վասն

⁶⁴⁷ Polyaeni Strategmaton Libri Octo ex recensione Eduardi Woelfflin et I. Melber. Lipsiae, 1887. IV.8.3.

⁶⁴⁸ Diodorus Siculus. XIX. 23.3.

⁶⁴⁹ Վ. Լանգլուան հիշատակելով Մովսես Խորենացուն՝ նկատի ունի նրա աշխատության այն մասը, որտեղ Պատմահայրը գրելով, «բազում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գրոյ յիշատակի», դժգոհել է, «ոչ մի ոք ի նոցանէ («թագաւրացն մերոց»-Ա.Դ.) պէտ յանձին կալաւ մատենագրել»: Իսկ այն պատճառաբանության կապակցությամբ, թե պատմությունը չի մատենագրվել «վասն ոչ լինելոյ զիր և դպրութիւն ի ժամանակին», Մովսես Խորենացին գրել է. «Այլ ոչ արդարև այսոքիկ կարծեցեալ լինի. քանզի գտանին և միջոցք լեալ պատերազմացն, և զիր Պարսից և Յունաց, որովք այժմ գիւղից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնականութեանց և հանուրց հակառակութեանց և դաշանց այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատեանք» (Մովսես Խորենացի, էջ 10-11):

⁶⁵⁰ V. Langlois, op. cit., p. 207.

⁶⁵¹ Ibid., p. 205.

⁶⁵² J. Oppert, op. cit., liv. I, ch. V, p. 70.

⁶⁵³ V. Langlois, op. cit., p. 207.

այսր վկայութիւն նաև յօտար ազգէ, որ յայտ առնէ լեալ զգիր հայկական նախ քան զՄեսրոպ. զի Փիլոստրատոս ծաղկեալն յաւուրս Կարակալայ կայսեր⁶⁵⁴ յամին իբր 200. ի վարս Ապողոնեայ Տիանեայ պատմէ. «կալեալ երբեմն ի Պամփիլեայ յովագ, ունելով զպարանոցաւն մանեակ ոսկի հայկական գրովք դրոշմեալ այս բան. *Արշակ թագաւոր աստուածոյն Նիսեայ*»⁶⁵⁵.

Հռոմեական կայսրոջան ժամանակաշրջանի հույն սուփեստ և հռետոր Լուցիոս Փլավիոս Փիլոստրատոս Աթենացին (մոտ. 170-247 թթ.) 217 թ. կայսրուհի Ջուլիա Դոմնայի⁶⁵⁶ խնդրանքով գրել է «Ապոլլոնիոս Տիանացու»⁶⁵⁷ կյանքը» աշխատությունը, որում բերված է հայերեն գրերով ոսկի մանյակի մասին վերոհիշյալ տեղեկությունը⁶⁵⁸:

Վ. Լանզլուան Մեսրոպ Մաշտոցի գյուտին և ընդհանրապես Մ դարի հայ գրական շարժմանը, թարգմանական ու ինքնուրույն գրականությանը բարձր գնահատական տալիս զգալիորեն

⁶⁵⁴ Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոս Անտոնինոս Կարակալլա (186-217 թթ.):

⁶⁵⁵ Ղ. Իճճիճեան, Զնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հ. Գ, էջ 76:

⁶⁵⁶ Ջուլիա Դոմնան (170–217 թթ.) Լուցիոս Սեպտիմիոս Սևերոս կայսեր (145 – 211 թթ.) կինն էր՝ Գետա ու Կարակալլա կայսրերի մայրը:

⁶⁵⁷ Ի դ. հռետոր և նեոպյութագորականության ներկայացուցիչ՝ փիլիսոփա Ապոլլոնիոսը Կապադովկիայի Տիանա քաղաքից էր: Փիլոստրատոսի և այլ հեղինակների՝ նախամաշտոցյան հայ գրերի վերաբերյալ տեղեկություններին հետազայում նույնպես անդրադարձ է կատարվել հայ պատմագրության մեջ (տես Ա. Գ. Աբրահամյան, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, 1982, էջ 94-103, Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգը, Երևան, 2003, էջ 213-218: Ա. Մուշեղյան, Մեսրոպ Մաշտոցը և նախամաշտոցյան հայ գիրը, ՊԲՀ, 2006, N 2, էջ 210-236, Է. Լ. Դանիելյան, Հայ գրի, թարգմանական և ինքնուրույն գրականության պատմական նշանակությունը քաղաքակրթությունների երկխոսության տեսանկյունից. - «21 – որդի Ար», № 1, 2010, էջ 16):

⁶⁵⁸ Photius, Bibliothèque, texte établi et traduit par René Henry, Paris, t. V, 1967, p. 172, 324 b 4-11. Նյուսա կամ Նիսա են կոչվել օլիմպիական աստվածներից ամենից երիտասարդին՝ Դիոնիսոսին (J. E. Zimmerman, Dictionary of Classical Mythology, New York-London, 1980, p. 88) նվիրված մի քանի լեռներ (H. G. Liddell and R. Scott, Greek-English Lexicon, Oxford, 1966, p. 1185), ինչպես նաև քաղաքներ (Photius, op. cit. p. 172):

հիմնվել է Սեն-Մարտենի եզրակացությունների վրա՝ միևնույն ժամանակ դրանց ավելացնելով իր դիտարկումները⁶⁵⁹:

Հատկանշական է, որ Մեսրոպյան այբուբենի ստեղծման առաջին արգասիքը եղավ Սուրբ Գրքի թարգմանությունը, որի համբավը հայ Ոսկեդարից հարյուրամյակներ անց, հասնելով Ֆրանսիա Լուսավորչական շարժման դարաշրջանում բարձր գնահատական ստացավ գրական և հոգևոր ոլորտներում⁶⁶⁰:

Է. Դյուլորիենն նշել է, որ հայերենը ի տարբերություն մի շարք արևելյան հին լեզուների, համահունչ է գիտության և քաղաքակրթական առաջընթացին, ուստի «հայերեն լեզուն միշտ մնում է կենդանի և կարծես մի աղբյուր, որտեղից անդադար բխում են բոլոր այն արտահայտությունները, որ գիտությունների կամ քաղաքակրթության առաջընթացը կարող է պահանջել»⁶⁶¹:

4. Ֆրանսիացի ճանապարհորդների անդրադարձը հայերի առևտրատնտեսական և արհեստագործական գործունեությանը

XIII-XIX դդ. արևելյան երկրներ ուղևորված ֆրանսիացի ճանապարհորդների [Գիյոմ դե Ռուբրուկ (մոտ. 1220-1293 թթ.), Ժան Շարդեն (1643-1713 թթ.), Ժան Բատիստ Տավերնիե (1605-1689 թթ.), Ժոզեֆ Պիտոն դե Տուրնեֆոր (1656-1708 թթ.), Ռաֆայել դյու

⁶⁵⁹ V. Langelois, op. cit., p. 206.

⁶⁶⁰ M. La Croze, Histoire du Christianisme d’Ethiopie et d’Arménie, La Haie, 1739, Liv. IV, p. 333. Լա Կրոզը Նոր Կտակարանի հայերեն թարգմանությունը համարել է «թարգմանությունների թագուհի» (Le Nouveau Testament de notre Seigneur Jesus-Christ, traduit en français sur l’original grec avec des notes littérales par Beausobre et Lenfant, t. I. 1718, p. CCXI, տես նաև՝ Հ. Ա. Անասյան, Աստվածաշունչ մատյանի հայկական բնագիրը, - «Էջմիածին», ԺԱ-ԺԲ, նոյեմբեր-դեկտեմբեր, 1966, էջ 71, Լ. Տեր-Պետրոսյան, Աստվածաշունչի հայերեն թարգմանության պատմամշակութային արժեքը և գիտական նշանակությունը, - Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 459):

⁶⁶¹ E. Dulaurier, Les Arméniens..., p. 211.

Ման (1613-1696 թթ.), Ամեդե ժոբերը (1779-1847 թթ.)] հուշագրությունները, կարևոր տեղ զբաղեցնելով ֆրանսիական պատմագրության մեջ, արժեքավոր սկզբնաղբյուր են արևելյան երկրների քաղաքական, տնտեսական և հոգևոր մշակույթի ու պատմության ուսումնասիրության համար: Ֆրանսիացի հետազոտողների, միսիոներների և առևտրականների հուշագրությունները նաև որոշակի տեղեկություններ են պարունակում հայերի և Հայաստանի մասին: Դրանցում զգալի տեղ են զբաղեցնում հետագայում «Մետաքսի ճանապարհ» անվանված⁶⁶² հնուց հայտնի մայրուղիներով կատարված առևտրում, ինչպես նաև Ֆրանսիայի հետ ծավալվող տնտեսական ու մշակութային կապերի ոլորտում հայերի դերին վերաբերվող տեղեկությունները:

Ֆրեդերիկ Մակլերը կարևորելով միջնադարում հայերի դերակատարումը և մշակութային ներդրումը քրիստոնեական աշխարհում՝ գրել է, որ ի թիվս այլ քրիստոնյաների «հայերը կիսովարևելյան և կիսովարևմտյան մշակույթի լավագույն տարածողներն էին, որոնց գլխավոր կենտրոններն Ամիոն և Սուրն էին՝ Բագրատունյաց Հայաստանի և Կիլիկիայի Հայկական (թագավորությունների-Ա.Դ.) մայրաքաղաքներում, ինչպես նաև Արևելքի լայնածավալ քրիստոնյա կայսրության (Բյուզանդիա-Ա.Դ.) մայրաքաղաք Կոստանդնուպոլսում»⁶⁶³:

XIII դարի երկրորդ կեսին Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX–ի (1226-1270 թթ.) հանձնարարականով Արևելք ուղևորված ֆրանցիսկյան վանական ֆլամանդացի Գիյոն դե Ռուբրուկի ճանապարհորդությունները նկարագրված են իր հուշագրությունում⁶⁶⁴: Գիյոն դե Ռուբրուկը վենետիկցի վաճառական և ճանա-

⁶⁶² D. C. Waugh, Richthofen's «Silk Roads»: Toward the Archaeology of a Concept.- The Silk Road, Saratoga, California, 2007, vol. 1, p. 2.

⁶⁶³ Fr. Macler, L'Épopée Arménienne, Trois Conférences sur l'Arménie faites à la fondation Carol I à Bucarest par Frédéric Macler, Annales du musée Guimet bibliothèque de vulgarisation, t. 49, Paris, 1929, p. 23.

⁶⁶⁴ G. de Rubrouck, Ambassadeur de Saint Louis en Orient, récit de son voyage, traduit de l'original latin et annoté par Louis de Backer, Paris, 1877. Տես նաև՝ The

պարհորդ Մարկո Պոլոյի (1254-1324 թթ.) ավագ ժամանակակիցն էր, և նրանց թողած ճանապարհորդական հուշագրությունները Մեծ Հայքի, Կիլիկյան Հայաստանի և հայերի վերաբերյալ կարևոր փաստեր են պարունակում՝ այլ երկրների մասին եղած տեղեկությունների հետ մեկտեղ:

Ըստ Մարկո Պոլոյի՝ «L'Arménie Mineure» («Փոքր Հայք», այսպես էր կոչվում որոշ սկզբնաղբյուրներում նաև Կիլիկյան Հայաստանը, ինչպես *բուն Փոքր Հայքը*) երկիրը «կառավարվում է մեծ արդարությամբ և տնտեսվարությամբ, դա մի թագավորություն է, որ շատ քաղաքներ, բերդեր և գյուղեր ունի: Հողը բարեբեր է... Այս թագավորությունում կա Այաս կոչվող մի նավահանգիստ և այնտեղ շատ տարբեր երկրներից առևտրականներ կան՝ հենց նույն Վենետիկից և ճենովայից... այստեղ կուտակվում էր Արևելքի ամբողջ հարստությունը⁶⁶⁵»: Կիլիկիայի թագավոր Լևոն IV-ը Սոնպեղիեի առևտրականներին արտոնություններ և անցագրեր էր տալիս⁶⁶⁶: Հատկանշական է նաև այն տեղեկությունը, որ բուն Փոքր Հայքում հայերը և հույները զբաղվում էին մետաքսագործությամբ, իսկ Մեծ Հայքի Երզնկա (Երեզ) քաղաքում պատրաստվում էր «buchiramus-bougran»⁶⁶⁷ անվամբ գերազանց կտորի տեսակը:

Լյուդովիկոս IX-ի գործողությունները Արևելքում զգալիորեն պայմանավորված էին Եգիպտոսի մամլուքների դեմ խաչակրաց արշավանքի նախապատրաստման հանգամանքերով, դրանցից էր մոնղոլներին քրիստոնեություն քարոզելու քաղաքականությունը⁶⁶⁸: Իսկ մինչ այդ Լյուդովիկոս IX-ը, փորձելով մոնղոլների

Etchmiadzin chronicles, recorded by missionaries and merchants diplomats and scholars, compiled by **Archbishop Mesrop Ashjian**, 2003.

⁶⁶⁵ Deux voyages en Asie au XIII^e s., Guillaume de Rubruquis (envoyé de Saint Louis) et Marco Polo (marchand vénitien), Paris, 1888, p. 156.

⁶⁶⁶ Fr. Macler, La France et l'Arménie à travers l'art et l'histoire, Paris, 1917, p. 18.

⁶⁶⁷ Deux voyages en Asie ..., p. 156-157.

⁶⁶⁸ Լյուդովիկոս IX-ը բանակել էր Կիպրոսում, որտեղ 1248 թ. ղեկտնճերին նրան ներկայացավ արևմտյան Ասիայում մոնղոլական զորքերի հրամանատար Էլչի-Գադայի (Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատա-

հետ ինչ-որ հարաբերություններ հաստատել, համաձայնվեց, որ-
պես միսիոներ, ուղարկել Ռուբրուկին, որն իմացել էր, որ Բաթու
խանի (1227-1255 թթ.) որդին՝ Սարթախը, քրիստոնեություն էր ըն-
դունել: 1253 թ. նա իր ուղեկիցներով ծովով սկսում են իրենց ճա-
նապարհորդությունը Կոստանդնուպոլսից: Երկու ամիս անց
նրանք ժամանում են Սարթախի ճամբարը: Ռուբրուկի հաղորդ-
մամբ Սարթախի պալատում հայ քահանաներ կային, որոնք, ի-
մանալով օտար լեզուներ, թարգմանչական գործ էին կատարում:
Սարթախը Ռուբրուկին և իր ուղեկիցներին ճանապարհում է իր
հոր՝ Բաթուի մոտ՝ Վոլգայից այն կողմ:

Որոշ ժամանակ անց Ռուբրուկը իր ուղեկիցների հետ մեկնեց
Կարակորում՝ Մանգու խանի նստավայրը, որտեղ նրանց թույլ
տրվեց մնալ կես տարի: Այնտեղ Ռուբրուկը օգտվել էր հայ թարգ-
մանիչների ծառայությունից, որոնց մասին նշել է, որ նրանք Մեծ
Հայքից էին: Ռուբրուկը գրելով, որ ինքը մասնակցել էր հայկա-
կան Ջատկի տոնակատարությանը, նաև հիշատակել է Հայաս-
տանից եկած մի հայ քահանայի որդու, որը գոհարազալոդ ար-
ծաթյա խաչ էր նվիրել Մանգուին⁶⁶⁹:

Ուշագրավ է Ռուբրուկի այն գրառումը, որ «ինքը հույս ուներ
հանդիպել Հայոց թագավորին»⁶⁷⁰ Հեթում I-ին⁶⁷¹: Ռուբրուկը Կա-

սիրությամբ Կ. Ա. Մելիք Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 357) ուղարկած
պատվիրակությունը՝ հանձնարարականով (J. Larner, Marco Polo and the
Discovery of the World, New Haven and London, 1999, p. 22- 23):

⁶⁶⁹ G. de Rubrouck, Ambassadeur de, pp. 65-91, 141-143, 211-214.

⁶⁷⁰ Ibid., p. 226.

⁶⁷¹ Արցախ աշխարհի խաչենի իշխան Հասան Ջալալ Դոլայի միջնորդությամբ և
Սմբատ Սպարապետի (Գունդեստաբլ) պատգամազնացությամբ (1246 թ.) Կի-
լիկյան Հայաստանի թագավոր Հեթում I-ը (1226-1269 թթ.) քաղաքական
նպատակներով, մեկնելով Կարակորում և բանակցելով Մանգու խանի հետ
(1254 թ.), պայմանագիր կնքեց մոնղոլների հետ (Կիրակոս Գանձակեցի, զլ.
ԼԶ, էջ 284-285, 367): Կիլիկյան Հայաստանը չէր նվաճվել մոնղոլների կողմից:
Կողմերը պայմանավորվել էին, որ Կիլիկիան ռազմական օժանդակություն
էր ցույց տալու և հարկ էր վճարելու մոնղոլներին (Г. Микаелян, ук. соч., с.
307): Իսկ Մեծ Հայքի նկատմամբ մոնղոլները, շարունակեցին իրենց դժման
քաղաքականությունը, որի զոհը, ի քիվս շատերի դարձավ նաև նրանց տիրա-
պետության դեմ բռնկված ապստամբության ղեկավարներից խաչենի իշ-

րակորումից հեռանում է 1254 թ. կեսերին: Հրաժեշտի պահին Մանգու խանի հարցին թե մինչև որտեղ Ռուբրուկը կցանկանար ուղեկցող ունենալ, նա պատասխանում է. «Ձեր հզորությունը տարածվում է մինչև Հայաստանի (նկատի ունի Կիլիկիայի Հայկական թագավորությունը - Ա.Դ.) թագավորությունը (royaume d'Arménie)»⁶⁷²: Իսկ Հեթումը, փաստորեն, ժամանել էր Կարակորում՝ Ռուբրուկի մեկնելուց հետո⁶⁷³:

Ռուբրուկն իր ճանապարհորդության ընթացքում անցել է նաև Հայաստանով: Նա հիշատակել է Մեծ Հայքը, Արարատյան դաշտով հարավարևելյան ուղղությամբ հոսող Երասխ (Արաքս) գետը, Աստվածաշնչի տեղեկությունն ասորեստանյան հայրասպան արքայորդիների փախուստի մասին Արարատի երկիր, որը նույն Հայաստանն է⁶⁷⁴: Գրելով Նախիջևանի մասին՝ Ռուբրուկը նշել է, որ այն գեղեցկագույն քաղաք է եղել: Ըստ երևույթին, ազդված լինելով Աստվածաշնչի հաղորդումից, տապանի՝ «ի լեռինս Արարատայ» նստելու և Նոյի ու իր ընտանիքի այդտեղ բնակություն հաստատելու մասին⁶⁷⁵, Ռուբրուկը Նախիջևանը հիշատակել է որպես «մեծագույն թագավորության մայրաքաղաք»: Նա վկայել է, որ Նախիջևանը, հարյուրավոր հայկական եկեղեցիների հետ մեկտեղ, ավերվել և ամայացվել է թաթարների կողմից: Մեծ ակնածանքով է Ռուբրուկը ներկայացնում Արարատ-Մասիս լեռան մասին իրեն հանդիպած հայ ծերունու պատմած ավանդությունը, թե ինչու չի կարելի բարձրանալ գագաթը. «Ոչ մեկը չի

խան Հասան Ջալալ Դոլան, որը մոնղոլ ոստիկան Արդունի հրամանով դաժանորեն սպանվեց 1261 թ. (Там же, с. 391):

⁶⁷² G. de Rubrouck, Ambassadeur de, p. 243.

⁶⁷³ Որքն Գրուսեն բարձր է գնահատել Հեթումի քայլը՝ մոնղոլների հետ քաղաքական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ, ինչը Կիլիկիայի հայերին պաշտպանվելու հնարավորություն էր տալու «ընդդեմ սելջուկների և մամլուքների» (R. Grousset, L'Empire des Steppes, Attila, Gengiskhan, Tamerlan, Paris, 1948, p. 328). Նույնի՝ Histoire des Croisades et du Royaume Franc de Jerusalem, La Monarchie musulmane et l'anarchie franque, Paris, 1936, p. 527:

⁶⁷⁴ G. de Rubrouck, Ambassadeur de, p. 281.

⁶⁷⁵ Ծանոթ. Ը:

կարող Մասիսը բարձրանալ, քանզի այն աշխարհի մայրն է»։ Գիյոմ դե Ռուբրուկը այցելել է նաև Անի քաղաքը, որը նկարագրել է իր դիրքով որպես լավ ամրացված և հազար եկեղեցիներ ունեցող քաղաք⁶⁷⁶։

Ռուբրուկի հաջորդ շարադրանքից երևում է, որ նա իր ուղեկիցների հետ անցել է Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքով, որտեղ այցելել է 40 նահատակների դամբարանը։ Այնուհետև նրանք եղել են Կապադովկիայի Կեսարիա քաղաքում, որտեղ գտնվում է Բարսեղ Մեծի եկեղեցին։ Անցնելով Իկոնիայով՝ նրանք հասնում են, ինչպես ինքն է ասում, «մինչև Հայկական ծովը կամ Կիլիկիա»⁶⁷⁷։

1255 թ. Ռուբրուկը վերադառնում է Ֆրանսիա և Լյուդովիկոս IX-ին ներկայացնում է զեկուցագիր⁶⁷⁸, որը, ինչպես նշել է անգլիացի պատմաբան Ջոն Լարները, հանդիսանում է «ճանապարհորդական գրականության մեծագույն գործերից մեկը»⁶⁷⁹։

Հետաքրքիր է սկզբնաղբյուրներում եղած տեղեկությունները հայ առևտրականների ուղիների աշխարհագրական ընդգրկման մասին։ Արևելքում դրանք ձգվում էին մինչև Սիամ, Կոչինջին, ճապա և Ֆիլիպիններ, իսկ Արևմուտքում՝ Եվրոպայի երկրները։ Հատկանշական է ֆրանսիացի ծովագնաց Ժան-Ֆրանսուա դե Լա Պերուզի (1741-1788 թթ.) այն տեղեկությունը, որ պայմանավորված քաղաքական հանգամանքներով, ի տարբերություն եվրոպացիների, Մանիլայի նավահանգիստ թույլատրվում էր մուտք

⁶⁷⁶ G. de Rubrouck, Ambassadeur de p. 286-287.

⁶⁷⁷ Ռուբրուկը նկատի ունի Միջերկրական ծովի Ալեքսանդրետի ծոցը, որը հայտնի էր *Հայկական ծոց* անվանումով։ Այստեղ Ռուբրուկը իմանում է Հեթոն թագավորի և նրա ղեսպանների Կարակորումից վերադարձի և Մանգուլ խանի հետ ձեռք բերած համաձայնությունների մասին (Ibid., p. 293).

⁶⁷⁸ Լյուդովիկոս IX-ի ձեռնարկումները՝ մոնղոլներին քրիստոնեական կրոնին հաղորդակից դարձնելու ուղղությամբ հաջողություն չունեցան և անհրաժեշտ եղավ դրանք դադարեցնել (Histoire générale des voyages, ou nouvelle collection de toutes les relations de voyages par mer et par terre, qui ont été publiées jusqu'à présent dans les différentes langues de toutes les nations connues, t. IX. La Haye, 1749, p. 261):

⁶⁷⁹ J. Larner. op. cit., p. 25.

գործել միայն հայերին, որոշ մավրերի և Գոայի պորտուգալացիներին⁶⁸⁰: XVIII դ. վերջում Բատավիա-Ջակարտայում, Սուրաբայայում հաստատված հայերի մեծ մասը զբաղվում էր թանկարժեք քարերի, հատկապես, ադամանդի առևտրով⁶⁸¹: Ֆր. Մակլերը նշում է, որ ոսկերչությունը և փորագրությունը դեռևս անտիկ ժամանակներից շատ հարգի էր հայերի մոտ: Հատկապես Վանի ոսկերիչները հայտնի էին իրենց վարպետությամբ: Դարեր անց, երբ համեմատաբար մեծ թվով հայ ոսկերիչներ հաստատվեցին Փարիզում, այն դարձավ «վանյան փորագրության» մի իսկական կենտրոն⁶⁸²:

Ֆրանսիացի ճանապարհորդները բարձր են գնահատել միջազգային առևտրում հայ առևտրականների ծավալած գործունեությունը: 1805 թ. Նապոլեոն I կայսեր հանձնարությամբ դիվանագիտական նպատակներով Արևելք ուղևորված Ամեդե ժոբերը գրել է. «Այնուամենայնիվ, պետք է համաձայնվել, որ նրանք (հայերը) շատ խելամտություն և ազնվություն են ցուցաբերում առևտրում»⁶⁸³:

Համաձայն ժոզեֆ Տուրնեֆորի գնահատականի՝ հայերի քրիստոնյա լինելը հեշտացնում էր Եվրոպայի այլ ազգերի հետ նրանց հաղորդակցությունը: Նա նշում է, որ «հայերն աշխարհի լավագույն, ազնիվ, քաղաքավարի մարդիկ են՝ լի առողջ դատողությամբ և պարկեշտությամբ» («Les Arméniens sont les meilleurs gens du monde, honnête, polis, pleins de bons sens et de probité... »): Տուրնեֆորը, միևնույն ժամանակ, կարևորել է հայերի չափավորությունը, սրտաբացությունը, անկեղծությունը, մեծ ուղևորու-

⁶⁸⁰ Relation abrégé d'un voyage de La Pérouse: pendant les années 1785, 1786, 1787 et 1788, Leipsick, 1799, p. 281.

⁶⁸¹ Trois Conférences sur l'Arménie faites à la fondation Carol I à Bucarest par Frédéric Macler, Paris, 1929, p. 37.

⁶⁸² Ibid., p. 63-66.

⁶⁸³ A. Jaubert, Voyage en Arménie et en Perse, dans les années 1805 et 1806, Paris, 1821, p. 110.

թյուններ ձեռնարկելու կարողությունը⁶⁸⁴։ Այս գնահատականներին համահունչ է 1726 թ. Ամստերդամում լույս տեսած «Առևտրի համաշխարհային հանրագիտարանի» այն տեղեկությունը, որ Ասիայի ազգերից Ջնյունիայում ամենամեծ առևտուր անողները հայերն էին և Պարսկաստանից եկող քարավանները գրեթե ամբողջությամբ իրենք էին առաջնորդում։ Նույն հանրագիտարանի այլ տեղեկությունների համաձայն՝ Ջնյունիայում հայերն ունեին ավելի քան 12 հազար վաճառակետեր⁶⁸⁵։ Նաև նշված է, որ Մարսելում և Ջնյունիայում մետաքսի, բամբակի, մոմի ապրանքատեսակների կեղծումը սովորական էր համարվում հույների և հրեաների համար, այնինչ հայերը վստահություն և մեծ հարգանք էին վայելում⁶⁸⁶։

Առևտրական նպատակներով Արևելք ուղևորված Ֆրանսիացի ժան Շարդենն իր ճանապարհորդությանը նվիրված աշխատությունում նշում է, որ Ջնյունիայում ակտիվ գործունեություն ծավալած հոլանդացիների «գլխավոր շահույթը հայերին և նրանց ապրանքները եվրոպա և այնտեղից հետ ուղեկցելն է»⁶⁸⁷։ Ըստ Ժոզեֆ Տուրնեֆորի՝ հայերը ոչ միայն Լևանտի առևտրի տերերն էին, այլև կարևոր մասնակցություն ունեին եվրոպայի մեծ քաղաքների առևտրում⁶⁸⁸։

1644 թ. Արևելք ուղևորված միսիոներ Ռաֆայել դյու Մանը գրում էր, որ Պարսկաստանից մեծ քանակությամբ մետաքսի բազմազան տեսականի էր դուրս բերվում և հայերն այդ ամբողջը արտահանում էին դեպի հյուսիս՝ Մոսկվա, Շվեդիա, Լեհաստան,

⁶⁸⁴ J. P. de Tournefort, *Relation d'un voyage du Levant: fait par ordre du roi: contenant l'histoire ancienne et moderne de plusieurs îles de l'Archipel, de Constantinople, des Côtes de la mer Noire, de l'Arménie, de la Géorgie, des frontières de Perse, et de l'Asie Mineure*, Amsterdam, 1718, t. II, p. 158.

⁶⁸⁵ *Dictionnaire universel de commerce: contenant tout ce qui concerne le commerce qui se fait dans les quatre parties du monde*, Amsterdam, 1726, t. I, p. 1000.

⁶⁸⁶ *Dictionnaire universel de commerce: contenant tout ce qui concerne le commerce qui se fait dans les quatre parties du monde*, Genève, 1742, t. II, p. 547.

⁶⁸⁷ *Voyages de M' le Chevalier Chardin en Perse et autres lieux de l'Orient*, Amsterdam, 1711, t. I, p. 8.

⁶⁸⁸ J. P. de Tournefort, op. cit., p. 158.

Գերմանիա, որտեղ նրանք մեծ շահույթ էին ստանում, քանի որ հյուսիսի նշված բոլոր այս երկրները հետաքրքրված էին մետաքսե գործվածքից տարբեր տեսակի ապրանքների արտադրությամբ⁶⁸⁹։ Հայերն առևտրական հաստատություններ էին հիմնել Լիվոռնոյում, Վենետիկում և Ամստերդամում։ Միևնույն ժամանակ նրանք գալիս էին Փարիզ ձեռք բերելու պերճանքի առարկաներ⁶⁹⁰։

Հիմնավորց հայկական Կարին (Էրզրում) քաղաքը և այդ ժամանակաշրջանում, հատկապես նրա մերձակայքում գտնվող Արծն քաղաքը, միջազգային առևտրի տարանցիկ ուղիների վրա էին գտնվում և այստեղով մեծ թվով քարավաններ էին անցնում⁶⁹¹։ Տուրնեֆորը նկարագրելով իրենց 300 հոգուց բաղկացած քարավանը, նշել է, որ այն գրեթե ամբողջությամբ հայերից էր բաղկացած, որոնք մետաքս էին տանում Թոխաթ, Ջմյուռնիա, Կոստանդնուպոլիս⁶⁹²։

Ռաֆայել դյու Մանը Ֆրանսիայի պետական գործիչ ժամբատիստ Կոլբերին ուղղված իր զեկուցագրում կարևորել է հայ առևտրականների դերը Ֆրանսիայի հետ առևտրական պայմանագրերի կնքման և Լևանտից տարբեր ապրանքատեսակների արտահանման գործում։ Նա գրել է, որ հայերը կարող էին Ֆրանսիա բերել մեծ քանակությամբ տարբեր գույնի շագրենի կաշիներ։ Նա նշել է, որ Վանա լճի ջուրն ունի առանձնահատկություն, և այդ լճի շուրջ մշակվում է ամենագեղեցիկ կանաչ շագրենը⁶⁹³։ Իսկ Լևանտի սաֆյանների՝ կարմիր, կապույտ և դեղին տեսակները, որոնք պատրաստվում էին Պարսկաստանում և Հայաստա-

⁶⁸⁹ Le P. Raphaël du Mans, L'Etat de la Perse en 1660, Paris, 1890, p. 342.

⁶⁹⁰ Ibid., p. XLII.

⁶⁹¹ Encyclopédie méthodique, Commerce, t. I, Paris, 1783, p. 359. J. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, Paris, 1919, p. 44. W. Heyd, Histoire du commerce du Levant au Moyen Age, Leipzig, 1885, t. I, p. 44-45. Я. А. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, с. 215-216.

⁶⁹² J. P. de Tournefort, op. cit., p. 168.

⁶⁹³ Le P. Raphaël du Mans, op. cit., p. 345.

նում, ավելի գեղեցիկ էին և մեծ, քան Ֆրանսիայում պատրաստվածները:

Ռաֆայել դյու Մանը մանրամասն նկարագրում է Վանի միջնաբերդը, լիճն ու կղզիները: Նա նշում է, որ բոլոր կողմերից առևտրականներ են գալիս Վան, որպեսզի գնեն լճի ձուկը (տառեխ), որը տանում են Պարսկաստան, Վրաստան, Ռուսաստան, Լևանտ, որտեղ հնարավոր չէր պատկերացնել լավ ընթրիք՝ վերջում առանց այդ ձկան համտեսման⁶⁹⁴:

Ֆրանսիացի ճանապարհորդը նշում է, որ հայ առևտրականները կարող էին նաև բերել մեծ քանակությամբ այծի բուրդ... սա առևտրի այն կարևոր տեսակն է, որով նրանք զբաղվում էին Հոլանդիայում և Ֆլանդրիայում, որտեղ պատրաստված մեծաքանակ զգեստները արտահանվում էին իսպանացիների համար Կառիբյան ծովի կղզիներ:

Իր զեկուցագրում նա նշել է, որ հայերը կարող էին նաև բերել մեծ քանակությամբ չմանված բամբակ, և այն վաճառել ավելի էժան գնով, քան Ջմյուռնիայից, Հալեպից և այլ վայրերից բերվածները: Եվրոպայում այդ ապրանքի կարիքը շատ կար, հաշվի առնելով այն պահանջակը, որն անհրաժեշտ էր Պրովանսում պատրաստվող ապրանքատեսակների համար⁶⁹⁵:

Ռաֆայել դյու Մանը Կոլբերի ուշադրությունն էր հրավիրում այն հանգամանքի վրա, որ բոլոր ապրանքատեսակներից, որ հայերը կարող էին բերել, պետք էր ջանալ, որ նրանք Մարսել ներմուծեին գիստոր (ընկույզ), որն անհրաժեշտ էր սև ներկանյութ ստանալու նպատակով, ինչը Ֆրանսիայի համար խիստ եկամտաբեր կլիներ⁶⁹⁶:

Հատկանշական է, որ Լյուդովիկոս XIII-ը (1610-1643 թթ.) և կարդինալ Ռիշելիենն հայ առևտրականներին անցագրեր⁶⁹⁷ տվե-

⁶⁹⁴ Ibid., p. 347, հմմտ. Les six voyages de J.-B. Tavernier, qu'il a fait en Turquie, en Perse et aux Indes, Paris, 1676, vol. 1, pp. 276-277.

⁶⁹⁵ Le P. Raphaël du Mans, op. cit., p. 349.

⁶⁹⁶ Ibid., p. 350.

⁶⁹⁷ Fr. Macler, op. cit., p. 18.

ցին Մարսելում ազատ առևտուր անելու համար: Լյուդովիկոս XIV-ի (1643-1715 թթ.) օրոք Մարսելի առևտուրը նոր թափ ստացավ: Կարդինալ Մազարինիի առաջարկով և պնդմամբ 1660 թ. ընդունվեց հրովարտակ՝ Մարսելում հայկական համայնք ստեղծելու վերաբերյալ: 1703 և 1706 թթ. այս հրովարտակը նորացվեց՝ հօգուտ հայկական գործվածքների ներմուծման⁶⁹⁸:

Արևելք ուղևորված ֆրանսիացի միսիոներների և պաշտոնական անձանց ճանապարհորդական գրառումները արժեքավոր սկզբնաղբյուր են արևելյան երկրների, մասնավորապես Հայաստանի քաղաքական, տնտեսական և հոգևոր ու նյութական մշակույթի պատմության ուսումնասիրության համար: Դրանցում կարևոր տեղեկություններ են պարունակվում հայերի թե՛ արհեստագործական հմտության և թե՛ դրա արգասիքների լայն տեսականիով Սեփակի ճանապարհով ընթացող առևտրին ակտիվ մասնակցելու մասին: Միևնույն ժամանակ նրանք ուշադրություն են դարձրել հայ առևտրականների բարոյական բարձր հատկանիշների վրա, որոնք քաղաքակրթական միշ են կրում: XVIII-XIX դդ. ֆրանսիական պատմագրության մեջ արտացոլված քաղաքակրթական բնույթի տեղեկությունները կարևոր են Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի պատմությունը ուսումնասիրելիս:

*

* *

Պատմագիտության և արևելագիտության ասպարեզներում տեղի ունեցող գիտական զարգացումների պայմաններում XIX դ. ֆրանսիական հայագիտական հետազոտությունների կենտրոնում էր Հայոց հին և վաղմիջնադարյան պատմության ու պատմական աշխարհագրության, ինչպես նաև քաղաքակրթական ու հոգևոր պատմության ոլորտները ներառող հիմնախնդիրների լուսաբանումը: Ֆրանսիացի հայագետները իրենց աշխատություններով կարևոր ներդրում կատարեցին հայ պատմագիտության զանաբանում:

⁶⁹⁸ Ibid.

THE ISSUES IN THE HISTORY OF ANCIENT AND EARLY MEDIEVAL ARMENIA IN FRENCH ARMENOLOGY OF THE 19th CENTURY

SUMMARY

The book is dedicated to the analysis of the coverage of issues in the history of ancient and early medieval Armenia in French Armenology of the 19th century. Special attention is paid to the evaluation of the Armenian historiographical heritage in the French Armenological studies by J. Saint-Martin, M. Brosset, V. Langlois, J. Oppert and others. Many of them followed the traditions of Armenian studies carried out since the 18th century in the Mekhitarist Congregation in Venice.

The studies of the history of Armenia were realized by the French Armenologists along with the translation of Armenian sources [Movses Khorenatsi, Koryun, Pavstos Buzand, Agathangelos, Ghazar (Lazar) Parpetsi, Sebeos, Thovma Artsrouni, Oukhtanes, Hovhannes Catholicos Draskhanaketsi, Kirakos Gandzaketsi, Stepannos Orbelian et al.] and their corresponding comments.

Special attention is paid to the high assessment of the source value of Movses Khorenatsi's "History of Armenia" in the works of the French Armenologists. Based on the point of view accepted in Armenian historiography, they fairly considered Movses Khorenatsi as the historian of the 5th century. Not accepting «hypercriticism» (which started since the second half of the 19th century, particularly, in relation to Movses Khorenatsi's "History of Armenia"), V. Langlois explained it as a result of unfair disregard of the true state of the ideas of Khorenatsi's epoch and the facts of the sources about the ancient history of Armenia. It is necessary to note that there were also political motives behind the «hypercriticism».

While assessing the Armenian sources, V. Langlois noted that they stand out among the literary heritage of the peoples of Christian East. In the 19th century the religious and philosophical approaches to the study of history

largely owed to the use of a syncretic method. The study of the ethno-spiritual foundations of Armenian history has been important for historical and philosophical comprehension, which played a certain role in the theoretical elaborations of the French Armenologists. The Haikian/Haikazun (the descendants of Patriarch Haik) genealogy presented in Movses Khorenatsi's "History of Armenia" was considered by Saint-Martin and V. Langlois from the standpoint of religious ontology in historical context by the method of correlation of the biblical and Armenian traditional notions.

Saint-Martin and M. Brosset studied the historical geography of Armenia (Great Armenia, Armenia Minor, Armenian Mesopotamia and Cilician Armenia). In the research of 15 provinces (regions) of Great Armenia, they paid attention to the historical and political description of Taik, Gugark, Artsakh and other provinces.

The ancient Armenian province Taik is mentioned in Assyrian cuneiform inscriptions under the name of *Daiaeni* among the *Nairi lands*, i.e. the regions of *Nairi* (in Armenia). *Diau(e)he* of the Biainian cuneiform inscriptions corresponds to *Daiaeni*. It is denoted that an interpretation of the Biainian cuneiforms' masculine person determinative *m*, as the determinative indicating *ethnos*, has not been substantiated, because it is not a determinative indicating ethnic names. ¹⁰*Diau(e)he* is deciphered as "*Diau(e)he*"-ian [suffix -*he* (-*hi*-) is not the ethnonym-forming, but a suffix indicating appurtenance, forming adjectives]. Similarly *Swjēghp* (*Taikians*) mentioned in Armenian sources (cf. *Taōχοι* of Greek sources) is a toponymical form of the name indicating the Armenian population of Taik.

Some unfounded interpretations in relation to *Daiaeni*, *Diau(e)he* and *Taōχοι* distort the ethno-geographic and political history of Armenia's northern part; consequently Taik, as well as Kgharjk – a gavar of the Great Armenia's province Gugark, being wrongly presented as "south-western regions of historic Georgia" (Iberia), particularly, in contemporary Georgian historiography. But, according to ancient Greek and early medieval Armenian sources, Iberia (Virk) was situated to the north of Armenia: the north-eastern portion of the border of Great Armenia ran along the Kur River. According to M. Brosset, the origin of the name «Somekhi» given to Armenians by Georgians, is connected with the Georgian word «samkhreti»

(ՆԱԾԵՐԴՈՒ), which means «south». Thus, the forms of the name *Somkhiti/Somkhet* relate to the territory (starting from the north-eastern *gavars* of the Great Armenia's province of Gugark situated to the south of Iberia) of entire Armenia.

Certain comments on the cuneiform inscriptions of the Van Kingdom in the context of the ancient history of Armenia are of special interest in the works of French Armenologists and other European specialists. They called the language of the inscriptions Vanique (Vannic) or Armeniaque (Armenian). The most valuable is Brosset's contribution, who on the one hand used the researches on Egyptian hieroglyphic, Assyrian and Babylonian cuneiform texts, and on the other hand, studied Armenian medieval sources containing also ancient data.

The significance of Movses Khorenatsi's work in discovery of the Van cuneiform inscriptions is determined by their place in the historical cultural heritage of Armenia. The comments on the country name *Armenia* and the ethnic name *Armenian*, on the basis of the decipherment of the Assyrian and Van cuneiforms are an important contribution by the European and particularly French Armenologists of the 19th century to the studies of the history of the Van (Araratian) Kingdom (Urartu) as an integral part of the Armenian statehood's history.

The conceptual assessment of Armenian civilizational values in the works of French Armenologists is characterized by their ontological approaches to the history of ancient and early medieval Armenia: the biblical perception of Armenia as the Ararat land, early Christian developments beginning with the Apostolic preaching and founding of the Armenian Apostolic Church (I century AD) and consequently declaration of Christianity as the state religion in 301 AD, pre-Mashtotsian Armenian letters and invention of the Armenian alphabet by St. Mesrop Mashtots (405 AD) which resulted in creation of translated (into Armenian) and original Armenian literature.

In the 13th-19th centuries European and, among them, French explorers, travelers and missionaries during their voyages to the eastern lands, visited Armenia paying attention to ethnographic, economic and historical cultural - civilizational values, especially the sacred Mt. Ararat-Masis. Their memoirs,

including information about Armenia and Armenians' participation in international trade along the Silk Road and further in Europe (particularly in France), are of special interest in the study of the history of economic and cultural relations of Armenia.

The elucidation of the issues in the ancient and medieval history and historical geography, as well as the spiritual and civilizational values of Armenia on the basis of historical sources was at the centre of the 19th century French Armenological studies. French Armenologists made an important contribution to the Armenian historiography.

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աբաս 107
 Աբգար V 17, 18, 143-145, 152
 Աբգար VIII 143
 Աբգարյան Գ. Վ. 40
 Աբգարյան Վ. Գ. 40
 Աբյուդենոս 34, 90, 157
 Աբուլֆարաջ Գ., *տես Բար Չեք-րայոս*
 Աբրահամ Ա Աղբաթանցի 98
 Աբրահամյան Ա. Ա. 60
 Աբրահամյան Ա. Գ. 60, 61
 Ագաթանգեղոս 4, 94, 95, 99, 146-148, 150
 Ադամ 27
 Ադոնց Ն. 8, 33, 57, 72, 75, 81, 95
 Ադրամելեք 121
 Ազա 122
 ալ-Դինավարի իբն Կուտայբա 37
 Ալեքսանդր Մակեդոնացի 90, 91, 110, 143
 Ալիշան Ղ. 5, 26, 47
 ալ-Յակուբի 37
 ալ-Վակիդի 37
 Ամիկա, Ամեկա 122
 Ամոն 115
 Այվազովսկի Գ. 25
 Այվազովսկի Յ. 25
 Անան 145
 Անանիա Շիրակացի 61, 82
 Անանուր 45
 Անանուր (Թովմա Արժրունու Պատմությունը շարունակող) 70
 Անանուր Եղեսացի 143
 Անապատական, *տես Փանոսյան Տ, վարդապետ*
 Անգրեմի Ժ.-Պ. 21, 24
 Աշոտ Գ Բագրատունի, Հայոց թագավոր 86
 Աշուշա 95
 Աշուրնասիրպալ
 (Ասուրնասիրպալ) 119, 135
 Ապոլլոնիոս Տիանացի 164
 Ասողիկ 48
 Ասսեման Ա. 158
 Արա Գեղեցիկ 127, 128
 Արամ՝ Արամե/ Արամու-Արամա
 Արժիշեցի 124, 125
 Արամ Հայկյան, Հարմայի որդի
 49, 50-52, 54, 57
 Արամայիս 48, 50
 Արամանյակ (Արամանեակ) 46,
 48, 49, 50
 Արբակ 120, *տես Վարբակ-Կիաք-սար*
 Արգիշտե/ Արգիշտի I 72, 79, 86,
 97, 120, 128, 131
 Արիմենա 125, *տես* Էրիմենա
 Արիստիդես Աթենացի 156
 Արիստոտել 156
 Արծիլ 93
 Արղության Ա., եպիսկ. 103
 Արղուն 169
 Արմենոս 51
 Արշակ 162, 164
 «Արշակ Մեծ» 46, 83
 Արշակ, որդի Վաղարշակի 16, 90
 Արշակ II, 93, 95, 153
 Արշակունիներ (հայ) 32, 48, 56,
 65, 96, 150, 157
 Արշակունիներ (պարթև) 144
 Արսեն Սափարեցի 100
 Արտաշամա 90

- Արտաշես, Արշակի որդի 87, 90
 Արտաշես I 16, 92
 Արտավազդ Մանդակունի 92
 Արևշատյան Ա. 154, 155
 Արփաքսադ 140
 Ափշադար, դպիր 17
 Ափրիկանոս Սեքստ Յուլիոս 17, 157
- Բաբելոն է. 14
 Բագարատ, ասպետ 92
 Բագրատունիներ (հայ) 48, 83, 85, 97, 100, 107
 Բագ 48
 Բաթու խան 168
 Բար Չեքրայոս 158
 Բարդաժան 18
 Բարդուս 43
 Բարթիկյան Յ. Ս. 71, 148-151
